Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# VIII

## 2005

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գյումրի 2005

ԴՏՀ 008+902 / 904+800
ԳՄԴ 71+63. 4+80
Գ 602

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ
Արամ Քալանթարյան, Աշոտ Մելքոնյան, Խաչիկ Բադիկյան, Արամ Քոսյան, Սարգիս Հարությունյան, Սարգիս Պետրոսյան, Լարիսա Եգանյան, Համազասպ Խաչատրյան, Կարինե Բազեյան, Կարինե Սահակյան, Համիկ Հարությունյան

Խմբագրությամբ Սերգո Հայրապետյանի

Գ - 602 Գիտական աշխատություններ, 8
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2005, 194 էջ:

Գ $\frac{4400000000}{703\ (02) - 2005}$ 2005 ԳՄԴ 71+ 63,4+80

ISBN 5- 8080 - 0504 - 3
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2005

*Республика Армения*
*Национальная академия наук*
*Ширакский центр арменоведческих исследований*

# НАУЧНЫЕ ТРУДЫ

**ВЫПУСК**
**VIII**
**EDITION**

# REASEARCH PAPERS

*Shirak Centre of Armenian Studies*
*National Academy of Sciences*
*Republic of Armenia*

Издательство "Гитутюн" НАН РА "Gitutyun" Publishers NAS RA

ГЮМРИ 2005 GYUMRI

**Публикуется по решению Ученого совета**
**Ширакского центра арменоведческих исследований НАН РА**

**Редакционная коллегия:**
**Саргис Арутюнян, Арам Калантарян, Ашот Мелконян, Хачик Бадикян, Арам Косян, Саргис Петросян, Лариса Еганян, Амазасп Хачатрян, Карине Базеян, Карине Саакян, Асмик Арутюнян**

**Под редакцией Серго Айрапетяна**

Published by arrangement of the Scientific Council
of Shirak's Research Centre NAS RA

Editing stuff:
Sargis Harutunyan, Aram Qalantaryan, Ashot Melkonyan, Khachik Badikyan, Aram Qosyan, Sargis Petrosyan, Larisa Eganyan, Hamazasp Khachatryan, Karine Bazeyan, Karine Sahakyan, Asmik Harutunyan

Edited by Sergo Hairapetyan

*Լարիսա ԵԳԱՆՅԱՆ*

## *ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻ Մ. Թ. Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ (2004-2005թթ. պեղումների նախնական արդյունքներ)*

Աշոցքի սարահարթի հյուսիս արևմուտքում սարերով գոտևորված մի քանի կիլոմետր շառավիղով հարթության վրա իշխում են կենտրոնում բարձրացող երկու սարեր՝ Մեծ Սեպասարը և Փոքր Սեպասարը: Ախուրյան գետը բաժանում է սարերն ու նրանց հարավային լանջերին փռված համանուն գյուղերը: Հարթության հյուսիսային սահմանով արևելք-արևմուտք ձգվող սարերի վրա վանակատի ելքերով հայտնի Ալվորիկի (Յենի-յոլ) բնակավայրն է՝ իրարից հեղեղատով բաժանված կիկլոպյան երկու ամրոցներով, հարավ-արևմուտքում՝ Ամասիայի մ.թ.ա. III հազարամյակի հնավայրը:

1998թ. Աշոցքում իրականացված հնագիտական հետախուզության ժամանակ (Լ.Եգանյան, Հ. Խաչատրյան) Փոքր Սեպասարի (բարձր. 2053մ) գագաթին հայտնաբերվեցին կիկլոպյան ամրոցի մնացորդներ, Մեծ Սեպասարի (հյուսիսային լայնության 41° 03' 12" արևելյան լայնության 43° 49' 00", բացարձակ բարձրությունը 2081մ) լանջերին և գագաթի հարթության վրա՝ կառույցների հետքեր, սարից արևմուտք և հյուսիս փռված դաշտերում՝ վերգետնյա հարուստ նյութ (քարիդարյան գործիքներ, վաղբրոնզիդարյան և միջնադարյան խեցեղենի բեկորներ): Մեծ Սեպասարի վրա հայտնաբերվեց բնակավայր, որը զբաղեցրել է գագաթի երկարությամբ արևելքից արևմուտք ձգվող 1հա հարթությունը:

Անցյալ դարի 80-ական թվականներին մերձակա գյուղերի դաշտերի ոռոգումն ապահովելու նպատակով Մեծ Սեպասարի գագաթին կառուցված ջրամբարի շինարարությամբ հնավայրի արևմտյան կեսը հիմնովին ավերվել է: Արևելյան կեսում նկատելի են բնակավայրի հետքերը՝ մակերեսին ուրվագծվող շրջանաձև ու ուղիղ պատերով: Վերգետնյա խեցեղենը հիմնականում վերաբերում է մ.թ.ա. III հազարամյակին: Հարթության արևելյան մասում «Դարի սուրբ» սրբատեղին է:[1] Մատուռն արևելյան աբսիդով ուղղանկյուն սրահ է, որի արտաքին պատերին զուգահեռ երևում են ավելի վաղ կառույցի հետքեր:[2] Ներսում արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, երկու ուղղանկյուն ծածկասալերով դամբարան է, որի արևելյան կողմում ստելլա է՝ հետագայում փորագրված խաչով:

Մեծ Սեպասարում հետախուզական պեղումներ սկսվեցին 2004թ:[3]Աշխատանքներն ընթացան հնավայրի երեք տարբեր հատվածներում: Նախ պեղվեց հուշարձանի արևմտյան կողմում ջրատարի համար փորված և չօգտագործված խրամատի մեջ բացված կիսավեր մշակութային շերտը: Բացվեցին կացարանի արևելյան պատից պահպանված 2-3 շարք և հարավային պատի հետ անկյուն կազմող հատվածը: Պատերը շարված էին ճեղքված բազալտից տափակ քարերով: Արևելյան պատի տակ բացվեց 3,80մ երկարությամբ 50 սմ լայնությամբ մաստաբա՝ տափանված հատակից 30 սմ բարձր: Նշված պատից հարավ՝ նույն գծի վրա, բացվեց ավերված մեկ այլ ուղղանկյուն կացարանից պահպանված պատի հատված: Գտնվեցին վաղբրոնզիդարյան խեցեղենին բնորոշ սև փայլեցված արտաքինով և կարմիր աստառով, պարույրազարդ

---

*[1] Լ. Ե գ ա ն յ ա ն, Սեպասարի վաղբրոնզիդարյան բնակավայրի պեղումները, ՇՊՄԺ հանրապետական VI գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 8-9:*

*[2] Մատուռի հողե հատակի վրա մինչև 2004թ. հստակ երևում էին մանր քարերով եզրագծված սալարկղային թաղումները: 2005թ. հատակը պատել են սալաքարերով՝ նախնական տեսքով թողնելով մատուռի կենտրոնում գտնվող դամբարանը: Մի քանի դամբարան մնացել է սալահատակի տակ, իսկ երկուսը թեև շաղախով ծեփվել են, սակայն կողասալերի բարձր դիրքի շնորհիվ մնացել են սալահատակից բարձր:*

*[3] 2004թ. պեղումներն իրականացվեցին Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսես Տեր -Ներսիսյանի անձնական միջոցներով:*

կարասի և գավաթների բեկորներ, վանակատից նետասլաք, մանգաղի ներդիր, բրոնզից օղակաձև ականջօղ և միջնադարյան ապակյա ապարանջանի բեկոր: Ակնհայտ է, որ տարաժամանակյա նյութերը կողք-կողքի են հայտնվել բազմաշերտ բնակավայրի ավերման պատճառով:

Հուշարձանի սահմանները և շերտագրությունը պարզելու նպատակով 2x2 մետրաչափ խրամատներ դրվեցին սարի հարավային լանջին և գագաթի հարթության վրա: Առաջին խրամատի վերին շերտից գտնվեցին մ. թ. ա. III հազարամյակին բնորոշ խեցեղենի բեկորներ: Մեկ մետր խորության վրա բացվեց մայր հողը:

Երկրորդ խրամատը դրվեց գագաթի հարթության հյուսիսային հատվածում՝ արևելք-արևմուտք ուղիղ պատի երկայնքով: Բացվեցին իրար վրա նստած, տարբեր ժամանակաշրջանների պատերի մնացորդներ, ինչպես նաև ինչ-որ կառույցի պատի և սալահատակի հատված: 1,2 մ հզորությամբ մշակութային շերտի վերին հորիզոնից հայտնաբերված նյութերը վերաբերում են վաղ բրոնզի և վաղ միջնադարի, իսկ հատակի վրա գտնվածները՝ վաղ բրոնզի դարաշրջաններին:

Երրորդ խրամատը դրվեց հարավ-արևմտյան լանջի արհեստական դարավանդին՝ 35° թեքություն ունեցող հարթակի վրա, լանջի այս հատվածով մոտ 15 մ ձգվող պատի երկու կողմերում: Կիկլոպյան շարվածքով պատից պահպանվել է միայն մակերեսով գնացող մի շարքը: Մշակութային շերտի հզորությունը 60սմ է: Այստեղ գտնվեցին բարձրակարգ և խոհանոցային խեցեղենի բեկորներ, որոնք բոլորն էլ վերաբերում են վաղ բրոնզի ժամանակաշրջանին:

Չորրորդ խրամատը դրվեց սարի հյուսիսային լանջին, որտեղից գտնվեցին վանակատի արտեֆակտեր և վաղբրոնզիդարյան խեցեղենի բեկորներ:




Հնավայրի արևմտյան կեսում պեղվեց մի կառույց, որի պատերի շրջանաձև ուրվագիծն ընթերցվում էր մակերեսին: Բացվեցին բազալտե քարերի անկանոն շարքերով միջնադարյան կառույցի պատերը և դրանց վերաբերող սալահատակը, որի տակ, 50 սմ հողաշերտից հետո բացվեց միջին մեծության գետաքարերով կիպ շարված մեկ այլ հատակ: Սրա տակ՝ կարմրավուն հրաբխային խարամի հետ խառնված կավանման

հողի վրա, բացվեցին իրար մեջ դրված տարբեր չափերի, լավ քրծված, բարակ և նուրբ խեցիով, փայլեցված մակերեսով սաջերի, կարմիր արտաքինով ու սատառով, խոռակոս քառանկյուն և սակրաձև նախշերով ամանի, ինչպես նաև սև, փայլեցված արտաքինով և կարմիր սատառով խեցեղենի բեկորներ, որոնք վերաբերում են մ.թ. ա. III հազարամյակին: Պեղումները ցույց տվեցին, որ վաղբրոնզիդարյան հատակի հետ կապվող պատերը մնացել են վաղ միջնադարում վերակառուցված շինության տակ: 2005թ. պեղումները ծավալվեցին բնակավայրի հյուսիսային և հարավ-արևմտյան հատվածներում:[4] Պեղված հատվածները միացնելու և մեկ համալիր ստանալու նպատակով դրվեց երկու քառակուսի. առաջինը՝ կլոր կացարանի արևելյան պատին կից, երկրորդը՝ քիչ հյուսիս-արևելք՝ ներառելով նախորդ տարի խրամատի մեջ բացված պատը: Բացվեց վաղ միջնադարյան կառույց՝ որի իրար պատկից սենյակները բացվում են նույն միջանցքի մեջ: Վաղ բրոնզիդարյան շերտ պահպանվել է սենյակների և միջանցքի տարբեր հատվածների հատակի տակ:

Հարավային սենյակի տարբեր հատվածներում բացվեցին մ.թ.ա. IIIհազարամյակի բնակավայրից պահպանված սալահատակների, վարդագույն հրաքխային խարամի վրա կավով տափանված հատակների և հյուսիս-հարավ ձգվածությամբ պատի որոշ հատվածներ: Նույն ժամանակաշրջանի հատակ բացվեց նաև հարավային սենյակից միջանցք տանող հատվածում: Միջանցքի մեջ, 1,5 մ խորության վրա, բացվեց սալահատակի հատված, որի վրա դրված կառույցի արևելյան պատից պահպանվել է ստորին երկու շարքը: Հատակին վերաբերող պատն այնուհետև թողնվել է հաջորդ սալահատակի տակ: Պատի և սալահատակի անկյունում, ինչպես նաև հատակի տակ գտնված նյութերը նույնն են՝ մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ կարմիր սատառով և սև փայլեցված արտաքինով խեցեղեն: Այս սենյակի արևելյան պատի տակ պահպանված մ. թ. ա. III հազարամյակի հատակի վրա դրված միջնադարյան կառույցի արևելյան անկյունում՝ գտնվեց երկրորդական օգտագործմամբ դրված նավաձև աղորիքի բեկոր:




---

[4] *2005թ. պեղումներն իրականացվեցին Projecte Discovry հիմնադրամի դրամաշնորհով:*

Մեկ այլ աղորիք և կավե օջախի ոտք գտնվեցին հյուսիսային պատի մոտ քարերով շարված օջախի կողքին, սև փայլեցված արտաքինով և կարմիր աստառով խեցեղենի, մանր եղջերավոր անասունների ոսկորների և օխրայի փոքր կտորների հետ: Այսպիսով, հարավային սենյակում առաջին շինարարական հորիզոնից պահպանվել է արևելյան պատի ստորին երկու շարքը և սալահատակը:

Հյուսիսային սենյակի սալահատկի վրա բացվեց թեքությամբ ընկած գերան, որի հիմքը սալահատակի տակ էր: Բնակարանի ավերման ժամանակ գերանը մնացել է 50 սմ հողաշերտի տակ, որի վրա հետագայում դրվել է միջնադարյան կառույցի պատը: Այստեղ մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենի հետ գտնվեց ոսկորից քերիչ:

Միջանցքից հյուսիս-արևմուտք բացվեց վաղբրոնզիդարյան կառույցից պահպանված կավածեփ, քիչ գոգավոր հատակ: Հատակի վրա բացվում է օջախ-կրակարանի բերանը: Օջախի արևմտյան կողմում աղեղնաձև շարված մի քանի փոքր քարերի վրա բարակ մոխրաշերտ էր: Հատակին գտնվեցին մանր եղջերավոր անասունի ծնոտ, սև փայլեցված արտաքինով և կարմիր աստառով, դարչնագույն արտաքինով և աստառով կարասների բեկորներ, հարավային հատվածում՝ կողք-կողքի դրված սեպաձև փոքրիկ կոկիչ և ճկան խեցի: Օջախից հարավ-արևմուտք գտնվեցին սև փայլեցված կարասի բեկորներով փակված հինգ նույնատիպ գավաթներ՝ նստուկները մասամբ կավածեփ հատակի մեջ: Այս հատակից 20 սմ բարձր դրվել է վաղ միջնադարյան կառույցի արևելյան պատը: Հատակի և պատի հիմքի միջև մնացած մշակութային շերտից գտնված խեցեղենի բեկորները և մանր եղջերավոր անասունի ոսկորները վերաբերում են վաղ բրոնզի դարաշրջանին: Կավածեփ հատակն ավարտվում է նշված պատին զուգահեռ դրված, փոքր գետաքարերով շարված պատի տակ: Երկրորդ պատն ու հատակը համաժամանակյա են և վերաբերում են մ. թ. ա. III հազարամյակին: Դա հաստատվում է և հատակի տակ թողնված օջախի, և հատակին գտնված նյութերի տվյալ ժամանակաշրջանին բնորոշ ճևաոճական առանձնահատկություններով (սև փայլեցված արտաքին, կարմիր աստառ, դարչնագույն արտաքին և աստառ, երկատված և խուլ ունկեր, իրանի մի կողմում ոճավոր թռչնազարդին զուգակցված պարույրներ և համակենտրոն շրջաններ, ռելյեֆ ներճկված և գծային նախշազարդ՝ վզի տակ): Վերակառուցման ժամանակ պատի այդ փոքր հատվածը ներառվել է հյուսիս-արևմուտք հարավ-արևելք ուղղությամբ դրված նոր պատի մեջ, որից պահպանված կոպտատաշ, միջին մեծության քարերով շարված արևելյան երեսը հարավ-արևելյան անկյունում մասամբ նստած է բրոնզիդարյան պատի վրա: Հատակից 30 սմ բարձր, գտնվեց քարե կուռք, որը վերաբերում է այս հորիզոնին:

Հատակի ճևը, ամանի մեջ կրակի հետքերը, հատակին գտնված անասունի ոսկորների և միևնույն ամանի բեկորների հատակի տարբեր մասերում գտնվելը, մոխրաշերտի առկայությունը կառույցի ծիսական բնույթի մասին են վկայում: Սակայն միայն հետագա պեղումներով կպարզվեն կառույցի չափերը, բնույթը և դրանց հետ կապված տարաբնույթ այլ հարցեր:

Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան շերտը թեև պեղման մեծ տարածք չի ընդգրկում, խիստ ավերված է և պահպանված է հատվածաբար, սակայն բավական հարուստ է դարաշրջանի մշակույթի ուսումնասիրության համար հետաքրքրություն ներկայացնող նյութով:*

Մոտ 50 սմ հզորությամբ վաղբրոնզիդարյան շերտը համասեռ չէր: Վերին հորիզոնը՝ սալահատակի վրա մոխրախառն հող էր, ստորինը՝ սալահատակից ցած, հրաբխային խարամի կարմրավուն փշրանքներով հարթեցված և կավով տափանված հատակ, իսկ որոշ հատվածներում էլ՝ միայն մայր հողը: Սարի տարբեր հատվածներում դրված խրամատների ստուգողական պեղումները ևս հաստատում են, որ բնակավայրը հիմնվել է գագաթի հարթության վրա: Շերտագրական տվյալները փաստում են, որ բլուրը բնակեցված է եղել սկսած մ. թ. ա. III հազարամյակից: Վերակառուցում է ունեցել և վաղ բրոնզի ժամանակաշրջանում, և վաղ միջնադարում: Այս իսկ պատճառով էլ բրոնզիդարյան խեցեղենը հայտնվել է և մակերեսին, և վաղ միջնադարյան շերտում:

---

* *Պեղված մոտ 30 քառ. մակերեսով և 50սմ հզորությամբ վաղբրոնզիդարյան շերտից հազարից ավելի ամբողջական և բեկորային իրեր են հայտնաբերվել:*

Մեծ Սեպասարի մ.թ.ա. III հազարամյակի մշակույթը հիմնականում ներկայանում է խեցեղենով. առավելապես վարդագույն աստառով և սև փայլեցված արտաքինով, ինչպես նաև վարդագույն արտաքինով և աստառով ամաններ՝ ամբողջական և բեկորային: Հայտնաբերվել են կարասներ, գավաթներ, թասեր, խուփերի, օջախների հենակների բեկորներ: Ինչպես բարձրակարգ, այնպես էլ խոհանոցային խեցեղենի բեկորների և ճեղքված մասերի վրա նկատելի են սև հետքեր: Հռոմի CISTeC, Research Center on Cultural Heritage University of Roma la Sapienza լաբորատորիայում կատարված անալիզները ցույց են տվել, որ ամանները վերականգնելու համար օգտագործվել է բիտում՝ բնական նավթ: Նույնիսկ հասարակ խեցեղենի վերականգնման համար բնական նավթի օգտագործումը նշանակում է, որ հումքը տեղական էր, հանքավայրը՝ մոտ: Գտնված հարուստ ու բազմազան խեցեղենը ենթակա է ամբողջական և մասնակի վերականգնման,* որը հնարավորություն է տալիս ներկայացնել կավանոթների ձևերի բազմազանությունը:

*Կարասները* եռամաս են, ունեն սև փայլեցված մակերես, կարմրավուն, անփայլ աստառ, լայն բերան, քիչ ետ ճկված շուրթ, կարճ վիզ: Նստուկները փոքր են և տափակ, իրանը՝ երկթեք: Շուրթը վզին է միանում զույգ հակադիր երկատված ուռնկով: Ամանի մի կողմում, ուռնկից ուղղահայաց գծերի միջև ընկած հատվածում նախշեր են՝ ռելյեֆ ներճկմամբ ոճավորված երկրաչափականը զուգորդված պարույրների և համակենտրոն շրջանների հետ (տախտ. I, նկ. 8, տախտ. II, նկ.4, տախտ. IV, նկ. 6): Գծիկային նախշազարդ է կարասի ամանի մի կողմում վզի տակով անցնող խորակոս գծերի միջև ընկած հատվածը (տախտ. I, նկ. 8): Երկրորդ տիպի կարասների վիզն ավելի երկար է, իրանի փքունությունը՝ ավելի կլորացված: Սրանք ունեն եռանկյունաձև, խոյագլուխ հիշեցնող ոճավորված կեղծ ուռնկ, որ մասնագիտական գրականության մեջ ընդունված է որպես կտցաձև (տախտ. IV, նկ. 3): Կարասների դիմերեսին, իրանի փքուն մասում պատկերված ոճավորված ռելյեֆ ներճկված նախշազարդի մի դեկորը կրկնվում է վզի վրա: Կարասներից մեկի իրանի կեսից մինչև նստուկը կոկված չէ, մակերեսը խորդուբորդ է (տախտ. IV, նկ.1): Նստուկի վրա պահպանվել են բիտումով արված վերականգնման հետքեր: Ամանի մեծ չափերը (բերանի տրամ. 48 սմ, բարձր. 50 սմ), տարողունակությունը և շատ փոքր նստուկը (տրամ. 8,5 սմ) ենթադրում են, որ ամանը դրվել է անշարժ՝ նստուկը հողի մեջ: Նշված հատվածը չի կոկվել և մակերեսի անհարթությամբ մեծացված շփման մակերեսն ապահովել է ամանի հաստատուն դիրքը:

Մեծ Սեպասարի կարասներն ունեն 34,5-48 սմ տրամագծով բերանի բացվածք, 34,5-50 սմ բարձրություն: Գտնվել են նաև կարմիր կարասների տարբեր բեկորներ, որոնց մեջ՝ ռելյեֆ նախշազարդմամբ մեծ կարասի իրանի հատված ներճկված քառակուսի և սակրաձև նախշով (տախտ. III, նկ.17): Բեկորային խեցեղենի մեջ կան ինչպես ոճավորված ռելյեֆ ներճկված նախշազարդերով (տախտ. III, նկ.1-17), գծազարդ, այնպես էլ կեղծ ուռնկերով կարասների բեկորներ (տախտ. IV, նկ. 2):

Կարասներ հայտնի են Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի բոլոր հնավայրերից: Ձևերն ու զարդանախշերն իրենց զուգահեռներն ունեն Քուռ-Ար-

* *Խեցեղենի վերականգնումը կատարվել է Շիրակի երկրագիտական թանգարանում. նկարիչ-վերականգնողներ՝ Հ. Ավետիսյան և Ռ. Սարգսյան: Տախտակները՝ նկարիչ Վ. Թոփչյանի, չափագրությունները՝ ճարտարապետ Լ. Միքայելյանի:*

թերում,[5] Շենգավիթում,[6] Գառնիում,[7] Ջաղացատեղում,[8] Մեծամորում,[9] Կառնուտում,[10] Հառիճում,[11] կտցաձև կախված շուրթերը՝ Գառնիում,[12] Էլառ Դարանիում:[13]

*Գավաթներից* հինգն ամբողջական են, կան նաև բեկորային գավաթներ: Սրանք, ինչպես և կարասները, եռամաս են, սև փայլեցված արտաքին ունեն, կարմրավուն կամ գորշ աստառ, բարակ, ետ ճկված շուրթով լայն բերան, կարճ վիզ, փքուն իրան, իրանից կտրուկ անցումով ձևավորվող փոքր նստուկ:

Տախտակ I



---

[5] *Ս. Դ և ե ջ յ ա ն, Հնագիտական հետազոտությունններ Տաշիր-Ձորագետում, Եր., 2001, էջ 28, աղ.VIII նկ. 8:*

[6] *Ս. Ս ա ր դ ա ր յ ա ն, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 176-179, աղ. L, LI:*

[7] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, Գառնի IV, 1949-1966 թթ. պեղումների արդյունքները, Եր., 1969, էջ 46-48:*

[8] *С. Е с а я н, Культура племен Северо—Восточной Армении, Ер., 1976, стр. 17, табл. 3, рис. 7:*

[9] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, Մեծամոր, Եր., 1973, էջ 34, նկ.41:*

[10] *Р. Б а д а л я н, Раннебронзовое поселение близ с Карнут, Պատմա-բանասիրական հանդես, 1984, N 1, стр, 232, рис. 2/12, 18, 19, 20:*

[11] *Т. Х а ч а т р я н, Древняя культура Ширака, Ер., 1975, стр, 63—64, рис. 18—21:*

[12] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, էջ 60, նկ. 57, 58:*

[13] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, Էլառ-Դարանի, 1979, էջ 31:*

## Տախտակ II




Գավաթներից երկուսը իրանի փքուն մասի վրա ունեն 2 սմ երկարությամբ ելուստավոր, փոքր կեղծ ունկ (տախտ. I, նկ.1,6): Ավերված մասից գտնված գավաթներից մեկի իրանի վրա ոճավոր թռչնազարդ է (տախտ. II, նկ. 1): Գավաթներն ունեն 9,5-12,5 սմ բարձրություն, բերանի բացվածքը՝ 9,5-13 սմ, նստուկները փոքր են՝ 2-5 կամ 3,5 սմ, իսկ ձևը առաջին խմբի կարասների կրկնօրինակումն է (տախտ. I, նկ.1-6, տախտ. II, նկ.1): Մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ այսօրինակ նրբախեցի գավաթներ հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի համարյա բոլոր հնավայրերում:




Հայտնի են Քեթիից,[14] Գառնիից,[15] Նոր Խաչակապից[16] և այլ հնավայրերից: Սրանց տարածման տիրույթը շատ մեծ է, հյուսիսում հասնում են մինչև Թրիալեթի, հարավում՝ Գեոյ-թեփե և Կիրբեթ-Կերակ:[17]

*Սափորները* նույնպես եռամաս հորինվածքով են:Գտնված երեք սափորներից երկուսն ունեն սև փայլեցված արտաքին և գորշ աստառ, երրորդը՝ կարմրավուն փայլեցված արտաքին և անփայլ աստառ, բարակ շուրթ, գնդաձև իրանի մեջ սեղմված նեղ և երկար վիզ: Սև սափորներից մեկի իրանի մի կողմում պահպանվել է երկատված կիսագնդաձև մեծ ունկ, որից վերև ոճավորված ռելյեֆ գծանախշ է (տախտ. II, նկ. 2): Ամանի երեք ունկերից պահպանվել է մեկը: Մեծ Սեպասարի այսօրինակ մեկ այլ՝ կարմիր սափորի վզի տակ խորակոս, զուգահեռ գծերի միջև թեք խազանախշեր են (տախտ. II, նկ. 3): Եռականք այսպիսի սափորները վաղ բրոնզում փոքրաթիվ են: Մի սափոր գտնվել է Լորուտից,[18] որը թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ

---

[14] *Л. П е т р о с я н, Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.), Ер., 1989, табл. 13/$_7$, стр. 24.*

[15] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, էջ 54, նկ. 50:*

[16] *Ն. Ե ն գ ի բ ա ր յ ա ն, Հայտնագործումներ Նոր Խաչակապում, Հուշարձան տարեգիրք, Գ, Եր., 2005, էջ 81:*

[17] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Եր., 1967, էջ 63:*

[18] *Ս. Դ և ե ջ յ ա ն, նշվ. աշխ., էջ 12, աղ. III, նկ. 1, ա, բ:*

կետով, հայտնի են նաև Գառնիից,[19] Էջմիածնի Մոխրաբլուրից,[20] Կառնուտից,[21] Վրաստանում՝ Օզնի, Սաղախլո, և Կվացխելեբի հնավայրերից:[22]

*Սաջերը* գտնվել են կլոր կացարանում՝ հատակի տակ: Սրանք տափակ նստուկով փռված կողերով ամաններ են՝ մի կողմում ուղիղ և խորը բացվածքով: Առաջին սաջի հատակին մայր հողի կարմրավուն բարակ շերտ էր, ապա իրար մեջ շարված մյուս սաջերը՝ մեծից փոքր: Ըստ ձևերի, սաջերը կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբում բարակ, 0,5-0,6 սմ հաստությամբ, նուրբ, լավ կոկված և փայլեցված մակերեսով, դեպի դուրս թեքված կողերով ամաններն են (տախտ. V, նկ. 6, 7, 9, 11): Պահպանված բեկորներով մասամբ վերականգնված այս խմբի սաջերից մեկի նստուկն ունի մոտ 35 սմ տրամագիծ (տախտ.V,նկ. 9): Կոտրված լինելու պատճառով կողերի բարձրությունն անհայտ է: Նշված խմբից պահպանվել են երեք տարբեր սաջերի կողերի և նստուկների բեկորներ, որոնք սակայն ամբողջացնող պատկեր չեն տալիս:

Տախտակ IV



---

[19] Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, էջ 71, նկ. 69:

[20] Ս. Գ և ե ջ յ ա ն, նշվ. աշխ., էջ 31:

[21] Նույն տեղում, էջ 32:

[22] Б. К у ф т и н, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, Тбилиси, 1948, табл. XXXIX.

Երկրորդ խմբում, 1,3-2 սմ հաստությամբ պատերով, դեղնավուն և վարդագույն, նույնպես մանրահատիկ, լավ հունցված կավից սաջերն են:
Սրանց մակերեսը կոկված է, իսկ մեկը՝ նաև ներկված: Սաջերից մեկի շուրթը նույնպես ներկված է, այսինքն ամանը վնասվելուց հետո էլ օգտագործվել է (տախտ.V, նկ. 8): Կողերը բարձր են, ուղիղ (պահպանված թերի կողերի բարձրությունը՝ 12 սմ), դիմացի բացվածքինը՝ 4,5սմ: Սաջն, ըստ վերականգնված հատվածների, ունեցել է մոտավորապես 60 սմ լայնություն, իսկ բացվածքը՝ մոտ 35 սմ: Նստուկի վրա պահպանված հետքերը ենթադրում են, որ այն ևս պատրաստվել է խոտածածկ գետնին, ինչպեսև այս խմբի մյուս սաջերը: Սաջերի կողերի վրա նկատելի են կրակի հետքեր:

Երրորդ խմբում կողերը ներս սեղմված սաջերն են (տախտ.V, նկ. 1-5): Կողերից մեկի վրա քառանիստ, մյուսի վրա՝ ուղղանկյուն զարդանախշ է (տախտ.V,նկ.3,5): Սաջերի չափերը և խեցու բարակությունը ենթադրում են, որ դրվել են անշարժ դիրքով: Սաջերի վաղ օրինակները հայտնի են էնեոլիթյան հուշարձաններից: Վաղբրոնզիդարյան սաջեր գտնվել են Քեթիից,[23] Ագարակից:[24] Ընկույզի կեսի նմանվող այսպիսի ամաններ հայտնի են վաղբրոնզիդարյան Ջաղացատեղ բնակավայրից:[25]

*Կճուճներ:* Խոհանոցային խեցեղենի մեջ կան բաց դեղնավուն, մանրահատիկ, լավ հունցված կավից կճուճներ, որոնք ունեն քիչ դուրս ճկված շուրթով բերան, փքուն իրան: Իրանի հակադիր կողմում երկատված կամ կցված զույգ ունկեր են (տախտ. IV, նկ. 3-5,7-9): Կճուճներից մեկն ունի բաց դարչնագույն փայլեցված արտաքին, իրանն ու բերանի բացվածքը հավասար են՝ 23,5սմ: Քիչ ետ ճկված և ուղիղ կտրված շուրթն իրանին է միացել զույգ հակադիր ունկերով, որոնք հիմքից կոտրված են:Նստուկը փոքր է, տրամագիծը՝ 6սմ (տախտ. I, նկ. 7):

*Կավե օջախներ:* Օջախների բեկորներ գտնվեցին բնակավայրի տարբեր հատվածներից. կացարանի հատակին քարերով շարված օջախի կողքին՝ աորիքի վրա, ինչպես նաև ավերված տարածքից: Սրանք կտրվածքում տարբեր են՝ ուղղանկյուն կամ եռանկյուն (տախտ. VI, նկ. 6-10): Գտնված բոլոր բեկորները դեղնավուն, մանրահատիկ, լավ հունցված և լավ թրծված կավից են, տեղ-տեղ՝ նաև կրակից սևացած: Պահպանված քիչ կորացող ոտքերը հիշեցնում են Շենգավիթի[26] օջախների պատվանդանները: Նույն տեղից գտնված պայտաձև օջախի բեկորը երկարավուն և ձգված խոյի գլուխ է (տախտ. VI, նկ. 5): Խոյի ոճավորված, կցված գլուխն եզերված է զուգահեռ զույգ գծերով: Աչքերն արված են օղակի ձևով, որոնցից վերև պահպանվել են եղջյուրների աղեղնաձև հիմքերը: Զուգահեռը Հառիճում[27] է, ուր գտնված ծիսական օջախները նույն խոյագլուխ ոտքերն ունեն:

Շարժական օջախները տարածված են Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի և Սիրիայի վաղբրոնզիդարյան հուշարձաններում: Հիմնականում կենդանակերպ կամ մարդակերպ են: Ընդունված է այն տեսակետը, որ շարժական օջախները խորհրդանշել են արական սկիզբ և տղամարդու կողմից տնային օջախի արգասավորումը:[28] Շարժական օջախները լայն տարածում են ունեցել վաղբրոնզիդարյան մշակույթի տարբեր հուշարձաններում. Գառնի,[29] Շենգավիթ,[30] Քոսի ճոթեր,[31] Արևիկ[32] Քեթի,[33] Վրաստանում՝ Օզնի,[34] Զգուդրիս Գվերդա,[35] Հյուսիսային Կովկասում՝ Լուգովոյե:[36]

---

[23] *Л. П е т р о с я н, նշվ. աշխ., էջ 32, տախտ. $19/_{8,9}$:*

[24] *Գ. Թ ու մ ա ն յ ա ն, Ագարակի հնավայրի I տեղամասի 2002թ. պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, XIII , Եր., 2005, էջ 63:*

[25] *С. Е с а я н, նշվ. աշխ., տախտ. $4/_{7,8,9}$:*

[26] *Ս. Ս ա ր դ ա ր յ ա ն, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր.,1967, էջ $175/_{3,4,5}$:*

[27] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 78, նկ. 39—41.*

[28] *К. К у ш н а р е в а, Т. Ч у б и н и ш в и л и, Древние культуры Южного Кавказа (V—III тыс. до н.э.), Л., 1970, стр. 165.*

[29] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, էջ 68-69, աղ. $XV_3$, $XVII_3$:*

[30] *Ս. Ս ա ր դ ա ր յ ա ն, նշվ. աշխ, էջ $175/_{2,4,5}$:*

[31] *Ս. Դ և ե ջ յ ա ն, նշվ. աշխ., էջ 35:*

[32] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, էջ 69:*

[33] *Л. П е т р о с я н, նշվ. աշխ., տախտ.$14/_{1,7}$:*

[34] *Б. К у ф т и н, նշվ. աշխ., էջ 36.*

Խոյագլուխ շարժական օջախներ հայտնի են Հառիճից,[37] Էջմիածնի մոխրաբլուրից,[38] Գառնիից,[39] Քոսի-ճոթերից:[40]

Տախտակ V




Մեկ այլ օջախ բացվեց ինչ-որ կառույցից պահպանված հատակի վրա:* Մայր հողի մեջ դրված անոթի բերանը (տրամ. 18սմ) բացվում է հատակի գոգավոր մասի վրա: Նստուկը բացակայում է, ներսից՝ վզի տակից, ծեփված է կավի շատ բարակ շերտով, որը հասնելով շուրթին, թեքև անցումով, շարունակվում է հատակի վրա, ապա աստիճանաբար ձուլվում է մայր հողի հրաբխային խարամով հարթեցված և կավով տափանված հատակին: Գավաթի մեջ կրակի հետքեր են: Նման մի օջախ բացվել է Նորաբացում, ուր ինչպես և Մեծ Սեպասարում, հատակի տակ դրվել է ամանի վերին

---

[35] *В. Л ю б и н, Археологическая разведка в окрестностях города Сталинири, КСИИМК, вып. 60, стр. 15, рис. 18.*

[36] *Р. М у н ч а е в, Древнейшая культура Северо—Восточного Кавказа, МИА, ном. 100, 1961, стр. 126.*

[37] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 71—72, նկ. 39—41:*

[38] *Ս. Մ ա ր դ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 175, նկ. 6:*

[39] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, աղ. XIV, XV, XVII, նկ. 2:*

[40] *Ս. Դ և ե ջ յ ա ն, նշվ. աշխ., նկ. 8: Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 71—72, рис. 39—41.*

* *Կառույցը մասամբ է պեղված:*

մասը:[41] Հառիճում նման մի օջախի համար օգտագործվել է ճվածիր, առանց նստուկի բաժակ:[42] Եվ Հառիճում, և Նորաբացում օջախի համար օգտագործված անոթների նստուկների բացակայությունը, իսկ Մեծ Մեպասարում նաև կառույցի կավածեփ հատակի գոգավորությունն արվել են որոշակի նպատակով: Ակնհայտ է օջախի ծիսական գործառույթը և բացված հատվածը ծիսական կառույցից պահպանված հատակ է:*

Տախտակ VI




Պաշտամունքային բնույթի օջախներ հայտնի են Ջրահովիտից ու Շենգավիթից:[43] *Հենակ-պատվանդաններ:* Սաջերի հետ գտնված տարբեր ամանների

---

[41] *Г. А р е ш я н, Норабац—новый намятник энохи бронзы, Сб. Археологические открытия 1979, М., 1980, стр. 423.*

[42] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 72:*

* *Այսօր էլ Մեծ Մեպասարը սրբատեղի է, որ հաստատում է հեթանոսական պաշտամունքային կառույցները քրիստոնեությամբ սրբացվելու և սրբատեղիների վերածվելու մասին Փավստոս Բուզանդի վկայությունը «...այն տեղերը, որոնք առաջ կուռքերի պատկերների տեղեր էին և հետո Աստծու անունով մաքրվեցին ու դարձան աղոթքի տներ և ուխտատեղիներ բոլորի համար» /Բուզ. Դ դպր. գլուխ Գ/, Եր., 1968:*

[43] *Ա. Գ ն ու ն ի, Շենգավիթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները,Պատմաբանասիրական հանդես, թիվ 1, 2004, էջ 203:*

բեկորների մեջ կան նաև պատվանդանի մասեր: Առաջինը 3սմ հաստությամբ, վարդագույն, մանրահատիկ, լավ հունցված, համասեռ և շատ լավ թրծված կավից, տափակ հարթակ է՝ անկյուններից ելնող ելուստներով (տախտ.VI, նկ. 1): Պահպանված բեկորներով վերականգնված հատվածը (երկ. 25սմ, լայն.15սմ) թույլ է տալիս ենթադրել, որ պատվանդանն ունեցել է կամ եռանկյուն կամ քառանկյուն հարթակ՝ եզրերից թեքությամբ աստիճանաբար իջնող, իրանի հետ միաձույլ ոտքերով, որոնցից երկուսի հիմքերն են պահպանվել: Հենակների կողերից մեկի վրա սպիտակ ներկի, նաև կրակի հետքեր կան: Մեկ այլ՝ դեղնավուն, մանրահատիկ կավից, շատ վատ թրծված պատվանդանի բեկորներ գտնվեցին հուշարձանի ավերված հատվածից:Պահպանվել է իրի մոտ մեկ երրորդը՝ իրանի և ոտքի հատվածով: Հարթակից ոտքեր անցումներն արված են ընդգծված կողային նիստերով (տախտ. VI, նկ. 2): Ելնելով պահպանված հատվածից և տարբեր հնավայրերից գտնված հայտնի տարբերակների համադրումից՝ այն կրկնում է Հառիճից գտնված եռանկյունի կամ քառակուսի պատվանդանների ձևը:[44] Հենակ պատվանդաններ հայտնի են Դվինից, Շենգավիթից, Շրեշ բլուրից:[45]

*Խուփեր:* Գտածոների մեջ կա նաև սկավառակաձև երկու խուփ: Երկուսն էլ թեև բեկորային են: Խուփերից մեկը (տրամ. 14,5 սմ, հաստ.1,5սմ) մոխրագույն է՝ մանրահատիկ կավից, քիչ անկանոն և անհարթ մակերեսով: Կենտրոնում պահպանվել է ունկի հիմքը: Արտաքին երեսը զարդարված է խորակոս համակենտրոն շրջաններով (տախտ. VI, նկ. 3): Մյուսից պահպանված բեկորը մանրահատիկ կավից է, լավ հունցված և լավ թրծված: Ունի սև փայլեցված արտաքին, շուրթը հարթ է և լայներիզ, կենտրոնը՝ գոգավոր (տախտ. VI, նկ. 4): Խուփեր գտնվել են վաղբրոնզիդարյան բազմաթիվ հուշարձաններից. Կառնուտ,[46] Քեթի:[47] Ելնելով Շիրակավանից,[48] Հառիճից,[49] Էլառից,[50] Ջաղացատեղ ամրոցից[51] գտնված համանման ձևերից՝ առաջին խուփն ունեցել է կիսազնդաձև բռնակ:

Խեցեղենի քննությունը ցույց է տալիս, որ ըստ որակական հատկանիշների, կան բարձրակարգ ու հասարակ անոթներ: Անկախ խեցեղենի ծիսական կամ կենցաղային-կիրառական նշանակությունից, բոլոր իրերը բարձրորակ են: Բարձրակարգ խեցեղենի մեծ մասը եռամաս է՝ վզի, իրանի, նստուկի հատվածներում կտրուկ անցումներով, լավ հունցված և շատ լավ թրծված է, ունի հարթ, կոկված մակերես, մեծ մասամբ զարդանախշված է: Նախշերն արված են իրանի փքուն հատվածում, վզի վրա, ունկից վերև: Զարդաձևերը երկրաչափական են. համակենտրոն շրջան, քառակուսի, պարույր, զիգզագներ, ոճավոր թռչնազարդ, սկրանման նախշ, զուգահեռ գծեր, որոնք հաճախ կետածածկ են: Գծազարդն արված է վզի տակ:

Ներճկված և գծային զարդանախշումը կատարվել է մինչ թրծելը՝ խոնավ կավի վրա սեղմելու և փորագրելու եղանակով: Կավանոթների փքուն իրանը զարդանախշված է միայն մի կողմում՝ ունկից-ունկ ընկած հատվածում: Երբեմն նախշի ընդհանուր պատկերից մի դետալ կա վզի վրա: Շուրթերը բարակ են, ներսի կողմից՝ լայն ժապավենով փայլեցված: Կան նաև կտցաձև շուրթեր, որ վերածվում են ունկի: Ունկերը տարբեր են. կեղծ ելուստավոր եռանկյունաձև, երկթեք, կիսազնդաձև և կտցաձև:Բարձրակարգ խեցեղենը տոնական կամ ծիսական է և հավանաբար օգտագործվել է որոշակի արարողությունների ժամանակ և զարդանախշումներն էլ որոշակի իմաստ ու բովանդակություն են կրել:

---

[44] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 72, նկ. 33:*
[45] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1967, էջ 67, աղ. XVIII:*
[46] *Р. Б а д а л я н, նշվ. աշխ., նկ. 2/$_{16,17}$:*
[47] *Л П е т р о с я н, նշվ. աշխ., էջ 24, տախտ. 14/$_{4}$.:*
[48] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Հին Շիրակավան ( 1977-1981թթ. պեղումների արդյունքները), Եր., 2002, էջ 13, աղ 1/$_{10}$:*
[49] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 73, նկ. 34:*
[50] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1979, էջ 35, 1969, նկ. 66: Նույնի, 1967, նկ. 19: Նույնի, 1978, նկ. 24:*
[51] *С. Е с а я н, Древняя культура племен Северо—Восточной Армении, Ер., 1976. табл.18/$_{5,6}$.*

Տախտակ VII



Վերը բերված ձևերով նախշազարդմամբ և խեցեղենը բնորոշ է Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա III հազարամյակի մշակույթին և բազմաթիվ զուգահեռներ ունի Հայաստանի համաժամանակյա բոլոր հուշարձաններում: Խեցեգործության և արտադրության այլ ճյուղերի զարգացման մասին վկայում են հայտնաբերված նյութերը: Հատակին քարերով շարված օջախի մոտ գտնված վառ նարնջագույն օխրայի բեկորները խեցեգործական արտադրության հետ են կապված:Նույն տեղում գտնված նավաձև աղորիքի վրա պահպանված վարդագույն հետքերը Մեծ Սեպասարի մայր հողին բնորոշ հրաբխային կարմիր խարամն աղալու հետևանքով են առաջացել: Այս ապարի փոշին է հավանաբար որպես ներկանյութ օգտագործվել խեցեգործության մեջ. գտնված խեցեղենի մեջ բազմաթիվ են ապարի վարդագույն երանգն ունեցող սաջերն ու կարասները: Խեցեգործական արտադրության մասին են վկայում նաև խոշոր եղջերավոր անասունի ոսկրերից պատրաստված գործիքները: Խեցեղենը ցույց է տալիս, որ լայն աղերսներ ունենալով Կուրարաքսյան մշակույթի բազմաթիվ հուշարձանների հետ, առավել մոտ է Կառնուտին: Ելնելով ձևաճական և շերտագրական դիտարկումներից՝ խեցեղենի ձևերի, զարդանախշերի վերլուծություն և համաժամանակյա հուշարձանների գտածոների հետ համեմատություն և համադրում, Մեծ Սեպասարը վաղբրոնզիդարյան բնակավայրը կարող է թվագրվել մ.թ.ա. 26-24/22 դարերով:

*Աշխատանքային գործիքներ:* Սրանք պատրաստված են քարից, օբսիդիանից և ոսկորից: Քարից գործիքները աղորիքներ են, սանդեր, սանդկոթեր, կոկիչներ, տրորիչներ, մանգաղի ներդիր: Ներդիրն ունի գոգավոր երկու երեսից մշակված բանող եզր և քիչ ուռուցիկ մեջք, կտրվածքում՝ ձգված էլիպսի ձև (տախտ. VIII , նկ. 9): Մակերեսը մշակված է պոկելու եղանակով: Սրանք ի հայտ են գալիս IV հազարամյակի վերջում և լայն տարածում են ստանում III հազարամյակում:




Գտնվել են բազմաթիվ հուշարձաններում. Հառիճ,[52] Գառնի,[53] Շենգավիթ,[54] Քոսի-ճոթեր,[55] Քեթի,[56] Էլար:[57] Բազալտից նավաձև հինգ տարբեր աղորիքների բեկորներից (տախտ. VII, 6-9,11), երկուսը ծակոտկեն բազալտից են, ունեն 11սմ լայնություն, 4սմ հաստություն: Մյուս երեքը բաց վարդագույն բազալտից են: Աղորիքների զուգահեռները Հառիճ,[58] Քոսի ճոթեր,[59] Գառնի[60] և Քեթի[61] համաժամանակյա հուշարձաններում են: Սաջերի հետ գտնված քարից երկու գործիքներն աշխատած և ողորկ դարձած մակերես ունեն և օգտագործվել են որպես կոտրիչ կամ ծեծիչ (տախտ. VII, նկ. 1,13): Գտնվել են նաև սանդկոթեր, մեկն ամբողջական է (տախտ. VII, նկ. 12), մյուսը՝ թերի (տախտ. VII, նկ. 2), խեցեղենը կոկելու համար քարե կոկիչներ՝ շրջանաձև, բրգաձև, ուղղանկյուն (տախտ.VII, նկ. 3,4,10): Գտածոների մեջ կա նաև վանակատից նետասլաք (տախտ. VIII, նկ. 7) նեղ և երկար իրանով, սուր ծայրով, փռված, պոչուկին հավասար թևերով (երկ. 5սմ, լայն. կոթի հատվածում՝ 2սմ): Սրա ուղղակի զուգահեռներ մեզ հայտնի չեն: Գտածոն թեև ավելի երկար ծայր ունի, սակայն թևերի և կոթի ձևով նման է Գառնիից հայանաբերվածին:[62]

---

[52] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 45, նկ. 10:*
[53] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1967, էջ 35:*
[54] *Ս. Ս ա ր դ ա ր յ ա ն, նշվ. աշխ., աղ. XLVII /$_{1\text{-}4}$:*
[55] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, Հետախուզական պեղումներ Կիրովականի մերձակայքում, «Տեղեկագիր», 1962, թիվ 10, էջ 81: Նույնի, 1967, էջ 35:*
[56] *Л П е т р о с я н, նշվ. աշխ., էջ18, տախտ. 2/$_6$,:*
[57] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1979, նկ. 82:*
[58] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 11:*
[59] *Ս. Դ և ե ջ յ ա ն, նշվ. աշխ., աղ. XVI /$_{16}$:*
[60] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն , 1969, աղ. IV:*
[61] *Л. П е т р о с я н, նշվ. աշխ., տախտ. 3/$_1$:.*
[62] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, նկ. 17, էջ 27:*

Տախտակ IX




Ինչպես բրոնզիդարյան, այնպես էլ միջնադարյան շերտից գտնվել են վանակատից գործիքներ (դանակի շեղբերը, միջուկը, նետասլաքի և այլ գործիքների նախապատրաստուկները (տախտ.VIII,նկ.1-6,8,10-15) նույնպես վաղ շերտին են վերաբերում): Քարե իրերի մեջ կա նաև օջախ-կրակարանի հատակից քիչ վեր գտնված մի իր, հավանաբար կուռք (տախտ.VII,նկ.14): Ծակոտկեն բազալտից, զանգվածեղ հիմքից աստիճանաբար բարձրացող, միջնամասում եռանիստ անցումի վերածվող և սրացող գագաթով ավարտվող կուռքի կողերի վրա կրակի երկայնակի հետքեր կան:

Գտածոների մեջ կան նաև ոսկրե գործիքներ՝ իլիկի գլուխ, քերիչ, հերուն, ինչպես նաև խեցեղենը նախշելու գործիք: Իլիկի գլուխները ոսկրից և կավից են (տախտ. IX, նկ. 6-10): Ոսկրից օրինակները տարբեր չափերի են (տրամ. 4սմ,4,5սմ,6,5սմ), կողքերը հարթ մշակված, միջանցիկ անցքը՝ գայլիկոնված: Կեռիկը լավ նստելու համար իլիկներից մեկի վերին հատվածը հարթեցվել է: Ոսկրից իլիկի գլուխները համարվել են արևի խորհրդանիշեր[63] և լայն տարածում ունեն վաղբրոնզիդարյան համարյա բոլոր բնակավայրերում:

Վաղբրոնզիդարյան շերտին են վերաբերում նաև ոսկրե երեք գործիքները: Թռչնի ոսկրից 13,5սմ երկարությամբ հերունի (տախտ. IX, նկ. 3) նմանակը հայտնի է Մեծամորից:[64] Ոսկրից իրերի մեջ կա նաև խոշոր եղջերավոր անասունի կողոսկրից պատրաստված ատամնավոր գործիք (տախտ. IX, նկ. 5), որն ունի 8սմ երկարություն, 2,5սմ լայնություն: Եռատամ, կլորավուն ելուստներն աշխատելուց մաշված են և հղկված: Կարասների և գավաթների վրա խորակոս պարույրազարդերը կարող էին արվել նման

[63] *Я. К и к в и д з е, Земледелие и земледельческий культ в древней Грузии, Тбилиси, 1988, стр. 164-166.*

[64] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1973, էջ 48, նկ. 66/$_{1,2}$:*

գործիքով: Մյուսը անասունի երկայնակի կտրված խողովակաձև ոսկորից է (տախտ. IX, նկ.4): Մրացող ծայրը քիչ կեռ է: Իրն օգտագործվել է խեցեգործության մեջ` կավի հավելյալ մասերը քերել-հանելու համար: Եղնիկի երկճյուղ եղջյուրից (տախտ. IX,նկ.2) պատրաստված մի գործիք գտնվեց ավերված տարածքում բացված ուղղանկյուն սենյակում: Այն ունի բութ անկյան ձև` նույն հիմքից ելնող կարճ և երկար ծայրերով: Գտածոների մեջ կա նաև եղնիկի եղջյուրից մեկ այլ նախապատրաստուկ: Եղջյուրը հիմքից կտրված է, տեղ-տեղ խազխզված, հաստ բնի վրա մշակման հետքեր կան (տախտ. IX, նկ.1): Եղջյուրից աշխատանքային գործիքներ հայտնի են վաղբրոնզիդարյան հուշարձաններից: Մի տարբերակը գտնվել է Գառնիից:[65]

Մեծ Սեպասարի 2004-2005թթ. պեղումները ցույց տվեցին, որ վաղ բրոնզի դարաշրջանում բարձր լեռնային, շրջապատի նկատմամբ գերիշխող դիրք և երկրագործության ու անասնապահության զարգացման համար նպաստավոր կլիմայական պայմաններ ունեցող սարի գագաթի հարթության վրա եղել է բնակավայր: Պահպանված պատերի, դրանցով կազմված անկյունների, ինչպես նաև սալահատակի որոշ հատվածները առայժմ թույլ են տալիս միայն փաստել կացարանների ուղղանկյուն ձևը:

Հնագիտական նյութի քննությունը ցույց է տալիս, որ Մեծ Սեպասարի գտածոները ձևի, ոճի և նախշազարդման մի շարք հատկանիշներով առավելապես աղերսվում են Շենգավիթ, Ջրահովիտ, Էլար, Կառնուտ, Հառիճ, Քոսի-ճոթեր վաղբրոնզիդարյան հուշարձանների նյութերի հետ: Համաժամանակյա հուշարձանների նյութերի հետ համադրումը թույլ է տալիս Մեծ Սեպասարի խեցեղենը թվագրել կուր-արաքսյան մշակույթի վերջին փուլով` մ.թ.ա. 26-24/22 դարերով: Հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները , ինչպես նաև խոշոր և մանր եղջերավոր անասունների հարյուրավոր ոսկորները վկայում են երկրագործության և անասնապահության, խեցեգործության, մանածագործության և արտադրության այլ ճյուղերի զարգացման մասին:

Մեծ Սեպասարի պեղումներով նախ հարստանում է Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզիդարյան մշակույթը, Շիրակի համաժամանակյա հուշարձանների շարքը համալրվում է մի բնակավայրով ևս, ընդարձակվում է Կուր-Արաքսյան մշակույթի տարածման տիրույթը, միաժամանակ ավելանում է նոր օղակ Շիրակ-Արարատյան դաշտ-Թռեղք մշակութային շղթայում:

## *ПОСЕЛЕНИЕ III ТЫСЯЧЕЛЕТИЯ ДО Н.Э. МЕЦ СЕПАСАР*

*____ Резюме ____* *____ Л. Еганян ____*

**В 1998г. на севере Ашоцского плоскогорья, на плоской вершине горы Мец Сепасар было обнаружено многослойное поселение. В 2004-20*05г г. памятник был раскопан.* Под полом средневекового жилого комплекса сохранились остатки стен и полов раннебронзового поселения. Обнару—жено значительное количество керамики, костяных и каменных орудий труда, остеологический материал. Характерной деталью гончарного производства поселения на горе Мец Сепасар является керамика: карасы, горшки, кувшины, жаровни, очаги и очажные подставки. Основные характерные черты керамики поселения: преобладание линейно-геометрического орнамента, большой процент красной и черной лощеной керамики, наличие сосудов с красной и черной подкладкой.**

**Изучение раскопанного материала показало, что в целом Мец Сепасарский комплекс по ряду признаков синхронизируется с материалами поселений раннебронзовых намятников Шенгавит, Джраовит, Элар, Карнут, Арич, Коси-чотер и др. и датируется 26-24/22 вв. до н.э.**

---

[65] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, 1969, էջ 35, նկ. 26:*

*Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*Լարիսա ԵԳԱՆՅԱՆ*

## *Մ. Թ. Ա . VIII-VII ԴԴ. ԴԱՄԲԱՐԱՆ ԿԱՐՄՐԱՔԱՐՈՒՄ*

2005թ. գարնանը Շիրակի մարզի Կարմրաքար գյուղի հուշարձանների պահպանական գոտիների ճշգրտման համար կատարված ստուգայցի ժամանակ տարածքում իրականացվեց նաև հնագիտական հետախուզություն (հնագետներ՝ Լ.Եգանյան, Հ. Խաչատրյան): Հետախուզության ընթացքում գյուղի արևելյան կողմում հայտնաբերվեց մի նոր հնավայր: Այն գտնվում է գյուղը արևելյան կողմից եզերող գետակի հակադիր, բարձրադիր ափին: Տեղանքը մոտ 10հա մակերեսով հարթ տարածք է: Տարածքը հետերկրաշարժյան տարիներին հատկացվել է բնակարանաշինությանը, և այստեղ կառուցվելիք բնակելիների հիմքերի համար փորվել են 20մ x 20մ չափերով, 3մ խորությամբ, խաչաձև դասավորված չորս փոսեր: Սակայն ԽՍՀՄ փլուզումը կասեցրել է շինարարությունը, և փորված փոսերը, բաց մնալով և եզրային մասերում աստիճանաբար քայքայվելով, սկսել են փլուզվել: Զննությունը ցույց տվեց, որ դրանց եզրամասում կան կիսավեր դամբարաններ, իսկ փլուզված և փոսերի մեջ լցված հողի միջից հայտնաբերվեցին վաղ բրոնզի և երկաթի լայն տարածման ժամանակաշրջաններին վերաբերող խեցեղենի բեկորներ: Զննվեցին նաև փոսերի հարևանությամբ գտնվող հողաբլուրները: Պարզվեց, որ դամբարանների մակարդակին համապատասխանող վերին՝ սևահողային շերտը, փորման աշխատանքների ընթացքում առանձնացվել և տեղափոխվել է, իսկ ստորին՝ կավավազային շերտի հողը բլրակների տեսքով թողնվել է տեղում:

Փոսերի եզրերի կիսավեր դամբարանների բացված հատվածները տարիների ընթացքում ամբողջովին մերկացել են և կրկնակի ավերվել: Տեղանքի զննումը ցույց տվեց, որ դամբարանադաշտը բավականին մեծ տարածք է զբաղեցնում և շարունակվում է դեպի հյուսիս, արևելք և արևմուտք ընկած բլուրները՝ ընդհուպ մոտենալով անտիկ դամբարանադաշտին: Որոշվեց պեղել փոսերից մեկի եզրի մի կիսավեր դամբարան, որը կիսով չափ արդեն բացված էր. տեղաշարժված և կիսաթեք ընկած էին ծածկասալն ու կողասալերից մեկը, իսկ դամբարանից ցած սահած հողի վրա ընկած էին բրոնզե ապարանջան, խեցանոթների բեկորներ ու կմախքի ստորին վերջույթների ոսկորներ: Պեղումը հնարավոր կդարձներ փրկել վերջնական ավերման դատապարտված դամբարանի նյութերը: Դամբարանը  հյուսիս-հարավ կողմնորոշմամբ ուղղանկյուն խուց է (երկ. 240սմ, լայն. 160սմ, խոր. մոտ 150սմ): Ծածկասալ են ծառայել իրար զուգահեռ դրված երկու սալեր: Փորելու ընթացքում ծածկասալերը կոտրվել և տեղաշարժվել են: Մի խոշոր սալ թեք դիրքով հայտնվել է փոսի եզրին: Դամբարանի հարավ-արևելյան անկյունում ծանր տեխնիկայի ճնշման հետևանքով կողաքարերը թեքվել են, և այդ պատճառով դամբարանի այս հատվածի լայնությունը 115սմ է: Դամբարանի արևմտյան պատը շարված է ուղղանկյուն, բավականին մեծ երեք քարերից, հյուսիսայինը՝ երկու մեծ քարից՝ վրան բարձրության համար լրացված միջին մեծության քարերով, հարավայինը՝ հողի հաստ շերտից՝ վրան երկու քար: Հարավ-արևմտյան անկյունում՝ երկու փոքր քարերի վրա նստած է մի մեծ, տափակ սալ: Առաջին շարքում տափակ սալեր են 1,15սմ և 1,20սմ բարձրությամբ, որոնց վրա միջին մեծության քարերի շարք է (հաստությունը՝ մոտ 30սմ):

Կմախքը շատ վատ էր պահպանված: Գանգի որոշ մասեր և մի քանի ոսկորներ դամբարանի կենտրոնական հատվածում էին, մնացած ոսկորները ցրված էին դամբարանով մեկ, իսկ մի մասը փլուզված հողի հետ սահել էր ցած: Պեղման ընթացքում բացի մեծահասակի ոսկորներից հայտնաբերվեցին նաև երեխայի մի քանի կաթնատամներ: Ամենայն հավանականությամբ՝ թաղման խցում եղել է երկու կմախք: Թաղման պահին աճյունի ունեցած դիրքը վերականգնելուն օգնում է ուղեկցող խեցեղենի տեղաբաշխումը, որը ենթադրում է, թե կմախքն ունեցել է ձախ կողքին պառկած, ծնկները դեպի որովայնը ծալված դիրք, դեմքով՝ արևելք:




Գլխի մոտ դրվել է կարմիր կայծքարից մանգաղի ներդիրը (կողքին գտնվեց ոչխարի ծնոտոսկոր), թիկունքում՝ բերանքսիվայր մի թաս, որովայնի դիմաց գավաթ՝ մեջը ոսկորներ, ուղիղ դիրքով դրված մեկ այլ գավաթ՝ մեջը և շուրջը բազմաթիվ ուլունքներ, ինչպես նաև՝ սափորի, գավաթի և թասերի բեկորներ: Պատկերի վերականգնմանն օգնում է նաև դամբարանի արևմտյան պատի ստորին մասում պահպանված հողի քիչ գոգավոր, տափանված հատվածը: Կարծում ենք՝ հետքն առաջացել է պատին շատ կիպ դրված աճյունի սեղմումից:

Դամբարանից գտնված հիմնական նյութը խեցեղենն է, կան նաև աշխատանքային գործիքներ և արդուզարդի առարկաներ:

Խեցեղենը ներկայանում է գավաթներով, թասերով, սափորով, կճուճի և խնոցու բեկորներով: Գավաթներն անհարթ են, պատրաստված են ձեռքով, մոխրագույն, ավազախառն, լավ հունցված և լավ թրծված կավից: Գավաթներից երկուսն ունեն մեկական, իսկ երրորդը՝ զույգ ունկեր: Առաջինն (բարձր. 6սմ, բերանի տրամ. 8,3սմ) ունի քիչ գոգավոր և թեք նստուկ, իրանը՝ քիչ երկթեք է, վիզը՝ բարակ և կարճ: Եռ ճկված, կլորավուն շուրթերը տեղ-տեղ թերի են: Նստուկից սկսվող աղեղնաձև ունկը շուրթի տակ միանում է իրանին (տախտ. I, նկ. 1): Երկրորդ գավաթը (նստուկը՝ 5-5,5սմ, բերանը՝ 12սմ, բարձր. 10սմ, իրանի տրամ. 14սմ) կոպիտ է (տախտ. I, նկ.2), ի տարբերություն նախորդի, շուրթի կտրվածքն ուղիղ է: Շուրթն իրանին է միանում մեկ աղեղնաձև ունկով: Շուրթից քիչ բարձր դիրք ունեցող ունկի վրա երկայնակի, մատնասեղմումով արված փոսիկ է: Գավաթը շուրթից մինչև իրան ճեղքված է: Իրանի 3-3,5սմ լայնությամբ հատվածը զարդարված է ուղղահայաց, քիչ թեք, խորակոս գծերով: Տեղ-տեղ պահպանվել է փայլանախշը: Երրորդ գավաթը (տախտ. I, նկ. 4) նախորդներից տարբերվում է զույգ ունկերով, որոնք շուրթից բարձր դիրք ունեն և հիմքով միանում են իրանի փքուն հատվածին (բերանի տրամ. 11,5սմ, իրանի տրամ. 14,5սմ, բարձր.10սմ, նստուկի տրամ. 5,5սմ): Շուրթը իրանին է միանում երկու հակադիր ունկերով: Ունկերն անհամաչափ են (մեծ և փոքր, մեկը մյուսից քիչ կարճ): Իրանը կոտրված է, իրանից նստուկ անցումը՝ անհամաչափ:

Գավաթների տարբերությունը պսակի, ունկերի, իրանի ձևերի և նախշազարդման մեջ է: Երեքն էլ սևափայլ են, ունեն կտրվածքում կլոր կամ ուղղանկյուն մեկ կամ երկու կլորավուն ունկ: Խեցեղենի այս ձևերը և սեղմամբ արված նախշազարդը, որ հայտնի են վաղ երկաթի ժամանակաշրջանից մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից շատ արագ լայն տարածում են ստանում, և տիրապետող են երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի համալիրներում: Այսօրինակ գավաթների տարբերակները Շիրակում հայտնի են Քեթիից,[1] Արթիկից և այլ հուշարձաններից: [2]

Տախտակ I




[1] Л. … н.э.), Ер., 1989.
[2] Т. Х…

Գտնված բաց մոխրագույն սափորի (բերանի տրամ. 9,5սմ, իրանի տրամ. 31,5սմ, կոճականման ելուստների տրամ.՝ 5-6մմ), փքուն, մոտավորապես գնդաձև իրանի կեսից մինչև շուրթն ընկած հատվածն է պահպանվել (տախտ. I, նկ.5): Սափորի վիզը նեղ է և բարձր: Բարակ և ետ ճկված շուրթն իրանին է միանում աղեղնաձև մեկ ունկով: Ունկի կենտրոնով անցնող երկայնակի ակոսի վրա ամրացված են վեց վերադիր, կոճականման ելուստներ: Սափորի վզի տակ հորիզոնական խորակոս գծանախշեր են, որոնցից դեպի իրանի փքուն մասն են իջնում ուղղահայաց ակոսներ: Անոթն իր ձևով և զարդանախշմամբ նման է Հայաստանի մ.թ.ա. առաջին հազարամյակի առաջին կեսով թվագրվող բազմաթիվ հուշարձաններից հայտնաբերված սափորներին, միակ տարբերությունը կանթի ձևավորման մեջ է: Կոճականման ելուստներով զարդարված կանթերը սկիզբ են առնում մ.թ.ա.VIII դարում, հայտնի են Լոռի-Բերդի,[3] Թեյշեբաինիի[4] պեղումներից: Հետագա դարերում այս անոթները լայն տարածում են գտնում և բնորոշ դառնում նաև մ.թ.ա. VII-IV դարերին:[5]Հայտնի են բազմաթիվ հուշարձաններից՝ Գոլովինո,[6] Կույբիշև,[7] Լոռի-Բերդ,[8] Նոր Խաչակապ,[9] Շիրակավան: [10]

Քրեղանները երեքն են, բոլորն էլ՝ թերի: Դրանք ոչ խորը, ներս հակված շուրթով, ներսից փայլեցված անոթներ են, որանցից առաջինը (տախտ. I, նկ.3) մուգ դարչնագույն է, տեղ-տեղ սևացած, ունի 35սմ տրամագիծ և 8սմ բարձրություն: Ուսը նախշազարդված է երեք խորակոս գոտիներով: Շուրթի տակ հակադիր կողմերում տեղադրված են հորիզոնական, կենտրոնական մասում ներճկված ունկերը, որոնք ունեն 7մմ տրամագծով միջանցիկ անցք: Զուգահեռը հայտնի է Սարապատից :[11] Երկրորդ քրեղանը (տախտ. I, նկ. 8) բաց դարչնագույն է, այն ունի 38սմ տրամագիծ և 8,5սմ բարձրություն: Արտաքին կողմն անհարթ է, իրանի վրա նկատելի են դուրգի պտույտի հետևանքով առաջացած գծերը: Ուսը զարդանախշված է թույլ արտահայտված երեք գոտիներով: Շուրթի տակ պահպանվել է հորիզոնական տեղադրմամբ բլթակաձև կեղծ ունկը: Երրորդ թասն ունի 32սմ տրամագիծ և 8սմ բարձրություն (տախտ. I, նկ. 7): Այն բաց դարչնաշագանակագույն է՝ ներսից և դրսից կոկված: Շուրթի տակ սահուն անցումով երկու լայն խորակոս գոտիներ են: Քրեղանը թերի է, և պահպանված մասի վրա ունկերի հետքեր չկան:

Գտնվել են նաև խոհանոցային խեցեղենի՝ կճուճների և խնոցու բեկորներ (տախտ. I, նկ. 6, տախտակ II, նկ. 1-3): Կճուճի զարդը կրկնում է ուշ բրոնզի վերջի և վաղ երկաթի անցման փուլի խեցեղենին բնորոշ, տարբեր հուշարձաններից հայտնի նման անոթների զարդանախշերը: Նյութերի համեմատությունը ցույց է տալիս, որ վաղ երկաթի և երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի խեցեղենի ձևերի և նախշազարդման մեջ գենետիկական կապն ակնհայտ է, և շարունակվում են ուշբրոնզիդարյան ավանդույթները:

---

[3] *С. Д е в е д ж я н, Лори-Берд, I, Ер., 1981, IX.XXII/1.*

[4] *А. М а р т и р о с я н, Город Тейшебаини, Ер., 1961, стр. 102, рис. 41.*

[5] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Հին Շիրակավան, Եր., 2002, էջ 127:*

[6] *А. М а р т и р о с я н, Город Тейшебаини, Ер., 1961, табл. XI.*

[7] *Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Դամբարանների պեղումներ Կույբիշև գյուղում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 5:*

[8] *С. Д е в е д ж я н, նշվ. աշխ., տախտ. XXVIII:*

[9] *Ն. Ե ն գ ի բ ա ր յ ա ն, Հայտնագործումներ Նոր Խաչակապում, Հուշարձան, տարեգիրք Գ, Եր., 2005, աղ. X/ 5, էջ 94:*

[10] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., աղ. LXXVIII /14,16:*

[11] *Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Պեղումներ Սարապատում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Եր. 1992, էջ 94:*

Не удается отобразить связанный рисунок. Возможно, этот файл был перемещен, переименован или удален. Убедитесь, что ссылка указывает на правильный файл и верное размещение.

Գտնված աշխատանքային գործիքները երկուսն են՝ կարմրավուն կայծքարից ներդիր և բրոնզե ասեղ: Ներդիրը (երկ. 6,2սմ, քթի մասում՝ 3մմ, լայն. 1,5սմ, կոթի մոտ՝ 1սմ) մշակված է երկու կողմից. մի կողմը՝ մանր, իսկ սայրը՝ խոշոր հատումներով (տախտ. II, նկ. 4): Ներդիրի ատամնավոր սայրը քիչ կորացող ծայր ունի: Մանգաղի նմանատիպ ներդիրները գոյատևել են մի քանի հազարամյակ, և դրանց ձևում առանձնակի փոփոխություններ չկան:

Ասեղը պատրաստված է կտրվածքում շրջանաձև բրոնզալարից: Թերի է, պահպանվել է տափակ բլթակը՝ անցքի կեսով: Սուր ծայրն աստիճանաբար հաստանում է՝ հասնելով անցքին: Ասեղներ հայտնաբերվել են Շիրակավանից:[12]

Արդուզարդի առարկաների մեջ կան բրոնզյե ապարանջան, մատանիներ, և կոճակ: Ապարանջանը (տախտ. II, նկ.1) քիչ ձվածիր է (տրամ. 6,7սմ), պատրաստվել է տափակ, կտրվածքում ուղղանկյուն հաստ բրոնզալարից, որի արտաքին երեսի կենտրոնով անցնում է խորակոս գծանախշ (հաստ. 0,6սմ): Իրար սեղմված ծայրերը բաց են և թեքությամբ կտրված: Վաղ երկաթի դարաշրջանում բրոնզիդարյան ավանդական բրոնզե ապարանջանների կողքին հայտնվում են նաև նոր ձևեր, որոնք բնորոշ են ինչպես վաղ երկաթի,այնպես էլ երկաթի լայն տարածման ժամանակաշրջանին: Ապա-

[12] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Լ.Պ ե տ ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., աղ. XV/3:*

րանջանի այս տեսակը հայտնի է Քաղսիից, Մուխանից, Բասարգեչարից:[13] Մատանիներից մեկը փակ, մյուսը բաց ծայրերով օղակներ են: Մեկը (տախտ. II, նկ. 3) պատրաստված է կտրվածքում կլոր բրոնզալարից, ծայրերը բաց, քիչ սեղմված շրջան է (տրամ. 2,2սմ): Մյուսը (տախտակ II, նկ. 2) տափակ բրոնզե թիթեղից է (հաստ. 3մմ, ճվածիրը 1,5 և 1,7սմ), ծայրերը բաց են: Մատանիների հիշյալ ձևերը շատ տարածված են Հայաստանի[14] հուշարձաններում: Արթիկի վաղ երկաթի դամբարաններից գտնվել են բրոնզալարից մատանիներ, որոնց մեջ գերակշռողը բաց ծայրերով ձևերն են: Նշված մատանիները պահպանում են ավանդական ձևը, հայտնի են ուշ բրոնզի դարաշրջանի բազմաթիվ հուշարձաններից և նույն ձևով պահպանվում են նաև վաղ երկաթի և երկաթի լայն տարածման ժամանակաշրջանում: Գտնված միակ կոճակը (տախտ. II, նկ.6) տափակ և շրջանաձև հիմքով է, վերին մասը` կիսագնդաձև (տրամ. 1սմ, բարձր. 0,5սմ): Կոճակը ներսի կողմից ունի տրամագծով ձգվող մեկ կամրջակ` հագուստի վրա կարելու համար: Կոճակների այս տեսակը հայտնի է Հայաստանի ուշբրոնզիդարյան հուշարձաններից` Արթիկ,[15] Քեթի,[16] Շիրակավան:[17]

Կարմրաքարի դամբարանից գտածոների մեջ մեծ թիվ են կազմում տարբեր նյութերից և երեսուներեք տարաձև ուլունքները (նկ. 4), որոնք պատրաստված են մածուկից, սարդիոնից, ագաթից, ապակուց և գիշերից: Ուլունքները, որոնց հիմնական մասը պատրաստված է սպիտակ, երկնագույն, փիրուզագույն կամ մոխրագույն մածուկից, խմբավորել ենք ըստ ձևերի:

Այն ուլունքները, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են *դոմինո* անունով, ամենաշատն են (տախտ. III, նկ. 18): Բ. Կուֆտինը գտնում է, որ ուլունքների նշված ձևը գոյատևել է սահմանափակ ժամանակով և բնորոշ է միայն Թրիալեթիի տարածաշրջանին:[18] Հ. Մարտիրոսյանը, համաձայնվելով գոյատևման սահմանափակ ժամանակաշրջանի վերաբերյալ Բ. Կուֆտինի կարծիքին, Խրտանոցի կրոմլեխների և համաժամանակյա նյութերի վերլուծությամբ հանգել է այն եզրակացության, որ այս ուլունքները բնորոշ են երկաթի լայն տարածման ժամանակաշրջանին և հատուկ են ոչ միայն Թրիալեթիին:[19]Նման ուլունքներ գտնվել են Արթիկում,[20] Նորատուսում,[21] Ոսկեհասկում,[22] Նոր Խաչակապում: [23] Տ. Խաչատրյանը վաղ երկաթի ժամանակաշրջանի համալիրներից հայտնաբերված նմանօրինակ ուլունքների վերին սահմանը համարում է մ.թ.ա. X դարը, իսկ գոյատևումը` մ.թ. ա. X-VIդդ.:[24]

---

[16] *Ս. Ե ս ա յ ա ն, Հայաստանի պետական թանգարանի բրոնզե ապարանջանները, Տեղեկագիր թիվ 64, աղ. III/$_{9-11}$: Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 132, աղ. 82/$_{6}$:*

[14] *А. М а р т и р о с я н, նշվ. աշխ., նկ. 76/$_{7}$ ; Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 242.*

[15] *Т. Х а ч а т р я н, Артикский некрополь, Ер., 1979, стр. 15.*

[16] *Л. П е т р о с я н, նշվ. աշխ., տախտ. 48/6:*

[17] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., աղ. XVIII/8:*

[18] *Б. К у ф т и н, Археологические раскопки в Триалети, стр. 54, рис. 51/7.*

[19] *А. М а р т и р о с я н, Раскопки могильников в селении Головино, Труды ГМИА, вып. V, 1959, стр. 84-85.*

[20] *Т. Х а ч а т р я н, 1979, рис. 155, стр. 211.*

[21] *А. М а р т и р о с я н, 1964, стр. 210, рис. 82.*

[22] *Л. П е т р о с я н, նշվ. աշխ., էջ 80, տախտ. 70, նկ. 6:*

[23] *Ն. Ե ն գ ի բ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 84, աղ. 6:*

[24] *Т. Х а ч а т р я н, 1979, стр. 243.*




Սածուկից մյուս ուլունքները ռոմբաձև, ուղղանկյուն, տակառաձև կամ կտրված գլխիկներով ձվածիրներ են՝ զարդարված արևանախշով. շրջան, որի կենտրոնում կետ է: Տակառաձև ուլունքներ հայտնի են Նորատուսից և թվագրվում են մ.թ.ա. X-VIIդդ.:[25] Իրար հատող, միջանցիկ անցքով երկու գլաններով ստացված խաչաձև ուլունքները նման են Արթիկի ուշ բրոնզի և վաղ երկաթի դամբարաններից գտնված բրոնզե շքասեղների գլխիկներին:[26] Կան մանր, գլանաձև, սպիտակ և երկնագույն, ինչպես նաև փիրուզագույն և մոխրագույն, երեք գլանների միացմամբ ստացված տափակ ուլունքներ: Սածուկից փիրուզագույն, ռոմբաձև, գծիկներով նախշված ուլունքի զարդանախշը հանդիպում է բրոնզե շքասեղների վրա, որոնք վերաբերում են Արթիկի ուշ բրոնզի ժամանակաշրջանի երկրորդ փուլին:[27]Գտնվել են նաև կարմրավուն սարդիոնից, գնդաձև

---

[25] *А. М а р т и р о с я н, 1964, рис.76/4.*

[26] *Т. Х а ч а т р я н, 1979, стр. 212-214, рис. 125-127.*

[27] *Т. Х а ч а т р я н, 1979, рис. 126, 127.*

և գլանաձև, ինչպես նաև կապտափիրուզագույն ապակուց մի քանի փոքր աժանաբարներ և գիշերից երկու ուլունք:

Կարմրաքարի դամբարանից հայտնաբերված նյութերն ունեն երկաթի լայն տարածման ժամանակաշրջանին բնորոշ հատկանիշներ և համապատասխանում են մ.թ.ա. VIII-VIIդդ. ստույգ թվագրվող համալիրներին: Կառուցվածքը և հայտնաբերված նյութերը թույլ են տալիս Կարմրաքարի դամբարանը և դամբարանադաշտը դասել Հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. VIII-VII դդ. թվագրվող հուշարձանների շարքին:

## РАСКОПКИ ПОГРЕБЕНИЯ VIII-VII ВВ. ДО Н. Э. В СЕЛЕ КАРМРАКАР

***Резюме***

***А. Хачатрян, Л. Еганян***

**2005г. при осмотре территории села Кармракар Ширакской области, археологами А. Хачатрян и Л. Еганян в восточной стороне деревни были обнаружены полуразрушенные погребения.Причиной разрушений стали земляные работы. Для строительства домов в 1989 году здесь были выкопаны большие /20мх20м/ ямы. В течении времени края ям постепенно разрушились и открылись погребения в больших каменных камерах. Из одной из таких погребений вместе с землей выскользнули части скелета, бронзовый браслет и черепки керамики. Для спасения остольных материалов провелись раскопки данного погребения. В результате раскопок была обнаружена погребальная камера размерами 2,4х1,6х1,5 метров. В камере были обнаружены части скелета взрослой женщины и молочные зубы ребенка. Сопутствующий материал представлен керамикой, орудиями труда и украшениями. Изучение раскопанного материала показало, что погребение Кармракар по ряду признаков синхронизируется с материалами эпохи широкого освоения железа и датируется VIII-VIIвв. до н.э.**

*Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ*

## *ՎԱՂՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՌՅԱԿԸ*

(Ովքե՞ր են Բուդինի հավաքածուի ընծայական թիթեղին պատկերված աստվածները)

Բուդինի մասնավոր հավաքածուի (Ժնև) քննարկման առարկա ընծակայական թիթեղը մասն էր կազմում շուրջ 2 հազարի հասնող տարբեր իրերից բաղկացած ուրարտական այն գանձի, որը հայտնաբերվել էր Վանի նահանգի Գիյիմլի (Հիրկանիս) բնակավայրի մոտ գտնվող Սերբար թեփե բարձունքից, բայց վաճառքի հանվելով ցրվել էր աշխարհի տարբեր թանգարաններում: Քննության առարկա թիթեղը ունի 9.9սմ բարձրություն և 9.1 սմ լայնություն, ներկայացնում է աստվածների, մարդկանց ու ցուլի պատկերներ և ունի մեհենագիր արձանագրություն:[1] Թիթեղն հրատարակած Ռ. Դ. Բարնեթի կարծիքով, աստվածներից առաջինը (ձախակողմյանը) Խալդին է:[2] Ս. Հմայակյանը առարկում է նրան հետևյալ պատճառաբանությամբ. «Գահը, որի վրա նստած է նա, դրված է կքանստած ցուլի կռնակին, հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ ներկայացված է Թեյշեբան»:[3] Ռ. Բարնեթի կարծիքը պաշտպանում է Ա. Վայմանը, իսկ Ս. Հմայակյանի կարծիքը՝ Ա. Մովսիսյանը:[4]

Մեր կարծիքով, գահին բազմած աստվածը Խալդին չէ, որը ուրարտական պատկերագրության մեջ ներկայացվում է սովորաբար առյուծի վրա կանգնած վիճակում, բայց նաև Թեյշեբան չէ: Գահակալ աստծու գահի պատվանդանի ցլակերպությունը չի կարող փաստարկ ծառայել նրան Թեյշեբան համարելու օգտին, որովհետև այդ ծնկածալ հեզ կենդանին ամպրոպային և մարտական ցուլ չէ: Ըստ երևույթին, նա եզ է՝ տիեզերքի հենարանը (գահի պատվանդան//տիեզերքի հենարան): Խոր հնադարից եկող հավատալիքների համաձայն, տիեզերքը վերևից ներքև դասավորությամբ ուներ երեք գոտիներ: Եթե դրանք մտովի տեղադրենք թիթեղի վրա, ապա կպարզվի, որ գահակալ աստծու գահի ցլակերպ պատվանդանը համապատասխանում է ընդերքին, թագով գլուխը՝ երկնքին (բարձր է ավելի, քան մյուսների գլուխները), իսկ մարմինն ու գահը՝ երկրին: Առասպելաբանական մտածողությամբ հենց արևն է, որ լինում է թե՛ ընդերքում (ծովածին արևը «ի գիշերի ընդ երկրաւ դառնայ»),[5] թե՛ երկնքում, թե՛ երկրի վրա (արևածագին և մայրամուտին), դառնալով կապակցող օղակը եռահարկ տիեզերքի երեք գոտիների: Հիշենք արևային Վահագնին ձոնված օրհներգի սկիզբը՝ «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր եւ ծովն ծիրանի»,[6] որտեղ «ծիրանի ծով» //ընդերք (ստորին գոտի):[7] Թիթեղին պատկերված եզան տիեզերքի հենարանը համարվելու հանգամանքը հաստատվում է այդ էակի վերաբերյալ գոյություն ունեցած հայ ժողովրդական հավատալիքների միջոցով: «Հողագունդը ժողովրդի կարծիքով, մի կլոր բան է, մի կարմիր եզի եղջյուրին անշարժ կանգնած»:[8] Եթե Ջավախքի հայերը այդպես էին կարծում, ապա Վարանդայի (Արցախում) հայերն էլ հավատում էին, թե «Գետնի տակ կա մի եզ, պոչը դրած մեջքին, երբ շարժում է պոչը և խփում գետնին, երկրաշարժ է լինում»:[9] Հիշենք նաև «գետին» պատասխան ակնկալող հանելուկը. «Գոմշի կաշի, /Ոչ կիալի ոչ

---

[1] *R. B a r n e t t, The heirogliphic writing of Urartu, “Anatolian Studies presented to H.G. Gűterbock”, Istanbul, 1974, p.43-55.*

[2] *Նույն տեղում, էջ 44:*

[3] *Ս.Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը (այսուհետև՝ ՎԹՊԿ), Եր., 1994, էջ 112, ծան. 97:*

[4] *Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, Վանի թագավորության մեհենագրերը (այսուհետև՝ ՎԹՄ), «Հանդէս ամսօրեայ», Վիեննա,1996, թիվ 1-12, էջ 378-379, Նույնի, Հայկական մեհենագրություն (այսուհետև՝ ՀՄ),Եր., 2003, էջ 94, ծան 147:*

[5] *Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար (այսուհետև Շիրակացի), Եր., 1940, էջ 84:*

[6] *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Մ.Աբեղյանի և Ս. Հարությունյանի (այսուհետև՝Խորենացի), Եր., 1981, գիրք Ա, գլ. լա:*

[7] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, «Վահագնի երգի» աքրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, թիվ 4, էջ 85-87:*

[8] *Ե. Լ ա լ ա յ ա ն, Երկեր, հ.1, Եր., 1983, էջ 240:*

[9] *Նույն տեղում, հ. 2, Եր., 1988, էջ 176:*

կմաշի»:[10] Ուրեմն, գահին պատվանդան ծառայող եզը վկայությունն է լինելու գահակալ աստծու նաև ընդերքի վրա ունեցած իշխանության, այնպես, ինչպես թագը խորհրդանշում է նրա երկնային, իսկ գահը՝ նրա երկրային իշխանությունը:

Գահակալ աստծու արևային բնույթի վկան են նաև նրա ձեռքի երեք փետուրները (դրանք հասկեր չեն): «3»-ը Արևին և Արևաստվածներին խորհրդանշող թիվ է,[11] իսկ թռչունը, ուրեմն, նրան փոխարինող փետուրը ևս, նախ և առաջ առնչվում է նրանց: Օրինակ, «փետուր» նշանակող հնդեվրոպական արմատից են ծագում ինչպես հայ. *թիռ, թռչել, թռչուն* բառերը, այնպես էլ հուն. *πτερόν* «փետուր, թռչունի թև», հին. հնդ. **patará-** «թռչող, թռչուն», լատին. **acci-piter** «բազե» (<«սրաթռիչ») բառերը և այլն:[12]



Արժե նաև հիշել մեր հեքիաթների այն կախարդական թռչուններին, որոնց թողած փետուրների միջոցով էր հեքիաթային հերոսը կանչում նրանց՝ իրագործելով անկարելին:[13] «Արև» /«3»/ «թռչուն» հասկացությունների փոխադարձ առասպելաբանական կապը լավագույնս բացահայտված է արցախահայերի (Վարանդա) հետևյալ հավատալիքում: Ըստ նրանց, «երկնքում կա երեք թռչուն: Երբ նրանցից առաջինը ձայն է հանում, բացվում է առավոտը, երկրորդի ձայն հանելիս դառնում է կեսօր, իսկ երբ երրորդ թռչունն է ձայնում, մութը պատում է աշխարհը»:[14] Երեք թռչունների, երեք փետուրների և արևի ցերեկային ընթացքի առասպելաբանական փոխադարձ կապը անդրադարձն է արևի երկնակամարային երեք հիմնադիրքերի՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան: Ի դեպ, հին Եգիպտոսում այս երեք հիմնադիրքերի պատճառով արևը առավոտյան կոչվում էր **Khepri** (**H̲epri**), միջօրէին՝ **Rē°(Ra)**, իսկ երեկոյան՝ **Atum**:[15]

---

[10] *Ս. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 18:*

[11] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 78-79:*

[12] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան(այսուհետև՝ ՀԱԲ), հ.2,Եր.,1973,էջ 184-185:*

[13] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ.1, Եր., 1959, էջ 260, 262, 305, 310, հ. 2, Եր., 1959, էջ 72, հ. 3, Եր., 1962, էջ 88 - 89, 90, 94 և այլն:*

[14] *Ե. Լ ա լ ա յ ա ն, նշվ. աշխ., հ. 2, էջ 175:*

[15] ***В. Т о п о р о в, Несколько параллелей к одной древнеегипетской мифологеме, "Древний Восток", 2, М., 1980, стр. 81, пр. 25; Р. Рубинштейн, "Мифы народов мира", т. 2, М., 1988, стр. 358.***

Նույնպիսի տարբերակում, զուցե թե, իրականացվել էր նաև հայ հեթանոսական դիցարանի արևային բնույթի երեք աստվածների՝ Վահագնի, Միհրի և Տիրի (Տիւր) միջև: Այս տեսանկյունից է հասկանալի դառնում նրանց նույնացումը մերթ Ապոլոնի, մերթ Հելիոսի հետ:

Որ ցլակերպ պատվանդանով գահին բազմած և երկրպագություն ընդունող աստվածը գերագույն աստված է՝ կասկած լինել չի կարող: Իսկ որ նա արևային բնույթի աստվածություն է, վկայում են նաև ներքոհիշյալ փաստերը: Ընծայական թիթեղին պատկերված գաղափարանշաններից ամենամեծն ու ցայտունը նրա վերնամասին պատկերված արևի թևավոր սկավառակն է՝ ուրարտական Արևաստծու ($^{D}$**UTU**, $^{D}$**Šiuini**) հայտնի խորհրդանշանը: Բացի դրանից, երկնային այս գահակալի թագն ավարտվում է մեծ օղակով, որը բուն թագին միացված է երկու ավելի փոքր օղակների միջոցով: Մեծ օղակն, անկասկած, խորհրդանշում է արևը, իսկ փոքր օղակները՝ Արևի ուղեկից Արուսյակ (Վեներա) մոլորակի երկու դրսևորումներն հանդիսացող Լուսաբերն ու Գիշերավարը:[16] Արտաշիսյան արքայից արքաների թագի կենտրոնում պատկերված ութճառագայթանի լուսատուն արևն է՝ աշխարհի ութ կողմերին (չորս հիմնական և չորս երկրորդական) լույս ու ջերմություն հղողը: Իսկ նրան աջից ու ձախից ուղեկցող մեկական թռչունները խորհրդանիշերն են Լուսաբերի (աջինը) և Գիշերավարի (ձախինը): Ուրարտական արևի աստված Շիվինիի զուգակիցը Արուսյակի անձնավորում Տուշպուեան էր, որը երբ պատկերվում էր թռչնամարմին՝ երբեմն կանացի ոչ թե մեկ, այլ երկու գլուխներով, մեջքին ունենում էր արևը խորհրդանշող օղակ (տե՛ս ուրարտական պաշտամունքային կաթսաների եզրերին զետեղված արձանիկները):[17] Վանում գրի առնված և «արեգակ» պատասխանն ակնկալող հանելուկը՝ «Խավքըմ ընցավ էրկնուց, /Ոսկի լական (կլոր օղ) կեր կտուց»,[18] նույնպես օղակի տեսքով խորհրդանշանի արևային բնույթի մասին է խոսում:

Գահին բազմած գերագույն աստծու արևի անձնավորում աստված լինելու հանգամանքը բխում է նաև վաղ Ուրարտուի գերագույն աստվածը հենց Արևաստված լինելու իրողությունից:[19] Հայտնի է, որ մ.թ.ա. IX դ. վերջին Իշպուինի արքայի (մ.թ.ա. 825-810 թթ.) կիրառած կրոնական բարեփոխումից հետո էլ Ուրարտուի սրբազան ամիսն համարվում էր «Արևաստծու ամիսը» ($^{D}$**UTU ITU**), որովհետև աստվածներին, սրբություններին և սրբավայրերին մատուցվող զոհաբերություններն ու տոնակատարությունները նախատեսված էին այդ ամսի համար:[20] Հիմնավոր է այն ենթադրությունը, թե դա այն նույն ամիսն է, որը մեր հին տոմարում կրում էր *Արեգ* անունը:[21] Ընդ որում, *Արեգ* էր կոչվում նաև այդ տոմարի յուրաքանչյուր ամսի առաջին օրը, ուրեմն, նաև յուրաքանչյուր տարվա *առաջին* օրը: Ի նկատի առնենք նաև, որ ուրարտական թագավորության կրոնական կենտրոնը՝ նրա մայրաքաղաք **Ţušpa**-ն (Տոսպ,Վան), նաև Արևաստծու՝ պաշտամունքի կենտրոնն էր, երբ հետագա գերագույն աստված Խալդիի պաշտամունքի կենտրոնը գտնվում էր Ուրարտուից դուրս՝ Իշպուինիի օրոք նրան հպատակված Մուծածիրի փոքր թագավորությունում:[22] Ընդ որում, Ուրարտուին հպատակվելուց առաջ Մուծածիրը մ.թ.ա. 828 կամ 827թ. նվաճվել էր Սալմանասար III-ի

---

[16] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Գյումրիի պեղածո գոտու բեկորի զարդանախշերի շուրջ, ՇՊՄԺ հանրապետական առաջին գիտաժողով զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 30-32:*

[17] ***Б. П и о т р о в с к и й, Искусство Урарту: VIII-VII вв. до.н.э, Л., 1962, стр.57-58.***

[18] *Հայ ժողովրդական հանելուկներ, ..., էջ 3:*

[19] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Նախնական Ուրարտուի գլխավոր աստծու հարցի շուրջ, Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետ.մանկ. ինստիտուտի գիտ. աշխատությունների ժողովածու(երեք հատորով), 2,Գյումրի, 1994, էջ 226-231: Նույնի, Ալնիունու քաղաքի և Արևաստծու դերը վաղ Ուրարտուի կրոնական քաղաքականության մեջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտ. աշխատություններ», Գյումրի, 2004, էջ 10-18:*

[20] ***Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи*** *(այսուհետև՝* ***УКН****),* ***М.****, 1960, №. 27: «Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա», հ.1, Եր., 1981, էջ 45 և 47, ծան. 1:*

[21] *«Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա», հ.1, էջ 47, ծան. 1:*

[22] ***И. Д ь я к о н о в, Ассиро-вавилонские источники об истории Урарту, "Вестник древней истории", 1951, № 2,3,4, № 49; УКН, №19;*** *ՎԹՊԿ, էջ 73:*

աստրեստանյան բանակի կողմից:[23] Վան քաղաքից հյուսիս-արևելք գտնվող Անձավ (այժմ՝ Անզաֆ) նախկինում հայաբնակ գյուղի[24] բերդի ավերակներից հայտնաբերվել է նաև մ.թ.ա. IXդ. վերջով թվագրվող ուրարտական վահանի մի բեկոր: Այստեղ ներկայացված են իրական և երևակայական կենդանիների վրա կանգնած ուրարտական մի շարք աստվածներ, որոնք օգնության են շտապում թշնամու դեմ մարտնչող ուրարտական բանակին: Նրանց առաջնորդում է հետիոտն մի աստված, որին հետևում է առյուծի վրա կանգնած աստվածը, իսկ սրան՝ ցուլի վրա կանգնած աստվածը և այլն:[25] Սրանցից առաջինը Խալդին լինել չի կարող, այնպես ինչպես երկրորդը՝ առյուծի վրա կանգնած աստվածը Թեյշեբան չէ, իսկ երրորդը ցուլի վրա կանգնածը Շիվինին չէ: Վահանին պատկերված աստվածների առաջնորդի՝ հետիոտն մարտիկի, Արևաստված լինելու մասին են խոսում հետևյալ փաստերը: 1) Սկավառակաձև վահանները խորհրդանշում են հենց արևը, ուստի նախնադարից սկսած Հայաստանում «վահաններ թաղելու սովորություն չի եղել»:[26] 2) Անձավի վահանին պատկերված իրական ու երևակայական կենդանիների վրայի աստվածությունների շարժման ուղղությունը կրկնում է արեգակի երկնակամարային շարժման ուղղությունը՝ ձախից աջ: 3) Նրանց առաջնորդը ամբողջովին հրեղեն է՝ մարմնի վերնամասով բոցեղեն շրջանակի մեջ, իսկ դա արևի խորհրդանիշն է: 4) Նրա աջ ձեռքին բոցարձակ նետ է, իսկ ձախ ձեռքին աղեղ, որից արձակված նույնպիսի նետը հասել է կռվողներին: Հայտնի է, որ աղեղնավոր-նետաձիգներ էին նախ և առաջ արևի աստվածները («նետ» // «արևի ճառագայթ»): Երբ ի նկատի ենք առնում նախնական նետերի եղեգնյա լինելու հանգամանքը, ապա պատահական չի թվում հետիոտն, աղեղնավոր-նետաձիգ, հրեղեն այս աստծու և հետիոտն,աղեղնավոր-նետաձիգ, «խայտակն» ու «գաջագանգուր» Հայկի,[27] ինչպես նաև «խարտեաշ պատանեկիկ», «հուր հեր», «բոց մօրուս» ունեցող եղեգնածին Վահագնի[28] կերպարների միջև առկա զուգահեռները («եղեգն»>«նետ» հմմտ. հ.-ե. *nedo-«եղեգն»>հին. հնդկ. nada- պահլ. nad, nai, պարս. nāy, nay «եղեգն», իսկ հայ. *նետ* «աղեղով արձակելու սլաք, փքին»):[29]

Վաղ Ուրարտուում պետական դիցարանը գլխավորած Արևի աստծուց հետո, երկրորդ տեղում լինելու էր Ամպրոպի աստվածը, ինչպես էր, օրինակ, նաև Խեթական թագավորությունում: Խեթերեն սեպագիր տեքստերից մեկում արքան ասում է. «Ինձ՝ արքայիս, երկիրը և իմ տիրապետությունը հանձնել են աստվածները՝ Արևի աստվածը և Ամպրոպի աստվածը»:[30] Իշպուինիի բարեփոխումից հետո էլ ուրարտական Ամպրոպի աստվածը ($^{D}$IM, $^{D}$Teišeba) շարունակում էր դիցարանում հաստատուն կերպով զբաղեցնել երկրորդ տեղը:[31]Ուրեմն, պատահաբար չէ, որ հայոց հին տոմարի երկրորդ օրը՝ Արեգ օրվան հաջորդողը, կոչվում էր *Հրատն/Հրանտ/Հրանդ*: Այս անվան արմատը հնդեվրոպական ծագումով *հուր* բառն է (-*ատ* և -*անդ* վերջածանցներ են), իսկ անունն ինքը նույնական է *Հրատ* «Մարս»մոլորակի անվան հետ:[32] Հավանաբար, արևային և ամպրոպային աստվածությունների իրարահաջորդ տոների հիշատակի հետ գործ ունենք ոչ պակաս ուշագրավ հետևյալ դեպքում: Խարբերդում անգամ XIX դ. վերջին Տյառնընդառաջի հաջորդ օրը կոչվում էր *գ$^{ծ}$ածագ<կայծակ*,[33] երբ հայտնի է, որ Տյառնընդառաջի քրիստոնեական տոնին իր տեղը զիջած հեթանոսական տոնը ձոն-

[23] *Н. А р у т ю н я н, Биайнили (Урарту), Ер., 1970, стр.130-131: ՎԹՊԿ, էջ 73:*

[24] *Ա - Դ ո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., 1912, էջ 35: Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Եր., 1986, էջ 279:*

[25] *O. B e l l i, The Anzaf fortresses and the gods of Urartu, Istanbul, 2000, p. 37-41.*

[26] *Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Եր., 1941, էջ 74:*

[27] *Խ ո ր ե ն ա ց ի, Ա, ժա:*

[28] *Նույն տեղում,Ա, լա:*

[29] *ՀԱԲ, հ. 3, Եր., 1977, էջ 442:*

[30] *Keilschrifturkunden aus Boghazköi, Hf.1-30, Berlin, 1923-1939, XXIX, 1, I, 17-18.*

[31] *УКН, № 27 և այլն:*

[32] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Եր., 1946, էջ 108: Է. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 77:*

[33] *ՀԱԲ, հ. 2, էջ 507:*

ված է Տիր//Տիւր աստծուն, որի անունից էլ ծագում է այդ տոնի ժողովրդական անվան *տրնդեզ, տերնդեզ, տրնտաս* և այլ տարբերակները: Իսկ որ Տիրը եղել է արևային բնույթի աստվածություն, բացահայտվում է հելլենիզմի դարաշրջանում նրա և Ապոլոնի նույնացված լինելու հանգամանքից:[34]

Ուշագրավ է, որ հայ հին ավանդազրույցներում Մասիս լեռան անձնավորում և անվանադիր Ամասիան նրա լանջին երկու բնակավայր էր կառուցել և ժառանգություն թողել իր որդիներ Փառոխին (դրանցից արևելյանը) և Ցոլակին (դրանցից արևմտյանը):[35] Սրանցից առաջինն հիշատակված Փառոխը թե՛ իր «արևելյան» նստավայրով, թե՛ իր անվան ստուգաբանությամբ բացահայտում է իր արևային բնույթը, իսկ Ցոլակը ամպրոպային է թե՛ իր «արևմտյան» նստավայրով, թե՛ իր անվան ստուգաբանությամբ: *Փառոխ<Փառ-ոխ*, որտեղ *Փառ* նշանակում է «փայլ», որից՝ կրկնությամբ *փառփառ* «գեղեցիկ և վառվռուն աչքերը ունեցող»,[36] իսկ *–ոխ*-ը հենց «աչք» է նշանակում, որովհետև նրա արմատակից *ոխ* «քեն, վրեժ» բառը ծագած է համարվում հ.-ե *ok$^{u}$- «տեսնել» նախաձևից:[37]Ըստ այսմ, *Փառոխ*-ը արմատակիցը լինելով *փառփառ*-ի, նաև նույնն է նշանակում: *Ցոլակ<ցոլ-ակ* անունը նշանակում է «ցոլացող ակ» և իմաստային զուգահեռն է *կայծակն* (<կայծ-ակն) բառի (հմմտ. նաև *փայլակն <փայլ-ակն*, որտեղ *-ակն* «աչք»):[38]Ընդ որում, ավանդազրույցի Ցոլակը կրում է *կայտառ* մակդիրը, իսկ *կայտառ <կայտ-առ*, որտեղ *կայտ*//*կայծ*[39] հմմտ. աղտ//աղծ, բուտ//բոյծ (բտել//բուծել), *մուտ-ք*//*մուծ-ել* և այլն,[40]իսկ *-առ*-ը վերջածանց է (հմմտ. *պայծ-առ, խանձ-առ, խոչ-առ*):[41]

Ցոլակի ամպրոպային էության վերհուշն է, ըստ երևույթին, պահել ժողովրդական «Ցոլակ ջան, ցոլ տու, գնա» պարերգը, որն սկսվում է «Ամպի մեջ լորիկ թռավ» նախադասությամբ:[42]Սրբ. Լիսիցյանի գրառած յոթ քառատող ունեցող այս պարեղանակի տարբերակի քառատողերից յուրաքանչյուրի երկրորդ տողը կրկներգ է՝ «Ցոլակ ջան, ցոլ տու, գնա»:[43] Իսկ *ցոլ տալ//ցոլալ* նշանակում է «շողալ», «փայլել», «լույսի ճառագայթների թռչելը, պեծպեծին տալը» և այլն, նաև «պարի մեջ սահելով երթալը»:[44] Նույն *ցոլ* արմատից կրկնությամբ ունենք *ցոլցոլալ*, որը նշանակում է «ցոլալ», «շարունակ կամ այս ու այնտեղ ցոլալ, փայլփլել» և *ցոլքալ* «սուր և ծակող ցավ զգացվել»:[45] Ինչպես տեսնում ենք, բերված բացատրությունների ամբողջությունը վերաբերում է նախ և առաջ կայծակին: Ի դեպ, «Ցոլակ ջան», «Ցոլակի» կոչված ժողովրդական պարեղանակների պարի շարժումները բնորոշ են վերվերի տեսակին և, ըստ Սրբ. Լիսիցյանի, հիշեցնում են կրակից թռչկոտող կայծեր, բոցի արձակումներ:[46]

Ընծայական թիթեղին Արևաստծուց հետո՝ նրա դիմաց, պատկերված առաջին աստվածը Ամպրոպի աստված լինելու մասին է խոսում նաև նրա գլխավերևին պատկերված «աչքի տեսք ունեցող» գաղափարանշանը,[47] որը ամպրոպի աստծու ($^{D}$IM, $^{D}$Teišeba) խորհրդանշանն է՝ նրա «կայծակե աչքը»: Ինչպես տեսանք, հայերեն *կայծակն* (<կայծ-ակն) և *փայլակն* (<փայլ-ակն) բառերի երկրորդ բաղադրիչները հենց «ակն, աչք» են նշանակում, իսկ կայծակի անձնավորում ոգին «հայերի մեջ կոչվում է *Հրաչք*… Սակայն դա օդերևութական կենդանակերպ ոգի չէ, այլ ամպրոպային մար-

---

[34] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 37,43:*

[35] *Խ ո ր ե ն ա ց ի, Ա, ժբ:*

[36] *ՀԱԲ, հ. 4, Եր., 1979, էջ 491:*

[37] ***Г. Д ж а у к я н, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр.122, 271.***

[38] *Ա. Մ ե յ ե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 210-211:*

[39] *Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Եր., 1975, էջ 87:*

[40] *ՀԱԲ, հ.1, Եր., 1971, էջ 132, 487: Б. Джаукян, նշվ. աշխ., էջ 302-303:*

[41] *Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, էջ 87:*

[42] *Երգարան, կազմեց Վ. Սամվելյան, Եր., 1949, էջ 334:*

[43] ***С. Л и с и ц и а н, Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, Ер., 1958, стр. 556-557.***

[44] *Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Եր., 1945, էջ 468:*

[45] *Նույնը:*

[46] *С. Л и с и ц и а н, նշվ. աշխ., հ. 1, էջ 321, 322:*

[47] *ՎԹՄ, էջ 389, ՀՄ, էջ 122:*

դակերպ ոգի՝իրեղեն աչքերով: Նա հայտնվում է երբեմն իր հրացայտ աչքերով, որ կայծակ է նշանակում, այրում է այն ամենը, ինչ հանդիպում է և ապա անհետանում: Հրաչք է համարվում նաև Ծովյանը կամ Ծովինարը… Ամպրոպային մութ գիշերներին նա հանկարծ գլուխը հանում է ամպերի տակից և նայում ցած, այն ժամանակ փայլատակում է կամ *Ծովյանը խաղում է* ամպերի վրա», - գրում է Մ.Աբեղյանը:[48]

Ամպրոպի աստծու «կայծակե աչքի» մասին պատկերացման արձագանքն ենք տեսնում Երվանդ Վերջին արքայի (մ.թ.ա. III դարի վերջին տասնամյակներ) մասին եղած առասպելաբանական զրույցներից մեկում: Հայոց այս արքայի կրած անունը ցույց է տալիս, որ նա նույնացված է եղել Ամպրոպի աստծու հետ և համարվել է վերջինիս երկրային մարմնավորումը. Երուանդ < h.ե.*peru̯n̥to-:[49] Մովսես Խորենացու երկում հիշյալ զրույցի առթիվ կարդում ենք. «Բայց ասեն զԵրուանդայ ըստ հմայից դժնեայ զօղ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդեմ Երուանդայ, եւ ի հայեցուածոցն դժնութենէ, ասեն, պայթել որձաքար վիմացն»:[50]

Գահին բազմած աստծու դիմաց կանգնածներից առաջինը և երկրորդը ևս աստվածություններ են, որովհետև կրում են գահակալ աստծու զգեստների նման աստվածային զգեստներ: Ինչպես տեսանք, նրանցից առաջինը Ամպրոպի աստվածն է, իսկ երկրորդը լինելու է Մայր դիցուհին՝ հայկական առասպելաբանության ամպրոպային (=$^{D}$U,$^{D}$IM, $^{D}$Teišeba) և արևային (=$^{D}$UTU,$^{D}$Šiuini) երկվորյակների մայրը: Մայր դիցուհու և նրա ամպրոպային ու արևային որդիների պաշտամունքը հազարամյակներ շարունակ բնորոշ է եղել հայությանը՝ իր բազմազան դրսևորումները գտնելով նրա հոգևոր-մշակութային կյանքի տարբեր բնագավառներում: Հայաստանի և հայ հեթանոսական դիցարաններում այն ձևափոխվել էր որպես ամպրոպային հայր աստծու ($^{d}$U.GUR= Արամազդ), Մայր դիցուհու ($^{d}$INANNA=Անահիտ) և նրա արևային որդու ($^{d}$Izziistanu= Վահագն) պաշտամունք:[51] Այն լայն տարածում է ունեցել Վանա լճի ավազանում և հարակից շրջաններում: Այդ մասին խոսում են ինչպես այս տարածքում բնակված թագավորական ու նախարարական տոհմերի ավանդազրույցները, որոնց համաձայն Երվանդունի, Արծրունի, Գնունի, Աղձնյաց, Մամիկոնյան տոհմերի հիմնադիրները զույգ եղբայրներ էին,[52] այնպես էլ «Սասնա ծռեր» էպոսը, որի համաձայն այս տարածքում են ապրել վիպական Ծովինարն ու նրա երկվորյակ որդիները՝ ամպրոպային Սանասարն ու արևային Բաղդասարը:

Որ Արևաստծու դիմաց կանգնածներից երկրորդը լինելու է Մայր դիցուհին կարող են վկայել նաև նրա գլխավերևին պատկերված մեհենանշանները: Դրանցից աջակողմյանը հիշեցնում է միջնադարյան «Նշանագիրք իմաստնոցի» այն նշանը, որի բացատրությունն է «պարկեշտ»:[53] *Պարկեշտ* բառը նշանակում է ոչ միայն «ժուժկալ, համեստ, ողջախոհ, չափավոր», այլև «մաքուր, անարատ, սուրբ»:[54] Իր վերջին նշանակությամբ *պարկեշտ* բառը զուգահեռն է ներկայացնում իրանական ծագումով *Անահիտ* դիցանվան, որով աքեմենյան դարաշրջանից սկսած կոչվում էր հայոց Մայր դիցուհին:[55] Ընդ որում, *Anāhitā* «անբիծ, անարատ» մակդիրով հայտնի էր միջագետքյան Իշտար (շումեր. Inanna) դիցուհու հետ նույնացված ավեստյան Հարահվատի դիցուհին՝ նույնանուն առասպելական գետի, ջրային տարերքի և պտղաբերության անձնավորում

---

*[48] Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, h.7, Եր., 1975, էջ 70:*

*[49] Ս.Պ ե տ ր ո ս յ ա ն, Վահագնի երգի…, էջ 81-85:*

*[50] Խ ո ր ե ն ա ց ի, Բ, խբ:*

*[51] Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Հին Հայոց եռամասն ամսվա խուրհուրդը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1996, թիվ 1-12, էջ420-439: Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Գյումրի, 2001, էջ11-13, 19-21:*

*[52] Խ ո ր ե ն ա ց ի, Ա, իգ, Բ, լէ: Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ. Գ, էջ 13:*

*[53] Ա. Ա բ ր ա h ա մ յ ա ն, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 241:*

*[54] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, h. 2, Եր., 1981, էջ 636:*

*[55] Ս. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001, էջ 34:*

դիցուհին:[56] Հետագայում մոռացության մատնված նրա բուն անվան փոխարեն գործածվում էին եռյակ կազմած նրա մակդիրները՝ Arədvi-Sura- Anāhitā «Խոնավ-հզոր-անարատ» կամ «Արդվի հզոր-անարատ»:[57] Թե ինչու «մաքուր, անարատ» հայոց Մայր դիցուհին համարվում էր նաև «Մայր ամենայն զգաստութեանց»,[58] այսինքն՝ ամփոփում էր իր մեջ *պարկեշտ* հասկացության երկու առումները, հայ միջնադարյան (հին) քնարերգության առնչությամբ բացատրում է Մ. Աբեղյանը. «Մաքրություն ուրեմն, ամենից առաջ զգաստություն: Եվ դա մեր հին քնարերգության էական հատկանիշն է: Բայց դա նաև մեր ազգային բնավորության մի էական գիծն է, որ նույնիսկ հեթանոսական բանաստեղծության և առասպելաբանության մեջ երևան է գալիս»:[59]

Դիցուհու գլխավերևի ձախակողմյան մեհենանշանը ընթերցվել է թե՛ հնչյունագիր, թե՛ գաղափարագիր: Սա լուսնի մահիկ է պատկերում, բայց ի տարբերություն թիթեղի աջ կողմում, ճառագայթող արևի պատկերին ուղեկցողի, ներկայացված է գլխիվայր՝ սուր ծայրերը ներքև ուղղված: Եթե այդ դեպքում նա ընթերցվել է *ամ*, որը *ամիս* («ամիս» < «լուսին») բառի առաջին մասն է, ապա այս դեպքում նա ընթերցվելու էր *մա*, որովհետև նշանի շրջված (գլխիվայր) պատկերումը ենթադրում է համապատասխան հնչյունների շրջված (հետևառաջությամբ) ընթերցումը: Իսկ այս *մա*-ն լինելու է Ռայր դիցուհու տարածված անուններից մեկը՝ *Մա*, որը ծագում է հ.-ե. *ma-արմատից (սրանից էլ կրկնությամբ *mama «մայրիկ»): Ուշագրավ է, որ լուսնի մահիկը, և լուսինն առհասարակ, համարվում էր բերրիությունն ու պտղաբերությունը անձնավորող Մայր դիցուհիների խորհրդանիշը նաև Հայաստանում: Այստեղ Անահիտ դիցուհին, որի շնորհիվ «կեայ եւ կենդանութիւն կրէ երկիրս Հայոց», կոչվում էր «Մայր», «Ոսկեմայր», «Կեցուցիչ», «Խնամակալ»[60] և նույնպես խորհրդանիշ ուներ լուսնի մահիկը: «Սասնա ծռերում» Մայր նախնի Ծովինարը՝ Սանասարի և Բաղդասարի մայրը, նույնպես անձնավորել է լուսինը: Օրինակ, «Կռապաշտ թագավորի» հարկահանները «խաչապաշտ թագավորի» պալատի մոտով «Որ կ՛ընցնեն, լուս մ՛անունց իրնաց… /Աղջըկ անցկուն խորոտ, ընցկուն խորոտ, /Վուր *տըսնուչորս հավուր լուսնըկի* կը նմանի/ Վուր յոթ սարի իտևեն դուս կու գա»:[61] Բնականաբար, Լուսնի մահիկը ժողովրդական հավատալիքներում առնչվելու էր շատ դեպքերում Մայր դիցուհուն փոխարինած քրիստոնեական Աստվածածնին: Հմմտ. ժողովրդական աղոթքներում հանդիպող «Աստվածամա՛ր, կուտաս կամար», «Աստվածամա՛ր Լուսին կամար» ձևակերպումները:[62] Իսկ թե ինչու էր այդպես, կարելի է կռահել Անանիա Շիրակացու հետևյալ տողերից. «Զի ի փոփոխմունս որ լինին ի լուսնի, անասունք զլիութիւն առնուն. եւ տունկք օգնականութիւն գտանեն աճման սննդեան իւրեանց»,[63] «քանզի առաջին հարքն զլուսին դայեակն եւ սնուցիչ բուսոց անուանեցին»:[64] Անգամ XIX-XXդդ. սահմանագլխին պահպանվում էր լուսնի նկատմամբ եղած այդպիսի հավատալիքները: Գարդմանում (Գանձակի գավառ) և Արցախում (Վարանդա), ինչպես Ե. Լալայանն է վկայում. «Մանուկներին բարձրացնում են դեպի լուսին և աղոթում. «Ա՜ մոր ծոցեն տյուս եկող կարմիր լըներակ, տյու իմ ըեխիս պահես»:[65] Մայր դիցուհին «մաքուր, անարատ» ըմբռնվելու և լուսնի մահիկը խորհրդանիշ ունենալու տեսանկյունից ուշագրավ է նաև «Նշանագիրք

---

[56] *Р. Ф р а й, Наследие, Иран, М., 1972, стр. 168; Мэри Бойс, Зороастрийцы. Верования и обычаи, М.,1988, стр. 76-77.*

[57] *Նույն տեղում, էջ 76: И. Брагинский, Ардвисура Анахита, "Мифологический словарь", М.,1991, стр. 57.*

[58] *Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Ագաթանգեղոս), Քննական բնագիրը Գ.Տեր-Մկրտչյանի և Ս.Կանայանցի, Ե, 53, Եր., 1983:*

[59] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., հ. 7, էջ 339:*

[60] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Ե, 53, Ձ, 68, ԺԲ, 127, ՃԺԴ, 809:*

[61] *Սասնա ծռեր, հ.1, Եր., 1936, էջ 307-308:*

[62] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., հ. 7, էջ 39:*

[63] *Շ ի ր ա կ ա ց ի, նշվ. աշխ., էջ 43:*

[64] *Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 326:*

[65] *Ե. Լ ա լ ա յ ա ն, նշվ. աշխ., հ. 2, էջ 173, 429:*

իմաստնոցի» ,  նշանը, որի բացատրությունը «անեղծ»[66] է (հմմտ. «պարկեշտ», «անարատ»//*Անահիտ*), և վերնամասը լուսնի պառկած մահիկ է ներկայացնում:

Այսպիսով, կարելի է վերջնականապես ճշտված համարել, թե ովքեր են Բուղինի հավաքածուի ընծակայական թիթեղին պատկերված աստվածները: Դրանք ձախից աջ հերթականությամբ ներկայացնում են վաղ Ուրարտուի գերագույն աստծու դերում հանդես եկած Արևաստծուն ($^{D}$UTU,$^{D}$Šiuini)՝ գահին բազմածը, ինչպես նաև նրա հետ դիցական գլխավոր եռյակը կազմած Ամպրոպի աստծուն ($^{D}$IM, $^{D}$Teišeba)՝ կանգնածներից առաջինը, և Մայր դիցուհուն ($^{D}$Uarubaini)՝ կանգնածներից երկրորդը:

## *ГЛАВНАЯ ТРИАДА РАННЕУРАРТСКОГО ПАНТЕОНА*

***____ Резюме ____*** ***____С. Петросян ____***

***До религиозной реформы царя Ишпуини (825—810гг. до. н. э.) государственный пантеон Урарту возглавляла другая божественная триада. В состав этой триады входили бог Солнца($^{D}$UTU//$^{D}$Šiuni), бог Громовержец ($^{D}$U//$^{D}$IM$^{D}$Teišeba) и богиня Великая Мать ($^{D}$Uarubaini//$^{D}$'Arubaini).Ср. $^{D}$U. GUR, $^{D}$INANNA, $^{D}$Izzi—Istanu в хайасском пантеоне, а также Арамазд, Анахит, Вахагн в армянском—эллинистическом пантеоне. На бронзовой пластинке из коллекции Будина (Женева) бог Солнца, как верховный бог пантеона Урарту, изображен сидящим на троне. Перед ним в молитвенной позе изображены бог Громовержец, богиня Великая Мать, а также две человеческие фигурки.***

[66] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց գրերը, Եր., 1984, թիվ 49: Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, էջ 236:*

*Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ*

## *ՀԱՅՈՑ ԱՐՏԱՎԱՆ (ԱՐԴՈԱՍՏԵՍ) ԹԱԳԱՎՈՐԸ*

Երվանդունի երկրորդ թագավորական դինաստիայի հիմնադիրը Հայաստանի նախկին սատրապ Օրոնտես-Երվանդն էր: Լինելով շուրջ 200-ամյա դադարից հետո Հայաստանի անկախությունը վերականգնած և պետության հիմնադիր դարձած անձ Օրոնտես-Երվանդը չէր կարող տեղ գտած չլինել հայ ավանդական պատմագրության մեջ: Այսուհանդերձ իր այդ հայտնի անունով նա բացակայում է մեր պատմիչների երկերում, երբ նրանց հայտնի է այդպիսի մի կերպար՝ ավանդական Վաղարշակը (ըստ Մ. Խորենացու) կամ Արշակը (ըստ Անանուն պատմիչի), որին նրանք հայ Արշակունիների դինաստիայի հիմնադիրն են համարում: Այդ կերպարի նախատիպ թագավորի վերաբերյալ հայ և օտար հայագետների արտահայտած իրարամերժ կարծիքներից հետո վերջին տասնամյակներին հայագիտության մեջ իշխող դարձավ այն տեսակետը, թե դա հավաքական կերպար է և մեկ նախատիպ չունի: Այս հարցում ամփոփիչ կարելի է համարել Գ. Սարգսյանի հետևյալ տողերը. «Հայտնի է, որ Արշակունիների հաստատումը Հայաստանում տեղի է ունեցել այլ պատմական պարագաներում և այլ ժամանակ, քան նկարագրում է Խորենացին, և որ Վաղարշակի, որպես բարեփոխիչ թագավորի կերպարը, փաստորեն, հավաքական, հայոց մի շարք թագավորների գծերն ու գործունեությունը արտահայտող կերպար է»:[1]

Անկասկած, որպես երկրի շուրջ 200-ամյա կորուսյալ անկախության վերականգնող, թագավորական նոր դինաստիայի հիմնադիր և պետականություն կերտող անձ, մ.թ.ա. IVդ. վերջին տասնամյակներին իշխած Օրոնտես-Երվանդը ևս իր դերն էր խաղալու այդ կերպարի ստեղծման գործում: Ընդ որում, այդ դերն առաջնային էր լինելու,որովհետև ավանդական Վաղարշակը համարվում է մակեդոնացի նվաճողների ժամանակակիցը[2], որպիսիք չեն ո՛չ Արտաշիսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես I-ը, ո՛չ էլ Արշակունի դինաստիայի հիմնադիր Տրդատ I-ը, բայց որպիսին է հենց Օրոնտես-Երվանդը՝ Երվանդունյաց երկրորդ թագավորական դինաստիայի հիմնադիրը:

Պարզելու համար, թե ինչպես է կոչվել Օրոնտես-Երվանդին հաջորդած Երվանդունի թագավորը, տեսնենք, թե ինչ անունով է մ.թ.ա. IIIդ. առաջին տասնամյակներին տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ նա հիշատակված օտարալեզու աղբյուրներում: Մ.թ.ա. 270-260-ական թթ. գալաթների ներխուժումը Բալկանյան թերակղզուց Փոքր Ասիա, Եգիպտոսի, Բյութանիայի և Պերգամոնի դեմ մղվող պատերազմները նպաստեցին[3] Անտիոքոս I-ի (մ.թ.ա. 280-261թթ.) օրոք Սելևկյան պետության թուլացմանը, ուրեմն, Հայաստանի և Ատրպատականի անկախության ամրապնդմանը, նաև Կապադովկյան, Պոնտական և Վրացական թագավորությունների ստեղծմանը[4]:

Կապադովկիայի թագավոր Արիարաթես II-ը դրամներ է թողարկել ոչ թե հունարեն, այլ արամեերեն մակագրությամբ, իսկ դա խոսում է հույների նկատմամբ նրա բացասական վերաբերմունքի մասին:[5] Ա.Գ. Բոկշչանինի կարծիքով, 301թ. Կա-

---

[1] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Մովսես Խորենացին և նրա «Հայոց պատմությունը», «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, 1973, էջ 57:*

[2] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն (այսուհետ՝ Խորենացի), Եր., 1981, գիրք Բ, գլ. գ-ե: Լ. Պետրոսյան, Ավանդական Վաղարշակի պատմական ու վիպական նախատիպերի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 136-142: Նույնի, Երվանդյան Մեծ Հայքի չորս ծայրագավառների մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, թիվ 7, 2004, էջ 19-26:*

[3] ***И. С в е н ц и ц к а я, Эллинизм в Передней Азии, "История Древнего мира. Расцвет древних обществ", М., 1989, стр. 317-318.***

[4] ***А. Б о к щ а н и н, Парфия и Рим. Возникновение системы политического дуализма в Передней Азии, М.,1960, стр. 160-161; А. Болтунова, Возникновение классового общества и государственной власти в Иберии, "Вестник древней истории", 1956, N 2, стр. 28-43; Г. Меликишвили, К истории древней Грузии, Тб., 1959, стр. 266-271.***

[5] *Նույն տեղում, էջ 157-158:*

պադովկիայի կառավարիչ Արիարաթեսի զարմիկ և որդեգիր Արիարաթեսը փախել էր Հայաստան, ապա հայոց թագավորի հետ դաշնակցած վերադարձել Կապադովկիա, ջախջախել մակեդոնական ստրատեգոս Ամյունտեսին և հիմնադիրը դարձել Կապադովկիայի արքայատոհմի:[6] Նա, «ըստ երևույթին»-ով, Պոնտական թագավորության հիմնադրումը ևս[7] դնում է այդ ժամանակ: Բայց տրամաբանական է, որ պոնտական ու վրացական թագավորությունները ստեղծվել էին Սելևկյանների օգնությամբ Կապադովկիայի և Հայաստանի թիկունքում և սրանց դեմ: Վրաց թագավորության ստեղծման կապակցությամբ Ա. Մելքոնյանը գրում է. «…Մ. թ. ա. 270-ական թթ. Մեծ Հայքի հյուսիսային հարևանությամբ կազմավորվել է Վրաց Փառնավազյան պետությունը (Իբերիա, Վիրք), որը, օգտվելով հայ Երվանդյանների հակառակորդ Սելևկյանների օժանդակությունից, հայոց երկրից գրավել և անջատել է Գուգարքն ու Ջավախքը, ինչպես և հարակից այլ շրջաններ»:[8]

Մակեդոնական նվաճողներից Կապադովկիայի ազատագրման գործում հայոց թագավորի ունեցած մասնակցության մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հույն պատմիչ Դիոդորոս Սիկիլիացին: Նա գրում է. «Երբ Արիարաթն այստեղ հաղթվեց ու ճակատամարտում ընկավ, Կապադովկիան՝ թե՛ ինքը և թե՛ սահմանակից երկրները, անցան մակեդոնական իշխանության տակ: Իսկ Արիարաթը՝ նախկին թագավորի որդին, հուսահատության հասնելով այս անցքերի պատճառով՝ փախչում է քչերի հետ Արմենիա: Մի քանի ժամանակից հետո, երբ Եվմենեսը, Պերդիկկասը և նրանց համախոհները վախճանվել էին, իսկ Անտիգոնոսն ու Սելևկոսն այլ գործերով էին զբաղված՝ նա վերցնելով արմենների թագավոր Արդոատեսից զորք՝ սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և տեր դառավ իր հայրենի իշխանության»:[9] Արիարաթեսի Կապադովկիայում հաստատվելուն օգնած *Արդոատես* հայոց թագավորը չէր կարող Արիարաթես II թագավորի դաշնակիցը լինել, եթե վերջինիս վերադարձը վերաբերում է 301/300թթ.: Դեռևս Յ. Մարկվարտն էր ցույց տվել, որ Դիոդորոսի օգտագործած աղբյուրում Կապադովկիայի թագավորական դինաստիայի ճյուղագրությունը միտումնավոր կերպով խեղաթյուրվել է:[10] Դա արվել է մի նպատակով, որպեսզի Արիարաթ II-ը դառնար Արիարաթ I-ի որդին: Իրականում Արիարաթ II-ը պետք է անկախ Կապադովկյան թագավորություն հիմներ հայոց Արդոատես թագավորի օգնությամբ 270 կամ 260թ.:[11] Ուրեմն, սխալվել է Դիոդորոսը, կամ նրա աղբյուրը, որ Ամյունտասին համարել են Անտիգոնոսի ժամանակակիցը և ոչ թե Սելևկյան զորավար:[12] Հ. Մանանդյանը, մերժելով այդ թյուր պատկերացումը, միևնույն ժամանակ ավելացնում է. «Արմենների թագավորի Արդոատես (**’Αρδοάτης**) անունը, որ համարվում է աղճատված՝ Ռեյնաքը և հայագետ բանասերների մեծագույն մասը կարդում են Արտավազդ (=**’Αρταουάσδης**): Ավելի հավանական է, իմ կարծիքով, Մարկվարտի ենթադրութունը, որը **’Αρδοάτης** աղճատված անունը առաջարկում է ուղղել և կարդալ **’Αρτοάνδης** (= **’Ορόντης**, «Երուանդ»)»:[13] Այդ անունը *Արտավազ(դ)* տեսքով է վերականգնել նախ (Թ. Ռեյնաքից ավելի քան 100 տարի առաջ) Մ.Չամչյանցը: Ըստ նրա՝ Հայաստանում թագավորում էր Հրանտը (Օրոնտես-Երվանդ), որի մահից հետո «Յայնժամ մի ոմն յաւազ իշխանաց աշխարհին՝ Արտավազ կամ Արտավազան անուն՝ այր խրոխտ եւ կորովի՝ բռնացեալ տիրեաց ի վերայ երկրին. եւ տարածեաց զիշխանութիւն իւր մինչեւ ի սահմանս Ատրպատականի եւ այլոց շրջակա աշխարհաց, ըստ գրելոյ Պողիբիոսի հին մատենագրի…»:[14]

---

*[6] **А. Б о к щ а н и н**, նշվ. աշխ., էջ 125:*

*[7] Նույնը:*

*[8] Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 37-38:*

*[9] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Եր., 1944, էջ 97 (Diod., XXXI, 19, 4-5):*

*[10] Նույն տեղում, էջ 98-99:*

*[11] Նույն տեղում, էջ 99:*

*[12] Նույն տեղում, էջ 98:*

*[13] Նույնը:*

*[14] Մ. Չ ա մ չ յ ա ն ց, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. 1, Եր., 1985, էջ 203:*

Մ. Չամչյանցը իրավացի է, երբ Հրանտին (այսինքն՝ Օրոնտես-Երվանդին) և Արտավազին (այսինքն՝ Արդոատեսին) տարբեր անձինք է համարում՝ Հայաստանի նախորդ և հաջորդ իշխողներ: Նա կռահել է նաև, որ հունաձև *Արդոատես*-ի առաջին մասը համապատասխանելու է հայկական *Արտ* -ին, որի հիման վրա էլ անվանակիր անձին նա Արտավազ(ան), այսինքն՝ *Արտավազդ*, անունն է տալիս: Բայց, ինչպես կտեսնենք ստորև, այդ անձնավորությունը *Արտավազ(դ)* չի կոչվել: Այս անձի հետ կապված թյուրիմացությունն ավելի են խորացրել, նրան համարելով Փոքր Հայքի թագավոր և առնչելով 322թ. իրադարձություններին (երբ տեղի հայերը ապստամբել էին և վտարել իրենց գլխին կառավարիչ նշանակված Նեոպտոլեմոսին):[15] Ա.Գ. Բոկշչանինը ևս Արիարաթեսին օգնություն ցույց տված հայոց թագավորին *Արտավազդ* է կոչում, իսկ նրա հետ կապված դեպքերը թվագրում մ.թ.ա. IV դարի վերջով: Ըստ նրա՝ դիադոքոսներից Եվմենեսը ճանաչել էր հայ կառավարիչ Արտավազդի կիսանկախ վիճակը և բավարարվել նրա կողմից մակեդոնա-հունական գերիշխանության զուտ պաշտոնական ճանաչմամբ:[16] Իրականում Եվմենեսի հետ կապի մեջ մտած Հայոց թագավորը եղել է Օրոնտես-Երվանդը և ոչ թե *Արտավազդ* վերանվանված Արդոատեսը: Այս առթիվ Հ. Մանանդյանը գրում է. «Դիոդորոսի և Պոլիենոսի մոտ մոտավորապես 317թվին (մ.թ.ա.) հիշատակված է իբրև բուն Արմենիայի սատրապ Օրոնտես-Երվանդը, որը եղել է Պարսկաստանի Պերսիս նահանգի սատրապ մակեդոնացի Պևկեստասի մոտ բարեկամը»:[17] Իսկապես էլ, հույն հեղինակների հաղորդումը վերաբերում է դիադոքոսների պայքարի այն ժամանակահատվածին, որը նախորդել է Անտիգոնոսի կողմից Եվմենեսին վտարելուն (մ.թ.ա. 316թ.), իսկ այդ ժամանակ Հայաստանը կառավարում էր (հավանաբար, արդեն *թագավոր* տիտղոսով) Օրոնտես-Երվանդը: Ս. Կրկյաշարյանը ևս համոզված է, որ Հայոց թագավոր Արդոատեսի օգնությամբ Կապադովկիայի անկախացումը կարող էր տեղի ունենալ միայն մ.թ.ա. III դ. առաջին կեսին և չէր կարող տեղի ունենալ մ.թ.ա. IV դ. վերջին, երբ Հայաստանում իշխում էր ոչ թե Արդոատեսը, այլ նրա նախկին սատրապ Օրոնտեսը: Նա գրում է. «Դիոդորոսի մեկ ուրիշ վկայությունից իմանում ենք, որ մ.թ.ա. IIIդ. առաջին կեսին արմենների ’Αρδοατης (Արտավա՞զդ, Երվա՞նդ) թագավորը իր զորքով օգնում է Հայաստան ապավինած Կապադովկիայի օրինական գահաժառանգ Արիարաթեսին, որպեսզի սա դուրս քշի իր երկրից մակեդոնացիներին և գրավի իր գահը»:[18]

Թե ո՞վ կարող էր լինել հույն հեղինակի գրչի տակ *Արդոատես* աղավաղյալ անվամբ հանդես եկած հայոց թագավորը, պարզել կարելի է, պատմաբաններին համեմատաբար ուշ հայտնի դարձած, Երվանդունի թագավորներից մեկի դրամի պակասավոր մակագրության, Կոմագենեի Երվանդունի թագավոր Անտոքոս I-ի (մ. թ. ա. 69-34 թթ.) Նեմրութ լեռան սրբավայրի սալերից մեկի նույնպիսի արձանագրության և Անանուն պատմիչի ավանդած հայոց արքայացանկի տվյալների համադրման միջոցով: Հիշյալ դրամի վերաբերյալ Գ. Սարգսյանը նշում է, որ նրա վրա բերված թագավորի անունը թերի է և ներկայացնելու է *Արտաւան* անվան հունական ’Αρταβανος կամ ’Αρταβανης ձևի հոլովված վերջնամասը՝ […]ABANOY, ապա ավելացնում, որ հրատարակիչը այդ անունը նույնական է համարում Անանունի բերած արքայացանկի հայ թագավոր Արտավանի անվան հետ:[19] Իսկ Անանունի արքայացանկի համապատասխան տեղում կարդում ենք.«Արտաւան եւ Արշաւիր՝ ամս ԺԲ: Ապա Արշակ որդի Արշաւրի՝ ամս ԼԷ: Ապա Երուանդ որդի Արշակայ՝ ամս ԻԱ: Ապա Արտաշէս եղբայր նորին՝ ամս ԾԲ:[20] Այս Երվանդը մ.թ.ա. III դարի վերջին տասնամյակներին թագավորած

[15] *Լ և ո, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1966, էջ 291:*

[16] ***А. Б о к щ а н и н**, նշվ. աշխ., էջ 119:*

[17] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 96:*

[18] *Ս. Կ ր կ յ ա շ ա ր յ ա ն, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 194:*

[19] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 123-124: Տե՛ս նաև Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ. - մ. թ. XIV դ.), Եր., 1983, էջ 41-42:*

[20] *Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն (այսուհետ՝ Սեբեոս), Եր., 1939, գլ. Բ, էջ 10-11:*

Երվանդ Վերջինն է, իսկ Արտաշեսը՝ Արտաշիսյան արքայատոհմի հիմնադիր Արտաշես I-ը (մ.թ.ա. 189-160 թթ.):[21]

Ըստ Կոմագենեի Անտիոքոս I թագավորի սրբավայրի սալերի հաջորդականության՝ մ. թ. ա. IV դարի վերջին տասնամյակներին թագավորած Օրոնտես-Երվանդից (սալին՝ *Արոանդես*) հետո հիշատակված է մի թագավոր, որի անունը կիսով չափ ջնջված է՝ պահպանվել է միայն *-անես* վերջնամասը:[22] Գ. Տիրացյանի կարծիքով, սրա գահակալման տարիները ընկնում են մ.թ.ա. III դ. առաջին տասնամյակներին: Ուրեմն, թե՛ անվան *-անես* վերջնամասով, թե՛ գահակալած ժամանակաշրջանով այս թագավորը համապատասխանում է Դիոդորոս Սիկիլիացուն *Արդոատես* անունով հայտնի և Անանունի ավանդած արքայացանկի *Արտաւան* (հունձև՝ *Արտաբանես*) անունը կրած թագավորին: Այս թագավորի ոչ թե Արշակունի կամ Արտաշիսյան, այլ Երվանդունի հայ թագավոր լինելու մասին է խոսում նախ և առաջ իր *Արտաւան* անունը, որը «խորթ է ինչպես հայ Արշակունիներին, այնպես էլ Արտաշիսյաններին»:[23] Նրա Երվանդունի լինելու մասին է խոսում նաև նրա հետ (որպես գահակից) հիշատակված թագավորի *Արշաւիր* անունը,[24] որը «ինչպես և նախորդը, չկա հայ Արշակունիների և Արտաշիսյանների մեջ»:[25] Արտավանի և Արշավիրի Երվանդունիներ լինելու մասին է խոսում նաև նրանցից երկրորդի, այսինքն՝ Արշավիրի, Երվանդ Վերջինի պապը, իսկ Արտավանի՝ պապի գահակից ավագ եղբայրը լինելու հանգամանքը:[26] Երբ ի նկատի ենք առնում Երվանդունիների և Աքեմենյանների ազգակցության (թեկուզև իգական գծով) իրողությունը, հասկանալի է դառնում նաև, թե ինչ ճանապարհով կարող էին Երվանդունի տոհմում հայտնվել *Արտաւան* և *Արշաւիր* անունները:

Այս առթիվ ուշադրության արժանի դիտողություններ է արել Գ.Սարգսյանը: *Արտաւան* անձնանվան վերաբերյալ նա գրում է. «Ի դեպ, այդ անունը թեև շատ գործածական է եղել պարթև Արշակունիների մեջ, սակայն բնորոշ պարթևական չէ: Եղել են այդ անունը կրող, մի քանի ամիս թագավորած, Աքեմենյան թագավոր Քսերքսես Ա-ի հաջորդը և այլ անձինք»:[27] *Արշաւիր* անձնանվան վերաբերյալ էլ նա գրում է, որ, Աստվածաշնչի հայերեն թարգմանության համաձայն, *Արշաւիր*-ը եբրայական Axašvērοš անվանաձևի համարժեքն է, իսկ վերջինիս պարսկական բուն ձևը Xšayāršа-ն է՝ հույների կողմից տառադարձված Ξέρξης//*Քսերքսես*:[28] Այնուհետև կարդում ենք. «Դարեհի որդի Քսերքսեսը բավական հռչակված է եղել իր ժամանակվա աշխարհում և հատկապես Աքեմենյան տերության մեջ. նրա անունը պիտի թափանցեր տերության բոլոր անկյունները և, ի թիվս այլոց, հայկական միջավայր»:[29] Ի վերջո, *Արտաւան* և *Արշաւիր* անունների «մեջ նշմարելի են Ծոփքի դինաստիայի (Երվանդյան տոհմի մի ճյու՞ղ) թագավորների պատկերները»:[30] Այժմ Ծոփք-Կոմագենեի թագավորական դինաստիայի Երվանդունի արքայատոհմի մի ճյուղը լինելու հանգամանքը կասկած չի հարուցում:[31]

Ըստ երևույթին, Արտաշես I-ի ազգական և ժամանակակից Ծոփքի նոր արքայատոհմի հիմնադիր Զարեհը ևս, Արտաշես I-ի նման, ազգակից էր Երվանդունիներին: Հայտնի է, որ այս նոր արքայատոհմի վերջին ներկայացուցիչը, որին հաղթեց և Ծոփքը Մեծ Հայքին միացրեց Տիգրան Մեծը (մ.թ.ա. 94թ.), կոչվում էր *Արտանես*// 'Αρτάνης:[32] Կարծում ենք, որ այս անունը կրճատ ձևն է ներկայացնում հիշյալ *Արտաւան* (հունձև՝ *Արտաբանես*) անվան: Միջակա *-աւ*-ի սղման տեսանկյունից հմմտ. *Մանաւազակերտ*>*Մանազկերտ*, *Վահեւունի*>*Վահունի*, *Փառնաւազ*>**Փառնազ-եան*>*Փառա-*

[21] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 125-126, 203-204:*
[22] *Նույն տեղում, էջ 31:*
[23] *Նույն տեղում, էջ 123:*
[24] *Ս ե բ ե ո ս, գլ. Բ, էջ 10:*
[25] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 124:*
[26] *Ս ե բ ե ո ս, գլ. Բ, էջ 10-11:*
[27] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 124:*
[28] *Նույն տեղում, էջ 117-118:*
[29] *Նույն տեղում, էջ 118:*
[30] *Նույն տեղում, էջ 126:*
[31] *Հայ ժողովրդի պատմություն, h. 1, Եր., 1971, էջ 512-513:*
[32] *Ս տ ր ա բ ո ն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Եր., 1940, էջ 64-65 (Strabo, XI, 14, 15):*

*զեան*: Իսկ *Արտաշես* անունը Ծոփքի թագավորին հասած էր լինելու որպես Երվանդունիների տոհմական անուն: Ի դեպ, *Արդոատես* և *Արտաշես* արքայանունների փոխադարձ կապի մասին գրեթե 100 տարի առաջ, խոսել էր Ն. Ադոնցը:[33] Հարց կարելի է բարձրացնել նաև Արտավանի հետ միասին (որպես գահակից) հիշատակված Արշավիրի պատմականության մասին: Ինչպես նշվեց, *Արշաւիր*-ը հայկական համարժեքն է իրանական Xšayārsa անվան՝ հին հույներին հայտնի *Քսերքսես* տեսքով: Իսկ *Քսերքսես* անունն էր կրում նաև Ծոփքի վերջին Երվանդունու թագավորը,[34] որը կարող էր թոռը լինել հիշյալ Արշավիր//Քսերքսեսի, ուրեմն, նաև հորեղբորորդին Երվանդ Վերջինի:

*Արշավիր* անվան Երվանդունի տոհմում կիրառված լինելու մասին կան նաև այլ (արդեն անուղղակի) տվյալներ: Մովսես Խորենացին Երվանդ Վերջինի շինարարական գործունեությունը նկարագրելուց հետո ավելացնում է. «Երվանդի այս բոլոր շինածները Տրդատ Մեծը պարգևում է Կամսարականների ցեղի մարդկանց…»:[35] Ապա՝ «Բայց Տրդատ թագավորը Կամսարի որդիներից մեծին, *Արշավիրին*, մխիթարելով, հոր փոխարեն է նշանակում, նախարարական ցեղ է սահմանում նրա հոր անունով և մտցնում է նախարարությունների թվի մեջ: Դեռ ուրիշ պարգևներ էլ է ավելացնում՝ Երվանդի քաղաքը և նրա գավառը…»:[36] Երվանդունիների այս կալվածքներին տիրացած օտարածին Կամսարականները *Արշավիր* անունը ժառանգել կարող էին միայն Շիրակ-Արշարունիքի բնիկ տոհմերից (Երվանդունի արքայատոհմի կողային ճյուղերի՞ց) որևէ մեկի հետ հաստատած խնամիական կապի միջոցով, իսկ այդ տոհմին անունը կարող էր անցած լինել հենց Երվանդունիների արքայական ճյուղից: Ընդ որում, Կամսարական տոհմում *Արշաւիր* անունն այնքան սիրելի և տարածված էր, որ այդ անունը կրող Կամսարական տոհմի տարբեր ներկայացուցիչներ հիշատակված են V դարի մեր պատմիչների և Անանիա Շիրակացու երկերում:

Ասվեց, որ Օրոնտես-Երվանդին փոխարինած Հայոց թագավորը լինելու էր Դիոդորոս Սիկիլիացուն *Արդոատես* (<*Արդոանե՞ս. հմմտ. *Արտաբանես*<* *Արտավանես*) անվամբ հայտնի Արտավանը, որը, ըստ Անանունի պատմիչի, գահակալել էր Արշավիրի՝ Երվանդ Վերջինի պապի հետ: Արտավանը և Արշավիրը թագավորել են 12 տարի (ամս ԺԲ), Արշավիրի որդի Արշակը՝ 37 տարի (ամս ԼԷ), իսկ Արշակի որդի Երվանդը՝ 21տարի (ամս ԻԱ):[37] Ըստ Մովսես Խորենացու՝ Երվանդ Վերջինը թագավորել է 20տարի («կալեալ զթագաւորութիւնն ամս քսան»):[38] Անանունի բերած տարիների գումարը 70 (12+37+21) է: Հայտնի է, որ Արտաշեսի զորքերը Երվանդ Վերջինին սպանել էին մ.թ.ա. III դարի վերջին:[39] Եթե այդ «վերջին» տարիներին գումարենք հիշյալ 70 տարին, ապա կունենանք Արտավանի գահակալման սկզբի մոտավոր թվականը՝ մ.թ.ա. III դ. 70-ական թվականների վերջը, իսկ Արշավիրի հետ նրա գահակալման տարիները կլինեն 70-ական թվականների վերջը և 60-ական թվականները: Դրանց ընթացքում էլ Հայոց Արդոատես թագավորը օգնել էր Կապադովկիայի Արիարաթ II թագավորին Սելևկյաններից հետ գրավելու իր երկիրը:[40]

Նույն Արդոատես-Արտավանն էր լինելու հայոց այն թագավորը, որն ապաստան էր տվել Բյութանիայի Նիկոմեդես թագավորի որդի Զիաելասին: Այս առթիվ Հ. Մանանդյանը գրում է. «Հերակլեացի պատմագիր Մեմնոնը իր հայրենի քաղաքի մասին պատմության մեջ հաղորդում է, որ Բիթանիայի Նիկոմեդես թագավորի որդին՝ Զիաելասը, մոտավորապես 260 թվին փախել էր Արմենիայի թագավորի մոտ, որի անունը չէ հիշված… Զիաելասը, օգնություն ստանալով դրսից, գուցե և արմեններից, կարողացել էր ստանալ Բիթանիայի թագավորական գահը (250-228 մ.թ.ա.)»:[41] Ընդ որում, Հ. Սանտալճյանի հետևությամբ Հ. Մանանդյանը ևս հակված է «Հայոց թագավոր»-ը

[33] *Н. А д о н ц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 390, пр. 1.*
[34] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 108, 109: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 513,693, 881:*
[35] *Խ ո ր ե ն ա ց ի, Բ, խբ:*
[36] *Նույն տեղում, Բ, ղ:*
[37] *Ս ե բ ե ո ս, գլ. Բ, էջ 10-11:*
[38] *Խ ո ր ե ն ա ց ի, Բ, խգ:*
[39] *Նույնը: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 516:*
[40] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., հ. 1, էջ 99:*
[41] *Նույն տեղում, էջ 107:*

վերագրելու տարածական առումով ավելի մոտ գտնվող, բայց իսկապես փոքր Փոքր Հայքին:[42] Ավելի հավանական է Գ. Տիրացյանի կարծիքը, որը, օրինակ բերելով Կապադովկիայի անկախացման գործում Հայաստանի խաղացած դերը, շարունակում է. «Հայտնի է նաև նմանօրինակ մի այլ փաստ, որը վերաբերում է նույն ժամանակաշրջանին: Բյութանիայի Նիկոմեդես թագավորի որդին՝ Զիաելասը, ապաստան է գտել Հայաստանի թագավորի մոտ և ապա օտար ուժերի, գուցե հենց Հայաստանի օգնությամբ վերանվաճել իր գահը»:[43]

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Դիոդորոս Սիկիլիացու հիշատակած Հայոց թագավոր Արդոատեսը (<Արդոանե°ս) նույնն է Անանունի հիշատակած Արտավանի և ոչ թե Օրոնտես//Երվանդի կամ չեղյալ Արտավազդի հետ, իսկ նրա կողմից Կապադովկիայի թագավոր Արիարաթ II-ին և Բյութանիայի ապագա թագավոր Զիաելասին ցուցաբերած օգնությունը պետք է թվագրել մ.թ.ա. IIIդ. 70-60-ական թվականներով:

## ЦАРЬ АРМЕНИИ АРТАВАН (АРДОАТЕС)


___ *Резюме* ___                                                    ___ *Л. Петросян* ___

**Легендарный царь Армении Аршак в "Начальной истории Армении" анонимного историка идентичен с Валаршаком у Мовсеса Хоренаци. Они- собирательные образы, прототипами которых послужили исторические правители Армении, в том числе и исторический Ерванд (Оронт) – основатель Ервандидской второй царской династии (правил в последних десятилетиях IVв. до н.э.).**

**После Ерванда царствовал Ардоатес (первая половина III в. до н. э.), которому соответствует Артаван в "Начальной истории Армении" Анонима. Вероятно, тот же Артаван-Ардоатес выступает как в надписи одной из плит святилища Ервандидов на горе Немрут (в дефективной форме ... *анес* ), так и на медной монете неизвестного Ервандидского царя (также в дефективной форме *...абанес*): арм. *Артаван* + греч. суфф. *ес* > греч. *Артабанес*. При помощи Артаван-Ардоатеса (<*Ардоанес?) каппадокиец Ариарат II сверг селевкидского наместника Каппадокии и стал (ок. 260 г. до н. э.) независимым царем. Возможно, при Артаван-Ардоатесе Зиаел, сын царя Вифинии Никомеда, скрывался от Селевкидов в Армении, а впоследствии вернулся на родину и стал независимым царем.**


---

[42] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 107:*

[43] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 512:*

*Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ*

## *ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ -ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ XVII-XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Ուշ միջնադարը մեր ժողովրդի պատմության ամենադաժան արհավիրքներով ու սարսափներով լի պատմաշրջաններից մեկն է՝ ճակատագրական իր բոլոր հետևանքներով: Պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդը հայտնվել էր բախտի քմահաճույքին, դարձել օտար բռնակալների կամայականությունների ու վայրագությունների զոհը: Ոչնչացվել էին հայ խոշոր ֆեոդալական տներն ու իշխանությունները, քաղաքական կյանքը բուն հայրենիքում գրեթե մարել էր: Անասելի չափերի ու դաժանության հասած ազգային ու կրոնական հալածանքները կլանում էին մարդկային բյուրավոր կյանքեր:[1]

XVII - XVIII դարերի հայ պատմագիրները խորապես գիտակցել են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող նոր երևույթների խաղացած դերն ու նշանակությունը, որոնք և պայմանավորել են հայ պատմագրության զարգացումը: Նրանք իրենց երկերում զգալի տեղ են տվել հայ առևտրավաշխառուական կապիտալի վերնախավի ծավալած գործունեությանը Հայաստանում, Պարսկաստանում, Թուրքիայում և մի շարք գաղթավայրերում: Պատմական ճշգրիտ փաստերով համակողմանիորեն ցույց են տվել նրա որոշիչ և կարևոր դերը հայ քաղաքական ու հասարակական կյանքում:

Հայ առևտրական կապիտալի զարգացումը Հայաստանում ու Անդրկովկասում, ինչպես և գաղթավայրերում հիմք էր դառնում ոչ միայն երկրի տնտեսական զարթոնքին ու վերելքին, այլև նպաստում էր նրա հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի վերակենդանացմանը: Ազատագրական շարժումների արշալույսին հայ առաջավոր աշխարհիկ ու հոգևոր գործիչները քաջ գիտակցել են պատմագրության դերն ու նշանակությունը ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման, լուսավորության տարածման ու արմատավորման և սերունդներին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում: Հայաստանի տնտեսական, հասարակական - քաղաքական կյանքի վերելքն ու զարգացումը նախապատրաստել են նաև հայ ազատագրական շարժումների զարթոնքը, որը և բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա ճակատագրում:

Մինչև XVIII դարի սկիզբը հայ աշխարհիկ ու հոգևոր վերնախավը ավանդաբար Հայաստանի ազատագրումը կապում էր արևմտաեվրոպական պետությունների հետ և ջանքեր չէր խնայում նրանց հետ քաղաքական, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար: Միանգամայն ճիշտ է նկատում Աշ. Հովհաննիսյանը որ. «Պատրանքի ոսկե շղթայով գամվելով պապական եկեղեցու կամ եվրոպական պետությունների սին խոստումներին՝ հայ գործիչները ի վիճակի չեղան փշրելու հայ ժողովրդին կաշկանդող քաղաքական ստրկության շղթաները»:[2]

Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրման գործը հին փակուղուց՝ արևմտաեվրոպական կողմնորոշումից դուրս բերվեց ժամանակիականավոր քաղաքական գործիչ Իսրայել Օրու ջանքերով: Նա առաջինն էր, որ ռուսական կողմնորոշումով վերանայեց հայ ազատագրական շարժման քաղաքական ուղղությունը և բացառապես Ռուսաստանի հետ կապեց Հայաստանի ազատագրման հեռանկարը: Սա լիակատար հեղաբեկում էր VIII դարի հայ քաղաքական կյանքում, որը և պայմանավորել է հետագա ռազմա-քաղաքական բուռն իրադարձությունների ընթացքը: Այդ իրողություններն իրենց անդրադարձումն են գտել ժամանակակից հայ պատմագիրների ու ժամանակագիրների երկերում: Հայ ազատագրական շարժումների հիմնահարցը դարձել է նրանց աշխատությունների հիմնական նյութը:

---

[1] *Լ. Բ ա բ ա յ ա ն, Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի հայ պատմագրության, Եր., 1984, էջ 6:*

[2] *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 631:*

XVII - XVIII դարերի հայ պատմագիրներից շատերը ոչ միայն նշված ժամանակաշրջանի ռազմաքաղաքական բուռն իրադարձությունների կենդանի վկաներն են, այլև նրանց մի զգալի մասը դրանց ակտիվ մասնակիցն ու գործիչն է եղել, որոնք և հաղորդել են ճշգրիտ ու արժանահավատ տեղեկություններ:

XVII դարի սկզբին հայ պատմագրության զարթոնքի առաջնեկը դարձավ Գրիգոր վարդապետ Կամախեցին կամ Դարանաղցին: Մեր պատմագիրներից թերևս ոչ մեկը այնքան թափառական ու փախստական կյանք չի վարել ու փորձանքների ենթարկվել, ինչպես Դարանաղցին:[3] Դարանաղցու հիմնական նպատակն է եղել ներկայացնել Թուրքիայում ծավալված ջալալիների շարժման, հայերի զանգվածային արտագաղթի և անասելի տառապանքների պատմությունը:[4] Ջալալիների ապստամբությունները ուղղված էին կենտրոնական իշխանության դեմ, որից մեծապես տուժում է Արևմտյան Հայաստանի բնակչությունը: Պատմագիրը դառնացած գրում է այդ ամենի ավերիչ հետևանքների մասին. «Զորս պատուհաս մի զմիոյ կնի եղեն ի վերայ ամենայն աշխարհացն սով և մահ եւ գազանակերություն, որ շատ մարդակերութիւն եղեն»:[5]

Դարանաղցին հաղորդում է, որ գավառապետներին ու դատավորներին կաշառքով էին նշանակում և, չնայած դրան, նոր նշանակվածը դեռ տեղ չհասած պաշտոնանկ էր արվում և ուրիշն էր նշանակվում, սակայն առաջինն իր տեղը չէր զիջում և սկսվում էր ներքին արյունալի պայքար: Երկու կողմերն էլ զորք էին հավաքագրում և ապստամբում սուլթանի դեմ, դառնում ջալալիներ. «Եւ եղեն զձկունս մեծամեծք եւ փոքունք, որ զմիմեանս կլանեն... եւ զմիմեանս կու սպառէին առանց օտար թշնամեաց, այլ թշնամիք եղեն առ միմեանս եւ առ ազգայինս իւրեանց, եւ այսպէս չարաքնալով՝ բնաջինջ արարին զամենայն աշխարհն Անատոլու... Բազում աշխարհք անմարդք դարձան, եւ ավերակք բազմացան»:[6]

Պատմագիրը ատելությամբ է արտահայտվում նաև կաթոլիկություն ընդունած հայերի մասին, որոնց անվանում է «հոռոմներ» և մանրամասն նկարագրում է այն չարիքները, որ նրանք պատճառել են հայադավան պանդուխտներին: Նշում է, որ նրանք ավելի նենգ ու ստոր էին քան իսկական կաթոլիկներն ու թուրքերը:[7] Հաճախ նա չի սահմանափակվում դեպքերի պարզ շարադրությամբ և մեկնաբանություններ է անում նկարագրած իրադարձությունների քաղաքական դրդապատճառների և դրա ունեցած հետևանքների, ինչպես նաև կայսրության ներքին դրության և երկրում սկսված ճգնաժամային երևույթների մասին:[8]

XVII դ. մյուս նշանավոր պատմագիրը Առաքել Դավրիժեցին է, որը գրել է հայ ժողովրդի 60 տարվա՝ 1602-1662 թթ. պատմությունը: Սրա հիմնական մասը վերաբերում է XVII դ. առաջին կեսի թուրք-պարսկական պատերազմների երրորդ շրջանին, պատերազմներ, որոնք հիմնականում ծավալվեցին պատմական Հայաստանում:[9]

Դավրիժեցին հայոց պատմությունը շարադրում է այդ երկրներում կատարվող պատմական իրադարձությունների հենքի վրա, իբրև միմյանց հետ կապված, միմյանցով պայմանավորվող իրականության դրսևորումներ:[10] Նա միայն քաղաքական իրադարձությունների փաստագիր չէ, նաև վերլուծում ու գնահատում է ամեն մի պատմական իրողություն: Պատմության նրա ըմբռնումը շատ լայն է ու խոր:

---

*[3] Լ. Բ ա բ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 53:*

*[4] Ա. Գ ա ս պ ա ր յ ա ն, Գրիգոր Դարանաղցին ջալալիների շարժման մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h.VII, Գյումրի, 2004, էջ 27-31:*

*[5] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ (այսուհետև՝ Դարանաղցի), հրապարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 13:*

*[6] Նույն տեղում, էջ 14-15:*

*[7] Նույն տեղում, էջ 262-263:*

*[8] Մ. Զ ու լ ա լ յ ա ն, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, (XVI-XVII դդ.), Եր., 1966, էջ 31:*

*[9] Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Հայ պատմիչները սելջուկ թուրքերի և Օսմանյան կայսրության մասին (XI-XVIII դդ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h. X, Եր., 1979, էջ 234:*

*[10] Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, խմբ. Էդ. Աղայանի, Եր., 1976, էջ 489:*

Պատմության «Նախադրութիւն»-ում Դավրիժեցին ընթերցողին ներկայացնում է իր շարադրանքի սկզբունքները: Պարզվում է, որ նա ժամանակագրությանը շատ կարևոր տեղ է հատկացրել:[11]

Մոլի կրոնասիրության և անհարատ բարոյականության հետ՝ պատմագիր Դավրիժեցու մոտ, սակայն, հայրենասիրության ոգին գերազանցում է ամենին, այն ավելի հզոր է և սրտառուչ: Միանգամայն ճիշտ է նկատում Մ. Աբեղյանը, որ Դավրիժեցին Խորենացու հայրենասիրությամբ, բայց և առանց Խորենացու ճարտասանության, պարզ ու բնական, Խորենացուց ավելի սրտառուչ է ողբում յուր հայրենիքը, որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ողբալ:[12]

Պատմագիրը անզուսպ ատելությամբ է լցված Շահ Աբասի և պարսկական արքունիքի հանդեպ:[13] Զայրույթով ու ցավով բացահայտում է նրանց՝ հայերի նկատմամբ գործադրած միջոցառումների բուն էությունը քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի բնագավառներում: Նա վշտացած է խոսում այն աշխարհիկ ու հոգևոր մարդկանց մասին, որոնք, չտանելով թուրքական դաժան լուծը, կամովին հպատակություն էին հայտնում Շահ Աբասին, լքում էին հայրենիքը, գաղթում Պարսկաստան: Շահ Աբասի իրականացրած բռնագաղթը դարձավ մեր ժողովրդի պատմության արյունոտ էջերից մեկը, որ կոչվեց «մեծ սուրգուն» (մեծ գաղթ): Այն իր ծավալներով, բնույթով և հետևանքներով առանձին տեղ գրավեց հայոց պատմության մեջ, իբրև նրա ծանր դրվագներից մեկը:[14] Գաղթեցրած հայերի մասին Դավրիժեցին գրում է. «Իսկ արքշիռ, և անագորոյն, և անիմաստ,... ազգս Հայոց՝ ոչ ի սկիզբն խորհեցան, և ոչ ի վերջն հայեցան՝ թէ զի՞նչ է լինելոց վերջ գործոյս այսորիկ, այլ... գոլով՝ գնացին և առին զթագաւորական զանձն, որ էր որպէս զմահաբեր թոյնս օձի, և պատճառ նոցին կորստեան, և ոչ եղեն մտախոհ, թէ որպէս զփուշս օձի է զանձն այն մահացուցանող»:[15]

Ըստ Դավրիժեցու՝ Շահ Աբասը ժողովրդի ստորին խավերի նկատմամբ անզիջող ու դաժան է եղել, ամեն վայրագություն գործադրել է նրանց տնտեսական սնանկության հասցնելու համար և ստիպել դավանափոխ լինել, մինչդեռ հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների, հիմնականում ջուղայեցիների նկատմամբ, որոնց բնակեցրել էր Սպահանում, ելնելով իր պետության շահերից, բարյացակամ է եղել, ավելին՝ արտոնություններ է շնորհել նրանց:[16]

Պատմագիրը Շահ Աբասին համարում է «աւերողն Հայաստան աշխարհին և կործանողն Հայոց ազգին»:[17] Ահա թե ինչպես է նա ներկայացնում պարսկա-թուրքական հակամարտությունների թատերաբեմ դարձած Հայաստանի վիճակը. «... զթանդումն տանց և այգեստանեաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն յամբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն ընչից և ստացուածոց, զուարակ և զդստերաց. և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն զոր ածին ի վերայ աշխարհի, մեզ ոչ զոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն աստեղաց, և ստեղծ զայնքան անձինս որք մատնեցան անողորմ և մարդադէմ գազանացն այնցիկ»:[18] Դավրիժեցին ատելությամբ է խոսում նաև թուրքական արքունիքի մասին, անաչառ քննադատում է նրանց քաղաքականությունը հայ եկեղեցու և հոգևորականության նկատմամբ:[19]

---

[11] *Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ (այսուհետև՝ Դավրիժեցի), Վաղարշապատ, 1896, էջ 671:*

[12] *Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Եր., 1946, էջ 448:*

[13] *Ա. Գասպարյան, Առաքել Դավրիժեցին Շահ Աբաս I –ի և հայոց կաթողիկոսների փոխհարաբերությունների մասին, ԳԱՍ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի, 2000, էջ 189-191:*

[14] *Լ. Դանիելյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Եր., 1978, էջ 81:*

[15] *Դավրիժեցի, էջ 150:*

[16] *Նույն տեղում, էջ 153:*

[17] *Նույն տեղում, էջ 447-448:*

[18] *Նույն տեղում, էջ 78-79:*

[19] *Նույն տեղում, էջ 336-337:*

Առաքել Դավրիժեցին քաջ գիտակցել է հայ հասարակական կյանքում տեղի ունեցող նոր երևույթների դերն ու նշանակությունը: Պատահական չէ, որ նա իր «Պատմության» մեջ զգալի տեղ է տվել հայ առևտրավաշխառուական վերնախավի գործունեությանը, բազմաթիվ փաստերով համակողմանիորեն ցույց տվել նրա որոշիչ ու կարևոր դերը հայ քաղաքական-հասարակական, տնտեսական-մշակութային կյանքում, հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարում: Այդ խավի գործունեության մեջ, հակառակ Դարանաղցու, նա տեսել է լուսավոր այն ծալքերը, որոնք հող են նախապատրաստել ազգային ինքնագիտակցության բարձրացման համար:

Պատմագիրը կարևորել է նաև հայ մելիքությունների դերը զալիք բուռն իրադարձություններում և զոհունակությամբ է նշում, որ Գեղարքունիքի մելիք Շահնազարը Շահ Աբասի կողմից մելիքության իշխանություն է ստացել:[20] Նա գիտակցել է հայ հոգևոր վերնախավի առաջադեմ թևի և խոջաների համագործակցության անհրաժեշտությունը ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման և ուժերի համախմբման գործում, որը և հետագայում նպաստավոր հող պետք է հանդիսանար մտահղացումների և բացահայտ շարժումների համար: Դավրիժեցին կսկիծով է նշում, որ հայ ազգը ոչ միայն չունի անկախ պետություն, այլև վերացել են տեղական անկախությունները, ուստի և դառն ու ավանդական բացատրությամբ ողբում է այս ծանր իրականությունը. «Մեր հայոց ազգը... ոտքի կոխան ծառա ու գերի դարձավ օտար ազգերի ու թագավորների: Չկա քաղաքական իշխանություն, պետականություն, որ պատմիչը դարձնի իր պատմության առանցքը, ուստի նա ուշադրությունը սևեռում է իր ժողովրդի մշակութային կյանքի պատմության վրա»:[21]

Առաքել Դավրիժեցին հայ միջնադարյան հարուստ պատմագրության վերջին նշանավոր երախտավորն է, որի աշխատությունն առ այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Միանգամայն ճշմարիտ է Լեոն, երբ գրում է. «Առաքելը հանդիսանում է առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թէ՛ նախորդ դարում և թէ՛ իր ժամանակակիցների մեջ»:[22]

XVIII դարի հայ ժամանակագիրներից է Խաչատուր Ջուղայեցին, որի «Պատմութիւն Պարսից» երկը չափազանց արժեքավոր ու ստուգապատում աղբյուր է Պարսկաստանի և Անդրկովկասի XVIII դարի 30-70-ական թվականների ժամանակահատվածի քաղաքական պատմության ուսումնասիրության համար: Խաչատուր Ջուղայեցին ողբում է 1604թ. բռնագաղթի կործանարար հետևանքները, սակայն զոհունակությամբ նշում է, որ հայերը Նոր Ջուղայում կառուցեցին գեղեցիկ տներ, որ քաղաքը լողում էր ճոխության և փարթամության մեջ, սակայն վերջում դառնացած ավելացնում է. «Ոհ, աւաղ աղետալիր տեսութեանս մերոյ, և վատարազդ բշուառութեանս, քանզի պարտ իսկ է մեզ աստանօր՝ յորդորել զեղարամարս յաշխարհասնուազ ձայնս, և միշտ լալ և ողբալ ի վերայ բեկման ժողովրդեանս... մերոյ, և ի վերայ աւերման՝ և խաթարման գեղեցկաշէն և հրաշալի բնակութեանս մերոյ»:[23]

Պատմագիրն ատելությամբ է խոսում Շահ Աբասի մասին, նրան «ամենախարդախ նենգավոր օձն»[24] է համարում, քանզի վերջինս մի վնասակար օրենք էր սահմանել այն մասին, որ հայերից նրանք, ովքեր հավատափոխ կլինեն, ազատ կերպով կարող են վերցնել հայրական ժառանգությունը՝ զրկելով մյուս ժառանգներին:[25] Նա ցավով գրում է, որ նման քաղաքականության պատճառով մեկ օրում իրենց կրոնն ուրացել են 1800 ընչազուրկ հայեր, իսկ շատերը ֆրանկներից են մեծ գումար վերցրել և վճարել իրենց պարտքը, սակայն դարձել են երկարճանակ «ի յորդւոց յորդիս»:[26]

Ջուղայեցու աշխատության մեջ հավաքվել ու համարակալվել են Իրանի պատմության վերաբերյալ հայկական պատմագրական հուշարձաններում ամբարված բո-

---

20 *Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 96:*
21 *Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի, Պատմություն, Եր., 1988, էջ 12:*
22 *Լ ե ո, Հայոց պատմություն, հ. գ, Եր., 1946, էջ 362:*
23 *Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից (այսուհետև՝ Ջուղայեցի), Վաղարշապատ, 1905, էջ 127:*
24 *Նույն տեղում, էջ 111:*
25 *Նույն տեղում, էջ 112:*
26 *Նույն տեղում, էջ 126-127:*

լոր տեղեկությունները: Այն իրոք մի հոյակապ ժամանակագրություն է:[27] Հայրենասեր պատմագիրը, նկարագրելով պարսից շահի բռնությունները, միաժամանակ իր արդար զայրույթն է հայտնում, որ այդ խոշտանգումների հանդեպ հայերը անզգա են, անհմացք են ու համառ և քարացած իրենց մոլորության մեջ, երբեք չեն զարթնում քնից, չեն զգաստանում, չեն տեսնում և ճանաչում իրենց թշվառությունը, չեն ձգտում թոթափելու հեզությունը, և ջանք չեն թափում ստանալու բարեբաստիկ ազատությունը, որը կրկնակի բարեգույն կյանքի սկիզբն է և արմատը:[28]

Ջուղայեցին իր աշխատության մեջ զգալի տեղ է հատկացրել Նադիր շահի գործունեությանը և դիպուկ կերպով ներկայացրել արևելքի այդ բռնակալի քաղաքականության կործանարար հետևանքները Պարսկաստանի և նվաճված երկրների համար. «Եւ որով իսկ գրեթէ զբոլոր Պարսկաստան ընկլուղեալ ընկղմէր ի սաստիկ և յանբերելի թշուառութիւն»:[29] Պատմագիրը դրվատանքով է խոսել Քերիմ խանի գործունության մասին, որը կարողացել է վերջ տալ գահակալական արյունահեղ կռիվներին և Պարսկաստանում ստեղծել համեմատաբար խաղաղ ու կայուն վիճակ:[30]

Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից»-ը XVII դարի առաջին կեսին Նոր Ջուղայում ծավալված աղանդավորական շարժման պատմության հիմնական աղբյուրն է: Լինելով եկեղեցու սպասավոր, բնական է, որ պատմագիրը խիստ բացասաբար է տրամադրված եղել այդ շարժման հանդեպ: Նա ատելությամբ է արտահայտվում այդ շարժման առաջնորդի ու նրա գաղափարախոսության մասին:[31]

Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի XIXդ. I քառորդի քաղաքական իրադարձությունների պատմության ուսումնասիրման համար առանձնահատուկ նշանակություն ունի նաև Աբրահամ Երևանցու աշխատությունը: Նրա «Պատմությունն» ամբողջությամբ վերցրած աշխարհիկ բնույթի գործ է և, իբրև այդպիսին, հայ պատմագրության մեջ բացառիկ պատմական երկերից մեկն է:

XVII-XVIII դդ. հայ ժառանգությունն իր պարունակած հարուստ ու բազմաբովանդակ նյութերով, հավաստի ու ստուգապատում սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի,Պարսկաստանի ու Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի պատմության հարցերի լայնածավալ ուսումնասիրության համար:

## *ОТРАЖЕНИЕ ОБЩЕСТВЕННО—ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ XVII—XVIIВВ. В РАБОТАХ АРМЯНСКИХ ИСТОРИОГРАФОВ*

***Резюме*** ***А. Гаспарян***

***Армянские историографы XVII—XVIIIвв. глубоко осознавали цель и значение новшеств, происходящих в общественно—политической жизни страны, которые и обеспечили развитие армянской историографии.***

***Многие авторы, являлись свидетелями и участниками указанных событий и в своих работах сообщали достоверные факты.***

***Этим и обусловливается особенность армянских источиков, которые занимают достойное место во всемирной историографии.***

---

[27] *Ա. Գ ա ս պ ա ր յ ա ն, Խաչատուր Ջուղայեցու աշխատությունը որպես Պարսկաստանի պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուր, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի , 2001, էջ102-107:*

[28] *Ջուղայեցի, էջ 113:*

[29] *Նույն տեղում, էջ 263:*

[30] *Նույն տեղում, էջ 325-326:*

[31] *Նույն տեղում, էջ 457:*

*Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*

## *ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1918-1921թթ.*

Շարունակելով հայերի նկատմամբ իրականացվող թալանի ու կոտորածի քաղաքականությունը և հաշվի առնելով միջազգային նոր իրադրությունը թուրքերը, 1918-1921թթ. Ալեքսանդրապոլի գավառում ավելի զգույշ և խորամանկ քաղաքականություն են վարում: Մասնավորապես նրանք իրենց կատարած գործողություններին օրինական տեսք տալու համար օգտագործում են տեղական իշխանական կառույցները:[1]

Թեև 1918 թ. մայիսի 15-ից Ալեքսանդրապոլն ընկնում է թուրքական տիրապետության տակ, սակայն նրանք այստեղ չեն մտցնում օսմանյան կայսրության մեջ գործող օրենքներն ու հիմնարկությունները, այլ օգտագործում են տեղական՝ ցարական կառավարությունից մնացած օրենքներն ու վարչական կառույցները: Քաղաքը գրավելու հաջորդ օրն իսկ թուրքական հրամանատարության կարգադրությամբ տեղի է ունենում քաղաքացիների ընդհանուր ժողով, որտեղ ընտրվում է 29 հոգուց կազմված Քաղաքային խորհուրդ՝ բաղկացած զանազան ազգությունների ներկայացուցիչներից (16 հայ, 3 հույն, 3 մահմեդական, 3 ռուս, 2 վրացի և 2 հրեա): Վերջինս իր հերթին ընտրում է 15 հոգուց բաղկացած Քաղաքային վարչություն՝ վարելու քաղաքային գործերը: Քաղաքային վարչության իրավունքներն ու ֆունկցիաները շատ լայն ու բազմակողմանի էին: Նրան էր ենթարկվում ոչ միայն քաղաքի, այլ ամբողջ գավառի վարչական, տնտեսական ու ուսումնական կյանքը: Թուրքական իշխանությունները քաղաքին ու գավառին վերաբերող բոլոր տեսակի կարգադրություններն անում էին քաղաքային ինքնավարության միջոցով և նրա միջոցով էլ ընդունում բոլոր խնդրագրերը: Քաղաքային ինքնավարությունն անմիջապես ենթարկվում էր տեղական իշխանության նախագահին (գավառապետ), իսկ վերջինս իր հերթին՝ թուրքական բանակի հրամանատարին (Ղարսի զորահրամանատար):[2]

Տեղական իշխանության մարմինների պահպանումը թուրքերին հնարավորություն էր ընձեռում թալանելու բնակչությանը ոչ միայն ուղղակի կողոպուտի, այլև զանազան «օրինական» միջոցներով: Այսպես, թուրքական կառավարության կարգադրությամբ բնակչությունից անխտիր կերպով գանձվում էին բոլոր տեսակի հարկերը:[3] Նահանգապետի հրամանով քաղաքը բաժանվել էր 6 թաղերի, որոնցից յուրաքանչյուրը 10 օրվա ընթացքում պետք է վճարեր կալվածատիրական տուրքերը՝ նախորդ տարվա տուրքի չափով: Թաղի բնակիչը 10 օրվա ընթացքում հարկը չմուծելու դեպքում պետք է վճարեր կրկնակին:[4] Գյուղերում բնակչությունից կանոնավոր կերպով գանձվում էր աշարը՝ ամբողջ հացամթերքի և անասնակերի 1/8 չափով, ինչպես նաև մուրայաք հարկը, որն ի տարբերություն աշարի, գանձվում էր դրամով՝ բերքի քառորդի չափով: Հարկերի կանոնավոր ու ժամանակին գանձման համար պատասխանատու էին գյուղական ավագները՝ մուխտարներն ու քահանաները: Հարկը չվճարողներից խլվում էր ամբողջ հացը:[5] Թուրքերը պետական գանձարանի սեփականություն էին համարում նաև այն հայերի գույքը, որոնք, լքելով իրենց ունեցվածքը, փախել էին քաղաքից:[6]

1918թ. թուրքական օկուպացիայի շրջանում Ալեքսանդրապոլ քաղաքը գավառի համեմատությամբ քիչ էր տուժել: Թուրքերն իրենց ուշադրությունը հիմնականում դարձրել էին ռուսական բանակի հսկայական ունեցվածքի վրա, առավել շատ տուժել էր գավառը: Ալեքսանդրապոլում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցումների համաձայն՝ թուրքերն Ալեքսանդրապոլի գավառից տեղա-

---

[1] *Տեմ ՀԱԱ, ֆ. Պ - 200 ց. 1, գ. 125, թ. 8: «Խուսք», Եր., 1918, թ. 3:*

[2] *Նույնը:*

[3] *Տեմ ՀԱԱ, ֆ. Պ - 105,ց. 1, գ. 2768, թ. 257-258:*

[4] *Տեմ ՀԱԱ, ֆ. Պ - 200, ց. 1, գ. 126, թ. 125:*

[5] *Տեմ ՀԱԱ, ֆ. Պ - 200, ց. 1, գ. 126, թ. 128: ֆ. Պ -105, ց. 1, գ. 2926, թ. 10:*

[6] *Տեմ ՀԱԱ, ֆ. Պ - 105, ց. 1, գ. 2833, թ. 92:*

փոխել էին սայլերի 80 %-ը, գերի տարել՝ 12000 հոգու, փախստականների թիվը հասել էր 45000-ի:[7] Նրանք Ալեքսանդրապոլի շրջանից տարել էին 50000-ից ավելի խոշոր եղջերավոր անասուններ, 100000 գլուխ ոչխար, 5000-ից ավելի ձի, 2,5 մլն փութ ցորեն, 1 մլն փութ գարի և զանազան մթերքներ: Թալանել ու տարել էին խանութների ապրանքները, մանուֆակտուրան, երկաթեղենը, երկրագործական գործիքներն ու պարագաները, կահկարասին, գորգերն ու կարպետները, տարել են նաև մեծ քանակությամբ ապակեղեն, նույնիսկ տանիքների թիթեղը: [8]

Թուրքերի կողմից տեղական կառույցների օգտագործման քաղաքականությունն առավել որոշակիությամբ դրսևորվեց Ալեքսանդրապոլի գավառի 1920թ. զինակալման շրջանում: Գործնականորեն ապացուցելու համար, որ իրենց առաջխաղացումը պայմանավորված է Խորհրդային Ռուսաստանի շահերով և օգտագործելով խորհրդայնացման խաղաքարտը ձգտում են գրավել ամբողջ Հայաստանը: Ալեքսանդրապոլ մտնելու առաջին օրվանից՝ տեղի բոլշևիկների միջոցով քեմալականները փորձում են բնակչությանը հավատացնել, թե իրենց նպատակը միայն Հայաստանի կառավարության տապալումն ու բանվորագյուղացիական իշխանության հաստատումն է:[9]

Տարվելով կեղծ իշխանության պատրանքներով և փորձելով այդ ճանապարհով փրկել բախտի քմահաճույքին մնացած բնակչությանը թուրքական սարսափներից՝ Ալեքսանդրապոլի բոլշևիկներն ընդունում են քաղաքում խորհրդային իշխանություն հռչակելու թուրքերի առաջարկը:[10] Ալեքսանդրապոլի իշխանությունները Լևոն Սարգըսյանի գլխավորությամբ փորձում են խանգարել դրան, բայց ապարդյուն: Իրենց բոլոր գործերը կարգավորելով բոլշևիկների հետ՝ թուրքերին հաջողվում է փաստորեն հեղինակազրկել Լևոն Սարգսյանի գլխավորած քաղաքային կոալիցիոն իշխանությունը: Բոլշևիկների հեղինակությունը բարձրացնելու համար ձևական պատճառաբանություններով նրանք ձերբակալում են հայ տղամարդկանց և կոմունիստների մի ակնարկով անմիջապես ազատում նրանց:[11] Այս և այլ միջոցներով թուրքերն ի վերջո հասնում են Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանության հաստատմանը: Նոյեմբերի 17-ին բոլշևիկների հետ նրանց փոխադարձ համաձայնությամբ Ալեքսանդրապոլում ու գավառում հռչակվում է խորհրդային իշխանություն, ստեղծվում Հեղկոմ:[12] Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանություն հռչակելով՝ թուրքերը փորձում էին իրենց ձեռքը վերցնել Հայաստանի խորհրդայնացման նախաձեռնությունը: Սկզբնական շրջանում նրանք Ալեքսանդրապոլի Հեղկոմին ստիպում են հանդես գալ որպես Հայաստանի Հեղկոմ, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո ձգտում հակադրել միմյանց Ալեքսանդրապոլի Հեղկոմը և Հայհեղկոմը:[13]

Իրականում թուրքերը Ալեքսանդրապոլի խորհրդային իշխանությունը ճանաչեցին այնքանով, որքանով այն պետք էր իրենց մտադրություններն իրականացնելու համար: Ալեքսանդրապոլի Հեղկոմի վարչական ապարատի առանձին, մասնավորապես՝ լուսավորության, սոցապահովության, վիճակագրության, պարենավորման, ֆինանսական, փոստ-հեռագրական բաժինները չգործեցին, կամ էլ մասամբ գործեցին՝ կյանքում իրական պայմաններ չլինելու պատճառով: Գործեցին միայն իշխանության այն մարմինները, որոնց միջոցով թուրքերն իրականացնում էին բնակչության թալանն ու տեռորը: Ներքին գործոց բաժինն ու Արտակարգ հանձնաժողովը իսկական պատուհաս դարձան թուրքական սարսափներն ապրող Ալեքսանդրապոլի գավառի բնակչության գլխին: Խորհրդային իշխանությունն իրենց ծառայեցնելու նպատակով թուրքերը քաղաքում և գյուղերում ստեղծում են իշխանության մարմինների լայն ցանց՝ քաղաքի և քաղաքամասերի, գավառի և գավառամասերի կոմիսարներ, քաղաքային և գավառային միլիցիա: Գավառամասերի կոմիսարները, իրենց հերթին, գյուղերում ընտրում են գյուղական կոմիսարներ: Գավառային կոմիսարների զեկույցներից երևում է, որ գյու-

---

[7] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ- 200, ց.1, գ.126, թ.85:*
[8] *Խ.Բ ա ղ ա լ յ ա ն,Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918թ.,Եր.,1962,էջ19:*
[9] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-144, ց. 3, գ. 45, թ. 7:*
[10] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ- 3, ց.1, գ. 6, թ. 13:*
[11] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ- 1022, ց. 3, գ. 323, թ. 1-4, ՀԱԱ, ֆ.Պ- 114, ց. 2, գ. 10, թ. 1-5:*
[12] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ- 4033, ց. 4, գ. 127, թ. 165-166:*
[13] *Ս. Ա լ ի խ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 345:*

ղական իշխանության մարմինների ընտրությունները ևս կատարվում էին թուրքական հրամանատարության գիտությամբ և համաձայնությամբ: Իրականում թուրքական հրամանատարությունը ասկյարներ տրամադրելով և զինելով Հեղկոմն ու նրա բաժինները՝ նպատակ ուներ ոչ թե գավառում ու քաղաքում կարգ ու կանոն հաստատել, ոչ թե խորհրդային իշխանությունն ամրապնդել, այլ խորհրդային իշխանության այդ մարմինների միջոցով տեռորի ու թալանի իր քաղաքականությունն իրականացնել: Եվ թուրքերի հաշիվները ճիշտ դուրս եկան: Ստեղծված իշխանության մարմինները սեփական ժողովրդին թալանելու և տեռորի ենթարկելու գործում գերազանցում են մեկը մյուսին:[14] Ալեքսանդրապոլի բոլշևիկներն իրենց հավատարմությունը հեղափոխությանը ապացուցելու համար դիմում են անօրինական բռնությունների:[15] Հակահեղափոխության դեմ պայքարն ուղեկցվում էր բռնագրավումներով, որոնք կատարվում էին իբր ժողովրդին սովից փրկելու նպատակով:[16] Բազմաթիվ փաստաթղթերից երևում է, որ դա Ալեքսանդրապոլի Հեղկոմի և նրան ենթարկվող իշխանության մարմինների հիմնական զբաղմունքն էր դարձել, նրանց ապրելու միակ միջոցը[17]:

Բռնագրավումներն իրականացնում էին բոլոր կոմիսարները և մասնավորապես միլիցիան, որն իսկական փորձանք էր դարձել բնակչության գլխին՝ իր բազմաթիվ անօրինական խուզարկություններով, բռնագրավումներով, բանտարկություններով:[18] Ինչպես «հակահեղափոխության» դեմ պայքարով, այնպես էլ բռնագրավումներով Ալեքսանդրապոլի Հեղկոմը նպաստում էր թուրքերի՝ հայ բնակչությանը կոտորելու և թալանելու քաղաքականությանը:

Կոմունիստների ստեղծած իշխանության մարմիններն օգտագործելով իրենց նպատակների համար, թուրքերն ավելի ուշ ստիպեցին նրանց հեռանալ իշխանությունից և սկսեցին դաժանորեն հետապնդել ու ոչնչացնել: Քաղաքը և ամբողջ գավառը թալանելուց և բնակչությանը կոտորելուց հետո թուրքերը բացահայտ պայքար են սկսում կոմունիստների դեմ՝ ամեն կերպ ձգտելով նրանց ներքաշել հակամարտության մեջ՝ սկսելով բացահայտորեն վարկաբեկել Հեղկոմին, դրդելով նրան հանցավոր և դավաճանական գործողությունների: Բացահայտորեն վարկաբեկելով Հեղկոմին՝ թուրքերը սկսում են անսքող պայքար նրա դեմ: Հեղկոմը զրկվում է իշխանությունից, իսկ քաղաքի միլիցիան՝ Հեղկոմի կարգադրությունները կատարելու պարտականությունից: Քաղաքի կյանքի հսկողությունը իր ձեռքն է վերցնում թուրքական պարեկը: Հարձակումներ են սկսվում Հեղկոմի անդամների վրա, կոմունիստներին գնդակահարում են գիշերները: Թուրքերը կտրում են Հեղկոմի կապը գյուղերի հետ՝ չթողնելով մտնել այնտեղ: Կտրվում է Ալեքսանդրապոլի Հեղկոմի կապը նաև արտաքին աշխարհի հետ, հսկողության տակ է առնվում հեռագրական կապը Երևանի և Ղարաքիլիսայի հետ: Ուղարկվող և ստացվող բոլոր հեռագրերը ստուգվում են թուրք հսկիչների կողմից: Հեղկոմը ստիպված է լինում իր հեռագրերը Երևան ուղարկել ընդհատակյա սուրհանդակների միջոցով, Հայհեղկոմից խնդրելով ուղղություն տալ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:[19] Ալեքսանդրապոլի Հեղկոմից ստացած հեռագրերը Խորհրդային Հայաստանի կառավարությունը հաղորդում է Մոսկվա, Բաքու, բազմաթիվ նոտաներ է ուղարկում Անգորայի կառավարությանը: Սակայն, այս ամենը ոչ մի արդյունք չի տալիս:[20] Հունվարի 21-ից Ալեքսանդրապոլում սկսվում է քաղաքի մասսայական կողոպուտը: Հեղկոմին թողնելով խաղից դուրս վիճակում՝ թուրքերը սկսում են կողոպտել նրանց կողոպտածը: Թալանվում են նաև Հեղկոմի անդամների բնակարանները, պահեստները:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը տեղում իրադրությանը ծանոթանալու համար ուղարկում է «պատասխանատու ընկերներից» բաղկացած հանձնաժողով: Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, 1921թ. հունվարի 23-ին քննարկելով հանձնաժողովի զեկուցումը, գտնում է, որ «Ալեքսանդրապոլի Հեղկոմը

---

[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-144, ց. 1, գ. 1, թ. 26:
[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ- 144, ց. 2, գ. 33, թ. 27:
[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-140, ց. 1, գ. 1, թ. 27:
[17] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-3, ց. 1, գ. 3, թ. 5:
[18] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-144, ց. 1, գ. 27, թ. 24:
[19] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ- 114, ց. 2, գ. 33, թ. 16:
[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-144, ց. 3, գ. 45, թ. 8:

թուրքական օկուպացիայի պայմաններում, թուրքական հրամանատարության ռազմական դիկտատուրայի ճնշմամբ վերածվել է խաղալիքի, թույլ է տվել բազմաթիվ սխալներ, որոնք վարկաբեկում են կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը: Հեղկոմի հետագա գոյությունը Ալեքսանդրապոլում քաղաքական տեսակետից անհանդուրժելի և վնասակար համարելով` Կենտկոմը որոշում է հետ կանչել Ալեքպոլի Հեղկոմը և նրա անունից հատուկ դեկլարացիա հրապարակել իշխանությունից նրա հրաժարականի մասին»:[21] ՀԿԿ Կենտկոմի և Հայաստանի Հեղկոմի 1921թ. հունվարի 25-ի դիրեկտիվների համաձայն` Ալեքսանդրապոլի Հեղկոմը իր վերջին նիստում որոշում է հրաժարվել իշխանությունից:[22] Սրան հետևում է Ալեքսանդրապոլի խորհրդային միլիցիայի կազմալուծման և քաղաքային միլիցիայի ստեղծման մասին հունվարի 27-ի որոշումը:[23] 1921թ. փետրվարի մեկին` Արշակունու և Գրիգորյանի հետ բանակցելուց հետո, քաղաքային միլիցիայի պետ Մատինյանի կողմից հայտարարություն է արվում նոր քաղաքային միլիցիայի ստեղծման մասին, որի նպատակն էր պահպանել կարգ ու կանոնը քաղաքում և պաշտպանել բնակիչներին` առանց կուսակցական և ազգային տարբերության:[24] Միլիցիայի պետի մեկ այլ հրամանով արգելվում էր դիպչել որևէ մեկի շահերին կամ հետապնդել որևէ մեկին իր սեփական հայեցողությամբ:[25]

Այս որոշումներով փաստորեն խորհրդային իշխանությունն Ալեքսանդրապոլում լուծարվեց: Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանություն հռչակելու և այդ ճանապարհով թուրքական օկուպացիոն ռեժիմը մեղմացնելու բոլշևիկյան քաղաքականությունը սնանկ դուրս եկավ: Խորհրդային իշխանության մարմիններն ստեղծվեցին և գործեցին այնքանով, որքանով դա անհրաժեշտ էր թուրքերին` իրենց թալանն ու կոտորածը օրինականացնելու համար: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ թուրքերն այլ նպատակ, քան հայոց պետության ու ժողովրդի ոչնչացումը, չունեին: Եվ այդ նպատակին հասնելու համար պատրաստ էին օգտագործել բոլոր հնարավոր միջոցները: Տվյալ դեպքում օգտագործելով Հայաստանի խորհրդայնացման խաղաքարտը` ոչնչացվում էր հայկական անկախ պետությունը, գրավվում նրա տարածքները, ամբողջովին թալանվում Ալեքսանդրապոլի գավառը, կոտորվում բնակչության զգալի մասը:

## ПОЛИТИКА ТУРКОВ В ИСПОЛЬЗОВАНИИ МЕСТНЫХ ОРГАНОВ ВЛАСТИ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО УЕЗДА В 1918-1921гг.

***Резюме*** ***К. Алексанян***

**Политика турок в Александропольском уезде в 1918 – 1921 гг., являясь прямым продолжением политики истребления западных армян, имела свои особенности. Учитывая создавшееся международное положение, здесь турки вели более хитрую и осторожную политику. В частности, захватив в 1918г. Александропольский уезд, турки сохранили местные органы власти, с помощью которых грабили население различными "законными" способами. Такая политика в больших масштабах проявилась особенно в 1920 г. Чтобы на практике показать, что их продвижение обусловлено интересами Советской России, они даже провозгласили в уезде советскую власть, органы которой признавались настолько, насколько они были необходимы туркам для осуществления своих намерений.**

---

[21] *Ս. Ալիխանյան, նշվ. աշխ., էջ 351:*
[22] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-114, ց. 2, գ. 33, թ. 55-57, ՀԱԱ, ֆ.Կ- 1022, ց. 2, գ. 193, թ. 2-5:*
[23] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 2, գ. 1204, թ. 1:*
[24] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 2, գ. 1204, թ. 3:*
[25] *Նույն տեղում, թ. 2:*

*Ռաֆիկ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*

## *ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒ ԾԵՍԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ*

Խ. Աբովյանը հայոց սոցիոնորմատիվ մշակույթի կամ ընտանեկան-հասարակական կենցաղը պատկերող բազմաթիվ ուշագրավ և արժեքավոր նկարագրություններ է թողել: Նրա «Առաջին սերը»,[1] «Թիֆլիզու հայոց հանգստարանը»,[2] «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին»,[3] «Համառոտ ակնարկ հայերի մասին»,[4] «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին»,[5]«Գյուղական տների կառուցվածքը»,[6] «Վերք Հայաստանի»[7] և այլ ստեղծագործություններ հարուստ են հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի վերաբերյալ տեղեկություններով:

XIX դարի առաջին կեսը մի ժամանակաշրջան էր, երբ հայ իրականության մեջ դեռևս կենսունակ էին ընտանեկան համայնքները կամ գերդաստանները: Նահապետական գերդաստանն իր կազմով ու կառուցվածքով սերտ ազգակցությամբ եռասերունդ կամ քառասերունդ անհատական ընտանիքների համախմբումն ու միավորումն էր մեկ տան մեջ: Խ. Աբովյանի նկարագրություններից երևում էր, որ Արևելյան Հայաստանում դեռևս բավականին կայուն էին պահպանվել գերդաստանական հարաբերությունների շատ մնացուկներ, որոնց ուսումնասիրությամբ հնարավոր է վերականգնել արևելահայ հատվածի ընտանեկան, ամուսնական կյանքի իրական պատկերը: Այդպիսի մեծ ընտանիքների կազմը, ըստ գրողի, հասնում էր 10-40-50 հոգու: Դրանց երկարատև պահպանման հարցում հիմնականն ու առաջնայինը տնտեսական դրդապատճառներն էին: Բնափակ տնտեսությունը և արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը պահանջում էին արտադրական մեծ կոլեկտիվների համակեցություն:[8]

Գերդաստանին բնորոշ էր կայուն կազմը, կուռ ղեկավարությունը, փոխհարաբերությունները կարգավորող կարգ ու կանոնը, որոնք հազարամյակների միջով փոխանցվելով, սովորութային ուժով հասել էին XIX դար՝ դառնալով ազգագրագետների ուսումնասիրության առարկա:

Գերդաստանի նահապետը նրա ընդհանուր, միանձնյա ղեկավարն էր: Նրա իրավունքները գրեթե անսահմանափակ էին: Նա էր գերդաստանական ամբողջ սեփականության տերը, գերդաստանի բոլոր անդամների ճակատագիրը տնօրինողը: Նրա իրավունքն էր խրախուսել գերդաստանի օգտին գործող անձանց և պարսավել ու պատժել նրա շահերն ու սովորութային իրավունքը խախտողներին: Բացի այդ՝ կարող էր ժառանգությունից զրկել անհնազանդ զավակներին կամ թոռներին և հեռացնել ընտանիքից: Եվ եթե նմանին մինչև իսկ ազգականն էլ ապաստան տար, այդպիսին տան թշնամի կհամարվեր: Ազգականն ավելի շուտ պետք է աշխատեր հաշտեցնել նրանց, ինչը և հաճախ կատարվում էր: Քանի դեռ մեծերից մեկն ապրում էր, բոլորն իրենց երեխաներով և կանանցով հանդերձ նրա հպատակներն էին:[9]

Ընդհանրապես, գերդաստանի նահապետին բնորոշ այս և նման իրավունքները բավականին լավ էին պահպանված, մի հանգամանք, որին առանձնահատուկ ուշա-

---

[1] *Խ. Ա բ ո վ յ ա ն, Երկեր, հ. 4, Եր., 1947, էջ 1-19:*
[2] *Նույն տեղում, էջ 40-47:*
[3] *Խ. Ա բ ո վ յ ան, Երկեր, հ. 8, Եր., 1958, էջ 154-193:*
[4] *Նույն տեղում,էջ 32-42:*
[5] *Նույն տեղում, էջ 82-96:*
[6] *Խ. Ա բ ո վ յ ա ն, Երկեր, հ. 10,Եր., 1961, էջ 59-99:*
[7] *Խ. Ա բ ո վ յ ա ն, Վերք Հայաստանի ողբ հայրենասիրի, Եր., 2004, էջ 3-422:*
[8] *М. К о с в е н, Семейная община и патронимия, М., 1963, стр. 56: Э. Карапетян, Армянская семейная община, 1958, стр. 8:*
[9] *Խ. Ա բ ո վ յ ա ն, Երկեր, հ. 10, էջ 64:*

դրություն է դարձրել Խ. Աբովյանը: Այսպես, ըստ գրողի, գերդաստանում ծերունիների ընդգծված հեղինակության մասին է վկայում *խոսկապ* կոչվող արարողությունը:[10]

Համատարած երևույթ էր, որ հարսներն ամուսնության առաջին իսկ օրից երեսը ծածկում էին քողով: Քողածածկ հարսն ազատ էր մնում գերդաստանի ու օտար տղամարդկանց աչքերից: Միայն առաջնեկի ծննդից հետո կամ, ինչպես Խ. Աբովյանն է հիշատակում, «խոսկապ» արարողությունից հետո հարսը կարող էր բաց երեսով երևալ օտար տղամարդկանց: Այս ծեսը կատարվում էր նույնիսկ այն ժամանակ, երբ հարսները արդեն 30-40 տարեկան էին, այսինքն՝ մի քանի զավակների տեր էին: Սակայն մինչ այս ծիսակատարությունը, ծնողները, երբ դրսում կամ այլ տեղ հարսներին խոսելիս տեսնեին, պետք է չտեսնելու տային:[11]

Այս ազատության համար նրանք անձնվիրությամբ և երախտագիտությամբ համբուրում էին մեծերի ձեռքը և իրենց երջանիկ զգում, որ տանն արդեն որպես հասուն կանայք են դիտվում: Ծերունիները հաճախ թանկարժեք նվերներ էին անում նրանց, իրենց ձեռքով իջեցնում էին այն շորը, որ մինչև այդ ծածկած էր պահում նրանց բերանները: Դա նրանց ազատության նշանն էր:

Հայկական գերդաստանում ընդհարված ամուսինների հաշտեցման գործում ևս զգալի դեր է խաղացել նահապետը: Ըստ սովորույթի՝ վիճած ամուսիններին բերել են մեծի մոտ,որոնք համբուրել են նրա ձեռքը և խոստացել, որ նման բան այլևս չի կրկնվի: Այնուհետև ամուսինների հաշտեցումն ընդգծելու համար ծերունին խրատական և պարսավանքի խոսքեր է ուղղել իր որդուն՝ ասելով. «Մի՞թե իզուր եմ քեզ մինչև այս հասակը հասցրել, որ դու մեր ծերությունը դառնացնես, չգիտե՞ս, որ ամեն րոպե կարող եմ քեզ հետ ուզածիս պես վարվել: Որդի, այդ բոլորը մեզ համար չի, այլ քեզ համար. մեր մի ոտն արդեն գերեզմանում է. ինչ դու մեզ անես, նույնը քո երեխաներից վշտով կստանաս»:[12]

Ծնողների նկատմամբ որդիների ամենափոքր հանդգնությունը համարվում էր ընտանեկան աղետ, վշտի պատճառ. «Աստված իր օրհնությունն իմ տանից վերցրել է, մխիթարության փոխարեն ցավ ու վիշտ տվել: Լավ՞ծ բան է, որ որդին իր հոր հանդեպ անհնազանդ լինի. իմ տան վրա անեծք կա» և այլն,- ասում էին նրանք: Մեծերի նկատմամբ խորին հարգանքը, ըստ Խ. Աբովյանի, դրսևորվում էր հայ ընտանեկան կենցաղի բոլոր դրվագներում: Ուշագրավ է նաև գրողի ճաշելու պահի վերաբերյալ նկարագրությունը. «Տան առավել տարեց անդամները և նրանց հետ ավելի երիտասարդները՝ իրենց ջահել կանանցով, նստում են մի կողմում, դեմքերը մեծ մասամբ հակառակ կողմը դարձրած, որտեղ նստում են ծերունիները: Տատը մեծ մասամբ կանգնում է ծերունու դիմաց, որպեսզի վերջինս չտեսնի, թե ինչպես են ուտում մյուսները, չնայած մեզ մոտ մեկընդմիշտ կանոն է, որ երիտասարդ կանայք և աղջիկներն ուտելու ժամանակ մի ձեռքը միշտ պահում են բերաններին, անկախ այն բանից՝ այնտեղ է նա, թե ոչ: Նրանց խոսակցությունն այնքան ցածր է, այնպես գաղտնի, որ մինչև իսկ այդ տարածության վրա ոչինչ չի կարելի լսել, բացի փսփսոցից»:[13]

Չնայած նահապետի բռնապետական դերին՝ նրա մահը միշտ էլ մեծ կորուստ է համարվել գերդաստանի համար՝ առաջ բերելով բոլոր անդամների ափսոսանքն ու կարեկցանքը: Այս մասին ևս Խ. Աբովյանը թողել է արժեքավոր նկարագրություններ: Սրտառուչ է, թե ինչպես են արդեն 50-60 տարեկան որդիները երախտագիտության խոսքեր ասել հանգուցյալի մասին. «Մեր տան սյուները քանդվեցին, ո՞վ է մեզ կառավարելու և սանձահարելու, թանկագին ծնողներ: Այժմ մենք նման ենք մի տակառի, որի կափարիչը չկա, և ամեն կեղտոտություն անարգել ներս է լցվում»:

Մահացած նահապետին փոխարինել է ավագ եղբայրը, որին իր եղբայրների երեխաներն անվանել են հայր, իսկ իրենց հարազատ հայրերին այլ անունով են կոչել: Նրա կնոջն անվանել են *Մեծ նան*, իրենց հարազատ մորը՝ *Փոքր նան*, և նրանց երե-

---

[10] *Խ. Ա բ ո վ յ ա ն, Երկեր, հ. 10, էջ 65:*
[11] *Նույնը:*
[12] *Նույնը:*
[13] *Նույն տեղում, էջ 67:*

խաները քույր և եղբայր են համարվել:[14] Ավանդական ընտանեկան այսպիսի դրվածքը վկայում է արյունակցական-ազգակցական կապերի կենսունակության մասին:

Ընտանիքի նահապետի օգնականը նրա կինն էր, որը մեծ իշխանություն ուներ հատկապես կանանց նկատմամբ: Անգամ նահապետի մահից հետո մեծ մոր ընդհանուր հսկողական գործառույթները պահպանվում էին: Նրա հեղինակությունը խարսխված էր ոչ թե բռնի ուժի, այլ հսկապես հարգանքի վրա:

Նկարագրելով ներընտանեկան փոխհարաբերությունները՝ Խ. Աբովյանն անդրադարձել է նաև թոնրատանը (հացատուն), որտեղ ճաշել են գերդաստանի անդամները, լավաշ թխել, տաքացել: Թոնիրը վառել են ամեն օր վաղ առավոտյան: Բոլոր կերակուրները եփել են թոնրի վրա: Կափարիչով ծածկված թոնրի վրա դրել են քառակուսի սեղանի ձև ունեցող, մեկ ոտնաչափ բարձրությամբ քուրսին, որը երկու-երեք կարպետով կամ զորգով ծածկել են այնպես, որ դրանց ծայրերը ձգվեն մինչև հատակը՝ տաքությունը ներսում պահելու նպատակով: Ընտանիքի բոլոր անդամներն ըստ կարգի նստել են քուրսու շուրջը և տաքանալու համար ոտքերը, հաճախ նաև ձեռքերը, երկարել են ներս: Ընտանիքի հայրն ունեցել է իր հատուկ տեղը: Քուրսու շուրջը ճաշել են առավոտյան և երեկոյան: Կանայք մեծ մասամբ ճաշել են տղամարդկանցից առանձին: Շատ հաճախ հայր ու որդի, մայր ու աղջիկ, քույր ու եղբայր միևնույն ամանից են կերել, թոնրատանն ընդունել են միայն ազգականներին և ծանոթ հյուրերին:[15] Ավելի ուշ՝ XIX դ. վերջին և XX դ. սկզբներին, գերդաստանի նահապետի հեղինակությունն աստիճանաբար անկում էր ապրել: Դա կապիտալիստական հարաբերությունների երկիր ներթափանցման հետևանք էր, որը նպաստում էր անհատական ընտանիքների դերի բարձրացմանը:

Խ. Աբովյանը մանրամասնորեն անդրադարձել է հարսանիքին, որը փաստորեն ամեն մի ամուսնություն հասարակայնորեն վավերացնելու ծես է: Գրողը, ճիշտ ըմբռնելով հարսանեկան սովորույթների դերն ու նշանակությունը, փորձել է դրանք իմաստավորել: Ըստ նրա՝ հարսանեկան սովորույթները՝ որպես ազգային երևույթ, միանգամայն ինքնատիպ են:[16] Ամուսնությունը մեծ մասամբ կատարվել է ոչ թե ազատ ընտրության միջոցով, այլ ծնողների ցանկությամբ:

Ամուսնացող կողմերի՝ սեփական ընտրությամբ ամուսնությունը խստորեն սահմանափակված էր, որին մեծապես նպաստում էր աղջիկներին մանկության շրջանում նշանելու կամ նույնիսկ հարս տանելու սովորությունը: Այսպիսի դեպքերում փորձում էին արդարանալ այն պատճառաբանությամբ, թե ընտանիքի համար անհրաժեշտ են աշխատավոր ուժեր, որ նրանք ձեռք են բերում հանձին նորահարսի:[17]

Գրողի դիտարկման համաձայն՝ ոմանք իրենց խնամիական կապերը կնքում էին այն ժամանակ, երբ երեխաները դեռևս չէին ծնվել: Եթե մեկին աղջիկ էր ծնվում, մյուսին՝ տղա, համաձայն պայմանավորվածության, տասնհինգ տարին լրանալուն պես նրանց ամուսնացնում էին: Սովորաբար տղաներին ամուսնացնում էին մինչև նրանց քսան տարեկան դառնալը, իսկ աղջիկներին՝ մինչև տասնհինգ: Յուրաքանչյուր ընտանիքի հայր տենչում է այն օրվան, երբ կկարողանա երջանկացնել իր զավակներին՝ ամուսնացնելով. «Չէի ցանկանա էս մաշված ոսկորներս հողի տակ դնել, մինչև որ հարսանիքիդ օրը չպարեմ»: Կամ՝ «Հը, տղա՛, ե՞րբ պիտի քեզ լծենք կամին, զիժ մոզու պես դես ու դեն ես ընկնում»: «Թո՛ղ մենք էլ կարմիր թելը (նարոտը.-Ռ. Ն) վիզդ կապենք և թագը գլխիդ դնենք»:[18]

Խ. Աբովյանը բազմիցս ընդգծել է, որ ամուսնությունը տղամարդկանց համար եղել է շահույթի աղբյուր և դրամազլուխ ձեռք բերելու միջոց: «Շատ բացառիկ դեպքերում, - գրում է Աբովյանը, - կհանդգնի որևէ երիտասարդ իր սրտի ուզածին ընտրել, իսկ աղջիկը՝ երբեք»:[19] Խոսելով ամուսնության հիմքում ընկած դրամական գործարքների մասին՝ Խ. Աբովյանը վեր է հանում արատները, անողոք ծաղրի ենթարկում ժամանա-

---

[14] *Խ. Աբովյան, h. 10, էջ 28-29:*
[15] *Նույն տեղում, էջ 69:*
[16] *Նույնի, h. 8, էջ 162-163:*
[17] *Նույն տեղը, էջ 164:*
[18] *Նույն տեղում, էջ 162:*
[19] *Նույն տեղում, h. 8, էջ 162:*

կի բարքերը: «Բոլորն էլ փողի ծարավ են զգում, - գրում է նա, - փողի համար են ամուսնանում, փողն է ամենամեծ սրբությունը աշխարհիս երեսին, երկնային ամենամեծ բախտավորությունը, լավագույն բուժամիջոցը, ինչպես նաև դրախտ ու դժոխք գնալու, ամբողջ աշխարհը տակն ու վրա անելու, կործանելու և նորից շինելու միակ միջոցը»[20]: Խ. Աբովյանն ազգագրագետի խոր իմացությամբ և գեղագետի հմտությամբ նկարագրում է նաև Թիֆլիսի հայության այն խոր ապրումները, որ առնչվում էր օժիտի պատրաստման, աղջկա ծնունդը դժբախտության համարելու հետ:[21] Աղջկա օժիտը հասնում էր 200 – 1000 – 7000 - 10.000 արծաթ ռուբլի և մի այդքան էլ ակնեղենի, նամանավանդ Թիֆլիսի համար ամեն ինչ եռապատիկ թանկ էր, քան ուրիշ տեղ:

Երիտասարդին կամ աղջկան ամուսնացնելը ծնողների և տան մեծերի գործն է եղել: Երբ երիտասարդները հասունացել են, հայրն ու մայրը սկսել են մտածել նրանց ամուսնության մասին: Ընտրությունից հետո, որը մեծ մասամբ կատարում էր տղայի հայրը, նա գնում էր աղջկա բնակավայրը՝ տեսնելու նրան ջուր կրելիս (որովհետև մեծ մասամբ աղջիկներն են գետից ջուր բերել), ապա խնամախոսի միջոցով տեղյակ է պահել աղջկա ծնողներին: Վերջիններս սովորաբար մերժել են ամեն տեսակ առաջարկություններ, մինչև չստանան իրենց պահանջածը: Միաժամանակ գովերգել են իրենց աղջկա արժանիքները. «Իմ աղջիկը գեղեցիկ է արևի նման, անմեղ՝ ինչպես աղավնին, ջանասեր է և կարող է տասը մարդու գործ կատարել, կույր չէ, աչքեր ունի՝ ամեն մեկը լուսնի նման... ի՞նչն է պակաս: Հաց շատ ունենք նրան կերակրելու համար, հայտնի օջախից է. չէ՛, չէ՛ էդպես էժան չեմ ծախի: Նա մեր տան աչքն է, մեր տան սյունն ու լույսը: Նա հողից չի բուսել, որ էդպես հեշտ ու հանգիստ տնից դուրս գցեմ: Չի՛ ուզում, ուզածս չի՛ տալիս, թո՛ղ նա իր ճամփեն գնա, ես էլ՝ իմ»:

Աղջկա ծնողներին մեծ համբերությամբ լսելուց հետո սկսում է խոսել միջնորդը, որի դերը կատարել են քահանաները, պառավ կանայք կամ տղամարդիկ: Միջնորդը խորամանկորեն և հմտորեն սկսել է հակաճառել աղջկա ծնողներին:

Երկու կողմերի համաձայնության դեպքում աներն ստանում էր պահանջած իրերն ու դրամը, որից հետո կատարվում էր նշանդրեքի արարողությունը: Նշանդրեքի ժամանակ հարսին, բացի զգեստներից, նվիրել են մատանիներ և այլ զարդեր, որոնցով նա արդեն կապվում էր ապագա ամուսնու ընտանիքի հետ: Այդ օրը հարսնացուին նվիրում էին նաև շաքար և կոնֆետներ: Դրանից հետո քահանան օրհնում էր հարսի զգեստները նշանվածների ծնողների ներկայությամբ: Նշանդրեքից հետո հարսնացուն քող էր կրում և տնից գրեթե դուրս չէր գալիս:[22] Ազգագրական նյութերը վկայում են, որ նշանդրեքից հետո հարսին զանազան հասարակական վայրեր տանելու պարտականությունն ընկնում է տղայի կողմի կանանց վրա:

Սովորույթի համաձայն՝ փեսան իրավունք չուներ աներոջ հետ հանդիպելու. դրա համար գոյություն է ունեցել հատուկ արարողություն: Փեսային աներոջ տուն են հրավիրել, ընծաներ տվել, բայց նա կանգնել է աներոջ մոտ գլուխը կախ, հանցավորի նման և իր մտքերն արտահայտել է մնջախոսությամբ, հաճախ համբուրել աներոջ ձեռքը, չի համարձակվել նրա հետ ճաշել ու կատակել:[23]

Խ. Աբովյանի նկարագրած՝ նորապսակների խուսափման այս սովորույթը որոշակի հասարակական պայմանների հետևանք էր: Սովորույթի ծագման, մեկնաբանման, դասակարգման շուրջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Գիտնականներից ոմանք այն կապում են՝ ա) կնոջ առևանգման ինստիտուտի հետ՝ իբրև բռնի ամուսնության դեմ ձևավորված հակազդեցություն, բ) որպես արգելակող համակարգ, սեռային կապերի կանխման միջոց, որը ծագել է խմբային ամուսնությունից անհատականի անցման ընթացքում, գ) որպես մայրիշխանությունից հայրիշխանության անցման ժա-

---

*[20] Խ. Ա բ ո վ յ ա ն, հ. 8, էջ 179-180:*

*[21] Ուշագրավ է, որ աղջկա ծնունդը պատուհաս է համարվել Թիֆլիսի հայության համար: «Թող սատանի բաժին դառնա: Քիչ ցավ ունեինք, հիմա էլ նորն է գալիս: Երբ աստված մարդուն պատժել է ուզում, սրանից մեծ պատիժ չի կարող լինել: Ա՜խ, երանի թե մեռներ, խկույն ներ հողի տակը դնեինք», «Սև լիներ էսօրը մեզ համար, աղջիկ է ծնվել: Ո՛չ սպանել կարող ես, ո՛չ էլ՝ ջուրը գցել»:*

*[22] Նույն տեղում, էջ 169:*

*[23] Նույնը:*

մանկաշրջանի մնացուկ, դ) տիրապետող բազմաքիվ մնացուկների հոգեբանական ըմբռնում:[24]

Աները փեսայի հետ զրուցելիս նորից իր աղջկա զովքն է արել, փեսային խրատներ տվել. «Արի ձեռքս համբուրիր ու ղոչաղ կաց, չեմ թողնի, որ ճակատդ մռայլվի. հողի տակից էլ ձեզ համար հաց կհանեմ: Սրանից հետո իմ դուռը բաց է քեզ համար, իսկ հարսնացուիդ (մինչև ամուսնությունը -Ռ.Ն) իրավունք չունես տեսնելու, թե չէ աչքերդ կհանեմ, աղջկաս էլ ընդմիշտ կխլեմ քեզանից, սասծներս մտքումդ պահիր: Ես ձեզ իրար մոտ կտանեմ»:[25] Այս բոլորն ավարտվել է նրանով, որ աները հարվածել է փեսայի ականջին, ծոծրակին, համբուրել է ճակատը, քաշել ականջը, քիթը, հետո երկու ձեռքով բռնել է ամոթից կաս-կարմիր կտրած փեսայի գլուխը և սեղմել կրծքին: Այս դեպքում աներոջ համբույրը, ըստ Ե. Լալայանի, ոչ թե հարգանքի, այլ սիրո նշան էր:[26]

Խ. Աբովյանի վկայությամբ՝ աղջկա մայրը ևս հատուկ ուշադրություն է դարձրել փեսային, հյուրասիրել համեղ կերակուրներով: Նրան է դիմել «աչքիս լույս», «սրտիս սյուն», «ցավդ տանեմ», «երեսս ոտքիդ տակ» և այլ սիրալիր արտահայտություններով: Ազգագրական առումով մի սքանչելի երկխոսություն է զոքանչի սիրատոչոր խոսքերն ուղղված նորափեսային. «…մեռնեմ աչքերիդ, գլխիդ, հոգուդ, երեսիդ, մեռնեմ քո բոյ-բուսաթին: Սիրտս ուզում է քեզ սաղ-սաղ ուտել: Երբ քեզ տեսնում եմ՝ արևն է ծագում առաջս: Ուզում եմ գլխովդ պտույտ գալ: Ցավդ տանեմ: Երեսս ոտքիդ տակը: Թո՛ղ աստված հոգիս ու մարմինս առնի, քեզ տա: Հոգիս հոգուդ բնակարան է դարձել: Որ կյանքս էլ ուզես՝ կտամ: Ամեն անգամ, երբ ոտքդ իմ շեմն ես դնում, կարծես թե երկինք է երևում իմ տանը: Մեռնեմ անունիդ: Եթե կարողանայի սիրտս բաց անել, կտեսնեիր, որ արյունս քո սիրուց եռ է գալիս, երբ ինձանից հեռանում ես, թվում է, որ տան պատերը դևեր են դարձել ու ինձ ուտել են ուզում: Մի օր քեզ չտեսնելիս, կարծես աշխարհը տակ ու վրա է լինում: Դու հոգուս լույսն ես, սրտիս ճրագը…: Աչքս ջուր է դառնում, երբ ուշանում ես: Երբ ձայնդ ականջս է ընկնում, խելք ու միտք չքանում է: Դու իմ թագն ու պարծանքն ես: Քուն թե արթուն, քեզ եմ միայն տեսնում: Պատկերդ այնպես է տպավորվել իմ սրտում, որ եթե քեզ մի ժամ չտեսնեմ, հոգիս կտամ: Ինչ ունեմ՝ քոնն է. տունս, ունեցած-չունեցածս, կյանքս, բոլորս մատաղ լինենք ոտքերիդ տակ: Մեռնեմ էն ձեռքին, որ քեզ պահել ու մեծացրել է»:[27] Նման վերաբերմունքը փեսայի նկատմամբ շարունակվել է նշանդրեքից մինչև հարսանիք: Այդ ընթացքում փեսան պարտավոր էր տոն օրերին նվերներով այցելել իր նշանածին:

Խ. Աբովյանի վկայությամբ հարսանիքը տևել է երեք օր, մասնակցել են բոլոր ազգականները: Փեսան նախօրոք սափրվել է, լողացել: Յուրահատուկ ծես է եղել փեսայի բաղնիք գնալը, որն ուղեկցվել է երաժշտությամբ և փեսայի ընկերների ուղեկցությամբ: Բաղնիքում երեկոյան քեֆ են արել ու կատակել, իսկ փեսան սովորության համաձայն, քեֆին մասնակցելու իրավունք չի ունեցել, որովհետև հաջորդ օրը պետք է հաղորդություն ընդուներ եկեղեցում:[28]

Խ. Աբովյանը գրել է, որ բաղնիքից վերադառնալուց հետո բոլոր հյուրերը զվարճանում են, պարում ու երգում, նրանց հյուրասիրում էր փեսայի հայրը: Ոչ մի կին իրավունք չուներ այդ սենյակում երևալու: Այս նկարագրության ժամանակ է, որ Խ. Աբովյանը հարևանցիորեն հիշատակում է *խնամխազին* նմանվող մի երևույթ: Նա գրում էր. «Զահել տղաներից մեկը ձայն է տալիս. - Չինակիրնե՛ր, ո՞ւմ քրոջը համբուրենք: - Խաչեղբոր, - հնչում է պատասխանը: Երբեմն կանչողին պատասխանում են. «Քո քրոջը», կամ՝ «Նրա քրոջը, ով ձայն տվեց»:[29] Այս սովորույթը պահպանվել էր XIX դ. վերջերին և XX դ. առաջին քառորդին, որն արվում էր հարսնառի կերուխումն աղջկա հոր տանն ավարտելուց հետո՝ տանից դուրս գալու պահին: Խնամխազի իմաստը նախապես ընտրած աղջկան հասարակայնորեն տարբերակելն էր: Հարսնացուի տանը հավաքվել

---

[24] *Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն, Խուսափման սովորույթի դրսևորումները աժդնիքահայերի ընտանեկան կենցաղում, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2005, 1, էջ 149:*
[25] *Խ. Ա բ ո վ յ ա ն, հ. 8, էջ 170:*
[26] *Ե. Լ ա լ ա յ ա ն, Ծիսական կարգը հայոց մեջ, Ա պրակ, Թիֆլիս, 1913, էջ 10:*
[27] *Խ. Ա բ ո վ յ ա ն, հ. 8, էջ 170:*
[28] *Նույն տեղում, էջ 171:*
[29] *Նույն տեղում, էջ 172-173:*

են մի խումբ կանայք, որոնք հարսնացուի աչքերը ներկել են սև ներկով, իսկ եղունգները ու մատները կարմիր հինայով: Հինան այս դեպքում օգտագործվել է որպես զարդ, մյուս կողմից՝ խորհրդանշել է նորի գաղափարը:

Հայկական հարսանիքների ժամանակ կարևոր անձ է եղել խաչեղբայրը, որն անպատճառ պետք է փեսայի արյունակից ազգականը լիներ:[30] Այս դեպքում Խ. Աբովյանը պետք է որ նկատի ունենար խաչեղբոր տոհմական լինելը, որովհետև հայաբնակ շատ գավառներում յուրաքանչյուր գերդաստան իր խաչեղբայրներին շարունակ միևնույն տոհմի սերունդներից է հրավիրել:[31]

Քավոր, կնքահայր, խաչեղբայր հասկացությունները չափազանց կարևոր դեր են կատարում հայ ընտանեկան-ամուսնական ծեսերի ու սովորությունների մեջ: Պսակի արարողության ժամանակ քավորի ներկայությունը խիստ անհրաժեշտ է համարվել: Հարսանեկան ծիսակատարության ողջ ընթացքում քավորին վերապահված է բացառիկ դեր՝ պաշտպանել «թագավորին» և «թագուհուն» անտեսանելի և տեսանելի բոլոր չարիքներից ու թշնամիներից: Քավորի առաջնորդությամբ հարսանքավորների խումբը գնացել է հարսնացուի տնից, իսկ փեսայի ծնողներն ու տարեց հյուրերը մնացել են տանը: Փեսա-թագավորը մինչև շեմից ներս մտնելն աներոջից որևէ նվեր է ստացել: Աները փեսային խոստացել է իբրև ընծա նվիրել մեկ եզ: - «Եզ ունես, արտդ վարի՛ր…»: «Մի եզով է կամենում փեսային ընդունել»,-ծաղրել են ներկաները…: Ի վերջո, աները խոստացել է. «Իմ սպիտակ ձին կամ հինգ տակառ գինին, կամ թե՝ պարտեզի մի մասը ձեզ փեշքեշ»: Այնուհետև հարսի մայրը բակում փեսայի բերանը կոնֆետ կամ շաքար է դրել, հետո երկու մետաքսե կտոր խաչաձև կապել փեսայի և խաչեղբոր վզին, համբուրել նրանց, շաքարաջուր տվել խմելու, որից հետո՝ պարել: Խ. Աբովյանի վկայությամբ, պարում էր նաև աները:[32] Այնուհետև փեսա-թագավորին նստեցրել են նրա համար հատուկ պատրաստած տեղը, որից հետո քահանան օրհնել է հարսի զգեստները: Հարսի դեմքը ծածկել են սպիտակ քողով, գլխի չորս կողմը փաթաթել բաց կարմիր կտոր, որը կոչվել է կրաքաշի:[33] Կտորի մի ծայրը բռնել է հարսը, իսկ մյուսը՝ փեսան: Հարսին հագցնելուց հետո հրավիրել են խաչեղբորը, որ կապի հարսի գոտին, որը խորհրդանշել է կուսության գաղափարը:

Նորապսակներին օրհնել է աղջկա հայրը, այնուհետև հարսն ու փեսան հարսանքավորների հետ շարժվել են դեպի եկեղեցի: Աղջկա ծնողները հարսանքավորների հետ եկեղեցի չեն գնացել: Խ. Աբովյանն այս երևույթի մեջ տեսնում է առևանգմամբ ամուսնությունից առաջացած թշնամության հետքերը: Հարսնացուին եկեղեցի է ուղեկցել այն կինը, որը նրա մատներին հինա է դրել, ինչպես նաև հարսի եղբայրը, որոնք հարսին պաշտպանել են «չարից»: Երաժիշտները գնացել են առջևից, փեսան իր խաչեղբոր հետ՝ հետևից, իսկ երկու քայլ այնկողմ՝ հարսնացուն:

Եկեղեցում խաչեղբայրը նորապսակների գլխավերևում պահել է մերկացրած սուր, իսկ եկեղեցու սպասավորները կատարել են պսակադրությունը[34]: Պսակադրության վերջում քահանան նորապսակներին տվել է մի բաժակ գինի, որից սկզբում խմել է փեսան, հետո՝ հարսը:[35] Պսակադրությունն ավարտելուց հետո հարսանքավորները գնացել են փեսայի տուն: Նորապսակներին դիմավորել է փեսայի մայրը, որը պարելով մոտեցել է հարսին, համբուրել նրան, ներս տարել և նստեցրել նրա համար նախատեսված տեղում: Հաջորդ օրը կատարվել է մի ծես, որի ժամանակ հավեր են զոհաբերել: Խաչեղբայրը, առանց այլևայլության, սկսում է սրով խփել ու սպանել պատահած հավերին, որոնց տերերը չեն պահանջել հավի արժեքը: Երբեմն այսպես են վարվել նաև պատահած գառների և ուլերի հետ:[36]

[30] *Խ. Ա բ ո վ յ ա ն, հ. 8, էջ 171-172:*

[31] *Խ. Ս ա մ վ ե լ յ ա ն, Մայրական իրավունքը, «Ազգագրական հանդես», գիրք XVII, Թիֆլիս, 1908, էջ 74:*

[32] *Խ. Ա բ ո վ յ ա ն, հ. 8, էջ 174:*

[33] *Նույն տեղում, էջ 174-175:*

[34] *Նույն տեղում, էջ 176:*

[35] *Նույնը:*

[36] *Նույն տեղում, էջ 177:*

Այդ երեկոյան նորապսակներին նվերներ են տվել: Ամենաթանկ նվերը պետք է տար խաչեղբայրը: Խաչեղբոր կատարած ծախսերի դիմաց, որոշ ժամանակ անց, փեսան խաչեղբոր տուն է ուղարկում թանկարժեք նվերներ: Նույն օրը քահանան արձակել է կարմիր թելը, որը խորհրդանշել է հարսանիքի ավարտը, և նորապսակներն իրավունք են ստացել անկողին մտնելու: Այդ ծեսը կոչվում է *թագ վերցում:* «Թագ վերցումից» երեք-չորս շաբաթ հետո միայն, ինչպես վկայում է Խ. Աբովյանը, հարսն իրավունք է ստացել այցելելու ծնողներին, որը կոչվել է երեսբացուկ կամ դարձ:[37]

Այսպիսով, ուսումնասիրելով Խ. Աբովյանի բազմաթիվ ստեղծագործություններ, փորձել ենք ի մի բերել հայոց ընտանեկան-ամուսնական սովորույթներին ու ծեսերին առնչվող նկարագրությունները, որոնք բավականին շատ տեղեկություններ են պարունակում ավանդական հայկական ընտանիքների սոցիալ-հասարակական փոխհարաբերությունների և առհասարակ տվյալ ժամանակաշրջանի ավանդութային արժեհամակարգի մասին:

## ХАРАКТЕРИСТИКА СЕМЕЙНО-БРАЧНЫХ ОБЫЧАЕВ И ОБРЯДОВ АРМЯН В ТРУДАХ Х. АБОВЯНА


***Резюме*** ***Р. Нагапетян***

**В арменоведении Х. Абовян оценён как основатель новой армянской литературы, великий просветитель и педагог. Однако его этнографическое наследие до сих пор не исследовано и неоценено. Между тем он своим этнографическим наследием сыграл огромную роль в становлении армянской этнологии. В статье обобщаются описания, относящиеся к армянским семейно-брачным обычаям и обрядам, которые содержат богатую информацию о социально-общественных взаимоотношениях традиционных армянских семей и традиционных ценностях исследованной эпохи.**


[37] *Խ. Աբովյան, հ. 8, էջ 177:*

*Կարինե ԲԱՋԵՅԱՆ*

# *ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՑԱՂԸ Մ. ԱՐՄԵՆԻ «ՀԵՂՆԱՐ ԱՂԲՅՈՒՐ» ՎԻՊԱԿՈՒՄ*

Աղբյուրագիտական գրականության մեջ պատմական սկզբնաղբյուր է համարվում այն ամենը, ինչն արտացոլում է մարդկային հասարակության զարգացումը և նրա գիտական ճանաչման հիմքն է: Այլ կերպ ասած, դրանք մարդկության գործունեության ընթացքում ստեղծված բոլոր այն արժեքներն են, որոնք ինֆորմացիա են կրում հասարակության կյանքի պատմական զարգացման զանազան փուլերի վերաբերյալ:[1] Աղբյուրագիտության՝ որպես պատմական գիտության օժանդակ դիսցիպլինի ուսումնասիրության օբյեկտը գրավոր սկզբնաղբյուրներն են, որոնք հնարավորություն են տալիս վեր հանելու ուսումնասիրվող ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքը և կենցաղամշակութային համալիրի ողջ ներկապնակը: Սրանից ելնելով՝ կարելի է ասել, որ դրանց մեջ մտնում է նաև գեղարվեստական գրականությունն իր ժանրային բոլոր տեսակներով հանդերձ:

Եթե քաղաքական պատմության ուսումնասիրման համար գրական-գեղարվեստական ստեղծագործությունները և բանահյուսական հուշարձանները (էպոս, առասպել և այլն) որպես սկզբնաղբյուր են դիտվում մինչև XVIIIդ. ընկած պատմական իրադարձությունները վերարտադրելու համար, ապա XIX-XX դդ. համար այն աղբյուր չի համարվում: Այլ է վերաբերմունքը գրական ստեղծագործության՝ որպես սկզբնաղբյուրի նկատմամբ, երբ խոսքը վերաբերում է ազգագրությանը:

Ռուսական աղբյուրագիտական գրականության մեջ բազմիցս արծարծվել է այս թեման, ինչն ի վերջո հանգեցրել է այն համոզման, որ գեղարվեստական գրականությունը, որպես սկզբնաղբյուր, մեծ արժեք կարող է ներկայացնել մշակույթի, կենցաղի, բարքերի ու սովորույթների, հասարակական մտքի պատմության ուսումնասիրության ժամանակ: Ընդ որում, ընդգծվում է, որ դարաշրջանի «կենցաղի և բարքերի, տրամադրությունների, ընդհանուր մթնոլորտի ուսումնասիրության համար պատմաբանը կարող է գեղարվեստական գրականությունից ստանալ մեծ քանակությամբ տեղեկություններ, և հատկապես այն ստեղծագործություններից, որտեղ գրողը վերարտադրել է իր դարաշրջանը և նկարագրել է կյանքի այն դրսևորումները, որոնք անձամբ է տեսել:[2] Ակնհայտ է, որ ազգագրության համար գեղարվեստական գրականությունը այլ աղբյուրների հետ դառնում է արժեքավոր և բավական հավաստի սկզբնաղբյուր:

Հայ ազգագրության մեջ գրականության դերը կարևորել է անվանի ազգագրագետ Վ. Բդոյանը գրելով. «Հայոց ազգագրական իրողությունները, իբրև գրական նյութ, օգտագործվել են շատ գեղարվեստական գործերում: Այդ ձևով մեծ քանակությամբ նյութեր են օգտագործել Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Րաֆֆին և ուրիշներ...»:[3]

Գեղարվեստական գրականությունը բազմաթիվ նյութեր կարող է տալ այնպիսի բնագավառների ուսումնասիրության համար, ինչպիսիք են արժեքային կողմնորոշիչները, վարքի կարծրատիպերը, համոզմունքները, էթնիկ ինքնագիտակցությունը, ինչպես նաև ամուսնաընտանեկան հարաբերություններն ու սոցիոնորմատիվ մշակույթի այլ բաղկացուցիչները: Իր յուրահատկությունների շնորհիվ՝ գեղարվեստական գրականությունը, համեմատած գրավոր աղբյուրների այլ տեսակների հետ, ձեռք է բերում մի շարք առավելություններ: Յուրաքանչյուր կոնկրետ ստեղծագործության համեմատական արժեքը ազգագրության համար որոշվում է նրա ոճական ու ժանրային առանձնահատկություններով, թեմատիկայով, հեղինակի իրազեկության աստիճանով և այլն: Այս տեսակետից հատկապես արժեքավոր է ռեալիստական գրականությունը: Ռեալիստ գրողները ձգտում են տալ կյանքի, երևույթների, մարդկանց ու իրերի առավել ամբողջական ու ճշմարտացի պատկերը՝ դրանք ներկայացնելով այնպիսին, ինչպիսին

---

[1] *Источниковедение истории СССР. Под ред. Ковальченко, 1981.*

[2] *Е. Ф и л и п п о в а, Художественная литература как источник для этнографического изучения города, Советская этнография, М., 1987, стр. 4.*

[3] *Վ. Բ դ ո յ ա ն, Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 19:*

են իրականում: Գեղարվեստական գրականությունը որպես սկզբնաղբյուր ընդունելով, դրանց հեղինակները դիտվում են որպես ականատեսներ, յուրատեսակ բանասացներ, որոնք խիստ գնահատվում են ազգագրագետների կողմից:[4]

Ազգագրագետի համար մեծ նշանակություն ունի հատկապես կենցաղամշակութային այն ֆոնը, որտեղ կատարվում են իրադարձությունները, կերպարներին շրջապատող կենսոլորտը, բնական միջավայրը: Սովորաբար դա վերարտադրվում է մեծ հավաստիությամբ և դրան նպաստում է այն, որ տաղանդավոր արվեստագետը ավելի դիտողունակ է, ավելի շատ նրբություններ է նկատում, քան շարքային դիտորդը:[5]

Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ արդի դարաշրջանի կամ ոչ վաղ անցյալի հետազոտության ժամանակ մասնագետը հանդիպում է տարբեր հիմնախնդիրների լուսաբանման տարբեր մակարդակների: Այսպես օրինակ՝ քաղաքն ավելի քիչ ազգագրական գրավոր սկզբնաղբյուրներ ունի, քան գյուղը, քանի որ էթնիկ ավանդույթների կրող երկար ժամանակ համարվում էր գյուղացիությունը, և գիտնականների հետաքրքրությունը գերազանցապես ուղղված էր դեպի գյուղը: Պատահական չէ, որ հենց հայ գրականության մեջ գյուղագրությունն ակնհայտ գերակշռում է թե' արձակում և թե' պոեզիայում: Հայ գյուղն ու գյուղական համայնքը հաճախ նույնացվում էր էթնիկ մշակույթի հետ և անվերապահորեն համարվում էր զտարյուն ազգային տարրերի հիմնական կրողն ու միակ աղբյուրը: Սակայն ազգաբանական լուրջ հետազոտությունները ցույց են տալիս, որ քաղաքի կենցաղամշակութային համակարգում ևս պահպանվել են բազմաթիվ էթնիկ մշակութային տարրեր, որոնք հատկապես ցայտուն են արտահայտվում ինքնատիպ արհեստավորաառևտրական «դեմք» ունեցող այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Կարսը, Ախալցխան և ի մասնավորի՝ Գյումրի-Ալեքսանդրապոլը: Այդ պատճառով քաղաքի ազգագրական ուսումնասիրության հարցում աղբյուրագիտական բազայի ընդլայնումը դառնում է խիստ անհրաժեշտ:

Վերոշարադրվածը հիմք է տալիս ասելու, որ հայկական գրականությունը ևս կարող է դիտվել որպես կարևոր ազգագրական սկզբնաղբյուր, հատկապես երբ խոսքը վերաբերում է քաղաքի կենցաղամշակութային համալիրի հետազոտմանը: Նպատակ չհետապնդելով քննարկել նման բնույթի մեծաքանակ գրականությունը (օր.՝ Հ.Պարոնյանի գրական ժառանգությունը՝ Կոստանդնուպոլսի, կամ Գ. Սունդուկյանինը՝ Թիֆլիսի ուսումնասիրության համար)՝ ուզում ենք կանգ առնել Մկրտիչ Արմենի ստեղծագործությունների, հատկապես՝ «Հեղնար աղբյուր» վիպակի վրա:[6]

Վիպակը, չնայած փոքր ծավալին, բացառիկ արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ալեքսանդրապոլ քաղաքի, նրա բնակիչների, սովորույթների և բազում այլ երևույթների մասին: Վիպակում ներկայացված քաղաքային կենցաղի ընդհանուր նկարագրի հավաստիությունը վկայում է նաև հեղինակն ավելի ուշ գրված իր մեկ այլ ստեղծագործության՝ «Հեղնար ախպուրը կայնած էր տիա-ա՜-ա՜ ինտեղ...» պատմվածքի մեջ:[7] Այստեղ Մ. Արմենը փորձել է վերլուծել իր իսկ վիպակը, ընթերցողին ներկայացնելով վիպակի մեջ առկա իրականն ու տիպականը, ինչպես նաև իր կողմից ստեղծված ու իր երևակայության արգասիք հանդիսացող հատվածներն ու կերպարները, քանի որ ստեղծագործությունը մեծ արձագանք էր գտել հատկապես Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության շրջանում: Մեզ համար հետաքրքիր է այն փաստը, որ, ինչպես վկայում է հեղինակը, այնքան ճշգրիտ են ներկայացված միջավայրը, կերպարները, քաղաքային մթնոլորտը, որ տեղացիները հետագայում վիճում էին, թե որտեղ է եղել աղբյուրը: Այդ վեճը լուծելու համար էլ հեղինակը մանրամասն նկարագրել է վիպակի ստեղծման ողջ ընթացքը, դրա իրական և հորինած հատվածները:

Ռեալիստական գրականության կարևորագույն սկզբունքներից մեկը տիպականությունն է, իրականության գեղարվեստական ընդհանրացման բարձրագույն ձևը, որը հնարավորություն է տալիս գրականությանը խորը ներթափանցելու կյանքի մեջ, առավել ամբողջական և վառ գույներով բացահայտելու նրա զարգացման միտումները,

---

*[4] М. Р а б и н о в и ч. Очерки этнографии русского феодального города. М., 1978, стр. 12.*

*[5] Е. Ф и л и п п о в а, նշվ. աշխ., էջ 28:*

*[6] Մ. Ա ր մ ե ն, Հեղնար աղբյուր, Եր., 1961:*

*[7] Մ. Ա ր մ ե ն, Երկեր, հ. 4, Եր., 1971:*

դառնալու նրա ճանաչման գործիքներից մեկը:[8] «Հեղնար աղբյուրը» նման տիպական կերպարների, միջավայրերի, հարաբերությունների մի կուռ ամբողջություն է, որն ընդհանրացնում է XX դարասկզբի Ալեքսանդրապոլի կենցաղամշակութային համալիրը, ներկայացնելով այն իր բոլոր բաղադրիչներով: Մ. Արմենն անձամբ հավաստում է «Վիպակում իրականությունից վերցված են միայն նկարագրված վայրերը՝ համարյա միշտ իրենց իսկական անուններով: Եվ, իհարկե, հնարովի չեն, այլ իրականությունից են վերցված Գյումրու կենցաղային հին սովորույթները՝ գետի ափին խնջույք կատարել, բացակա կամ մահացած ընկերոջ համար ազատ տեղ թողնել և բաժակ դնել, զբոսանք Չիքողցոնց զաքորում, բորիկ ոտքերով Երուսաղեմ գնալ և այլն...»:[9]

Վիպակի՝ որպես օբյեկտիվ սկզբնաղբյուրի գիտական արժեքն այն է, որ այստեղ առկա են գրականությանը ներկայացվող երկու չափանիշներն էլ. քանակական (թե ինչ ծավալի ազգագրական նյութ է պարունակում) և որակական (թե որքանով են հավաստի հեղինակի դիտարկումները):[10] Ներկայացված հարցադրումներին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզաբանել, թե որ խավին կամ որ մասնագիտական խմբին են պատկանում գործող անձինք, որքան մանրամասն և ճշգրիտ են ներկայացված նրանց կյանքն ու կենսապայմանները և այլն:

Մ. Արմենն ինքն է պատասխանել տրված հարցերին այսպես. «Վիպակի հերոսների ետևում չկան կոնկրետ, իրական նախատիպեր: Ուստա Մկրտիչի անձնավորությունը ես չեմ տեսել երբեք և ոչ մի տեղ, բայց ուստա Մկրտիչի տիպը ես կյանքում տեսել եմ շատ անգամ, ես ճանաչել եմ 100 ուստա Մկրտիչ: Բայց վիպակի ուստա Մկրտիչը 101-րդը չէ, այլ նա իր մեջ ամփոփում է այդ հարյուրին միասին և ոչ մեկին առանձին»:[11] Մյուս հարցի պատասխանը հետևյալն է. «Միտք ունի արդյոք թվարկել այն բոլոր տարրերը, որոնք իմ գիտակցությամբ մտել էին վիպակի մեջ: Հարցն այն է, որ ես դրսից եկած մարդ չէի, որ հատիկ-հատիկ հավաքեի այդ «տարրերը» և իմանայի, թե որքան եմ հավաքել և որոնք են դրանք: Ես Գյումրեցի էի, ճիշտ և ճիշտ այն արհեստավորական միջավայրում ծնված, որի կյանքից գրել էի վիպակը: Այլ կերպ ասած, դարձյալ պիտի դիմել նույն համընդհանուր բառին իմ կյանքն էր»:[12]

Այսպիսով, աղբյուրագիտական վերլուծության ենթարկելով վիպակը, այն կարելի է համարել խիստ հավաստի և շատ արժեքավոր սկզբնաղբյուր Ալեքսանդրապոլ քաղաքի պատմազգագրական ուսումնասիրության համար: Վիպակում հանգամանորեն ներկայացված են քաղաքի կենցաղամշակութային համալիրի բոլոր բաղկացուցիչները՝ առաջնային արտադրության, կենսապահովման, սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթները, սակայն տարբեր համամասնությամբ: Վիպակի հերոսների մասնագիտությունները համապատասխանում են քաղաքի բնակչության հիմնական տընտեսական զբաղմունքներին՝ արհեստ, գյուղատնտեսություն, առևտուր: Վիպակում ճշգրիտ նկարագրված է քաղաքը որպես բնակավայր. թաղամասերը, փողոցները, բոստանները, գերեզմանոցը, ինչպես նաև քաղաքային ճարտարապետությունը՝ տները, խանութները, պանդոկները, զբոսավայրերը, աղբյուրները և այլն: Ազգագրական տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում ուստա Մկրտիչի տան՝ արհեստավորի բնակարանի ներսույթի նկարագրությունը, քանի որ դրա վերաբերյալ գրավոր տեղեկությունները խիստ սակավ են: Ամենայն մանրամասնությամբ են նկարագրվել նաև կնոջ ավանդական տոնական հագուստի համալիրը, հատկապես գլխի հարդարանքն ու զարդերը՝ իրենց բարբառային անուններով: Ալեքսանդրապոլի քաղաքային ճարտարապետությանն ու տարազին նվիրված գիտական ուսումնասիրությունները[13] հետագայում հաստատեցին հեղինակի տեղեկությունների հավաստիությունը՝ ավելի բարձրացնելով վիպակի՝ որպես պատմազգագրական սկզբնաղբյուրի արժեքը:

---

[8] *Е. Ф и л и п п о в а, նշվ. աշխ., էջ 28:*

[9] *Մ. Ա ր մ ե ն, նշվ. աշխ., էջ 237:*

[10] *Е. Ф и л и п п о в а, նշվ. աշխ., էջ 28:*

[11] *Մ. Ա ր մ ե ն , նշվ. աշխ., էջ 236:*

[12] *Նույնը:*

[13] *Ս. Մ ա թ և ո ս յ ա ն, Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր.,1985: Ն. Ավագյան, Հայկական ժողովրդական տարազը, Եր., 1983 և այլն:*

Այս ամենով հանդերձ, վիպակը մեզ համար կարևորվում է հատկապես քաղաքի սոցիոնորմատիվ մշակույթն ուսումնասիրելու առումով, քանի որ հեղինակը անդրադարձել է այնպիսի թեմաների, որոնք գրեթե ուսումնասիրված չեն, և որոնց վերաբերյալ քիչ թե շատ այլ հավաստի տվյալներ չեն պահպանվել:[14] Այդպիսիք են ներէթնիկական հարաբերությունները, քաղաքի սոցիալական խավերը և դրանց փոխհարաբերությունները, քաղաքային արհեստների ու դրանք ներկայացնող արհեստավորների աստիճանակարգությունը, արևմտաեվրոպական ու ռուսական կենցաղամշակութային տարրերի ու երևույթների ներթափանցումը, էթիկական-վարքագծային նորմերն ու կարծրատիպերը, բարոյականության ավանդական ըմբռնումները և այլն, որոնք ներկայացվում են ընտանեկան-հասարակական հարաբերությունների ֆոնի վրա:

Վերը թվարկված բոլոր թեմաներից հատկապես արժեքավոր են միջէթնիկական հարաբերություններին վերաբերող դիտարկումները, քանի որ ազգամիջյան հարաբերությունները արդի ազգաբանության առավել այժմեական հիմնախնդիրներից է, որի վերաբերյալ հայ ազգագրական գիտության մեջ ուսումնասիրություններ չեն կատարվել: Ալեքսանդրապոլում XX դարասկզբին հայերի հետ մեկտեղ ապրում էին նաև թուրքեր, հույներ, ռուսներ, բոշաներ՝ տեղակայված առանձին թաղամասերում՝ էթնիկ առումով անխառն մահլաներում: Հատկապես փակ կենցաղով էին ապրում թուրքերը, որոնց մասին Մ. Արմենը գրում է. «Իր առանձին, փակ կյանքով ապրող թաղամաս էր դա»:[15] Չնայած դրան՝ քաղաքի բոլոր բնակիչները խիստ հանդուրժողական էին միմյանց նկատմամբ, հարգում էին իրար սովորույթները, խոսում էին «Գյումրու երեք լեզուներից որով էլ ցանկանային, բայց մեծ մասամբ հայերեն...», միմյանց դիմում էին հարգալից՝ ուստա Մկրտիչը թուրքերի մոտ «Մկրտիչ ախպեր» էր, թուրք Ռահմանը հայերի մոտ՝ «Ռահման ջան», իսկ հույն Աթանասը բոլորի մոտ՝ «տնկոզ Աթո»:[16]

Այս ամենով հանդերձ, հեղինակն իր սուր դիտողականությամբ մանրամասն թվարկել է նաև բոլոր այն հակասությունները, որոնք առկա էին նրանց միջև, սակայն միջէթնիկ կոնֆլիկտների չէին հանգում: Հետաքրքիր է, որ այդ հակասություններն Արմենը ներկայացնում է հարցադրումների միջոցով: Քանի որ վիպակի այդ հատվածը ազգամիջյան փոխհարաբերությունների ուսումնասիրման համար բացառիկ արժեք է ներկայացնում, ուստի մեջբերում ենք ամբողջությամբ. «Ամաչո՞ւմ էին նրանք, թե՞ լուծում էին փնտրում, թե այդ ինչի՞ց է, որ չնայած իրենց այդքան մտերմությանը, այնուամենայնիվ հարկավոր էր առանձին հավաքատեղ ունենալ, անհրաժեշտ էր տարբեր թաղամասերում ապրել, և իրար հետ չէին կարող ամուսնանալ ոչ միայն մահմեդական թուրքն ու քրիստոնյա հայը, այլև հույնն ու հայը, որոնք երկուսն էլ քրիստոնյա էին: Ավելին՝ իրար հետ չէին կարող ամուսնանալ երկու հայեր, եթե նրանցից մեկը լուսավորչական էր, իսկ մյուսը՝ կաթոլիկ... Ամաչո՞ւմ էին նրանք, թե՞ լուծում էին փնտրում, թե այդ ինչի՞ց էր, որ թուրքը չէր ուտում հայի մորթած միսը, հայը՝ թուրքի պատրաստած պանիրը, մինչդեռ նույն թուրքն ու հայը խմում էին նույն սուրճը, ուտում էին նույն լավաշը... Միաժամանակ, նրանք խորշում էին միմյանց ամանից ջուր խմել, իրարից ջրաման չէին վերցնում և չէին տալիս, չպղծելու համար, իրենց համոզմունքով՝ իրենց շրթունքները, ամանի տիրոջ համոզմունքով՝ ամանինը...»:[17]

Քրիստոնյա հայերի ու հույների և մահմեդական թուրքերի միջև այդ հակասությունը դրսևորվում էր նաև բաղնիքում, որ նույնպես շատ գունագեղ նկարագրված է վիպակում: Բաղնիքի ծեսն Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղի բնորոշ երևույթներից մեկն է, սակայն այստեղ մեզ հետաքրքրողը ոչ միայն ծեսն է որպես այդպիսին, այլև այն, որ նույնիսկ բաղնիքում հայերն ու հույները թուրքերից առանձին են լողացել՝ անջրպետվելով պատով, որի բացվածքների միջով նրանց երեխաները խաղում էին իրար հետ: Մեկ այլ նկատառում ևս. հատկանշական է, որ Արմենը ներկայացրել է կանանց բաղնիքը, և, եթե նկատի ունենանք հեղինակի սեռը, կարող է համարվել պակաս

---

[14] *Բացառություն է կազմում Կ. Սեղբոսյանի «Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում» աշխատությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պրակ 6, Եր., 1974:*

[15] *Մ. Ա ր մ ե ն, Հեղնար աղբյուր, էջ 30:*

[16] *Նույնը:*

[17] *Նույն տեղում, էջ 31:*

ճշմարտացի: Սակայն այս դեպքում եւ վստահաբար կարելի է պնդել, որ հեղինակը պատմում է որպես ականատես, քանի որ հայ ժողովրդի մեջ մինչև XX դարի կեսերը կենցաղավարում էր այն սովորույթը, փոքրահասակ տղա երեխաներին մայրերն ու տատերն էին լողացնում՝ իրենց հետ տանելով բաղնիք:[18]

XIX դարի վերջին Ալեքսանդրապոլում ձևավորվել էին իրավական տարբեր աստիճանի և նյութական տարբեր մակարդակի վրա գտնվող խավեր, որոնք, բնականաբար, իրար նկատմամբ որոշակի վերաբերմունքի և փոխհարաբերության մեջ էին գտնվում:[19] Վիպակում բավականին հանգամանորեն ներկայացված են արհեստավորների ու բոստանչիների փոխհարաբերությունները, որոնց էլ ուզում ենք անդրադառնալ:

Քաղաքի բնակչության տարբեր խավերը՝ արհեստավորները, առևտրականները, հարուստ ձեռնարկատերերը, հողագործ բոստանչիները, խիստ աստիճանակարգված սոցիալական կարգավիճակ ունեին, չնայած նման շերտադասություն առկա էր նաև անմիջապես արհեստավորական խավում: Ըստ Արմենի՝ ավելի մեծ հեղինակություն ունեին ոսկերիչները, քան աղբյուրագործները, չնայած վերջիններս ևս կանգնած էին արհեստավորական ցուցակի վերին կարգերում: Դրա վկայությունն է այն, որ երբ վարպետ Մկրտիչը անցնում էր, «Խանութների մոտ հավաքված մարդիկ բառի կեսի վրա ընդհատելով խոսակցությունը, ակնածանքով բարևում էին նրան՝շափխաներն արագ հանելով, ապա միայն նրա անցնելուց հետո՝ դանդաղ ծածկելով»:[20]

Եթե քաղաքի արհեստավորական խավին մարմնավորում է ուստա Մկրտիչը, ապա Վարոսը ներկայացնում է բոստանչիներին: Ըստ էության, հողագործությամբ զբաղվողները բավականին ցածր կարգավիճակ ունեին, քանի որ Վարոսը, վարպետի ներկայությամբ իր ամենամեծ գործը համարում է նրան ծառայելը, իսկ նրա խոսքը՝ խիստ ծանրակշիռ: Այդ է պատճառը, որ նրան է դիմում իր համար կենսական նշանակություն ունեցող հարցի լուծման խնդրով: Նրանց երկուսի երկխոսության միջոցով ամբողջական պատկերացում կարելի է կազմել կյանքի, սիրո, մարդկային փոխհարաբերությունների, ընտանիքի, ազգային ավանդույթների ու դրանց պահպանման վերաբերյալ ալեքպոլցիների պատկերացումների մասին, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջացնելու քաղաքի պատկերը: Հատկանշական է, որ ազգային ավանդույթների կրողն ու պահպանողը դառնում է արհեստավորական խավը՝ հանձին ուստա Մկրտիչի, որի խոսքերում խտացված է ժողովրդի դարավոր ավանդույթը:

Վիպակում հպանցիկ անդրադարձ կա նաև քաղաքի ամուսնական սովորույթների, թաղման ծեսի, սեռերի փոխհարաբերությունների՝ գյումրեցի կանանց իրենց ամուսինների հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին և այլն, որոնք բոլորն էլ, անկախ տեղեկատվության չափից, շատ արժեքավոր են Ալեքսանդրապոլի ազգագրական ուսումնասիրության համար:

## ГОРОДСКОЙ БЫТ АЛЕКСАНДРОПОЛЯ В ПОВЕСТИ М. АРМЕНА "РОДНИК ЭГНАР"


*Резюме*

*К. Базеян*

**В статье повесть рассматривается как этнографический источник для исследования городского быта начала XXв. В повести представлены все стороны культуры и быта Александрополя: город-как поселение, городская архитектура, этнический и социально-профессиональный состав населения, семья и семейные отношения и т.д. Благодаря этим сведениям стало возможным подробно рассмотреть межэтнические отношения и иерархическую сущность профессиональных и социальных слоев населения.**


---

[18] *Կ. Ղ ա փ ա ղ ա ր յ ա ն, Մի փաստաթուղթ Ախալցխայի հայերի կենցաղի վերաբերյալ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, 3, էջ 175:*

[19] *Կ. Ս ե ղ բ ո ս յ ա ն, նշվ աշխ., էջ 176:*

[20] *Մ. Ա ր մ ե ն, Հեղնար աղբյուր, էջ 47:*

*Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ*

## *ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ*

Վերջին տասնամյակների ընթացքում Շիրակի մարզի հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքի արմատական փոփոխությունները նախալեռնային և լեռնային շրջաններում առաջացրել են այնպիսի հիմնախնդիրներ, որոնք նպաստում են բնակչության արտագաղթին և խոչընդոտում տնտեսության կայուն զարգացմանը: Ներկայումս Շիրակի զարգացման գլխավոր առանձնահատկություններն են տնտեսության բազմաճյուղայնությունը, կախվածությունն էներգակիրների ներկրումից, տնտեսության համախառն արդյունքում գյուղատնտեսական մթերքների արտադրության գերակշռությունը և միջշրջանային տնտեսական համեմատաբար թույլ կապերը: Հետխորհրդային տարիներին մեր հանրապետությունում նոր տնտեսական քաղաքականության իրականացումն ուղեկցվեց տնտեսության և բնակչության կենսամակարդակի սրընթաց անկմամբ: Համեմատելու համար նշենք, որ 1980-ական թվականներին մարզում արտադրվող ապրանքների համախառն ծավալը և արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվաքանակը բազմաթիվ անգամ գերազանցել է 2004թ. նույն ցուցանիշները: Տարածքային առումով մարզի բնակչության զբաղվածությունը կենտրոնացված էր քաղաքային բնակավայրերում և արդյունաբերական ձեռնարկություններում, իսկ 1990-ական թվականներից՝ գյուղական բնակավայրերում՝ գյուղատնտեսության մեջ և ոչ արտադրական ոլորտում (կրթություն, առևտուր, առողջապահություն և այլն): Ավերիչ երկրաշարժո՞վ, սոցիալ-տնտեսական բարեփոխումներո՞վ, հասարակարգի փոփոխումո՞վ, բնաաշխարհագրական գործոններո՞վ էր պայմանավորված Շիրակի մարզի ներկայիս տնտեսական ճգնաժամային վիճակը, թե՞ ԽՍՀՄ-ի լուծարման, էներգակիրների թանկության և շրջափակման հետևանքով տրանսպորտային հաղորդակցման ուղիներից օգտվելու դժվարության, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական սխալ քաղաքականության հետևանք է, որ գրեթե չեն գործում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները, և շարունակվում է աշխատունակ բնակչության արտագաղթը: Սույն հոդվածով կփորձենք պատասխանել վերը շարադրված հարցերին:

Որևէ երկրի կամ նրա վարչական միավորի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները հասկանալու և ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել նրա բնակչության տեղաբաշխումն ու զբաղվածությունը, էթնոժողովրդագրական պատկերը, տնտեսության ճյուղային կառուցվածքում նկատվող փոփոխությունները, բնակչության կենցաղի և կենսամակարդակի վիճակը:

Շիրակի մարզը տարածքի մեծությամբ (2684կմ$^2$) հանրապետությունում գրավում է 6-րդ տեղը, իսկ բնակչության թվով (283,1 հազ. մարդ) զիջում է Երևան քաղաքին ու Լոռու մարզին: Շիրակը տիպիկ լեռնատափաստանային երկրամաս է: Մակերևույթը թույլ է մասնատված, լեռնային թեքությունները մեծ չեն, ինչն էլ նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, հաղորդակցման ուղիների և բնակավայրերի կառուցապատմանը: Գյուղատնտեսական օգտագործման տեսակետից հարմար համարվող 0-15$^0$ թեքություն ունեցող հողահանդակները կազմում են Շիրակի մարզի տարածքի 95,4%-ը, սահմանափակ օգտագործվող (15-30$^0$) հողահանդակները՝ մոտ 4,1%, իսկ ոչ պիտանի (30$^0$-ից բարձր) հողահանդակները՝ 0,5%:[1] Մարզը մեր հանրապետությունում առանձնանում է տարածքի հիպսոմետրիկ համեմատաբար բարձր դիրքով՝ մակերևույթի ավելի քան 75%-ն ընկած է ծովի մակարդակից 1500-2500 մ բարձրության գոտում, իսկ 1400-1500մ բարձրության գոտում՝ ընդամենը 11,6%-ը:[2] Թվարկված գործոններն իրենց ազդեցությունն են թողել մարզի բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխ-

---

[1] *Հայկական ԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Եր., 1971, էջ 328:*

[2] ***Л. В а л е с я н, Производственно-территориальный комплекс Армянской ССР, Ер., 1970, стр. 156.***

ման և տնտեսական զբաղմունքների բնույթի վրա: Բնակչության մեծ մասը կենտրոնացված է Շիրակի դաշտում, որը մեր հանրապետության ամենախիտ բնակեցված տարածքներից է (2003թ. բնակչության միջին խտությունը կազմել է 108 մարդ կմ$^{2}$):[3] Միաժամանակ աչքի է ընկնում բնակչության անհամաչափ բաշխվածությամբ:

Շիրակը մեր հանրապետության ամենանպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք ունեցող մարզն է: Հայաստանը Սև ծովի նավահանգիստներին կապող միակ կարճ ավտոմայրուղին անցնում է այս մարզի տարածքով: Սակայն Գյումրի-Բաթումի ավտոմայրուղու Բավրա-Ախալցխա ճանապարհահատվածը գտնվում է անմխիթար վիճակում և կապիտալ վերանորոգման կարիք ունի: Որոշ մասնագետների կարծիքով, ավտոմայրուղու այդ ճանապարհահատվածի վերականգնման դեպքում ապրանքաշրջանառությունը Հայաստանի և արտասահմանյան երկրների միջև մոտակա երեք տարիների ընթացքում կավելանա ավելի քան 2,5 անգամ:[4] Իսկ դա նշանակում է մարզում նոր աշխատատեղերի բացում և արդյունաբերական որոշ ձեռնարկությունների վերաշահագործում: Իսկ Գյումրի-Կարս երկաթգծի վերաբացումը կապահովի հանրապետության երկաթուղային ամենակարճ կապը Եվրոպական և Մերձավոր Արևելքի երկրների հետ: Կարծում ենք՝ վերը նշված հաղորդակցման ուղիների անխափան աշխատանքը դրականորեն կնպաստի 1990-ական թթ. հանրապետությունից, այդ թվում նաև Շիրակից արտագաղթած բնակչության վերադարձին:

Շիրակի ուրբանիզացման մակարդակի վերջին տասնյոթ տարիների փոփոխությունների քննությունից պարզվում է, որ մարզից մեկնած բնակչության մեջ գերակշռողը քաղաքաբնակներն են եղել: 2004թ. հունվարի դրությամբ Շիրակի մարզի բնակչության 61,2 %-ը բնակվել է քաղաքներում, որից 53%-ը՝ Գյումրի քաղաքում:[5] Համեմատության համար նշենք, որ 1987թ. մարզի բնակչության 73,4%-ն է բնակվել քաղաքներում, որից 63,7%-ը՝ Գյումրիում (Լենինական):[6] Ինչպես տեսնում ենք, այդ տարիներին Շիրակի մարզում նկատվել է ուրբանիզացման մակարդակի անկում: Դա պայմանավորված է եղել մի շարք գործոններով. նախ՝ 1988թ. Սպիտակի երկրաշարժի բերած մարդկային կորուստներով, քանի որ միայն Գյումրի քաղաքում տարբեր հաշվարկներով զոհվածների թիվը կազմել է 15-17 հազ. մարդ:[7] Երկրորդ գործոնը 1995թ. Շիրակի մարզը կազմավորվելու ժամանակ Անիպեմզա և Պեմզաշեն քաղաքատիպ ավաններին գյուղական համայնքի կարգավիճակ տալն է, որը սակայն էական ազդեցություն չունեցավ մարզի քաղաքային բնակչության տեսակարար թվի փոփոխության վրա: Երրորդ՝ ամենակարևոր գործոնը, 1990-ական թվականների սկզբներին մեր հանրապետության, մասնավորապես Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերի տնտեսական խորը ճգնաժամն է, որը հանգեցրեց աշխատունակ բնակչության զանգվածային արտագաղթին: Այս բոլորի արդյունքում Շիրակի մարզի քաղաքային բնակչության 2004թ. (172,7 հազ. մարդ) բացարձակ թվաքանակը 1987թ. համեմատությամբ (265,2 հազ. մարդ) պակասեց 92,5 հազ. մարդով, այդ թվում Գյումրի քաղաքինը՝ 80,1 հազ. մարդով: Այսինքն՝ մարզի քաղաքային բնակչության թվաքանակի կրճատման 86,6%-ը բաժին է ընկել Գյումրի քաղաքին: Այդ տարիներին մարզի գյուղական բնակչության թվաքանակի փոփոխությունն ունեցել է հետևյալ պատկերը. 1988թ. Շիրակի գյուղական բնակչության թիվը կազմել 102,5 հազ. մարդ,[8] 2004թ. դրությամբ՝ 109,5 հազ. մարդ:[9] Այսինքն՝ այդ տարիներին մարզի գյուղական բնակչության թվաքանակն ավելացել է 7,0 հազ. մարդով կամ տարեկան միջին աճը կազմել է 0,4%: Ասենք, որ դա հանրապետության գյուղական բնակչության թվի աճի համար բավականին ցածր ցուցանիշ է: Մարզի գյու-

---

[3] *ՀՀ մարզերը թվերով, 1993-2003, Եր., 2004, էջ 287:*

[4] *Ջ. Ա ն դ ր ե ա ս ո ն, Հայաստանի արդյունաբերական արտադրության և զբաղվածության տարածքային ճյուղային միտումները 1999-2002թթ.: Տնտեսական քաղաքականություն և աղքատություն, 2003, N 5, էջ 9:*

[5] *ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 287-288:*

[6] *1989թ. համամիութենական մարդահամարի արդյունքները, Հայկական ԽՍՀ, Եր., 1991:*

[7] *Հ. Ս ա ր գ ս յ ա ն, Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, Ժողովրդագրական գործընթացները Գյումրի քաղաքում, Պատմաբանասիրական հանդես, N 2(160), Եր., 2002, էջ 234:*

[8] *Ա. Պ ո ղ ո ս յ ա ն, ՀՀ գյուղական տարբնակեցումը, Եր., 1999, էջ 149:*

[9] *ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 287:*

դական բնակչության թվաքանակի աճը բացատրվում է նաև նրանով, որ 1995թ. Պեմզաշեն և Անիպեմզա քաղաքատիպ ավանները ստացան գյուղական համայնքի կարգավիճակ: Այդ տարիներին Շիրակի մարզի գյուղական բնակչության ամենաակտիվ տեղաշարժեր դիտվել են Ամասիայի տարածաշրջանում, երբ հազարավոր ադրբեջանցիներ, հայ-ադրբեջանական բախումների հետ կապված, մեկնեցին Ադրբեջան:

Ամասիայի ենթաշրջանը մինչ աղետալի երկրաշարժն ունեցել է 19497 բնակիչ, 1994թ.՝ 13443[10] և 2004թ՝ 7,1 հազ.:[11] Այսինքն՝ այդ տարիներին տարածաշրջանի բնակչության թվաքանակը պակասել է 12,3 հազ. կամ 2,7 անգամ: Սակայն ադրբեջանցիների զանգվածային արտագաղթին զուգընթաց նկատվել է նաև հայերի ներգաղթ: Օրինակ տարածաշրջանի Պաղակն (Շուռաքաղ) գյուղը 1988թ. ուներ 292 բնակիչ, որոնց ճնշող մեծամասնությունը կազմել են ադրբեջանցիները,[12] 1989թ.՝ 55,[13] 2001թ.՝ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 39 մարդ (21 տղամարդ, 18 կին):[14] Այսինքն՝ 1988-2001թթ. գյուղի բնակչության թվաքանակը նվազել է 7,8 անգամ: Սակայն այդ տարիներին գյուղի բնակչության թվաքանակի ցուցանիշների փոփոխությունը տարբեր է եղել: 1990թ. Պաղակն գյուղում արդեն բնակվում էին Վրաստանի՝ Ախալքալակի և Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկա) շրջաններից եկած 300 հայ բնակիչներ,[15] որոնց զգալի մասը 1990-ական թվականներին հետ վերադարձավ իր սկզբնական բնակավայրը, մյուս մասը՝ բնակություն հաստատեց մարզի այլ գյուղական բնակավայրերում, Գյումրի քաղաքում, կամ մեկնեց Ռուսաստանի Դաշնություն:[16] Տարածաշրջանի մեկ այլ գյուղական բնակավայրից՝ Շաղիկից (Ղարաբուլաղ), 1989թ. 180 ադրբեջանցիների հեռանալուց հետո, այն վերաբնակեցվեց Նինոծմինդայի շրջանի գյուղերից և Բաղրամյանի տարածաշրջանի Դալարիկ գյուղից եկած 108 հայերով:[17] 2001թ. Շաղիկի բնակչության թվաքանակը կազմել է 85 մարդ (52 տղամարդ, 33կին)՝[18] 188 մարդով պակաս 1988թ. և հինգով պակաս 2000թ. թվից:[19]

Շիրակի մարզի գյուղական բնակչության տեղաշարժի դինամիկան ավելի պարզ կդառնա, եթե բնակչության թվաքանակի ցուցանիշների փոփոխությունը դիտարկենք ըստ տարածաշրջանների և բարձրության գոտիների: Շիրակի մարզը բաժանված է հինգ տարածաշրջանների (Ամասիա,Աշոցք, Ախուրյան, Արթիկ և Անի), որոնք խորհրդային տարիներին եղել են վարչական շրջաններ: Մարզի տարածաշրջանների բնակչության թվաքանակի փոփոխությունը 1988-2004թթ. ներկայացնենք աղյուսակով, որից երևում է, որ Շիրակի հինգ տարածաշրջաններից երկուսում (Ախուրյան և Արթիկ) դիտվել է բնակչության աճ, երկուսում (Անի և Աշոցք) աճն աննշան է եղել, իսկ մեկում՝ Ամասիայի տարածաշրջանում բնակչության թվաքանակը պակասել է: Վերջինիս բնակչության նվազման պատճառներին արդեն անդրադարձանք: Ախուրյան և Արթիկ տարածաշրջանների բնակչության թվաքանակի աճը, կարծում ենք, պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ տեղի բնակչությունը, ի տարբերություն քաղաքայինի, համեմատաբար ապահովված է եղել աշխատանքով: Երկրորդ՝ համեմատած Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանների, այստեղ ագրոկլիմայական պայմաններն ավելի բարենպաստ են և ջրային պաշարներով համեմատաբար ապահովված, սակայն մեկ շնչի հաշվով վարելահողերի չափով զիջում են վերը նշված տարածաշրջաններին:

Շիրակի մարզի տարածաշրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժի ցուցանիշները 1988 և 2004թթ.
(սկզբնաղբյուրները՝ Ա. Պոտոսյան, ՀՀ գյուղական տարաբնակեցումը, Եր. 1999թ. էջ 196, ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ. Եր. 2004թ. էջ 285- 291 )

---

[10] *Ա. Պ ո տ ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 196:*
[11] *ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 291:*
[12] *Մ. Մ ա ն ա ս յ ա ն, Շիրակի մարզ, Եր., 2002, էջ 124:*
[13] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Եր., 1998, էջ 293:*
[14] *ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները, Եր., 2003, էջ 186:*
[15] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Եր., 1998, էջ 29:*
[16] *ԴԷՆ, Գյումրի, 2004, տետր 5:*
[17] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Եր., 1998, էջ 29:*
[18] *ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները, Եր., 2003, էջ 186:*
[19] *Ա. Պ ո տ ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 196:*

*Աղյուսակ 1*

| Տարածաշրջանները | Բնակչության թիվը (հազ. մարդ) %-ը | | | | Տարբերությունը 2004թ. և 1988թ. հազ. մարդ |
|---|---|---|---|---|---|
| | 1988թ. | | 2004թ. | | |
| | հազ. մարդ | % | հազ. մարդ | % | |
| Ախուրյան | 38,1(33)* | 37,2 | 46,0(36) | 42,0 | +7,9 |
| Ամասիա | 19,5(26) | 19,0 | 7,1(26) | 6,5 | -12,4 |
| Անի | 12,6(16) | 12,3 | 14,8(20) | 13,5 | +2,3 |
| Աշոցք | 9,4(25) | 9,2 | 10,1(25) | 9,2 | +0,7 |
| Արթիկ | 22,9(22) | 22,3 | 31,5(23) | 28,8 | +8,6 |
| Ընդամենը | 102,5(122) | 100 | 109,5(128) | 100 | +7,0 |

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Ախուրյանի և Արթիկի տարածաշրջանների բնակչության թվաքանակը Շիրակի մարզի բնակչության տեսակարար թվաքանակում աճ է գրանցել: Եթե 1988թ. Ախուրյանի տարածաշրջանում բնակվել է Շիրակի մարզի գյուղական բնակչության ամբողջ թվաքանակի 37,2%-ը, Արթիկի տարածաշրջանում՝ 22,9%-ը, ապա 2001թ. նույն ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 42,0 և 28,8%: Այդ երկու տարածաշրջաններում գյուղական բնակչության թվաքանակի աճի հիմնական աղբյուրը, ըստ վիճակագրական ծառայությունների տվյալների վերլուծության, կազմել է բնական աճը: Սակայն պետք է նշենք, որ Արթիկի և Ախուրյանի տարածաշրջաններում դիտվել է ծնունդների թվի նվազում, և մահացածների թվի ցուցանիշը գրեթե չի փոփոխվել: Օրինակ՝ Արթիկի տարածաշրջանում 1987թ. ծնունդների թիվը կազմել է 1378 երեխա, 1991թ.՝ 1501, 1997թ.՝ 819 և 2003թ.՝ 456 երեխա: Ախուրյանի տարածաշրջանում նույն տարիներին ծնվել է համապատասխանաբար 1374, 1246, 650 և 387 երեխա:[20]

Այսինքն՝ այդ տարիներին Արթիկի տարածաշրջանում ծնունդների թիվը նվազել է 3,0 անգամ, իսկ Ախուրյանի՝ 3,5: Նույնն է պատկերը նաև մարզի մյուս տարածաշրջաններում և քաղաքային բնակավայրերում: XX դ. վերջին և XXI դ. սկզբներին Շիրակի մարզի բնակչության մահացության ցուցանիշների մեծությունում գրանցվել են աճի միտումներ, որն էլ հանգեցրել է բնական աճի անկմանը: Օրինակ Շիրակի մարզի գյուղական բնակչության բնական աճի գործակցի մեծությունը 1988թ. կազմել է 23,7‰, 2003թ.՝ 2,4‰:[21] Մարզի քաղաքային բնակավայրերում՝ համապատասխանաբար 17,2‰ և 0,3‰: Տեսնում ենք, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզի գյուղական բնակչության բնական աճի գործակցի մեծությունը նվազել է 9,8 անգամ, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 57,3 անգամ, այդ թվում Գյումրիում՝ 58,4 անգամ: Ժողովրդագրական ժամանակակից միտումների դեպքում կարող ենք փաստել, որ 2010-2015թթ. Շիրակում կդիտվի աշխատանքային ռեսուրսների խիստ պակասություն և կենսաթոշակառուների կտրուկ աճ: Այդ դեպքում մարզի աշխատաշուկայում կառաջանա լարվածություն, ինչն էլ բացասաբար կանդրադառնա տնտեսության հետագա զարգացման վրա:

Բնակչության տեղաշարժը բնութագրող մյուս կարևոր ցուցանիշը բնակչության թվաքանակի փոփոխության շարժի որոշումն է ըստ բարձրության գոտիների: Աղյուսակ 2-ից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզի՝ ծովի մակարդակից 1400-1800մ բարձրություններում բնակվող բնակչության թվաքանակն ավելացել է 7958 մարդով, կամ տարեկան միջին աճը կազմել է 1%: Իսկ 2001-2200մ բարձրությունում՝ բնակչության թվաքանակը պակասել է 1683 մարդով կամ տարեկան միջինը՝ 1,2%-ով:

Շիրակի մարզի 1988 և 2001թթ. գյուղական բնակչության բաշխվածության ցուցանիշներն ըստ բարձրության գոտիների

---

* *Փակագծում՝ գյուղական բնակավայրերի թվաքանակը:*

[20] *ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալներ:*

[21] *Նույնը:*

(սկզբնաղբյուրները՝ Մ. Մանասյան, Շիրակի մարզ, Եր. 2002, էջ 58, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները, Եր, 2003, էջ 186-192 )

Աղյուսակ 2

| Գյուղական բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների | 1988թ. | | 2001թ. | |
|---|---|---|---|---|
| | Բնակչ. թիվը (հազ. մարդ) | %-ը մարզի բնակչ. թվում | Բնակչ. թիվը (հազ. մարդ) | %-ը մարզի բնակչ. թվում |
| 1300-1600մ | 37744 | 36,8 | 41143 | 37,7 |
| 1601-1800մ | 24069 | 23,5 | 28628 | 26,2 |
| 1801-2000մ | 30284 | 29,5 | 30621 | 28,1 |
| 2001-2200մ | 10228 | 10,0 | 8545 | 7,8 |
| 2201 և բարձր | 170 | 0,2 | 192 | 0,2 |
| Ընդամենը | 102495 | 100 | 109129 | 100 |

Վերջին տասնամյակներին մեր հանրապետությունում նկատվում է բնակչության տեղաշարժ բարձրադիր լեռնային գոտիներից դեպի ցածրադիր գոտիներ: Սակայն Շիրակի մարզում այդ երևույթն այլ կերպ է ընթացել: Մարզի բարձրադիր գոտիներից բնակչության թվաքանակի նվազումը պայմանավորված է բացառապես 1988-1989թթ. Ամասիայի տարածաշրջանում բնակվող ադրբեջանցիների արտագաղթով և կապված չէ վերը նշված օրինաչափության հետ, որովհետև Աշոցքի տարածաշրջանից, որը հանրապետության բարձրադիր գոտում է ընկած, այդ տարիներին չի նկատվել բնակչության թվի նվազում:

Շիրակի ցածրադիր գոտու բակչության թվի աճն ապագայում մարզի գյուղատնտեսության զարգացման և բնակչության զբաղվածության հարցում պրոբլեմներ կստեղծի թե ոչ, դժվար է պատասխանել: Սակայն որոշակի պատկերացում կունենանք այդ հարցի վերաբերյալ, եթե պատասխանենք այն հարցին, թե ինչքանով է ապահովված մարզի գյուղական բնակչությունը գյուղատնտեսական հողահանդակներով: Շիրակի մարզի վարելահողերի 30,6%-ը (27,8 հազ. հա) տեղաբաշխված է Ախուրյանի ենթաշրջանում: 1988-2004թթ. ենթաշրջանում մեկ շնչի հաշվով վարելահողերի չափը պակասել է 0,2 հա, 1988թ. կազմել է 0,8 հա, 2004-ին՝ 0,6 հա: Նույն ցուցանիշները Ամասիայի ենթաշրջանում կազմել են 0,7 հա (1988թ.) և 1,8 հա (2004թ.), Անիի ենթաշրջանում՝ համապատասխանաբար 1,4 հա և 1,2 հա, Աշոցքի ենթաշրջանում՝ 1,4 հա և 1,3 հա, Արթիկի տարածաշրջանում՝ 0,8 հա և 0,6 հա:[22]

Բերված թվերից երևում է, որ 2004թ. մարզի գյուղական բնակչության մեկ շնչի հաշվով վարելահողերի չափը պակասել է այն ենթաշրջաններում, որտեղ նկատվել է բնակչության թվաքանակի աճ և հակառակը, ավելացել այն տարածաշրջաններում, որտեղ դիտվել է բնակչության թվաքանակի նվազում, այսինքն՝ այդ տարիներին մարզի վարելահողերի տարածքը չի ընդարձակվել: Այժմ գյուղատնտեսության հետագա զարգացման կարևոր խնդիրներից է վարելահողերի տարածքի ընդարձակումը, այլապես մենք ապագայում կունենանք այն պատկերը, ինչը քաղաքում է, այսինքն՝ ցածրադիր գոտու գյուղական բնակչության արտագաղթողների թվաքանակի աճ:

Արտադրության տեղաբաշխումը աշխատունակ բնակչության տեղաշարժերի վրա ազդող գործոններից է: Աշխատանքային ռեսուրսների և արտադրության տեղաբաշխումը ցույց է տալիս տվյալ տարածքի բնակչության թվաքանակի աճի կամ նվազման միտումները և որոշիչ դեր է խաղում բնակչության տարաբնակեցման վրա:[23] Բացի դրանից՝ աշխատունակ բնակչության թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է ոչ միայն բնակչության միգրացիայով, այլև տարիքային կազմի փոփոխությամբ: Ըստ 2001թ. Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի՝ Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերի մշտական բնակչության ամբողջ թվաքանակի

---

[22] *ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 291:*

[23] ***Е. Р у з а в и н а, Некоторые вопросы территориальной организации производства в связи использованием трудовых ресурсов, Народонаселение и экономика, М., 1967, стр. 157.***

24,8%-ն ունի մինչաշխատունակ տարիք, 61%-ը՝ աշխատունակ և 14,2%-ը՝ 60 և բարձր տարիքի են: Նույն ցուցանիշները Գյումրի քաղաքում կազմում են համապատասխանաբար՝ 24,8, 60,7 և 14,4 %,[24] այսինքն՝ քաղաքի բնակչության տարիքային կազմի հաշվեկշռի ցուցանիշը գրեթե չի տարբերվում մարզի քաղաքային բնակավայրերի նույն ցուցանիշից: Սակայն այլ է վիճակը մարզի գյուղական բնակչության տարիքային կազմի հաշվեկշռում: ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքով Շիրակի մարզի գյուղական մշտական բնակչության 29,5%-ը մինչաշխատունակ տարիքի է, 49%-ը՝ աշխատունակ և 21,6%-ը՝ 60 և բարձր տարիքի:[25] Բերված թվերից երևում է, որ քաղաքային բնակավայրերի մշտական բնակչության տարիքային կազմի հաշվեկշռում գերակշիռ տեղ է զբաղեցնում աշխատունակ, իսկ գյուղական բնակավայրերում՝ մինչաշխատունակ և կենսաթոշակային տարիքի բնակչությունը: Այսինքն, եթե մարզի քաղաքային բնակավայրերում դիտվում են բնակչության ծերացման միտում, ապա գյուղական բնակավայրերի բնակչությունն արդեն գտնվում է խոր ծերացման փուլում:

(Շարունակելի)

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ШИРАКСКОГО РЕГИОНА

*Резюме* — *А. Бояджян*

**Социально-экономическое развитие Ширакского региона и поднятие его роли в национальном хозяйственном комплексе зависит от осуществления целого ряда мероприятий.**

**В статье на примере области выявляются некоторые факты, связанные с расселенеием населения по административным территориям, закономерность размещения населенных пунктов по высотной поясности и по численности населения, тенденция к старению населения, миграционное движение, проблема малых населенных пунктов и др.**

[24] *ՀՀ ԱՎԾ, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (Շիրակի մարզի ցուցանիշները), Եր., 2003, էջ 85:*

[25] *Նույն տեղում, էջ 83-84:*

*Թերեզա ՇԱՀՎԵՐԴՅԱՆ*

## *ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ*

Վերիմաստավորումը (ռուս. **транспозиция, переосмысление**) լեզվառճական այն երևույթն է, երբ լեզվի կառուցվածքային միավորները կիրառվում են իրենց համար անսովոր, հաճախ հակադիր քերականական նշանակությամբ՝ արդյունքում ձեռք բերելով ոճական զգալի արտահայտչականություն:[1] Վերիմաստավորման ժամանակ առաջին հերթին գործ ենք ունենում միմյանց հետ իմաստային կամ շարույթային որոշակի հարացույց կազմող լեզվական ձևերի հետ, որոնք ոճական որոշակի համատեքստում կարող են գործածվել մեկը մյուսի փոխարեն: Այդպիսի հարացույց են կազմում,մասնավորապես, հաստատական և ժխտական նախադասությունները: Թեև հաստատական նախադասություններն առաջին հերթին կիրառվում են որևէ իրողություն կամ երևույթ հաստատելու, իսկ ժխտական նախադասությունները՝ դրանք բացասելու նպատակով, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես ոճական նպատակներով հաստատական իմաստ կարելի է արտահայտել ժխտական շարահյուսական կառույցների օգնությամբ և ընդհակառակը: Դասական գրաբարում նման ուշագրավ լեզվական իրողությունների հաճախակի ենք հանդիպում:

Ժխտական նախադասությունների միջոցով գրաբարում հաստատական ընդրիմաստ արտահայտվում է մի քանի եղանակով: Համեմատաբար պարզ կառուցվածք ունեն այն վերիմաստավորվող նախադասությունները, որոնց կազմում ժխտական բայի կամ մասնիկի հետ համաժամանակ հանդես են գալիս քերականական այնպիսի միավորներ, որոնք հակադրվում են ժխտական բայաձևով ստորոգյալի քերականական իմաստին՝ նրան բովանդակային պլանում հաստատական երանգ վերագրելով: Այսպես, *Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց մի Աստուած Հայր /Ղուկ.,ԺԸ,19/:*Ընդգծված նախադասությունում *չիք ոք բարի* նախադասության ժխտական բովանդակությանը հակադիր իմաստ է հաղորդում *բայց* նախադրությունը, որը, ի տարբերություն համանուն և ներհակական իմաստ արտահայտող *բայց* համադասական շաղկապի, այս համատեքստում կիրառվել է *բացի* կապական ձևիմաստով՝ բովանդակային պլանում հաստատական բնույթ հաղորդելով այս լեզվական կառույցին. *Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. միայն մի Աստուած Հայր է բարի:* Ինչպես տեսնում ենք, փոխակերպման արդյունքում ժխտական ստորոգյալին ու *բայց* կապական բառին փոխարինման են գալիս դրական համապատասխան բայաձևն ու *միայն* սահմանափակման իմաստ արտահայտող եղանակավորող բառը: Բերենք այսպիսի կաղապարների մի քանի օրինակ. *Եւ ասէ ցնոսա Յիսուս. ոչ է մարգարէ անարգ, բայց եթէ ի գաւառի իւրում, եւ յազգատոհմի, եւ ի տան իւրում /Մարկ.,Զ,4/: Եւ ո՛չ ինչ գոյր ի տապանակին, բայց երկու տախտակքն քարեղէնք /Բ Թագ.,Ը,9/:* Հետաքրքիր է, որ գրաբարում հանդիպում են նաև այնպիսի ժխտական նախադասություններ, որտեղ *բայց* կապն ու *միայն* եղանակավորիչը հանդես են գալիս համատեղ. *Եւ տեսեալ թզենի մի ի վերայ ճանապարհին, եկն ի նա, եւ ոչինչ եգիտ ի նմա՝ բայց միայն տերեւ /Մարկ.,ԺԱ, 13/: Եւ մտեալ ի տուն՝ ոչ զոք եթող մտանել բայց միայն զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս /Ղուկ.,Ը,51/:Ամբարձին զաչս իւրեանց եւ ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս /Մատթ.,ԺԷ,8/:* Այս և նման դեպքերում վերիմաստավորված դրական կառուցվածքներում այլևս լրացուցիչ եղանակավորող բառ չի ավելանում, պարզապես վերանում են *բայց* կապական բառն ու ժխտական մասնիկը /*միայն տերեւ եգիտ ի նմա* /:

Ուշագրավ է, որ երբեմն հիշատակված կառույցի փոխարեն գործածվում է *անցյալ դերբայ+ոչ+բայց* քերականական կաղապարը՝ մասնավորապես ծավալուն դերբայական դարձվածի կազմում. *Եւ էի ես ի մեծի հինգշաբաթօջն ի զատկի աղուհացիցն ի հսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյին պաշտաման՝ սրբոյ եւ մեղսաքաւիչ*

---

[1] *Թ. Շ ա հ վ ե ր դ յ ա ն, Պարզ նախադասության կազմության ոճական վերիմաստավորումը գրաբարում, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2005, 1, էջ 28:*

*խորհրդոյ կենարարին, ճաշակեալ այլ բնաւ աւելի ինչ ոչ՝ բայց հաց եւ ջուր եւ աղ, ըստ կանոնելոյ մեծի /Փարպ.,28/:* Պարզ է, որ փոխակերպման արդյունքում այստեղ գործ ենք ունենալու նույնպես դերբայական դարձվածի հետ՝ առանց ժխտական մասնիկի ու *բայց* կապի, սակայն *միայն* եղանակավորիչի պարտադիր ներկայությամբ՝ *Եւ էի ես ի մեծի հինգշաբաթօջն ի զատկի աղուհացիցն ի հսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյին պաշտաման՝ սրբոյ եւ մեղսաքաւիչ խորհրդոյ կենարարին, ճաշակեալ միայն հաց եւ ջուր եւ աղ, ըստ կանոնելոյ մեծի:*

Երբեմն *բայց* կապական բառի փոխարեն միևնույն լեզվաոճական գործառույթով գործածվում է վերջինիս *բաց* շարահյուսական համանիշը. այսպես՝ *Եւ մատուցեալ բազում աղօթիւք խնդրուածոց հայցէր ի Տէր Աստուած Իսրայէլի՝ եւ ասէր. Տէր իմ եւ թագաւոր մեր, դու միայն օգնեա՛ ինձ միայնումս. որ ոչ ունիմ ինձ օգնական բաց ի քէն /Եսթեր,ԺԴ,3/; Եւ սա ասէ, որպէս ասացերդ եղիցի. զի գիտասցես եթէ չիք այլ ոք ի բաց ի տեառնէ աստուծոյ մերմէ /Ելք,Ը,10/: Եւ ոչ էր քաղաք զոր ոչ մատնեաց տէր որդւոցն Իսրայէլի, բաց ի խեւացւոցն որ բնակեալ էր ի գաբաւոն. զամենեսին առ պատերազմաւ /Յեսու,ԺԱ,19/:* Վերջին դեպքերում արտահայտման պլանի բովանդակային վերիմաստավորման ժամանակ այստեղ իրականացվում են նույն լեզվական ձևափոխությունները, ինչ որ *բայց* կապի կիրառության պարագայում:

Բացառման քերականական իմաստ արտահայտող մյուս կապական միավորները նույնպես ունակ են նմանատիպ ոճական-շարահյուսական վերիմաստավորման գործառույթի նախապայման հանդիսանալու անշուշտ, նախադասության ստորոգելիական գլխավոր անդամի ժխտական կառուցվածքի պարագայում: Այսպես՝ *Եւ նոքա են որ առնեն զհանդերձս արանց, եւ նոքօք զարդարին եւ փառաւորի մարդիկ. եւ ոչ է հնար առանց նոցա լինել մարդկան /Եզր.,Դ,17/* կառույցում ընդգծված ժխտական նախադասության իմաստը նույնպես բովանդակային պլանում հակադիր նշանակություն է ստանում *առանց* բացառման կապի գործառության արդյունքում *Միայն նոքօք է հնար լինել մարդկան*: Ահա նման այլ օրինակներ. *Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփ. ահաւասիկ ես Փարաւոն. առանց քո ոչ ոք համբարձէ զձեռս իւր եւ զոտս իւր ի վերայ ամենայն երկրիս Եգիպտացւոց /Ծն.,ԽԱ,44/: Վկայ սուտ՝ առանց պատժի ոչ լիցի /Առակ.,ԺԹ,5/: Ոչ է հնար մեզ առանց ձեր, եւ ոչ զաւակի մերում՝ երբէք պատահել փրկութեան եւ կեալ /Փարպ.,58/: Բայց առանց հաւատոց՝ անհնար է հաճոյ լինել /Եբր., ԺԱ,6/:*

Ուշագրավ են նաև այն շարահյուսական կառույցները, որտեղ *առանց* կապական միավոր պարունակող ժխտական նախադասության հետ միաժամանակ իմաստային կրկնության գործառույթով օգտագործվում է այդ քերականական կաղապարի վերիմաստավորված տարբերակը՝ համապատասխան հաստատական նախադասությունը, որի առկայությունն ավելի ակնառու է դարձնում նախադասության բովանդակությունը. Եւ այնպիսի *առակօք խօսէր ընդ նոսա* զբանն, որպէս կարող լինէին լսել. եւ *առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա* /Մարկ.,Դ,33/: *Ամենայն ինչ նովաւ եղեւ. եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ՝ որ ինչ եղեւն* /Յովհ.,Ա,3/: *Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն. եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա* /Մատթ.,ԺԳ,34/:

Համեմատաբար պարզ վերիմաստավորված շարահյուսական կառույցներից է նաև նվազասույթը /ռուս.литота/՝ լեզվաոճական այն արտահայտչամիջոցը, որն այս կամ այն հատկանիշի ձևական ժխտման միջոցով հաստատագրում է հակիմաստ հատկանիշի առկայությունը (*ոչ գեղեցիկ – տգեղ, ոչ վատ- լավ)*: Այս շարահյուսական հնարն անհրաժեշտ է տարբերակել նվազաբանությունից. վերջինս բառային պատկերավորման միջոց է, չափազանցության հակառակ երևույթը, երբ բառային միջոցների օգնությամբ թուլացվում, նվազեցված է ներկայացվում առարկայի այս կամ այն հատկանիշը: Ի տարբերություն նվազաբանության՝ նվազասույթն ունի միանգամայն որոշակի շարահյուսական կառուցվածք՝ *ժխտական մասնիկ + հատկանիշ արտահայտող բառ,* այդ պատճառով այն պատկանում է շարահյուսական արտահայտչամիջոցների թվին:[2] Գրաբարում այս վերիմաստավորման եղանակը հաճախակի է կիրառվել. այսպես՝ *Ոչ է բարւոք լուրն զոր ես լսեմ /Ա Թագ.,Բ,24/: Չէ բարի բանդ զոր արարեր /Ա*

---

[2] *Նվազասույթի մասին ավելի մանրամասն տե՛ս **М. Кузнец, Ю. Скребнев, Стилистика английского языка.- Ленинград, 1960:***

*Թագ.,ԻՁ,16/: Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր /Յովհ.,ԺԳ,16/: Անառակ է գինի՝ եւ թշնամանօղ արբեցութիւն. եւ ամենայն որ խառնակի ընդ նոսա՝ չէ իմաստուն /Առակք,Ի,1/:* Բովանդակային պլանում մեջբերված նվազասույթները վերածվում են միանգամայն հաստատական նախադասությունների, որտեղ ժխտական մասնիկը կորչում է, իսկ հատկանիշ արտահայտող բառի փոխարեն հանդես է գալիս նրա հականիշը. *Չար է լուրն զոր ես լսեմ, Փոքր է ծառայ քան զտէր իւր:* Չնայած երկու տարբերակների բովանդակային հարթությունների նույնականությանը՝ նվազասույթներն ավելի արտահայտիչ ու պատկերավոր են հաղորդում հեղինակի միտքը, քան նրանց վերիմաստավորված կառույցները: Հետաքրքիր է, որ գրաբարում ոճական կրկնության նպատակով այս տարբերակները երբեմն հանդես են գալիս համատեղ՝ միևնույն նախադասության կազմում. *Գործակից է առն իւրում ամենայն բարեաց կենաց՝ եւ ոչ չարեաց /Առակք, ԼԱ,12/: Առեալ զկրակարանն՝ վարեցին ի ջուրսն զկրակսն, որպէս ի գիրկս եղբօր, ըստ ասելոյ սուտ վարդապետացն Պարսից. զոր ըմբռնեալ ջրոցն թշնամաբար եւ ոչ եղբայրաբար՝ ծախեցին /Փարպ.,63/:*

Հաստատական լեզվաոճական նրբիմաստ արտահայտելու համար գրաբարում լայնորեն կիրառվել են ժխտական բաղադրիչներով բարդ ստորադասական նախադասություններ, որտեղ կրկնակի ժխտման արդյունքում ուրվագծվում է ողջ բարդ նախադասության դրական բովանդակությունը: Այսպես՝ *Բայց այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ՝ աղօթիւք եւ պահովք /Մատթ.,ԺԷ,20/:* Արտահայտման պլանում գործ ունենք մի բարդ ստորադասական կառույցի հետ, որտեղ երկրորդական նախադասության մեջ նշվում է այն պայմանը, որի իրագործման դեպքում հնարավոր է դառնում գլխավոր նախադասությունում նկարագրվող գործողության իրականացումը: Դժվար չէ նկատել, որ սոսկ ձևական տեսանկյունից է այս բարդ քերականական ամբողջությունը ժխտական տեսք ստացել, իսկ բովանդակային պլանում այն միանգամայն հաստատական պարզ նախադասություն է՝ *Բայց այս ազգ միայն աղօթիւք եւ պահովք ելանէ:* Թեև շարահյուսական համանիշներ հանդիսացող այս երկու նախադասությունները արտահայտում են միևնույն բովանդակությունը, սակայն լեզվաոճական արտահայտչականության, հաղորդակցման գործընթացում ներազդելու ունակության դիտանկյունից նրանք զգալիորեն տարբերվում են միմյանցից. առաջին կառույցը երկրորդի համեմատությամբ ավելի արտահայտիչ ու ազդեցիկ է՝ շնորհիվ նրանում առկա ժխտական նախադասությունների կիրառության, որոնց իմաստը բովանդակային պլանում կարելի է արտահայտել *միայն* սահմանափակման եղանակավորիչ պարունակող պարզ նախադասությամբ: Ահա նմանատիպ կառույցի այլ օրինակ. *Ոչ ոք գիտէ զՀայր՝ եթէ ոչ Որդի, որպէս եւ զՈրդի ոչ ոք գիտէ՝ եթէ ոչ Հայր /Ագաթ.,424/:* Ավելի բարդ շարահյուսական կառույցներում ժխտական կառուցվածքի բարդ ստորադասական նախադասությանը բովանդակության պլանում նույնպես համապատասխանում է բարդ ստորադասական, բայց արդեն դրական կաղապարավորում ունեցող նախադասության. *Եթէ ոք՝ գայ առ իս, եւ ոչ ատեայ զհայր իւր եւ զմայր, եւ զկին եւ զորդիս, եւ զեղբարս եւ զքորս, նա՝ եւ զանձն եւս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել /Ղուկ.,ԺԴ,26/:* Սրան իմաստային առումով շարահյուսորեն համապատասխանում է *Եթէ ոք՝ գայ առ իս, եւ ատեայ զհայր իւր եւ զմայր, եւ զկին եւ զորդիս, եւ զեղբարս եւ զքորս, նա՝ եւ զանձն եւս իւր, կարէ իմ աշակերտ լինել* հաստատական նախադասությունը: Նման կերպ է վերիմաստավորվում նաև հետևյալ նախադասությունը. *Եւ նա՝ ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ ոք է՝ որ եթող զտունս, կամ զծնօղս, կամ զեղբարս, կամ զկին, կամ զորդիս՝ վասն արքայութեան Աստուծոյ, եթէ ոչ առնուցու բազմապատիկի ժամանակի յայսմիկ /Ղուկ.,ԺԸ, 29/:*

Այս շարահյուսական կառույցը կարող է հանդես գալ նաև փոքր-ինչ այլ տարբերակով՝ *եթէ* -ի փոխարեն նույն քերականական իմաստն արտահայտող *թէ* շաղկապով. նման դեպքերում վերիմաստավորման գործընթացում փոխակերպումը էական փոփոխություններ չի կրում. *Քանզի ոչ ոք պսակի ընդ ընկերաց իւրոց՝ թէ ոչ տանջի. այլ իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձէ զհողեղէնսն եւ զյաւիտենականսն /Փարպ.,68/: Թէ ոչ քրտնեսցի մշակն ի տապ խորշակի ջերմոյն արեգակնակէզ լինելով՝ ոչ ըմբռնէ զարդիւնս շայեկանս ուրախութեան պտղոցն ձմերայնւոյն հանգստեան /Ագաթ.,105/:*

Բացի կրկնակի ժխտման եղանակից՝ գրաբարի բարդ նախադասություններում առկա է մեկ այլ շարահյուսական կաղապար, որի օգնությամբ վերիմաստավոր-

վում է ողջ նախադասության արտահայտած իմաստը. այն հանդես է գալիս *ոչ/չէ/.., մինչեւ...* կաղապարով: Այս դեպքում համադաս նախադասություններից մեկում ժխտվում է որևէ գործողության կամ հատկանիշի առկայությունը, այնինչ մյուս նախադասության մեջ մատնանշվում են հանգամանքներ, որոնց առկայության դեպքում նախորդ նախադասության բովանդակությունը զրկվում է ժխտական իմաստից: Այսպես. *Ոչ թողից զքեզ մինչեւ արարից զամենայն ինչ զոր խօսեցայ ընդ քեզ /Ծն.,ՀԸ,15/: Եւ է երբեք զի մին փախուցեալ երթայցէ անձնապուր ուրեք զկեանս անձինն շահել, և միւսն ցասմամբ բորբոքեալ՝ սրով զկնի ընթացեալ, ոչ դադարէ՝ մինչեւ յագեցուցանէ զցասումն /Եզն.,19/:* Մեջբերված օրինակներից ակնհայտ է, որ առաջին նախադասության մեջ դրսևորվող ժխտական բովանդակությունը որոշակի պայմանների առկայության դեպքում կորցնում է իր շարահյուսական բացասման իմաստը: Շատ դեպքերում նման ժխտական կառույցի օգնությամբ, համեմատած հաստատական բնույթի նախադասության հետ, ավելի շեշտադրված է ներկայացվում երկրորդ նախադասության մեջ պարունակվող պայմանի, հանգամանքի, ցանկության իրականացման կարևորությունը. հմմտ՝ *Յորժամ արարից զամենայն ինչ զոր խօսեցայ ընդ քեզ՝ թողից զքեզ: Դադարէ յորժամ յագեցուցանէ զցասումն:* Ինչպես նկատում ենք, վերիմաստավորման արդյունքում բարդ հաստատական նախադասությունը փոխակերպվում է թեև նույնպես բարդ, սակայն այս անգամ արդեն պայմանի պարագա ստորադասական նախադասության: Հիմնականում ժամանակային իմաստ արտահայտող *յորժամ* շաղկապն այս իրավիճակներում առավելապես կատարում է պայմանական շաղկապի գործառույթ՝ չկորցնելով իր ժամանակային իմաստային երանգները: Պայմանական շաղկապների առանձնահատկությունների քննարկման ժամանակ, խոսելով արդի հայերենում *յորժամ*-ին համանիշ *երբ* շաղկապի մասին՝ Գ.Գարեգինյանն իրավացիորեն նկատում է. «Այս շաղկապի օգտագործմամբ հաճախ ժամանակի նշանակությունը լրացուցիչ պայմանի երանգ է ստանում: Երբեմն այդ երանգն այնքան է ընդգծվում, որ ընկալվում է որպես հիմնական»:[3] Բերենք դասական գրաբարում այս շարահյուսական կառույցի կիրառության ևս մի քանի օրինակ. *Ոչ վրիպէր բան սրբոյն, մինչեւ կատարէր ամենայն /Փարպ., 77/: Նզովք են ի ձեզ Իսրայէլ. ոչ կարիցէք կալ առաջի թշնամեաց ձերոց, մինչեւ բառնայցէք զնզովսն ի ձէնջ /Յեսու,Է,13/: Եւ նա ասէ. ոչ կերայց մինչեւ խօսեցայց զբանս իմ /Ծն.,ԷԴ,33/:*

Գրաբարի քերականական համակարգում ուշագրավ դերակատարում ունի *մինչչեւ /մինչ չեւ/* շաղկապական միավորը, որն ունի բարդ կառուցվածք և ձևականորեն իր մեջ ժխտական մասնիկ է պարունակում (*մինչ + չէ, մինչ + ոչ*): Այս հանգամանքի շնորհիվ *մինչեւ*-ը հաճախ է կիրառվում կրկնակի ժխտման արդյունքում դրական վերիմաստավորման ոճական գործառույթի իրականացման նպատակով: Այսպես. *Ոչ են կամք իմ ի դոսա, մինչչեւ խաւարեալ իցեն արեգակն՝ եւ լոյս՝ եւ լուսին՝ եւ աստեղք, եւ դարձցին ամպք զկնի անձրեւաց /Ժող.,ԺԲ,2/: Ոչ կոչեմ զՏուբիա զորդի իմ, եւ ցուցանեմ նմա զամենայն մինչչեւ մեռեալ իցեմ /Տովբիթ,Դ,1/:* Դժվար չէ նկատել, որ այսպիսի շարահյուսական կառույցները նույնպես, արտահայտման պլանում իրենց մեջ կրկնակի ժխտական համադասական նախադասություններ պարունակելով հանդերձ, բովանդակային պլանում ներկայանում են որպես հաստատական բնույթի բարդ ստորադասական նախադասություններ:

Մինչ այժմ հիմնականում դիտարկում էինք գրաբարի ժխտական նախադասությունների վերիմաստավորման դեպքերը, որոնց արդյունքում այդ շարահյուսական կառույցները հաստատական երանգ էին ստանում: Սակայն գոյություն ունի նաև հակառակ երևույթը՝ երբ հաստատական նախադասություններն են հիմք ծառայում ժխտական բովանդակային նրբիմաստներ արտահայտելու համար: Ինչպես իրավացիորեն նկատել է Ն. Պառնասյանը, երբ հեղինակը նկարագրում է անցյալում տեղի չունեցած, սակայն իր համար ցանկալի երևույթներ ու գործողություններ՝ դրական բայ - ստորոգյալի օգնությամբ կարող է ժխտական նախադասության իմաստ արտահայ-

---

[3] *Գ.Գ ա ր ե գ ի ն յ ա ն, Ժամանակակից հայոց լեզու. Բարդ նախադասություն, Եր., 1984, էջ 263:*

տել:[4] Մասնավորապես, դասական գրաբարում այդ նպատակով հաճախ կիրառվում է *երանի* զգացական եղանակավորիչը, որի օգնությամբ խոսելով անցյալի իրադարձությունների մասին՝ խոսողն անուղղակիորեն մատնանշում է դրանց չիրականացված լինելու հանգամանքը: Այսպես. *Երանի թէ կարէի զանձն իմ վարժել /Յովբ,Լ,24/:* Բովանդակային պլանում համարժեք է *Ոչ կարեցի զանձն իմ վարժել* նախադասությանը: Նմանատիպ այլ օրինակներ. *Երանի թէ թագավորէիք /Թուղթ առ Կորնթ.,Դ,8/: Երանի թէ մօտակտուր իսկ լինէին /Թուղթ առ Գաղ.,Ե,12/:*

Ինչպես տեսնում ենք, հաստատական և ժխտական նախադասությունների վերիմաստավորումները գրաբարյան լեզվական գանձարանի հարստություններից են, որոնք ավելի ճոխ ու գրավիչ են դարձրել մեր հնամենի ոսկեղենիկ լեզուն:

## ТРАНСПОЗИЦИЯ УТВЕРДИТЕЛЬНЫХ И ОТРИЦАТЕЛЬНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

**___ *Резюме* ___** **___ *Т. Шахвердян* ___**

**В статье рассматриваются особенности транспозиций утвердительных и отрицательных предложений в древнеармянском языке. Как известно, во время транспозиции языковой элемент используется в значении противоположного элемента своего парадигматического ряда, вследствии чего он приобретает дополнительную эмоциональность и экспрессивность. По сравнению с утвердительными предложениями отрицательные конструкции обладают более сильным лингвостилистическим эффектом. По этой причине для выражения утвердительных стилистических смыслов часто употребляются отрицательные предложения. В статье рассматриваются также основные типы транспозиций утвердительных и отрицательных предложений в древнеармянском языке.**

---

[4] *Ն. Պ ա ռ ն ա ս յ ա ն, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970, էջ 82:*

*Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

## *ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԱԾԱԿԱՆ // ՄԱԿԲԱՅ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ*

Գրաբարի բառային կազմի բառաքերականական իմաստների համաժամանակյա քննությունը ցույց է տալիս, որ լեզվի այդ գոյավիճակում կան զգալի թվով բառեր, որոնք համատեղում են մեկից ավելի խոսքիմասային արժեքներ: Այդ կարգի բառերը մասնագիտական գրականության մեջ կոչվում են *խոսքիմասային տարարժեք* բառեր, իսկ քերականական իրողությունը՝ *խոսքիմասային տարարժեքություն*:[1]

Գրաբարի խոսքիմասային տարարժեք բառերի մեջ զգալի քանակ են կազմում այն բառերը, որոնք համատեղում են ածական//մակբայ ձևաբանական նշանակություններ: Հայերենում ածականն ու մակբայը ցուցաբերում են ձևաբանաշարահյուսական որոշակի աղերսներ, որ պայմանավորված է նրանց բառական ընդհանուր իմաստով, այն է՝ հատկանիշի ընդհանուր գաղափար արտահայտելով: Այս առումով հատկանշային բառիմաստով բնութագրվող արմատական բառույթները կարող են հանդես գալ ինչպես որոշչային ու ստորոգելիական, այնպես էլ պարագայական գործառույթներով:[2] Այս կարգի բառերը գրաբարում կա՛մ ժառանգություն են նախագրային հայերենից, կա՛մ գրաբարյան նորագոյացություններ են: Հարցի այդ կտրվածքով քննությունն առանձին ուսումնասիրության նյութ կարող է լինել[3]:

Հայերեն արմատական ածականների գործառական տարարժեքությունը լուծվում է ոչ թե ձևաբանորեն, այլ շարահյուսորեն, քանի որ արմատական ածականն ու մակբայը արտաքուստ ձևաբանական տարբերակիչ ձևույթներ չունեն: Ածականի մակբայական արժեքը պայմանավորված է ոչ թե նրա որոշչային (գոյորոշ), այլ ստորոգելիական գործառույթով:[4]

Ած.//մկբ. տարարժեքություն ցուցաբերող բառերը կարելի է քննել՝ կատարելով տարբեր կարգի խմբավորումներ, ինչպես՝ ըստ ծագման աղբյուրի, ըստ խոսքիմասային կաղապարների, ըստ կառուցվածքային գործոնի, ըստ իմաստային-թեմատիկ խմբերի և այլն: Իբրև կարևոր գործոն՝ նկատի ենք առնում այդ կարգի բառերի արտահայտության պլանը՝ բառակազմական կաղապարները: Ըստ այդմ, նման բառերը բաժանվում են պարզ, բարդ և ածանցավոր տեսակների:

Սույն հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք միայն պարզ կամ արմատական բառերի տարարժեքությանը: Քննության ընթացքում կփորձենք կատարել նաև ներքին իմաստային խմբավորումներ, որ ենթադրում է այդ կարգի բառերի բովանդակային պլան քննություն:[5]

Արմատական բառերը, որոնք համատեղում են ած. // մկբ. արժեքներ, մեծ մասով ածականներ են, ընդ որում՝ որակական: Դրանք զգալի տոկոս են կազմում գրաբարի բառային կազմում: Քննության համար մենք կդիտարկենք դրանց մի մասը միայն:

Այդ կարգի բառերից են.

| | | | | |
|---|---|---|---|---|
| աղօտ | թանձր | կազմ | մոլոր | պայծառ |
| առողջ | թեթեւ | կայտառ | յաղթ | պատշաճ |

---

[1] *Տե՛ս Լ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985, էջ 32-33: Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., 1996, էջ 39: Գ. Ջահուկյանն այդ կարգի բառերն անվանում է երկակի և եռակի գործածություն ունեցող բառեր՝ «երկգործառույթ և եռագործառույթ բառեր» (տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 526-527):*

[2] *Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 527:*

[3] *Տե՛ս Լ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 5-10:*

[4] *Լ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Խոսքիմասային տարարժեքությունը…, էջ 120:*

[5] *Տարարժեք բառերի ներքին իմաստային խմբավորումներ կատարելիս օգտվել ենք Գ. Ջահուկյանի առաջարկած սկզբունքներից, որոնք կիրառելի են ինչպես պարզ, այնպես էլ բարդ և ածանցավոր բառերի պարագային (Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 82-102):*

| | | | | |
|---|---|---|---|---|
| առոյգ | թիւր | կանուխ | յաճախ | պարզ |
| ամուր | ժիր | կարճ | յամառ | պերճ |
| ամփոփ | լայն | կշիռ | յամր | պինդ |
| անազան | լաւ | կոյր | յար | պիրկ |
| անոյշ | լի | հակիրճ | յաւէտ | սակաւ |
| արագ | լուռ | հանդարտ | յոյժ | սերտ |
| արդար | լուրջ | հարթ | յոռի | սուտ |
| արձակ | խախուտ | հաւասար | յստակ | սուր |
| բազում | խաղաղ | հեզ | յօժար | սուրբ |
| բարի | խառն | հեռի | նոր | ստոր |
| բարկ | խիստ | հպարտ | նուազ | վատ |
| բարձր | խիտ | ձրի | նուրբ | վիատ |
| բիւր | խոժոռ | ճարտար | շատ | վաղ |
| բուռն | խոլ | ճշմարիտ | շուայտ | վառ |
| գաղտ | խոնարհ | մանր | շտապ | տրտում |
| դաշն | խոտոր | մարմանդ | ուղիղ | ցած |
| դառն | խոշոր | մեծ | ուրախ | ցոփ |
| երկար | խոր | մեղմ | ուշ | քաղցր |
| զգոյշ | խրոխտ | մերձ | չար | քաջ |
| զոյգ | ծածուկ | մերկ | չքնաղ | քնքոյշ |
| էժան | ծանր | միշտ | պակաս | օտար |

Կատարելով ած. // մկբ. տարարժեք բառերի ներքին իմաստային խմբավորումներ՝ կարելի է առանձնացնել հետևյալ իմաստներն ունեցող բառախմբերը՝ որակային, զգայության աստիճանի, չափի և այլն: Այս կարգի բաժանումները բացարձակ չեն, այլ հարաբերական են. կան նաև բառեր, որոնք միաժամանակ կարող են բավարարել երկու տարբեր խմբերի ներկայացվող պահանջները:

1) *Որակական հատկանիշ* արտահայտող բառերը ածականի արժեքով լրացնում են առարկայանիշ գոյականների: Արմատական այդ ածականները կարելի է խմբավորել ըստ լրացյալի բառիմաստային հատկանիշի: Ըստ այդմ կստանանք արմատական ածականների խմբեր, որոնք լրացնում են՝

ա) իրանիշ գոյականների,

բ) թե՛ իրանիշ, թե՛ անձնանիշ գոյականների:[6]

Ա. Իրանիշ գոյականների լրացնում են հետևյալ արմատական ածականները՝ *աղօտ, ամուր, արձակ, բարկ, գաղտ, դաշն, երկար, թանձր, խախուտ, խիտ, խոշոր, խոտոր, խոր, ծածուկ, հարթ, մանր, յստակ, յօժար, նոր, նուրբ, ուղիղ, չքնաղ, պատշաճ, պարզ, պինդ, պիրկ* և այլն:

Աղօտ - ածական (հետայսու՝ ա.) 1. նվազ, նսեմ, թույլ (լույսի մասին). Որպէս մեծի լուսոյ *աղօտ* նշոյլք (Առ. որս. Է.): 2. փխբ. ոչ պարզ, անորոշ. *Աղօտիւք* պատկերօք ճշմարտութեան (Դիոն. Եկեղ.): Մակբայ (հետայսու՝ մ.) աղոտ՝ թույլ՝ մեղմ կերպով, մեղմով. Մտօք միայն նկարագրեալ, եւ այսոքիկ յոյժ *աղօտ* և չափաւորապէս (Ածաբ. Ծն.):

Թանձր - ա. 1. թավ, խիտ, ստվար. Տեսի աթոռ մի բարձր, չորեքկուսի ծածկեալ *թանձր* կտաւով թխագունիւ (Փարպ.,29): 2. հաստ, խոշոր. գեր. Հոգիք թեթեւք ի *թանձր* մարմնի (Նար.): 3. պինդ, խորը. *Թանձր* և խորին քնով ի զօրութիւն Տեառն կապէր զթագաւորն (Գ.Մակ.,Ե,6): մ. խիտ առ խիտ, թանձրությամբ. Առ յոյժ *թանձր* անկեալ դիականցն իբրեւ զքարակոյտս դերբկաց երեւէին (Եղ.,118):

Խախուտ - ա. խարխուլ, ոչ ամուր, քանդելու ենթակա. Որք զորմս *խախուտս* արտաքոյ բռեսցեն (Ոսկ. Յհ. Բ. 22): մ. անհաստատ, անկայուն կերպով. Եւ մի՛ արմատ եւ հիմն *խախուտ* հաստատեսցի (Իմաս.,Դ, 3):

---

[6] *Արմատական ածականների մեջ հազվադեպ հանդիպում են բառեր, որոնք որոշչային արժեքով դառնում են միայն անձնանիշ գոյականների լրացում: Հմմտ. Կազմ - ա. 1. պատրաստ, պատրաստ վիճակում գտնվող,. Կազմ են մատռուակք արբուցիչք (Ագաթ., 253): մ. 1. կազմ ու պատրաստ. Ամենայն այր կազմ առաջի իւր եկեսցեն (Փարպ.,82): 2. վայելուչ կերպով. Սակաւ թաղեաց եւ ամփոփեաց զնա կազմ (Եւս.,Է,16):*

Բ. Թե՛ իրանիշ, թե՛ անձնանիշ գոյականների լրացնում են հետևյալ արմատական ածականները՝ *թիւր, խառն, խրոխտ, կոյր, ճշմարիտ, մեծ, մերկ, յաղթ, յոռի, սերտ, սուտ, սուրբ, քաջ, օտար* և այլն:

Ճշմարիտ - ա. 1. ստույգ, հավաստի, աներկբա. *Ճշմարիտ* էր բանն, զոր լուայ (Գ Թագ.,Ժ,6): 2. արդար, անկեղծ, վստահելի, ճշմարտախոս. Երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ եւ Ստեփանոսի Տարաւնացւոյ, հաւաստի եւ *ճշմարիտ* պատմագրաց (Սեբ.,Գ,15): 3. փխբ. հավատավոր, նվիրված. Կոստանդիոս էր քրիստոնեայ *ճշմարիտ* (Սեբ.,ԽԴ,5): մ. ճշմարտապես, իսկապես, հիրավի, անշուշտ. Չի ամենեւին մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն ի հաղորդութիւն սիրոյ, այլ *ճշմարիտ*՝ խափանել զՔրիստոնէութեան ուսումն (Խոր., 301):

Մեծ - ա. 1. խոշոր, ընդարձակ. լայնատարած. Ոչ ինչ էին կարող լսել եւ օգտել ժողովուրդքն այսպիսի *մեծ* աշխարհի (Փարպ.,13): 2. քանակով՝ թվով շատ, անթիվ, մեծաթիվ, մեծաքանակ. Եւ յուղարկէ զնա ի Մրծանայ ընդ յարեւմուտս զաւրու *մեծաւ* (Սեբ.,Բ,25): 3. սաստիկ, ուժգին, խիստ. Զայսու ժամանակաւ եղեւ *մեծ* ցասումն Արշամայ (Խոր.,139): 4. հասակն առած, մեծահասակ, տարիքով ավագ. Մինչեւ մեռանիցի քահանայն *մեծ* (Թուոց.,ԼԵ,32): 5. երևելի, նշանավոր, աչքի ընկնող. Այր *մեծ* եւ հաւատարիմ (Եսթեր ԺԱ,3): 6. ճոխ, հանդիսավոր, անպատմելի. Թագաւորն Դարեհ արար խրախութիւն *մեծ* (Ա Եզր.,Գ,1): 7. կարևոր, էական. Ոչ ունին իբրեւ զմեզ *մեծ* իմաստս (Փարպ.,40): մ. 1. չափից դուրս, մեծ չափով, շատ. Ի չքմեղս եղեալ՝ կոծ *մեծ* առնէ (Խոր.,284): 2. մեծապես, սաստիկ. Եբաց զբերանն եւ գոչեաց յոյժ *մեծ* (ՆՀԲ):

Սուրբ - ա. 1. պարկեշտ, առաքինի, անբասիր. Այսօր ի *սուրբ* կուսէն ծնաւ ի Բեթղեհէմ (Ագաթ.,197): 2. փխբ. մաքուր, անարատ, վճիտ. Եւ *զսուրբ* եւ վճիտ եւ զականակիտ աղբերացն պղտորեաց զջուրս (Սեբ.,ԽԷ,15): 3. օրենքով թույլատրված, ուղղափառ, ճշմարիտ (հավատքի՝ եկեղեցու մասին). Որք կապեալ էին ի կռապաշտութեանն վառեալք եւ ջեռեալք իբրեւ զհնոց առ այրել զուխտ *սուրբ* եկեղեցւոյ (Եղ.,8): 4. անխառն, անմասն, մաքուր. Տէ՛ր, գիտես, զի *սուրբ* եմ ես յամենայն մեղաց կուսութեամբս իմով (Տովբ.,Գ,16): 5. սրբազան, նվիրական, վսեմ, վեհ. Օրհնեալ է անունդ քո *սուրբ* (Տովբ.,Գ,13): 6. աստվածային, խորհրդավոր. Եւ նորա զարթուցեալ՝ յուսով երեւեցելոյ նմա *սուրբ* նշանին օգնականութեան յաղթեալ վանէր զթշնամեացն բանակսն (Փարպ., 4): 7. եկեղեցու կողմից ճանաչված՝ աստվածահաճո (անձ). Որպէս եւ *սուրբ* նախատակն Քրիստոսի Գրիգորիս պահեալ ի խոշտանգանսն անվնաս աջով հզօրին՝ ի լուսաւորութիւն տուեալ (Փարպ.,17): մ. սրբորեն, սրբությամբ. Կրօնաւոր յայնժամ միայն *սուրբ* աղօթէ, յորժամ կացցէ յաղօթս հանդարտեալ (Վրք. Հց.):

2) *Աստիճանի իմաստ ունեցող* բառերն արտահայտում են հատկանիշի տարբեր աստիճաններ՝ *նվազ, թույլ, սաստիկ* երանգներով:

Այսպես, հատկանշային իմաստի նվազ կամ թույլ աստիճանի երանգ են արտահայտում *մարմանդ, հանդարտ, խաղաղ, քնքույշ, մեղմ* բառերը՝ թե՛ ածականի, թե՛ մակբայի արժեքով գործածվելիս:

Հանդարտ - ա. 1. հանգիստ, խաղաղ, անդորր, անվրդով. Ոնիա ոմն լեալ էր քահանայապետ՝ հեզ բարոյիւք եւ *հանդարտ* սրտիւ (Բ Մակ.,ԺԵ,12): 2. մեղմ, հլու, լռիկ, հպատակ. Իսկ Բէլ հեզ եւ *հանդարտ* ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ, իբրեւ ի դիտանոցի (Խոր.,35): 3. հարթ, հավասար. Հարթ եւ *հանդարտ* եւ յստակագոյն մասամբքն (Պղատ. Տիմ.): մ. հանդարտորեն, մեղմով, խոհեմաբար. Երեքանկիւնի իմն կարգեաց ձեւով, *հանդարտ* յառաջ մատուցեալ (Խոր., 36):

Մեղմ - ա. չափավոր, հանդարտ, թույլ, նվազ. Յետ հրոյն՝ ձայն *մեղմոյ* օդոյ (Գ. Թագ.,ԺԹ,12): մ. հանդարտորեն, դանդաղ, կամաց. *Մեղմ* երթայր, զի թոյլ տացէ մեռանել մանկանն, եւ ապա երթայցէ (Ոսկ.Մ. Բ., 5):

Հատկանշային իմաստի սաստկության երանգ ունեն հետևյալ բառերը՝ *պայծառ, վառ, սուր, արագ, շտապ, խիստ, յոյժ, բուռն* և այլն:

Արագ - ա. 1.արագաշարժ, սրընթաց, արագընթաց. Որ *արագն* իցէ ոտիւք՝ մի ապրեսցի (Ամովս,Բ,15): 2. արագ եղող, շուտ կատարվող. Հիւանդանայր գործն *արագ* եւ առողջ (Խոր.,81): մ. շուտափույթ, շուտով, անհապաղ. Ճարտար մոգպետն *արագ* աշակերտեցին (Եղ.,159):

Խիստ - ա. 1. կարծր, պինդ. Փափաք ծարաւոյ ի *խիստ* վիմէ (Իմաս.,ԺԱ,4): 2. ուժգին, բուռն, սաստիկ. Ծարաւեաց *խիստ* ծարաւով (Բուզ.,22): 3. դժնդակ, դաժան, անօրեն. Յանդիմանէին զմատնումն ընդ լծով *խիստ* և անօրէն ծառայութեանն Պարսից (Փարպ.,12): 4. շատ, չափազանց. *Խիստ* է բանդ այդ (Ոսկ. Յհ.): մ. 1. խիստ, սաստիկ, սաստկությամբ. Մի՛ այդպէս *խիստ* կատարէր զկամս քո (Բ Մակ.,ԺԵ,2): 2. չարաչար. Սաստիկ և *խիստ* տանջեցի զնա (Վրք. Հց.):

Յոյժ – մ. սաստկապես, ուժգին կերպով, ծայրահեղորեն. Լուեալ ի Վահանայ զքանիօնութիւն բազմութեան ոսկւոյն ուրախանայր *յոյժ* (Փարպ.,117): ա. 1. սաստիկ, առավել, խիստ. Կին ոմն, անուն Նունէ, *յոյժ* ճգնութեամբ ստացեալ շնորհս բժշկութեան (Խոր.,231): 2. մեծ, մեծաքանակ, շատ. Յայնժամ արձակէ ի վերայ նորա Պերոզ արքայ՝ Հոնաց զաւր *յոյժ* (Սեբ.,Զ,10):

3) *Զգայության իմաստ ունեցող* արմատական ածականների մեջ կան երկարժեք բառեր, որոնք ածականական իմաստով արտահայտում են *համի* հետ կապված հասկացություն, ինչպես՝ *անոյշ, քաղցր, դառն*, կամ էլ՝ ընդհանուր ինքնազգացողություն՝ *առոյգ, կայտառ, առողջ, խոժոռ, ժիր* և այլն:

Դառն - ա. 1. աղի, կծու, լեղի, անախորժ. Ոչ կարէին ըմպել ջուր, քանզի *դառն* էր (Ելք,ԺԷ,23): 2. փխբ. դժնդակ, դաժան, սաստիկ. Ի ցրտանալ հիւսիսւոյ եւ ի *դառն* հողմ փչելոյ, խաղայ իջանէ ի դրախտն մեծ (Խոր.,109): մ. ցավագին կերպով, դառնապես. Ապրեսջիք ի *դառն* պատրաստեալ դատաստանացն (Ագաթ., 381):

Քաղցր – ա. 1. անուշ, համեղ, ախորժելի. Ի բերան քո է *քաղցր* իբրեւ զմեղր (Յայտ.,Ժ,9): 2. ցանկալի, հաճելի, դուրեկան. Զի բարբառ քո *քաղցր* է (Երգ.,Բ,14): 3. լավ, ընտիր, գեղեցիկ. Ու՞ր է *քաղցր* աչացն ահաւորութիւն առ թիւրս (Խոր.,361): 4. անդորր, խաղաղ, հանդարտ. *Քաղցր* եւ անոյշ քնով ի զաւրութիւն Տեառն կապէր զթագաւորն (Գ Մակ.,Ե,6): 5. բարի, բարյացակամ. Կամաւ յօժարեալ ամենեքեան մեք ընտրեցաք զքեզ, որպէս զայր *քաղցր* եւ աշխարհաշէն (Փարպ.,157): մ. քաղցրությամբ, անուշանուշ, անդորր կերպով. Զայն բարի հովուութեան նոցին՝ Ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի (Նար.,205):

Ժիր - ա. 1. առկուն, աշխույժ, կորովի, փութաջան. *Ժիր* մշակք քաջ սուր մանգաղաւ զխոր հարկանիցեն (Փարպ.,159): 2. Արագաշարժ, արագընթաց. Հասանիցէ ի վերայ քո իբրեւ *զժիր* սուրհանդակ (Առակ.,Զ,11): մ. փութով, արագ. Ասեմ ցնա, հա՛յր, գնասցուք *ժիր* (Վրք. Հց.):

Զգայության ածականների իմաստային մի տարատեսակ են դիտվում *ցանկության* (մղումի, կամքի)՝ *ցոփ, շուայտ*, ինչպես նաև *զգացմունքի* (կրքի, ապրումի) ածականները, ինչպես՝ *զգոյշ, ուրախ, տրտում, վհատ, լուրջ, խոլ* և այլն:

Զգոյշ -ա. 1. ուշադիր, արթուն, զգաստ. Անձինն իւրում կարի *զգոյշ* կայր (Բուզ., 104): 2. երկյուղած, վախվորած. Որ երկնչին, *զգոյշ* եւ պատրաստ հանապազ կան (ՆՀԲ): 3. անվտանգ, խաղաղ. Երկիւղիւ միայն զիս խրատել կամեցեալ՝ եդիր զիս ի *զգոյշ* վայրի (Փիլ.): մ. ապահով. *Զգոյշ* յամենայնի, եւ տուչութիւն յաջողուածոց ունէր (Խոր.,181):

Տրտում - ա. 1. տխուր, թախծոտ, նեղությամբ՝ վշտով լցված. *Տրտում* է անձն իմ մինչեւ ի մահ (Մար.,ԺԴ,34): 2.տրտմական, տխրալից. *Տրտում* թախծանօք անցեալ գնացի (Յհ.Կթ.,192): մ. տրտմությամբ, տխուր կերպով. Ընդէ՞ր *տրտում* գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ (Սաղ, ԽԲ,2):

4) Չափի արմատական ածականներն արտահայտում են *տարածական* (լայն, հեռի, կարճ, բարձր, ցած, մերձ*), ժամանակային* (ուշ, վաղ, կանուխ, յաճախ, յար միշտ, յաւէտ, անազան), *քանակային* (շատ, նուազ, պակաս, սակաւ, լի, բիւր, հաւասար, զոյգ, բազում), *կշռային* (ծանր, թեթեւ, կշիռ), գնի (ճրի, էժան) և այլ կարգի իմաստներ:

Բարձր - ա. 1. վերին, երկնամերձ, մեծ. Զմիջնաբերդն ամրացուցանէր *բարձր* պարսպօք (Խոր.,165): 2. պերճ, վսեմ, գեղեցիկ, երևելի, շքեղ. Տէր իմ, *բարձր* եւ խոնարհ, օրհնաբանեալ գոյութիւն (Նար.,7): 3. ճոխ, առատ. Դնէ սեղան *բարձր* եւ լի ամենայն բարութեամբ (Վրք. Հց.): 4. փխբ. ամբարտավան. Անկցին բարձունքն սրով (Եսայ.,Ժ,.34): 5. շքեղ, հարուստ. Զտունս զայս *բարձր* (ՆՀԲ): 6. բարձրաձայն, ամեն-

քին լսելի, բարձրագոչ. Երաց զբերան իւր եւ ասէ *բարձր* բարբառով (Եղ.,106): մ. խիստ, ահեղ. *Բարձր* որոտալով ի վերայ համատոհմիցն (Սրգ. Ա. Յովհ., Բ.):

Բիւր - ա. անթիվ, անհամար, բազում. *Բիւր* դաստիարակս ունիցիք ի Քրիստոս (Ա Կորն.,Դ,15): մ. բազմիցս. *Բիւր* եւ ազգի ազգի տանջիցէք զմեզ (Ագաթ., 95):

Ձրի - ա. 1. անհատույց տրվող՝ տրված. Ամենատեղաց դեղ, *ձրի* բժշկութիւն, կրկնածիր առողջութիւն (Նար.,7): 2. դատարկ, ունայն, սին. Զմիտս ի տունս եւ ի շահս եւ յայլ *ձրի* բանս շրջելով (Մանդ.): մ. 1. առանց գնի, անվճար, առանց հատուցելու. Ոչ *ձրի*, այլ վարձուցն փոխանակ ըմբռնեսցեն զարքայութիւն (Ագաթ.,365), 2. իզուր, անտեղի. *Ձրի* վաճառեցայք, եւ ոչ արծաթով փրկեսջիք (Եսայ.,ԾԲ,3):

Կանուխ - ա. 1. վաղ ժամանակ եղած, վաղեմի, հին. Ըստ *կանուխ* գիտութեանն Աստուծոյ Հօր, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմացրի (Ա.Պետ.,Ա,2): 2. վաղահաս, վաղաժամ. *Ձկանուխն* ոչ կապտեցի պտուղ (Նար.,174): մ. 1. շատ վաղ ժամանակներում՝ անցյալում. Պատմեցաք ի մեծն Աղէքսանդրէ յոյժ *կանուխ* եւ հեռի ժամանակօք (Խոր.,257): 2. առավոտ շուտ, վաղ առավոտյան. Այն ինչ հաւ խօսեցաւ *կանուխ* ընդ առաւօտն (Գ Մակ.,Ե,12):

5) Բնութագրող արմատական ածականները բնութագրում են ոճը՝ *ամփոփ, հակիրճ, պերճ,* և անձերին՝ ըստ խոսքի կամ դրա ընկալման որակի՝ *լուռ, յամր, յամառ, հպարտ, մոլոր, հեզ, խոնարհ, ճարտար* և այլն:

Լուռ - ա. լռիկ, անխոս, չխոսող, անձայն. Ճշմարտեցէք ի միութիւն *լուռ* հաւատովք (Ագաթ.,192): մ. *լուռ* կերպով, լռությամբ. Լուռ եւ աներեւոյթ շրջեալ ի մէջ նոցա (ն.տ., 208):

Հակիրճ - ա. 1. համառոտ, կարճ, ամփոփ, սեղմ. Զի բան մի *հակիրճ* եւ համառօտ արդարութեամբ (Եսայ.,Ժ,22): 2. վճռական, ազդու. Ամենակար հնարաւորութեամբ *հակիրճ* հատուցմամբ արասցես ահա ելս քաւութեան (Նար.,34): մ. համառոտ կերպով, համառոտակի. Զբանն *հակիրճ* արասցէ Տէր ի վերայ երկրի (Հռոմ. Թ.,28):

Մոլոր - ա. մոլորություն պարունակող, մոլորված. սխալ, թյուր. «Ամենայն ազգ եւ լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ, դաղարեսցեն իւրաքանչիւր *մոլոր* օրինաց» (Եղ.,17): մ. մոլորված, մոլորվելով. Զի կարծիցէ փարաւոն, թէ *մոլոր* գնացին, եւ զղջացեալ դարձան (ՆՀԲ):

6) Կան արմատական ածականներ էլ, որոնք արտահայտում են հասարակական նորմայից բխող անհրաժեշտության գաղափար. *լաւ, արդար, վատ, ստոր, բարի, չար* և այլն:

Արդար - ա. 1. ուղղամիտ, անաչառ, անկեղծ. Կարդալ առ *արդար* դատաւորն (Ա Մակ.,ԺԲ,5): 2. անմեղ. Ասէին զանձն իմ՝ իբրեւ զնա՝ *արդար* եւ անարատ (Նար., 146): 3. բարի, կենսատու. Արեգակն *արդար*, ճառագայթ օրհնեալ (ն.տ.,231): 4. իրավացի, օրինավոր, ճշմարիտ. *Զարդար* հաւատն ուսեալ էք յԱստուծոյ (Փարպ.,51): 5. ուղիղ, ճշմարիտ, անշեղ. *Արդար* է Տէր յամենայն ճանապարհս իւր (Սաղ.,ՃԽԴ,17): 6. ճշմարտախոս. Ընդունելի են թագաւորի շրթունք *արդարք* (Առակ.,ԺԶ,13): մ. ճշմարտությամբ, հավատարմությամբ. Զայդ *արդար* ասացեր (Յովհ.,Դ,18):

Բարի - ա. 1. լավ, ազնիվ, պատվական, գովելի. Ծառ որ ոչ առնիցէ զպտուղ *բարի* (Մատ.,Գ,10): 2. գեղեցիկ, հաճելի, ցանկալի. *Բարի* է յուսալ ի Տէր, քան յուսալ ի մարդիկ (Եղ.,138): մ. ողջամտությամբ. *Բարի* եկիր, մեծ որդեակ իմ (Վրք. Հց):

Այսպիսով, գրաբարի մակարդակում ած.//մկբ. քերականական իմաստներ ցուցաբերող բառերի մեջ զգալի կշիռ ունեն արմատական ածականները, որոնք բնութագրվում են յուրահատուկ բառիմաստային դաշտով: Դրանք ներկայացնում են հետևյալ թեմատիկ-իմաստային խմբերը՝ որակային, ստահճանի, զգայության, չափի (տարածական, ժամանակային, քանակային, կշռային, գնի), բնութագրող և այլն:

Միաժամանակ, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, միևնույն բառույթի երկատված բառաքերականական նշանակություններին մեջ իշխում են առարկայի հատկանշային իմաստն ու ածականական արժեքը:

## Համառոտագրություններ


Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909:
Ածար., Ծն. – Տօնական ճառք Գրիգորի Աստուածաբանի (ըստ ՆՀԲ-ի):
Առ որս. - Գիրք ճառից Ս. Գրիգորի Աստուածաբանի Նազիանզացւոյ (ըստ ՆՀԲ-ի):
Բուզ. - Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
Դիոն. Ածայ., Եկեղ. – Ս. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ յԱթենայ… գիրք յաղագս երկնային քահանայապետութեանն (ըստ ՆՀԲ-ի):
Եղ. - Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:
Խոր. – Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913:
Մանդ. – Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860:
Յհ. Կթ. - Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
Նար. - Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840:
ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր՝ Հ.Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:
Ոսկ. Մ. կամ Մտթ. – Յովհաննու Ոսկեբերանի Յաւետարանագիրն Մատթեոս, հ.հ. Ա-Գ, Վենետիկ, 1826:
Ոսկ. Յհ. – Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն աւետարանին Յովհաննու, Պօլիս, 1717:
Պիտ. – Յաղագս պիտոյից (Մ. Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 339-581):
Պղատ. – Պղատոնի Առ Տիմէոս (ըստ ՆՀԲ-ի):
Սրգ. Ա. Յհ. - Մեկնութիւն Ա. թղթոյն Յովհաննու Աւետարանչի (ըստ ՆՀԲ-ի):
Սեբ. – Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Ե., 1939:
Վրք. Հց. – Վարք սրբոց հարանց, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1855:
Փարպ., Փարպ. Թ. – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփխիս, 1904:
Փիլ. – (հ. Ա) – Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք, Վենետիկ, 1822:


# МОРФОЛОГИЧЕСКАЯ ПОЛИСЕМИЯ КОРНЕВЫХ СЛОВ В ГРАБАРЕ СО ЗНАЧЕНИЕМ ПРИЛАГАТЕЛЬНОГО И НАРЕЧИЯ

*Резюме*

*А. Арутюнян*


Синхронический анализ словарного состава грабара показывает, что в этом периоде языка существует определенный пласт корневых слов, которые выявляют морфологическую полисемию. Отдельная часть этого пласта совмещает морфологические значения прилагательного и наречия. Такие слова в этой статье анализируются с внутренними группировками.

Отделяются следующие семантические группы, которые выявляют:
а) признак качества, б) признак градуса, в) признак чувства, г) признак меры (временной, ареальный и весовой), д) характеризующий признак.

Как показывает статистика, в расщепленных значениях таких слов доминируют значение признака предмета и частиречное значение прилагательного.

*Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

## *ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖՐԻԿԻ ՏԱՂԵՐՈՒՄ*

Միջնադարյան երգիչներից մեկի՝ Ֆրիկի մասին ճշգրիտ կենսագրական տվյալներ չեն պահպանվել, սակայն նրա լեզվի քննությունը կարող է որոշ պարզաբանումներ մտցնել նրա բնակության վայրի և լեզվի տարածքային տարբերակի վերաբերյալ: Անշուշտ, հայերենի համար անցումային համարվող միջին հայերենի լեզվական վիճակն ունի անբարենպաստ մի շարք իրողություններ լեզվաքննական ճըշգրիտ եզրահանգումների համար, այնուհանդերձ սույն հոդվածում կփորձենք ներկայացնել մեր դիտարկումները՝ խնդրո առարկա դարձնելով Ֆրիկի լեզվում առկա փոխառությունները:

Հայ ժողովրդի կյանքում կատարվող մի շարք տեղաշարժերով պայմանավորված՝ միջին հայերենի բառապաշարը հին փոխառություններին զուգընթաց շարունակաբար համալրվել է նորերով, որոնց հիմնական մասը վերցվել է արաբերենից, պարսկերենից, թուրքերենից, ֆրանսերենից, լատիներենից և այլն: Համեմատած նախորդ շրջանի փոխառությունների հետ՝ միջինհայերենյանն առանձնանում է անմիջական խոսակցական փոխառությունների գերակայությամբ: Ըստ բառային վիճակագրության՝ փոխառյալ արմատների միջին հաճախականությունը հին հայերենում 11% է, միջին հայերենում՝ 13%, արդի հայերենում՝ 12%: Հաճախադեպության տեսակետից (որն առավել կարևոր է) վերջիններս միշտ զիջել են բնիկ արմատներին, որոնց հաճախականությունը հին հայերենում եղել է 68%, միջին հայերենում՝ 70%, արդի շրջանում՝ 69%:[1]

Անդրադառնալով Ֆրիկի լեզվին՝ նշենք, որ համաձայն Հայկական համաբարբառի տվյալների[2] նրա անունով մեզ հասած մոտ վաթսուն տաղեր պարունակում են մոտավորապես *3078* բառ, որոնցից *151*-ը (մոտ 7%-ը) միջինհայերենյան փոխառություններ են: Սակայն բառաշերտերի դերը լեզվի մեջ առավելապես պայմանավորված է նրանցում առկա միավորների կենսունակությամբ և ավելի նվազ քանակով: Այս առումով, Ֆրիկի լեզվում բնիկ հայկական արմատներն ավելի կենսունակ են և աչքի են ընկնում գործածման բարձր հաճախականությամբ, ինչպես, օրինակ, *անղալատ* արաբերեն արմատից կազմված բառը (*անսխալ, անարատ, արդար, ճշմարիտ* նշանակությամբ) գործածվել է ընդամենը երկու անգամ, մինչդեռ հայերենի հոմանիշ տարբերակները՝ *արդար*, *անմեղ* և *ճշմարիտ* բառերը, կիրարկվել են առաջինը՝ տասներկու, երկրորդը՝ վեց, իսկ երրորդը՝ երեք անգամ: Կամ *բարաբար* պարսկերեն բառը Ֆրիկը գործածել է ընդամենը երեք անգամ, իսկ նույնիմաստ *հավասար* բառը՝ 21 անգամ:

Հանդիպում են նաև բառեր, որոնց հայկական տարբերակները կա՛մ զիջում են օտար բառերին, կա՛մ ընդհանրապես չեն գործածվել, օրինակ, *անթապղիր* և *թամամ* բառերը: Երկուսն էլ ծագմամբ արաբերեն բառեր են, որոնք գործածվել են մեկ անգամ. առաջինը՝ օտարին բնորոշելու համար, իսկ երկրորդը՝ տուրք տալով ժողովրդական խոսքում առկա տարբերակին, օրինակ, Ֆռանգն խեւ և *անթապղիր* /ՖրԲ,187/: Ես հինգ հազար հարիւր տարի *թամամ* մէջ այս հողի արի ղարար /ՖրԲ,201/:[3] Փաստորեն, օտար բառերի գործածությունը հաճախ ունեցել է ոճական բնույթ՝ նպաստելով անմիջական խոսքի ձևավորմանը:

*Արաբերեն և պարսկերեն փոխառություններ*: Ֆրիկի լեզվում բավական զգալի թիվ են կազմում (երևույթին անդրադառնանք թվային տվյալներով): Նրա գործածած՝ *ա)* տառով սկսվող միջինհայերենյան շերտի հարյուր տասնվեց բառերից տասնմեկը փոխառյալ են (վեցը՝ արաբերենից, չորսը՝ պարսկերենից), *բ)* տառով քառասունչորս բառից՝ տասնհինգը (հինը՝ պարսկերենից, մեկը՝ արաբերենից), *դ)* տառով քսաներեք բառից՝ տասներկուսը (չորսը՝ արաբերենից, յոթը՝ պարսկերենից) և այլն:

---

[1] *Հայոց լեզվի պատմական քերականություն, հատոր II, Եր., 1975:*
[2] *Տե՛ս Հայկական համաբարբառ, 19, Ֆրիկ, Բանաստեղծություններ, հ. 1-2, Եր., 1986-1987:*
[3] *Ֆրիկ, Բանաստեղծություններ (այսուհետև ՖրԲ), Եր., 1940:*

*Պարսկերեն փոխառություններ:* Միջին գրական լեզուն վկայում է դասական հայերենին անծանոթ շուրջ 600 իրանական բառեր՝ մեծ մասամբ նոր պարսկերենից եկող, ինչպես և միջինիրանական լեզուների հնագույն բառաձևեր, որոնք գրաբարյան մատենագրությունը չի ավանդել տարբեր պատճառներով: Պահլավերենից եկող բառերը, անշուշտ, հնուց ի վեր պահպանված լինելով հայերենի խոսակցական տարբերակներում, բանավոր ճանապարհով ներթափանցել են միջին հայերենի մատենագրական աղբյուրներ, որոնցից վկայվել են նաև Ֆրիկի տաղերում. ինչպես՝ *դեհ* (Կանգնիս ի յաջոյ *դեհին* ու շահես զլոյսն ի բարին /ՖրԲ,129/)[4], *լեղակ* (Կապի քո բլբուլ լեզուդ, ի յահէն լինիս դու *լեղակ* /ն.տ.,58/), *մուշտակ* (Ֆրիկ ... Զօրն կեր ու խում արար, եւ հանգար բուրդ խաս *մուշտակ* /ն.տ.,57/), *փաքերակ* (Այլոց լավ խրատ կու տաս, քո հոգուդ բերես *փաքերակ* /ն.տ.,58/) և այլն:

Հանդիպում են նաև արաբերեն բառեր, որոնք, ըստ Աճառյանի, ավելի շատ պարսկերենի ազդեցությամբ են բացատրվում. «Հատկապես ԺԱ դարում... արաբները Հայաստանից հեռացած և նույնիսկ իրենց անկման շրջանն էին մտած: Այս պատճառով ազդեցությունը պիտի վերագրենք ոչ թե ուղղակի արաբերենին, այլ մեր հարևան պարսկերենին»[5] (ի դեպ, վերջիններս մահմեդականությունն ընդունելուց հետո պարտավոր էին սովորել արաբերեն՝ Ղուրանը կարդալու նպատակով): Սրա հիման վրա կարող ենք պարսկերեն և արաբերեն բառեր քննել միասնաբար՝ իրարից չտարանջատելով:

Ուշագրավ է, որ պարսկաարաբական փոխառությունների հիմնական մասն արտահայտում է վիճակ-տրամադրություն և հատկանիշ, որոնք հայերենում ունեցել են իրենց համարժեք ձևերը և բազմիցս օգտագործվել են Ֆրիկի կողմից: Հետևաբար, տվյալ բառերի կիրարկումը ունեցել է ոճական բնույթ: Ի թիվս սրանց հանդիպում են նաև գրաբարում վկայված փոխառյալ բառերի խոսակցական տարբերակներ: Օրինակ՝ Եղիշեի լեզվում տակավին վկայված *անդաճել* պարսկական բառը,[6] ինչպես Ֆրիկի,[7] այնպես էլ Կ. Երզնկացու և Ն. Քուչակի տաղերում հանդիպում է *անդիճել, անտիճել* ձևերով,[8] որոնք ՆՀԲ-ում համարվում են *ռամկական:*[9]

Փոխառյալ բառերի խոսակցական տարբերակները, ի դեպ, հիմնականում գործածվել են հայերենի բառակազմական օրենքներին համապատասխան, որն առավելապես դրսևորվել է ածանցման միջոցով. ամենակենսունակը *ան-* ժխտական նախածանցը և *-ութիւն* վերջածանցն են, ինչպես՝ *անքաղդիր, անղալատ/թ, զէնութիւն, փոշիմանութիւն* և այլն: Օրինակ՝ Դու ես անմեղ եւ *անղալատ* /ՖրԲ,215/: Խրատոր տուի ես քեզ, տես շահ է, թէ *զէնութիւն* /ՖրԴ,108/:

Տաղերում վկայվել են այլ ածանցներ ևս, ինչպես՝ *-ելի, -ւոր, -ի և -իկ, -ուկ,* նմանաբարբառական ածանցները, օրինակ, *տնազելի* (Մէկն է կերպիւ *տնազելի/տանազելի* /ՖրԴ,539), *տօլվաթուոր* (Եւ *տօլվաթուորն* յայտնի լինի: Եւ անբախտին լեղին պատառի /ՖրԲ,244/), *զրեհի, ճօշնի* (Մէկն *ճօշնի* և *զրեհի,* ճորով նստի ի տաճիկ ձի /ն.տ.,251/), *հարամիկ* (Վրացին է զող եւ *հարամիկ* /ՖրԴ,275/),[10] *դարիպուկ* (Անբաղդն ճորտ է աստարի եւ *դարիպուկ* /ն.տ.,538/), *բաստիկ* (*Բաստիկ* որ կրես հիմիկ, մեծ ամաւթ եւ մերկ խայտառակ /ն.տ.,367/):

Հայերեն և օտար բառերի համադրմամբ ձևավորվել են բայական հարադրություններ ևս, օրինակ, *ազիզ կենալ* (Կուզես որ *ազիզ կենաս,* որ ամէն մարդ զքեզ սիրէ /ՖրԴ,464/), *անդէճ լինել* (Մարդն որ շատ *անդէճ լինի,* հոգն կու մաշի /ն.տ.,510/), *զէն անել/վնասել* (Ֆրիկ շահու *զէն արա,* յիմացիր թէ որն կու պիտի /ՖրԲ,43/):

Ի շարս սրանց առանձնանում են փոխառյալ բայեր, որոնք գործածվել են գրաբարի խոնարհման հարացույցին հատուկ տարբերակով, ինչպես՝ Հիմի կան և

---

[4] *Ֆ ր ի կ, Դիւան (այսուհետև՝ ՖրԴ), Նիւ Եորք, 1952:*
[5] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, հ. II, Եր.,1951, էջ 183:*
[6] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերենի արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. I, Եր., 1971, էջ 186:*
[7] *ՖրԲ, էջ 35-55:*
[8] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 186:*
[9] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Եր., 1979, էջ 130:*
[10] *Վկայվել է նաև բառիս հոլովման արդյունքում հնչյունափոխված ձևը, ինչպես՝ Թէ եղայ* հարամկի *ընկեր, բալանեց, և արար զիս գերի: ՖրԴ, ԼԶ,11:*

մնան՝ թէ երբ կու գայ, Որ մեզ *առնեմք* մեր *քամաշայ* /ՖրԲ,257/: Հատկանշական է, որ, բացի ընդգծված բայից, դերանունը ևս գրաբարակերպ է:

Վկայվել են իմաստափոխություններ՝ փոխատու լեզվի համեմատությամբ: Ինչպես՝ *գիլիստանիք/կուլիստանիք* բառը պարսկերեն *գօլ* /վարդ/ և *ստան* արմատներից է, որը, *վարդաստան* իմաստով հայոց մեջ, մասնավորապես աշուղական խոսքում լայնորեն կիրառվել է: Ֆրիկի երկերում հանդիպում է *ծաղկանկար կամ վարդանկար զգեստ* իմաստով:[11] Ի դեպ, իմաստային այս կիրարկությունը չի հանդիպում և՛ հայերեն, և՛ պարսկերեն բառարաններում: Ընդ որում, բառիս *-ք* հնչյունը հայկական հավելում է. Նախ ու նասիֆ, քեմխա ու սօֆ, *Կյուլիստանիքն,* որ դու հագար: Բարձր ես նստել ի վերայ խալուղ՝Յետև տի գաս աղկից ի վար /ՖրԴ, 479/:

Պարսկաարաբական ազդեցությունը Ֆրիկի լեզվում նկատվում է ոչ միայն բառապաշարի, այլև տաղաչափության հարցում. «Արաբական ազդեցությունը հայերենի վրա երևում է տաղաչափության մեջ: ... Ոտանավորի հանգի հետ պետք է հիշել նաև այն, ինչ որ արաբերենում կոչվում է *կաֆիյե*: Արաբները սիրում էին ոչ միայն ոտանավորի, այլ և բանաստեղծական արձակի մեջ նախադասությունները միևնույն հանգով վերջացնել, մանավանդ ածականը գոյականի հետ նույնահանգ դուրս բերել: Այս ոճը շատ սիրված է նաև տաճիկների ու պարսիկների մոտ և մինչև այսօր էլ շարունակվում է»:[12] Տաղաչափական այս ձևը, ըստ Աբեղյանի, գործածել է նաև Նարեկացին իր «Մատեան ողբերգութեան» ստեղծագործության որոշ հատվածներում:[13]

Խոսելով պարսկերեն փոխառությունների մասին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ «Նորին Ֆրկանն ասացեալ» (Եկայք որ ի բաց թողունք...) տաղում հանդիպած հայատառ պարսկերեն քառատողին, որին անդրադարձել են այնպիսի բանասերներ, ինչպիսիք են Տիրայր արքեպիսկոպոս Հովհաննիսյանը և Մ. Թիրաքյանը,[14] Վ. Ավքանդիլյանը և Հ. Փափազյանը,[15] Բ. Չուգասզյանը,[16] Ա. Ծախսուվարյանը՝[17] արտահայտելով իրենց դիտարկումները, որոնք, ի դեպ, միանշանակորեն չեն ընդունվել: Օրինակ՝ Ա. Մնացականյանը, համարելով այն հետագա դարերի հավելում, չի ընդգրկել իր խմբագրած հայրենի կազմում՝ պատճառաբանելով, որ տվյալ հատվածը պահպանվել է երեք ընդօրինակություններից մեկում:[18] Այնուամենայնիվ, այն ընդգրկվել է և՛ «Բանաստեղծություններ»-ի,[19] և՛ «Դիւան»-ի[20] օրինակներում:

Ուշագրավ անդրադարձ է կատարել Ա. Ծախսուվարյանն իր «Ֆրիկը Խաքանու թարգմանիչ» հոդվածում՝ գնահատելով Ֆրիկին «ոչ միայն որպես բանաստեղծ, այլև շնորհալի մի թարգմանիչ»:[21] Ստորև բերում ենք վերոհիշյալ բանաստեղծական պատառիկի պարսկական, ֆրիկյան և խաքանյան տարբերակները.

Սիրո զոհարանում լավից բացի ոչ մեկին չեն զոհում,
Աննկարագիր և վատաբարո մարդկանց չեն զոհում,
Եթե անկեղծ սիրահար ես, զոհվելուց մի խուսափիր,
Պիղծ կլինի այն (կենդանին), որին չեն մորթում:
*(Պարսկերեն հայատառ քառյակի թարգմանությունը)*:[22]
Ի սուրբ սեղանոյն վերայ քան զաղէկն այլ իրք չի զենեն,
Զնիխարն ու զվատուն, եղբարք, Աստուծոյ զայն ե՞րբ ղըրըլեն:
Թ՛ողորդ սիրելի ես դու, հանց արա, որ զքեզ չի խոտեն,

---

[11] *ՖրԴ, էջ 636:*
[12] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, հ. II, Եր., 1951, էջ 180:*
[13] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, Հայ գրականության պատմություն, Եր., 1944, հ. Ա, էջ 541:*
[14] *ՖրԴ, էջ 124:*
[15] *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկատու», 1959, N 3:*
[16] *«Բանբեր Մատենադարանի», 1958, N 4, էջ 111-120:*
[17] *Առանձնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկատու», 1962, N 11, էջ 85-87:*
[18] *Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայրեններ, Եր., 1995, էջ 991:*
[19] *ՖրԲ, էջ 84:*
[20] *ՖրԴ, էջ 353:*
[21] *Առանձնատիպ Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկատու», 1962, N 11, էջ 87:*
[22] *Նույն տեղում, էջ 85:*

Գիտեմ՝ անպիտան դառնայ այն մատաղն, որ զինքն չի զենեն:[23]
Սիրո տերության մեջ ամեն բարուն չեն զոհում,
Աննկարագիր և վատաբարոյ մարդկանց չեն զոհում,
Եթե սիրահարված ես, Սաղեղի, զոհվելուց մի՛ խուսափիր,
Պիղծ կլինի այն ամենը (կենդանին), որին չեն զոհում:
(*Խաքանուն վերագրվող քառյակը*):[24]

Եթե նույնիսկ Ֆրիկը ծանոթ լիներ վերոհիշյալ քառատողին՝ գործածելով հավանած մտքերն ու պատկերները, միևնույնն է, նրան Խաքանու կամ այլ բանաստեղծի թարգմանիչ անվանելը միանշանակ բնորոշում չի կարող լինել: Թերևս կարելի է այն բացատրել *գրական որոշակի ազդեցությամբ*, հատկապես պատկերները գործածվել են միանգամայն տարբերնույթ երևույթներ բնորոշելիս:

Ընդ որում, պարսկատառ քառյակը և ֆրիկյանն ընդգրկված են տարբեր (չնայած իրար հաջորդող) տաղերում՝ առաջինը «Նորին Ֆրկանն ասացեալ», երկրորդը՝ հաջորդ՝ «Նորին Ֆրկանն ասացեալ» բանքում: Եվ հույժ հավանական է, որ նախորդ դարերի գրիչներից մեկը, նկատելով նշված հատվածների ակնհայտ նմանությունը, հավելել է իր իմացածը:

Նշենք, որ Ֆրիկին կենդանության օրոք ևս մեղադրել են ուրիշի գործերն իր անվամբ ներկայացնելու համար՝[25] կասկածանքով վերաբերվելով նրան: Ի պատասխան՝ նա երդումով հաստատել է իր անմեղությունը՝ *Տէր կենդանի է և օրհնեալ, Թէ չէ այլոց բանքս ասացած* /ՖրԲ,78/:

Հնարավոր ենք համարում նաև նշված քառյակների ուղղակի իմաստային զուգադիպությունը, քանի որ դրանց համար հիմնական աղբյուր են եղել Հին Կտակարանում նշված զոհաբերության օրենքներն ու կանոնները, ինչպես՝ «Ապա թէ զոհ փրկութեան իցէ պատարագ նորա Տէրն, եթէ յարջառոց մատուցանէ, եթէ արու իցէ և եթէ էգ իցէ՝ զանարատն մատուցանէ առաջի Տեառն...»,[26] ապա նաև՝ «Եւ զամենայն մեռելոտի մի՛ ուտիցէք»,[27] քանի որ այն պիղծ է համարվում:

Այսպիսով, պարսկա-արաբական փոխառություններ վկայվել են և՛ բուն Հայաստանի, և՛ Կիլիկիայի գրական տարբերակներում, այս պատճառով միանշանակորեն հնարավոր չէ ճշգրիտ դատողություններ անել լեզվի տարածքային այն տարբերակի մասին, որով խոսել և ստեղծագործել է Ֆրիկը:

*Թուրքերեն փոխառություններ:* Անդրադառնալով թուրքերեն փոխառություններին՝ նշենք, որ տվյալ բառը գործածում ենք պայմանականորեն՝ հիմք ընդունելով Աճառյանի կարծիքը. «... սելջուկներ, Պարսկաստանի թուրքերը, մոնղոլ թաթարներ, էօզբէկ թաթարներ, թուրքմեններ և վերջապես՝ օսմանցիք կամ տաճիկներ: Այս ժողովուրդները թեև առանձին-առանձին անուններ են կրում, բայց լեզվով այնքան մեծ տարբերություն չունին միմյանցից և միևնույն *թուրքերեն* բառի տակ կարող ենք հասկանալ բոլորի լեզուն»:[28]

Համեմատած արաբապարսկական արմատների հետ՝ թուրքական փոխառությունները մեծ թիվ չեն կազմում: Դա բնական է, քանի որ միջին գրական լեզվի զարգացման առաջին շրջանում՝ հատկապես XIII-XIV դդ., թուրքական լեզուներից կատարված փոխառությունները մեծ թիվ չեն կազմում՝ պայմանավորված նախ՝ ժամանակաշրջանով, ապա՝ թուրքական ցեղերի հետ թույլ հաղորդակցությամբ:

Թեև ընդունված է համարել, որ «թուրքերեն լեզվի հիմքը թյուրքական է. տիպիկ թյուրքական են հնչյունական և քերականական կառուցվածքի որոշիչ գծերը, բառապաշարի մեծ մասը»,[29] սակայն մասնավորապես միջին դարերում՝ իսլամն ընդունելուց հետո, արաբական և պարսկական շատ արմատներ փոխանցվել են թուրքերե-

---

[23] *ՖրԴ, էջ 354:*
[24] *Առանձնատիպ Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկատու», 1962, N11, էջ 87:*
[25] *Նշված խնդիրը անդրադարձներ է ունեցել և՛ ֆրիկյան բանքերում, և՛ գրականագիտական աշխատություններում, որի պատճառով մանրամասն չենք ներկայացնում:*
[26] *Հին Կտակարան, Ղեւտ., Գ, 1:*
[27] *Հին Կտակարան, Բ Օրէն, ԺԴ, 21:*
[28] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, էջ 258:*
[29] *Դ. Ե ր ե մ ե և, Թուրքերի ծագումը, Եր., 1975, էջ 296:*

նին, ինչպես նաև «XI դարից սկսած՝ պարսիկները դարեր շարունակ ապրել են թուրք-թաթարական զանազան ցեղերի գերիշխանության տակ, և նվաճողների լեզվից պարսկերենին անցան բազմաթիվ բառեր», ինչպես՝ խան, բեգ, խաթուն, բաշի, սուրսաթ[30] և այլն, ուստի չի բացառվում, որ թուրքերեն համարվող բառերի մի մասը լինի միջնորդավորված փոխառություն: Ինչ խոսք, այս հանգամանքը խոչընդոտում է թուրքական լեզուների հետ հայերենի մերձավորության աստիճանը որոշելուն մասնավորապես XIII դարում, երբ հայ ժողովուրդը նոր էր սկսել ծանոթանալ թուրք-թաթարական ցեղերի հետ և նրանց լեզուներին:

Այսպիսով, թուրք-մոնղոլական լեզվի վերաբերյալ ամենավաղ վկայությունը՝ իբրև «խժականք անծանօթք ի մէնջ»,[31] արտահայտվել է Կ. Գանձակեցու կազմած մոտ հիսուն բառանոց ցանկով, որը, ըստ էության, «մոնղոլական գրականության ամենահին հիշատակարանն է»:[32] Սակայն այդ բառերից ոչ մեկը վկայված չէ Ֆրիկի տաղերում:

Ռ. Ղազարյանը, միջին դարերում հայերենի՝ թուրքական լեզուների հետ ունեցած պատմական առնչության հարցի կարևորությունից ելնելով, «Միջին հայերենի բառապաշարը» աշխատության մեջ ներկայացնում է թուրքական լեզուներից՝ թաթարերենից, մոնղոլերենից և չաղաթայերենից վկայված բոլոր փոխառությունները, որոնցից, սակայն, Ֆրիկի երկերում հանդիպում է միայն *չինքսան* բառը, իսկ մնացյալ սակավաթիվ բառերը վերաբերում են թուրքերենին, դրանցից են՝ *բուխերի, խմաճիկ, դար, սօֆի, փերթ, քարփիճ, օրթար*:

Նշենք, *որ միջին հայերենում թուրքերենից որևէ գրական փոխառություն չի կատարվել: Թուրքերեն բառերն ամբողջությամբ ժողովրդական փոխառություններ են՝ գործածական միայն խոսակցական լեզվում, որտեղից ուղղակիորեն ներթափանցել են միջին գրական հայերենի տարբերակների մեջ:*[33] Ֆրիկի տաղերում առկա թուրքական արմատների իմաստային քննությունը վկայում է վերոհիշյալ միտքը:

Առօրյա խոսակցական բառաշերտին պատկանող բառերը գործածվել են՝

ա) հայկական տարբերակների բացակայության պատճառով, ինչպես՝ *բուխերի, խմաճիկ, սօֆի, քարփիճ,* բ) ոճավորման նպատակով: Ի դեպ, սրանց թիվը կնվազի (հասնելով վեցի), եթե դուրս բերենք տաղերի հիմնական տարբերակում չվկայված բառերը՝ *բողազ, խմաճիկ, չամուռ, քարփիճ*:

Թեպետ սահմանափակ կիրառությանը՝ այնուամենայնիվ, հարկ է նշել, որ դրանք գործածվել են հայերենին բնորոշ քերականական փոփոխություններով, օրինակ, Աստուածուրաց լիրբ եւ՛ անամօթ՝ այն շուն *սօֆին*, Հանչաք վազէ դռնէ ի դուռ /ՖրԲ,212/: Մակար չէ՞ր մայրն ինձ բերել, որ չի դիպչել զայս *տառոսխ* /ՖրԴ,267/:

Ֆրիկի տաղերում առկա թուրքերեն բառերը վկայում են, որ նրա ապրած տարածաշրջանում հայերը թեև շփվում էին թուրքերի հետ, բայց տակավին չունեին սերտ հարաբերություններ: Ըստ օտար աղբյուրների՝ Անատոլիայում արդեն XII և մանավանդ XIII դարի սկզբին թուրք քոչվորների թիվը մոտենում էր մեկ միլիոնի,[34] բայց դրանք հիմնականում զինվորներ էին, և բնական է, որ գրավյալ տարածքների բնակիչները, փորձելով սովորել նրանց լեզուն, սերտ շփման չէին ձգտում:

*Ասորական փոխառություններ:* Քննելով ասորական ազդեցությունը հայերենի վրա՝ Հր. Աճառյանը ժամանակագրական առումով այն բաժանել է չորս փուլերի՝ «*նախնական* /Ք.ծ.ա. Ա դար/, *քրիստոնեական քարոզչության* /Գ-Դ դարեր/, *մատենագրական* /Դ-Ե դարեր/ և *անկման* շրջաններ, երբ «ասորիները, իրենց մեծությունն ու ազդեցությունը կորցրած, ապրում են հայոց հետ ազգային ու կրոնական մոտիկ բարեկամական հարաբերության մեջ՝ վայելելով մեր պաշտպանությունը»:[35]

Ֆրիկի լեզվամտածողության մեջ դրսևորվող ասորական փոխառությունները պայմանավորված էին հայ և ասորի բնակչության անմիջական շփումներով, որոնք

---

*[30] Գ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Պարսից լեզվի քերականություն, Եր., 1980, էջ 111:*
*[31] Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պամություն, էջ 258:*
*[32] Նույն տեղում, էջ 259:*
*[33] Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն, Միջին հայերենի բառապաշարը, Եր., 1993, էջ 20:*
*[34] Դ. Ե ր ե մ ե և, նշվ. աշխ., Եր., 1975, էջ 120:*
*[35] Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1940, հ. I, էջ 335:*

առավել սերտ էին «Հայաստանի հարավային գավառներում, Միջագետքի հյուսիսային կողմերում, Կիլիկիո արևելյան շրջաններում, Եփրատացոց սահմաններում»:[36]

Աճառյանի նշած ասորական 290 փոխառություններից Ֆրիկի տաղերում վկայվել են ընդամենը երկուսը՝ *խիլայել* (Ապա նոքա վասն կաշառուց, Զմարդն *խիլայեն* և զնդանեն /ՖրԲ,188/) և *կըթխայ* (Ով կու սիրէ կուժ ու *կթղայ*, Դուստր ու որդիքն յէգուց մուրայ /ՖրԲ,105/), որոնք հայ մատենագրության մեջ հիշատակվել են XIII դ. սկսած:[37]

Նշենք, որ Ռ. Ղազարյանը, անդրադառնալով միջնադարյան ասորական փոխառություններին, դրանց մեծագույն մասը համարել է անմիջական փոխառություններ:[38] Այս իրողությունը թույլ է տալիս ենթադրել, որ Ֆրիկը բնակվել է այնպիսի վայրում, որտեղ ասորիների հետ շփումը նվազ է եղել:

*Եվրոպական փոխառություններ*: Ֆրիկի տաղերում վկայվել է ընդամենը մեկ եվրոպական արմատ՝ *պարոն* և դրանից ձևավորված *պարոնորդի* բառը: Սա հակառակ է այն վարկածին, որի համաձայն՝ Ֆրիկը երկար ժամանակ ապրել ու աշխատել է Կիլիկիայում:

Հայտնի է, որ եվրոպական փոխառությունները, ի հակադրություն հունականի և պարսկականի, որոնց առկայությունը պայմանավորված էր մշակութային ազդեցությամբ, իմաստային առումով «ժողովրդական են, այսինքն՝ գործածված են իրապես խոսակցական լեզվի մեջ»:[39] Սրանից կարող ենք վստահաբար եզրակացնել. եթե Ֆրիկի միջավայրում գործածվեին եվրոպական բառեր, նրա բառապաշարում դրանք ևս կարտահայտվեին, մանավանդ, նա սկզբունքորեն դեմ չի եղել դրանց գործածմանը՝ ձգտելով հնարավորին չափ մոտ լինել ժողովրդական լեզվամտածողությանը: Հիշենք, որ ԺԲ-ԺԳ դարերում Կիլիկյան Հայաստանում եվրոպամիտությունը բավական մեծ չափեր ուներ՝ ընդգրկելով կյանքի բոլոր ոլորտները, իսկ լեզվում այն արտահայտվում էր եվրոպական բազմաթիվ փոխառություններով: Պահպանվել է Լամբրոնացու՝ 1195 թ. նամակը՝ ուղղված Լևոն Բ-ին, որտեղ խոսվում է եվրոպամիտության պահելի չափերի մասին:[40] Ըստ էության, Աճառյանի ներկայացրած միջնադարյան եվրոպական 87 փոխառություններից Ֆրիկը գործածել է միայն մեկը, որը, ի դեպ, տարածքային սահմանափակում չի ունեցել և լայնորեն կիրառվել է ոչ միայն Կիլիկիայում, այլև ամբողջ Հայաստանում:[41]

Ֆրիկի լեզվում առկա փոխառությունների քննությունը նաև խոսում է բուն Հայաստանի տարածքում նրա ապրելու և ստեղծագործելու հանգամանքի օգտին:

## ЗАИМСТВОВАНИЯ В ПОЭЗИИ ФРИКА


***Резюме***                ***А. Айрапетян***

**В статье сделана попытка представить роль заимствования в языке средневекового армянского писателя Фрика с грамматической и, особенно, со словообразовательной точки зрения. Исходя из того, что Фрик использовал в своем творчестве устную разговорную речь, можно сделать выводы о спорном вопросе его местожительства. С этой целью путем языкового исследования присутствующих в поэзии Фрика персидских и европейских заимствований сделаны некоторые уточнения о приблизительных границах местожительства Фрика. Мы полагаем, что он, вопреки общепризнанной версии, жил и творил не в Киликии, как принято считать, а в Армении.**


---

[36] *Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ, էջ 336:*
[37] *Ռ.Ղ ա զ ա ր յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Միջին հայերենի բառարան, հ. I, Եր.,1993, էջ 340, 396:*
[38] *Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 25:*
[39] *Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1951, հ. II, էջ 303:*
[40] *Նույնը:*
[41] *Նույն տեղում, էջ 296-324:*

*Սենեքերիմ ՄԵԼՔՈՆՅԱՆ*

## *Ղ. ԱՂԱՅԱՆԻ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ*

Երբ XIX դարի 60-ական թվականների սկզբին գրական ասպարեզ ոտք դրեց Ղ. Աղայանը, լեզվամշակման առումով երկու հիմնական կողմնորոշիչ ուղղություն էր սկզբնավորվում: Ձեռքից ձեռք էր անցնում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», հրապարակի վրա էր Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթերը», և առաջադեմ երիտասարդության վրա ուժեղ էր նաև «Հյուսիսափայլի» ազդեցությունը: Եթե Րաֆֆին առանց տատանումների որդեգրեց հյուսիսափայլյան ուղղությունը՝ ամենևին չհրապուրվելով աբովյանական ուղղությամբ, ապա նույնը չի կարելի ասել Ղ. Աղայանի մասին: Հ. Էնֆիաճյանի տպարանի 19-ամյա հմուտ գրաշար Աղայանը կարդում էր ոչ միայն այդ տպարանում տպագրվող «Մեղու Հայաստանի», «Կռունկ Հայոց աշխարհի» պարբերականները, այլև Մոսկվայից ստացվող «Հյուսիսափայլը» և սրտատրոփ սպասել է Կոմս Էմմանուելի նոր գրվածքների երևան գալուն: Իսկ Խ. Աբովյանի «Վերքը» գերել էր նրան:

1862թ. «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում երևան է գալիս Աղայանի «Հարկավոր է օգնել չքավորներին» բանաստեղծությունը, որը նրա առաջին տպագիր գործն է: Այդ բանաստեղծության լեզվի վրա ակնհայտ է հյուսիսափայլյան լեզվի ազդեցությունը, դրանում տեղ են գտել այսպիսի գրքային արտահայտություններ.

Մնաս *բարյավ* ասի բազմամարդ տեղին,
*Մկսա շրջիլ* ազատ հովերում,
Ելա մի բարձր բլուրի *վերա*՝
Դիտել, թե՝ ինչ կան *նորա* չորս կողմում:[1]

Այս բանաստեղծությունից հետո Աղայանն անցնում է արձակի ժանրին: 1867թ. տպագրվում է «Արություն և Մանվել» վեպը, որը հատկանշվում է միանգամայն այլ լեզվառրակով: Վեպում ոչ միայն հիմնականում հաղթահարված է հյուսիսափայլյան լեզվի ազդեցությունը, այլև չի նկատվում դեպի աբովյանական բարբառային լեզուն հակվելու միտում: Վեպում, հատկապես հեղինակային խոսքում, բավական մաքուր գրական դրսևորումով թևածում է ժողովրդական կենդանի խոսքի ոգին: Հետագայում արձակ և չափածո ստեղծագործություններում Աղայանն ավելի է մշակում, կատարելագործում իր լեզուն՝ հասցնելով զարգացման այնպիսի աստիճանի, որն իրավացիորեն ոմանց զարմանք է պատճառում: «Զարմանալի է,- գրում է Դ.Դեմիրճյանը,- թե Աղայանը, այդ՝ ժողովրդի ծոցից ելած, ժողովրդի համար գրող մարդը որքա՞ն վաղ, նրբորեն զգաց չափը, հասկացավ, թե որն է լեզվի զարգացման հիմնական գիծը, ոսկե միջինը, և իմաստուն կերպով միաձուլեց լեզվի բոլոր տարրերը, ներդաշնակեց և ընդհանրացրեց»[2]: Այո՛, Աղայանը շատ վաղ է զգացել նոր գրական հայերենի մշակման, զարգացման «հիմնական գիծը, ոսկե միջինը», չշարունակելով ընթանալ լեզվի մշակման հյուսիսափայլյան ուղղությունով՝ նաև չի հակվել դեպի բարբառը:

Կարծում ենք՝ աղայանական լեզվառրակը պայմանավորող հանգամանքների մեջ առանձնակի կարևորություն պետք է տալ մի իրողության, որը, որքան մեզ հայտնի է, առայժմ ըստ էության դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

Հայտնի է, որ իր կյանքի վերջին շրջանում, պետրոպավլովյան բերդում Մ. Նալբանդյանը գրական աշխարհաբարի մշակման հարցում հանգեց նոր կարծիքի, այդ դիրքերից քննադատեց և՛ «Հյուսիսափայլի» լեզվամշակման քաղաքականությունը, և՛ գավառական բարբառներին ստրկանալը՝ առաջ քաշելով նոր գրական լեզուն ինքնուրույնաբար մշակելու գաղափարը: Նոր լեզվի մշակման բուն խորհուրդը համարելով «որքան կարելի է առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի»[3] լինելը՝ Մ. Նալբանդյանն այսպես է շարունակում իր միտքը. «...նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խպնելու և առանց այս կամ

---

[1] *Ղ. Ա ղ ա յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1962, էջ 7:*
[2] *Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1963, էջ 385:*
[3] *Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1940, էջ 197: Ընդգծումը հեղինակինն է:*

այն գավառական բարբառին ստրկանալու»:[4] Նալբանդյանը, ուրեմն, հանգել էր այն համոզմանը, որ գրաբարը, բարբառը ոչ թե դեպի իրենց պիտի ձգեն նոր գրական լեզուն, այլ վերջինիս համար սնման աղբյուր պիտի հանդիսանան: 1860-ական թվականների սկզբին երևան եկած այս տեսակետն իր խորապես գիտականությամբ և հստակությամբ անփոխարինելի դեր կունենար նոր գրական հայերենի մշակման գործում, եթե, դժբախտաբար, այնքան ուշ հրապարակման արժանացած չլիներ: Հայտնի է, որ Նալբանդյանն այդ նոր տեսակետին հանգել է Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպին վերաբերող «Կրիտիկա»-ում, որի մի հատվածն առաջին անգամ հրապարակվել է 1890 թվականին:

Բավարար հիմքեր կան ասելու, որ Ղ. Աղայանը նալբանդյանական նոր տեսակետին շատ վաղ՝ 1865թ. է ծանոթ եղել և, որ ավելի կարևոր է, իր լեզվամշակման գործունեության ընթացքում հենց այդ թվականից սկսած կողմնորոշվել է նալբանդյանական տեսակետով: Նախ այն մասին, որ Աղայանն այդ տեսակետին ծանոթ է եղել հենց Նալբանդյանից լսելով համապատասխան մտքերն ու դատողությունները: Դա տեղի է ունեցել այն ժամանակաշրջանում, երբ Նալբանդյանը 1865թ. մայիսի 13-ին երաշխավորությամբ դուրս է եկել Պետերբուրգի բանտից և վեց ամիս, մինչև աքսոր ուղարկվելը ազատության մեջ է եղել ու ապրել Պետերբուրգում՝ Նոր Նախիջևանցի մի ծանոթի բնակարանում: Աղայանը Նալբանդյանի հետ անձամբ ծանոթացել է այդ բնակարանում:[5] Հանդիպման օրը ստույգ հայտնի չէ, նշվում է, թե դա պիտի տեղի ունեցած լինի «մայիսի 13-ից հետո, ամենաուշը մի քանի շաբաթվա ընթացքում, նույն ամսվա վերջերին կամ հունիսին»:[6] Մեզ ավելի հավանական է թվում,որ այդ հանդիպումն ավելի շուտ պիտի տեղի ունեցած լինի, մայիսի 13-ին հաջորդող մոտակա օրերին, մանավանդ որ Աղայանն ավելի վաղ գեներալ Սուլթանշահից իմացել է, որ նա Ալեքսանդր II ցարին հասցեագրված խնդրագիր է ներկայացրել սենատ՝ իր երաշխավորությամբ և անձնական պատասխանատվությամբ Նալբանդյանին,նախքան դատավճիռը, բանտից ազատելու վերաբերյալ: Սպասում են, սպասողական վիճակի մեջ են, և բնական է, որ բանտից դուրս գալուց անմիջապես հետո հանդիպելու են նրան: Հանդիպումից ստացած տպավորությունն Աղայանն այսպես է ներկայացնում: «Թոքախտը մաշել էր նրան, և առաջվա Նալբանդյանի ստվերագիծն էր մնացել,- գրում է Աղայանը,- բայց որքա՜ն զարգացել էր մտավորապես և որքա՜ն ետ թողել իրենից Ս. Նազարյանցին: <u>Համակիր չէր այլևս ոչ նրա լեզվին և ոչ նրա ուղղությանը</u>՝ համարելով հետամնաց և պահպանողական: Նալբանդյանը, աշխարհից կտրվելով, չէր կտրվել ժամանակակից գրականությունից, շարունակ կարդացել էր միայնության մեջ և շատ էր մտածել»:[7] Ուշագրավ է, որ հանդիպման ժամանակ Նալբանդյանն առանձնակի կարևորություն է տվել աշխարհաբար գրական հայերենի մշակման իր նոր տեսակետին տեղյակ պահելու հարցին, այն միտքն է արծարծել, որ ինքն այլևս համակիր չէ Ստ. Նազարյանցի, «Հյուսիսափայլի» լեզվամշակման ուղղությանը, որը տանում էր դեպի գրքայնություն, արհեստականություն, և Նալբանդյանի այդ մտքերը դրոշմվել են Աղայանի հիշողության մեջ:

Այժմ մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ ևս մի ուշագրավ իրողություն: Շարունակելով իր խոսքը՝ Աղայանն անդրադառնում է Նալբանդյանի *ձեռագրերի* ճակատագրին՝ նշելով, թե Նալբանդյանի «գրածների մի մասը Մ. Տեր-Գրիգորյանցի ձեռքն ընկավ, բայց թե ու՞մ մոտ մնաց հետո՝ ես չիմացա»:[8] Մ. Տեր-Գրիգորյանցը Նալբանդյանի անձնական բարեկամն է, նրա կենսագիրը, որի հետ, ինչպես Աղայանն է վկայում, նույն շրջանում թարգմանություններ է կատարել: Կասկածից դուրս է, որ Տեր-Գրիգորյանի «ձեռքն ընկած» Նալբանդյանի ձեռագրերի մեջ եղել է նաև «Կրիտիկայի» համապատասխան հատվածը, և Աղայանը դա կարդացել է ձեռագիր վիճակում:

Բացի վերը նշվածներից արդյոք այլ հիմքեր կա՞ն ասելու, որ Նալբանդյանի հետ անձնական ծանոթությունը, նրա նոր տեսակետը վճռական դեր են ունեցել երի-

---

[4] *Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., հ. 3, էջ 197:*

[5] *Ա. Ի ն ճ ի կ յ ա ն, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Եր., 1954, էջ 226, 295:*

[6] *Ղ. Ա ղ ա յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1963, էջ 631:*

[7] *Նույն տեղում, էջ 402: Ընդգծումը մերն է- Ս. Ս.:*

[8] *Նույնը:*

տասարդ Աղայանի լեզվական կողմնորոշման հարցում: Հարցին դրական պատասխան պետք է տալ և ասել, որ Նալբանդյանի լեզվամշակման նոր տեսակետի միանգամայն բարերար ազդեցությունն զգացվել է Աղայանի անդրանիկ վեպի՝ «Արություն և Մանվել»-ի վրա:

Այդ վեպի ձեռագիրը գրված, պատրաստ է եղել «Պետերբուրգում 1865թ. առաջին կեսին»:[9] Հայտնի է նաև, որ Աղայանը «նախքան տպագրության հանձնելը հիմնովին վերանայել է»[10] այդ վեպի ձեռագիրը: Վերանայումը պիտի կատարված լինի 1865թ. առաջին կեսից հետո, ավելի որոշակի՝ 1865թ. մայիսի 13-ից, այսինքն բանտից Նալբանդյանի դուրս գալուց հետո: Ցավոք, այդ հիմնովին վերանայված ձեռագիրը չի պահպանվել: Բայց որ 1862թ. տպված «Հարկավոր է օգնել չքավորներին» բանաստեղծության լեզվի վրա զգացվող հյուսիսափայլյան ուժեղ ազդեցությունը հիմնովին հաղթահարված է դրանից երեք-չորս տարի հետո տպագրվող «Արություն և Մանվել» վեպում, դա ինքնըստինքյան խոսում է այն մասին, որ վեպի ձեռագրի «հիմնովին վերանայումը» նաև արտահայտվել է հյուսիսափայլյան լեզվատարրերի բռնաքափումով, ինչպես նաև անհարկի բարբառային տարրերի օգտագործումը սահմանափակելով:

Եթե նշված բանաստեղծության մեջ հյուսիսափայլյան, գրքային *նորա, նորան, անցանեն* /փոխ.՝ անցնեն/, *ծերունվո* /փոխ.՝ ծերունու/, *վերա* /փոխ.՝ վրա/, *սկսա* /փոխ.՝ սկսեցի/, *կարե* /փոխ.՝ կարող է/ և այլ ձևերի հետ հարևանություն են անում *էնտեղի, էսքան, բարովեցի* /փոխ.՝ բարևեցի/ և այլ բարբառային ձևեր, ապա «Արություն և Մանվել» վեպում լեզվամշակումն ընթացել է գրական նորմայի պահպանման կողմնորոշումով, խոսքի ժողովրդայնացման հունով: Այդ վեպի լեզվի մասին ընդհանուր պատկերացում տալու համար ուշադրության արժանացնենք դրա առաջին էջից վերցրած մի երկու նախադասություն:

«Երբ որ եկեղեցուց դուրս եկած տուն էր գնում տեր հայրը, նրա հետևից գնում էր մի պատանի, որ՝ ինչպես երևում էր ձեռքին բռնած հարիգայից, տերտերի մնքն էր, այսինքն աշակերտը և փոքրիկ տիրացուն: Արություն էր նրա անունը: ...Արությունը այս գյուղից չլինելով՝ շատ ուրախ էր, որ մյուս օրը յուր ազգականներից շատերը մոտակա գյուղերից կգան, և նրանց կտեսնի...»:[11]

Հեշտ է նկատել, որ նկարագրության գունազարդման, հրապարակախոսության ոչ մի տարր, ինչպես նաև բարբառայնության հակում չի նկատվում այս խոսքում, չկան գրաբարյան կամ բարբառային ձևերի անհարկի գործածություններ: «Հարիգա» բառի գործածությունը կարող է առարկություն հարուցել՝ որպես բարբառային ձև: Էդ. Աղայանի բառարանում դա այդպիսի նշումով էլ ներկայացված է և բացատրված է «խուրջին» հոմանիշով: Բայց ինչպես որ *հարիգա-ն* է ժամանակակից գրական լեզվազգացողությունից դուրս, այնպես էլ՝ *խուրջին-ը*: Պետք է նկատի ունենալ, որ Աղայանն առհասարակ սառը վերաբերմունք չի ցուցաբերել մի շարք այնպիսի բառերի նկատմամբ, որոնք ընդգծված բարբառային դրսևորումներ չլինելով, կարող էին մեր նոր գրական լեզվում քաղաքացիության իրավունք ստանալ: Նրա կողմից գործածված այդպիսի բառեր են նաև *աքլոր, փիս, ուսուլ, շշկլվել, մահանա:* «Շատ անգամ մարդ *փիս* երազ էլ տեսնում է», «Նա էլ մի բան *մահանա* արավ, հեռացավ»:[12]

Միանգամայն հիմնավոր, այլև արժեքավոր է Աղայանի կարծիքն իր առաջին վեպի գրական ուղղվածության և լեզվի մասին: Իր «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» գրական ակնարկում Րաֆֆին, իրեն ամբողջովին հակադրելով իր ժամանակակից հայ վիպագիրներին, հայտարարում է, թե «Աբովյանի հետևողները, Աբովյանի անշնորհք աշակերտները եղան»՝[13] նկատի ունենալով առանձնապես Պ. Պռոշյանին և Ղ. Աղայանին: Այս անհիմն կարծիքին Ղ. Աղայանը շատ հանգիստ տոնով է անդրադառնում և, մնալով որպես համբերատար մանկավարժ՝ բացատրում է, որ իր «Արություն և

[9] Ղ. Ա ղ ա յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, 1962, էջ 395: Ընդգծումը մերն է -Ս. Մ.: Հայտնի է, որ Աղայանը 1864-1867թթ. ապրել է Պետերբուրգում:

[10] Նույնը:

[11] Նույն տեղում, էջ 3:

[12] Նույն տեղում, էջ 38, 165:

[13] Ր ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ.10, Եր., 1959, էջ 156:

Մանվել» վեպը անմահ Աբովյանի վեպի հետևությամբ չի գրված:[14] Աղայանը «Վերք Հայաստանի» վեպը համարում է, մի ողբ, ողբ հայրենիքի թշվառության վրա, ողբ հայրենասերի, բխած մի զգայուն սրտից...»:[15] Իսկ իր վեպի մասին այսպես է արտահայտվում. «Արություն և Մանվելը,- գրում է Աղայանը,- բերում է մի բոլորովին նոր ուղղություն..., սա մի պատերազմ է հայտարարում հին գաղափարների, հին դաստիարակության դեմ, որոնց վրա չի ողբում, այլ հարձակվում է անխնա և նրանց տեղը տարածում նորը և լավագույնը»:

Անդրադառնալով իր վեպի լեզվի հարցին՝ Աղայանը նույնպիսի օբյեկտիվությամբ ճշմարտացիորեն հետևյալ միտքն է հիմնավորում: «Լեզվի կողմից էլ,- գրում է Աղայանը,- այս վեպը այն նորությունն է բերում, որ հեղինակին խոսեցնում է մաքուր գրական լեզվով, միայն գործող անձերին է թույլ տալիս, որ մոտավորապես իրանց խոսելու ոճով ու բարբառով հանդես գան»:[16] Այո՛, լեզվամշակման առումով էլ Աղայանի վեպը նորություն է բերում, նորություն այն իմաստով, որ դա առաջին վեպն է, որ գրվել է միանգամայն մաքուր, ժողովրդաշունչ գրական լեզվով: Չգիտես վիպագրության հարցում ինչպիսին է եղել Լեոյի ըմբռնումը, որ այսպես անվերապահորեն պնդում է, թե մինչև Րաֆֆին հայ վիպագրությունն անլեզու է մնացած եղել: «Մենք,- գրում է Լեոն,- ունեինք բանաստեղծության լեզու, հրապարակախոսության լեզու, թատերագրության լեզու: <u>Անլեզու էր մնացել միայն վիպագրությունը</u>»:[17] Լեոյի այս կարծիքը նույնքան կողմնակալ վերաբերմունքի արտահայտություն է, որքան և Թումանյանին «լեռան երգիչ» համարելը:

Այսպիսով՝ Ղ. Աղայանի լեզվական կողմնորոշման հարցում վճռական նշանակություն է ունեցել այն իրողությունը, որ աշխարհաբար գրական հայերենի մշակման հարցում Մ. Նալբանդյանի նոր տեսակետը նրան հայտնի է եղել առաջին անգամ տպագիր ձևով հրապարակ գալուց (1890) շատ վաղ՝ 1865 թվականին: Այդ թվականին վերաբերող իր հուշերում Աղայանն ունի այսպիսի մտորումներ, դատողություններ. «... ինչպես բույսն իր սնունդն է պահանջում, նույնպես պահանջում է և միտքը», «Դժվարը նոր բան ասելն է», իսկ ասածը չհասկանալը նախանձելի բան չէ:[18] Մ. Նալբանդյանն ասել է այդ նոր բանը, և Աղայանի միտքը սնվել է դրանով, որն անգնահատելի դեր է ունեցել արևելահայ գրական լեզվի զարգացման գործում:

## *О ЯЗЫКЕ Г. АГАЯНА*


*____ Резюме ____* *____ С. Мелконян ____*

*В первом произведении Г. Агаяна (1862г.) явно заметно влияние книжной речи "Юсисапайла". В изданном в 1867г. романе "Арутюн и Манвел" не только преодолено влияние юсисапальской книжной речи, но и не наблюдается склонности к абовянскому диалектному языку.*

*В статье выдвигается мысль о том, что в языкотворческой ориентации Г. Агаяна решающую роль сыграло то обстоятельство, что новая точка зрения М. Налбандяна относительно разработки современного литературного языка ему была известна еще в 1865г., т. е. задолго до ее публикации (1890г.).*


---

[14] *Ղ. Ա ղ ա յ ա ն, նշվ. աշխ., հ.4, էջ 395:*
[15] *Նույնը:*
[16] *Նույն տեղում, էջ 396:*
[17] *Լ ե ո, Ռուսահայ գրականություն, Վենետիկ, 1904, էջ 168: Ընդգծումը մերն է - Ս. Մ.:*
[18] *Ղ. Ա ղ ա յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 398:*

*Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ*

## *ԵՐԱԶԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՄՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ*
### *(1988-ի դեկտեմբերյան աղետի նյութերի հիման վրա)*

Երազային նյութի վերապատմումների լեզուն հատկանշվում է ժողովրդական մտածողության քնույթով: Մեր ուսումնասիրության տեսազծերում ներկայացնում ենք հոգեբանական և լեզվաբանական օրինաչափություններով պայմանավորված երազատես անձի խոսքը. ինչպես է պատմվող երազային նյութը ծածկագրվում լեզվի միջոցով, իսկ ունկնդրի կամ երազահանի հոգեկանում՝ ապածածկագրվում, ըմբռնվում իր իմաստային կողմով: Անկախ գրառված երազների բովանդակային որոշակիությունից կամ դիպաշարից, կրկնվող նշանասիմվոլային պատկերների հաճախականությունից՝ խորհրդանշական իմաստավորում է ստանում նաև երազային տեքստի վերապատմումների լեզուն: Ըստ Յունգի՝ երազների լեզուն նույնքան բարդ է, որքան գիտակցական կյանքում հնչող լեզուն, այն բաղադրված է առասպելական կերպարներից և առավել բարդ է ու պատկերավոր, քան համապատասխան տպավորությունները սովորական կյանքում:



Տվյալ դեպքում, մեզ հետաքրքրում է լեզվի միջոցով անձի հոգեկան առանձնահատկությունների ու հոգեկան բովանդակությունների (մտքեր, զգացմունքներ, դիրքորոշումներ, հուզական վիճակներ) արտահայտման խնդիրը: Թեպետև բառային նշանները ունեն տվյալ ազգամշակույթում համընդհանուրի կողմից ընդունված նշանակություններ, այնուամենայնիվ յուրաքանչյուր բառ, խոսքային գործունեության դրսևորման յուրաքանչյուր միջոց ունեն անձնային իմաստ և շեշտվածություն:

Լինելով երազատես-ասացողների ներաշխարհի հոգեբանական շարունակությունը՝ երազները, վերջին հաշվով, ամփոփում են մեր ժողովրդի բնավորության, նրա ճակատագրի, հոգևոր աշխարհի տոհմիկ հատկանիշները, ազգային կեցության և ազգային տենչերի սահմանները: Երազատեսների լեզուն միշտ հետաքրքրական է լեզվամիջոցների ընտրությամբ, խոսքային գործունեության արտահայտման հրահանգների բազմազանությամբ, բառ-օգտագործման տարբերությամբ, ինչպես նաև պատումի բնականությունն ապահովող ինքնաբուխ տարրերով:

Երազների լեզվական մշակույթի կառուցվածքային շերտերը պայմանավորում են.

ա) երազի մուտքը, ուր բանաձևային արտահայտությամբ ասացողը նշում է երազային գործողության կամ ասացողի հոգեվիճակի պայմանականությունը, ժամանակը (... իբր երազիս, գիշերը երազիս..., իբր կանգնել եմ մի ջրհորի մոտ... և այլն),

բ) պատումի աշխարհագրական տարածքը (տեղական միջավայր՝ մեր տան դաքը, մեր հին մայլեն, ձորի պռնկին, Չարքզի ձորը, Բոշի սաղը և կամ Հայաստանի պատմաաշխարհագրական տարածքը՝ Կարս, Անի, Վան և այլն),

գ) պատումի ձևը. նախքան երազի բուն պատումն սկսելը երազատեսը ներկայացնում է իր կենսագրությանն ու հոգեվիճակին առնչվող մանրամաս, երբեմն անսպասելի անցումով ընդմիջարկում է նյութը՝ դիմելով առընթերականության, սահմանակցության, զուգորդական հիշողությանը:

Առհասարակ, հոգեբանական անցումների պատումը խիստ բնորոշ է երազներին: Երազատեսի ներաշխարհի կուտակումները հասնում են մինչև գեղագիտական նշանի սահմանները: Պատկերի մեջ նյութական տարրերն աստիճանաբար իմաստափոխվում, զրկվում են առարկայական որոշակի բովանդակությունից ու առօրեական խորհուրդներից՝ վերաճելով ընդհանրական, համազգային գոյասիմվոլի: Երազների լեզուն հարուստ է ազգայինին հատուկ, ժողովրդի լեզվամտածողությանը բնորոշ կայուն բանաձևերով, որոնք խոսքային հյուսվածքի մեջ լեզուն դարձնում են սեղմ, դիպուկ և պատկերավոր:

Հոգեբանական բարդ իրավիճակներ վերարտադրելիս, կախված սեռատարիքային առանձնահատկություններից, պատմամշակութային զարգացման մակարդակից ու կենսափորձից, երազատեսները հաճախ նախընտրում են լեզվական աստյքների գործածումը: Երազների վերապատումների լեզվին հատուկ է խոսքային տրամաբանական կամ սիմվոլիկ հիշողությունը: Երազի տեքստի մտապահման, պահպանման ու վերարտադրման գործընթացներն արտահայտվում են լեզվական խորհրդանիշների օգնությամբ:

Սիմվոլիկ հիշողությունն առավել արդյունավետ է դարձնում խոսքը: Հայտնի հոգեբան Ջ.Միլլերը պնդում է, որ լեզվի ծածկագրման գործընթացն իրականանում է այն ժամանակ, երբ մենք մեր ապրումներն արտահայտում ենք բառերով և ավելի շատ մտապահում ենք այդ բառերը, քան ապրումները: Խոսքային-տրամաբանական հիշողությունը ձև է տալիս մեր ընկալումներին, քանի որ ժողովրդական լեզվամտածողության կենդանի բարախը պայմանավորված է բառապաշարի մեջ դարձվածքային միավորների ներթափանցմամբ ու յուրացմամբ: Երազային մեկ պատումի տիպական օրինակով փաստենք ասվածը.

*1988թ. դեկտեմբերի 4-ի առավոտը տղաս ինձ կանչեց ու ասաց՝ շատ հետաքրքիր երազ եմ տեսել: Տղայիս մահճակալի վերևը փակցված էր «Խորհրդավոր ընկրիք» նկարը: Նա ասաց. «Մա՛, էդ նկարի մեջ ինչքան սուրբ կար, վրես էր հարձակվել: Ընպես կծեծեին, ջանիս վրա սաղ տեղ չմնաց: Հմի էլ էդ ծեծած տեղերը կցավան»: Մեր ազգից մենակ ինքը զոհվեց: Դոշը դեմ տվեց ու սաղ ազգի տեղը ինքը գնաց: Էդ սրբերը ծեծեցին, մարտիրոսեցին տղիս ու տարան: Տղիս անունը սկեսրայրիս անունն էր դրած, շատ տանջված մարդ էր: Ջանի վրա անվերք տեղ չունիր: Բալես էլ նույն տանջանքը կրեց: Հմի աղջիկս հղի է և կուզե ծնվելիք երեխուն տղուս անունով կանչե: Ես չեմ թողնի, «Համիկ» մի՛ դնե, տանջանքը շատ է, «Հարություն» դիր, յանի մեր տղեն հարություն առավ*:

Ինչպես տեսնում ենք, ասացողի կենսագրության և երազի սյուժետային համադրությունը զարգանում է ներքին հուզավերլուծական բովանդակային խոսքի միջոցով: Մարդու հոգեկանի անբաժանելի բաղադրատարրեր են հույզերն ու զգացումները, որոնք գերլարված (ստրեսային) իրավիճակներում վերաճում են հուզական բարդույթների: Հուզականությունը հատուկ լինելով նաև իմացական գործընթացներին՝ հետաքրքրական դրսևորում է ստանում երազի տեքստային վերապատումների լեզվի մեջ: Դարձվածքների և դարձվածքամերձ արտահայտությունների, խոսքային աստյքի կիրարկմամբ պատմողը հասնում է հոգեբանական նյութի բևեռացման: Երազի կենսական տարածության սահմաններն ընդլայնվում են բանասացի կենսագրական նյութի ներթափանցումով, որը վերաճում է ազգային ճակատագրի հոգեբանական պատկերի:

«Ջանիս վրա սաղ տեղ չեն թողել, սրբերը ծեծեցին, մարտիրոսեցին տղիս, դոշը դեմ տվեց, սաղ ազգի տեղ գնաց, մեղեց-մեղտրեց» արտահայտչաձևերը երազային հյուսվածքի մեջ դառնում են հուզական վիճակի բեռնվածության կենտրոններ՝ ստեղծելով ներքին կուտակումների միջավայր:

Մասնահատուկ իմաստավորում է պահանջում ժողովրդական լեզվամտածողության բանաձևային ասույթների (անեծք, օրհնանք, առած, ասացվածք, ողբերգ) փոխանցումը երազային մտածողությանը: Այսպես օրինակ. երազներից մեջբերված դարձվածքային միավորներ.

սև ջուր վազել – սևջրվիս (անեծք)

արտ քաղել, վարած արտի մեջ պառկել - Աստծու կանաչ

արտը ե՞ս էի քաղել (լացերգ)

տունը քանդվել - ավերակ մնաս (անեծք)

խաչը թեքված տեսնել – խաչը գլխիդ խռով կենա (անեծք)

երազիս քաղաքը ամայի էր դարձել ու դատարկվել - դատարկուն էղնիս (անեծք)

կապույտ քարերով քաղաք – մահվան քաղաքն էրթաս (անեծք)

երազիս մե ուղղությամբ նեղ ճանապարհ տեսա, էդ ճամփով բոլորը գնացող էին, ետ դարձողներ չկային - երթալը էղնի, գալը չէղնի (անեծք) և այլն:

Ասացող - երազատեսը կամ ունկնդիր-երազահանը ժողովրդալեզվամտածողության նման եղանակի դիմում է երազի ենթատեքստային մեկնումների ժամանակ: Երազատեսներից շատերը, բարբառակիր լինելով,հարազատ լեզվամիջավայր են ստեղծում տեղային-բարբառային երանգավորում ունեցող դարձվածքային արտահայտությունների և կամ ժողովրդական մտածողության այլ դրսևորումների միջոցով: «Ջանդ սաղ էղնի, սո՜ւս, էնպես երազ եմ տեսել, հեռի լողաց, հեռի ձեզնից» և նմանօրինակ բանաձևային սկզբով ոճավորվում է պատումի բովանդակային հյուսվածքը: Ոճականորեն նշույթավոր կամ ոճական երանգավորում ունեցող բառերը բացահայտում են երազային համատեքստի հուզական կամ արտահայտչական իմաստային լրացուցիչ կողմը:

Երազատես-ասացողների լեզուն հատկանշվում է ազգային մտածողության պատմականության զգացողությամբ, որը դրսևորվում է երազների մեջ ազգային սիմվոլների երևակմամբ. Օրինակ. *Ղարս տանող ճամփեքը բացվել էին..., Երազիս Վարդան Մամիկոնյանին տեսա երկնքում...* (Կ. Սահակյանի հավաքածու):

Ազգային սիմվոլներ ամփոփող երազային պատումներում հաղթահարված է ասացողների մտածողության կենցաղայնությունը, կամ կենցաղային մանրամասներին հաղորդվում է հոգեբանական խոր իմաստ: Այսօրինակ երազներում որոշակիորեն ամբողջանում են ոչ միայն տվյալ երազատես անձի, այլ նաև ժողովրդի մի ստվար հատվածի (գուցե թե ամբողջ ժողովրդի) ազգահոգեբանական իղեալը՝ աշխարհագրական կամ հոգևոր հայրենիքի միասնության վերականգնման ձգտումը: Երազների արվեստի հասարակական բովանդակությունն ու սոցիալական հնչողությունը պայմանավորվում են պատումի ասացողական տարերքով,ասացողի վերլուծական-համադրական մտքով, ի վերջո, երազի ենթատեքստի մեկնաբանության բանալիով: Երազների մեկնումի մեջ բանաձևվում են երազատեսի փորձն ու կենսահայեցողությունը: Նրա կենսագրական ռեալությունը՝ բեկված մեծ աղետով, տրվում է հուզաարտահայտչական բարձր լիցքավորում ունեցող թանձր ապրումների միջոցով:

Երազի պատումի աստվածաշնչյան բնույթը *(գիշերը երազիս, երազիս գիշերը Հիսուսիս տեսա. երկնքի պատուհանները բաց էին: Աստված իջավ երկնքից, մեջնշաղ էր, գլխին լուսապսակ էր վառվում, փայլից հասկացա, որ տերն է),* պատումի հեքիաթային տարրը *(ոչ քնած էի, ոչ արթուն, մի տարօրինակ ձայն լսի, լսի՞, թե՞ չլսի, կա՞ր, թե՞ չկար)* երազի մեջ ներքին խոսքի առկայությունը *(ես մտածեցի՝ցուլն ի՞նչ գործ ունի երկնքում),* տարբեր ոճերի համադրումը, ասացողի լեզվական մտածողության կամ երևակայության ազատությունը, հուզական իմաստով լիաբեռնված բառերի ընտրությունը, ներըմբռնողաբար կամ երբեմն խիստ տրամաբանված բառի և հասկացության փոխհարաբերության տարբեր երբերանգներին անդրադառնալը, բառերի հոմանիշային հարացույցից օգտվելու լեզվակարողությունը հիմնականում անհատական-հոգեբանական զործընթաց են, քանի որ երազատեսը երազային նյութին համապատասխան նախընտրում է որևէ բառ կամ հոմանիշ՝ պայմանավորված իր խոսքիմացության

ատիճանով, և եթե ունի ժողովրդական պատկերավոր մտածողություն, ստեղծում է ոճաարտահայտչական երանգավորում ունեցող խոսք:

Այսպես՝ *Երազիս ջահել տղա-աղջիկներ, վառվռուն հագած, եկել կանգնել էին մեր դուռը: Հարցրի՝ ինչի՞ եք հավաքվել: Ըսին՝ Համբարձում է, տոն: Տղուդ՝ Հակոբի գովքը պտի էնենք: Ես կուզեի հեռացնեի մեր դռնից, չկարողացա, չէի ուզե լսե, բայց ծաղկամոր երգի ձենը ամբողջ գիշեր գուքար.*

*Արի՜, արի՜*

*Երկար ծամեր,*

*Ոսկե թիթեռ*

*Արի՜, արի՜...:*

Պատկերի սյուժետային հյուսվածքում ժողովրդական մտածողության շունչը տիրապետող է և ստեղծում է վերահաս հոգեապրումը թանձրացնող, երանգավորող մթնոլորտ: Նկատելի է, որ երազային պատումներից շատերը խսկական բանաստեղծական արձակ են, երբեմն ուղղակիորեն չափածոյի ներմույծով, վերջինիս բնորոշ տեսագծերով.

Տաքեւիկ, ոսկե թևիկ,
Արի՛ մոտիկ,
Տաքեւի՛կ, սիրո՛ւն բալիկ:

Պատումի հուզաարտահայտչական իմաստային երանգը թելադրում է խոսքի չափածոյացում: Լեզվամտածողությունը թելադրված է ասացող-երազատեսի սեռատարիքային առանձնահատկություններով:

Առանձին երազների բառային մակարդակում անձի իմացահուզական վիճակը լրիվ չի դրսևորվում՝ մղվելով ենթագիտակցության ոլորտ, իսկ հույզը գիտակցության աստիճանում մնում է չպատճառաբանված: Երազատեսը հաճախ հորինում է այնպիսի պատկերներ, որոնք իրականում նրա հոգեկանում չեն եղել, այլ ծնվել են հաղորդման գործընթացում՝ անձի ներքին դրդապատճառների ազդեցության տակ: Այսօրինակ երևույթ են երազների մասին խոսքային վերապատումները: Իրենց մտապատկերները վերարտադրելիս մարդիկ հաճախ են անդրադառնում այն ամենին, ինչ աղեկված է սեփական հոգեկան վիճակին, դիրքորոշումներին՝ գիտակցության ոլորտից արտամղելով անցանկալին, քանի որ անձը ելնում է իր ներքին դրդապատճառներից և միշտ չէ, որ միտված է սեփական հոգեկան կյանքի ճիշտ, օբյեկտիվ իմացությանը:

Կարևոր է նաև խոսքային ասույթի հնչյունային իրականացումը: Ըստ Լեոնտևի՝ այն հնչյունային արտաբերական և ձևույթային իրականացման գործընթաց է, որը ասույթի ընտրված շարահյուսության կիրարկումն է արտաքին խոսքում: Խոսքի հնչյունական նշանակությունը, ռիթմիկան, հնչյունների և բառակապակցության միջոցով ստեղծվող ձայնի որակը, տողի հնչողությունը ուղղված են խոսքի հուզական երանգների ապահովմանը: Բաղաձայնույթի, երբեմն նաև առձայնույթի զուգադրությամբ են պայմանավորվում երազների լեզվական համակարգի դրսևորման մասնահատկությունները: Ասենք «ս» հնչյունի բաղաձայնույթով կամ գերակշռությամբ կազմված հետևյալ կանխազգացումը.

Երկրաշարժին խելագարի նման տուն էի վազում, շարունակ մտքիս մեջ տենդորեն կրկնվում էր. «Սուսա՛ն ջան, դու սևեր մի՛ հագնի, Սուսա՛ն ջան, դու սևեր մի՛ հագնի, Սուսա՜ն, Սուսա՜ն»:

Հետաքրքրական է ասացողի՝ կրավորակերպ բայաձևի ընտրությունը՝ մտքիս մեջ տենդորեն կրկնվում էր ... այսինքն՝ «Սուսան ջան, դու սևեր մի հագնի» արտահայտության ինքնաբերական, ոչ կամային կրկնությամբ նա կարծես հոգեբանական հակազդեցության է նախապատրաստվում սպասվող ինչ-որ դժբախտության, սևեր հագնելու սիմվոլով: «Ս»-երի կուտակումը ապահովում է հոգեապրումի խորությունը:

Հետկորստյան հակազդեցության երազի տիպական օրինակ է նաև հետևյալ պատումը.

*Երկրաշարժից հետո տեսա հորս անկերպարան հոգին: Ինքը չէր խոսում ինձ հետ: Տիրոջ մարդը՝ իբրև միջնորդ, ինձ թարգմանում էր հորս խոսքերը: Սպիտակ մազերով, ձեռքերը ծնկներին դրած կին էր: Աջ ձեռնափը առաջ պարզած՝ ցույց էր տալիս*

*ինչ-որ է ու երկնային բարբառով շշնջում ինձ՝ սի՛-սի՛-սի՛-սի՛: Ես հասկանում էի պայմանախոսը՝ սա հոգին է քո հոր» (զոհվել է հայրը):*

«Սի-սի-սի» արտահայտությունը երազի ենթատեքստային լեզվի մեջ կարևորվում է իբրև նշանասիմվոլային իմաստակիր միավոր՝ «ս» բաղաձայնի կուտակումով:

Պատումի ընթացքում հոգեվերլուծության տեսակետից հետաքրքրական են նաև լռության իմաստաբանությունն ու, այսպես կոչված, դադարի շարահյուսությունը: Կարևորվում են խոսքի արագությունը, հուզական երանգը, ձայնի ուժը, շեշտավորումը, հնչերանգը՝ կապված անձի հոգեբանական վիճակների հետ, որով կարող ենք հարուստ տեղեկություն ստանալ մարդու ապրումների ուղղվածության մասին: Վկայակոչենք, որ երազների լեզվական արտահայտչական միջոցների և ճարտասանական ձևերի համակարգում առանձնանում են զեղչումի, բացթողման, բառական կրկնության, կուտակումի, դիմառնության, շրջադասության, աստիճանավորման, ճարտասանական հարց-դիմումի և այլ հնարների կիրարկումը, որոնք նպաստում են տարաբնույթ հոգեբանական վիճակների արտահայտմանը.

Այսպես՝ *Արևը հանգավ, ածխացավ, մոխրացավ* (աստիճանավորում): *Ինչո՞վ ծածկեմ. փետո՞վ ծածկեմ, քարո՞վ ծածկեմ երդիկս* (բառական կրկնություն): *Մի մարդ եկավ Քրիստոսի նման, դանդաղ եկավ երկնքից* (կրկնություն և շրջադասություն): *Գիշերը երազիս, երազիս գիշերը Հիսուսիս տեսա* (շրջադասություն): *Ճերմակ, կաթնագույն, ձյան պես սպիտակ մարգարիտներ* (ճերմակ գույնի գեղարվեստական հոմանիշների հարացույց):

Երազների լեզվին բնորոշ է խոսքային ասույթի սիմվոլիկան, ուր բառի նախնական նշանակությունը փոխարկվում է այլաբերական իմաստով. *Արևից արյուն էր թափվում: Արյան մեջ պիտի լողանք: Երկնքից կարմիր անձրև էր գալիս: Երկնքից բոզ ու դուման կիջներ: Գիրքը չորս կողմից լույս կուտար* և այլն:

Լեզվամտածողության այս կողմը օգնում է վերարտադրվող երազային պատկերը դարձնելու ավելի առարկայական ու տպավորիչ՝ զուգորդական մտածողության յուրահատուկ դրսևորմամբ: Վերջինս բխում է ասացողների հուզահոգեբանական երևակայությունից, որի բնորոշ գծերից է բնության և կյանքի ամենահեռավոր երևույթների միջև նմանություն տեսնելը, մեկի հատկանիշների փոխադրումը մյուսին, բառերի ու հասկացությունների վերածումը առարկայացած պատկերների, յուրօրինակ խորհրդանիշների: Օրինակ՝ երազի մեջ սպիտակ կտորը ենթատեքստային մեկնությամբ պատանք է,

- փոսը փորած - գերեզման
- գերանը (սյուն) կոտրած - մահ, հարազատի կորուստ (սունն սղոցիր, բալա ջան) (լացերգ)
-դուռը կոտրած, փակած, այրած – տնից մարդ կմեռնի (տուն ու դուռդ սև քարով շարվի) (անեծք)
- եկեղեցի - հույս, պահապան (Աստվածածինը վկա, Մայր Աստվածածինը օգնական, պահապան (երդման բանաձև, մաղթանք)
- պատից քար ընկած – հարազատի կորուստ
- առանց անիվների սայլ - դագաղ:

Նմանօրինակ սիմվոլներով երազները խորհրդանշանային մեկնությամբ մոտենում են ժողովրդական բանահյուսության մեկ այլ՝ հանելուկի ժանրին:

Այսպես՝ անանիվ սայլը և՛ երազում, և՛ հանելուկի մեջ դագաղի, մահվան ընդհանրական սիմվոլ է.

*«Ելա երդիկ էլ տեսա,*
*Առանց տոնի սել տեսա,*
*Մեջն անոթի գել տեսա»: ( Կ. Ս.-ի հավաքածուից)*

*«Երազիս դուռը դուման էր, կարկուտ գուքար: Հեռվից սել քշելով մե կնիկըմ էրևաց՝ սևեր հագած»:*

Ըստ ժողովրդական մեկնաբանության սայլը դագաղ է, սայլ քշելը՝ աշխարհի կործանում:

Խոսքային ասույթի սիմվոլիկայից բացի՝ պատկերային հյուսվածքի համակարգում մեծ դեր են կատարում երևույթների և առարկաների նմանության հիմքի վրա

ստեղծված համեմատությունները, ինչպես նաև պատկերների իմաստային աստիճանավորմանը ծառայող չափազանցությունը: Այսպես՝ *Տաք մազութ՝ զետի պես հոսող քաղաքի վրա: Արևը ոնց որ հուր՝ կարմրած կրակ-արյուն լիներ (հմմտ): Կովի ջանդակի մեծությամբ մի սև ու մի սպիտակ դաղդառ (չափազանցություն): Հիսուսը փոքրացած տուփի մեջ (լիտոտա):*

Երազատեսներից շատերը կարծես մտածում են համեմատությունների և չափազանցությունների տարերային հոսքով, որը բնական է հետադետյան սրված ապրումների, շիկացած զգացումների հոգեարտահայտման պարագայում:

Ազգային գոյի հավերժական նշանների կողքին երազներում հաճախ հանդիպում են սիմվոլիկ տրամաբանության այնպիսի ձևեր, որոնք պայմանավորված են թվերով: Երազների պատկերային-հոգեբանական մոդելի հիմքում թիվը վերածվում է սիմվոլի, առանձին դեպքերում այն առարկայորեն համապատասխանում է աաացողի ընտանիքի անդամների թվին կամ նրա կորստի չափին՝ երբեմն ուղղակիորեն նախանշելով աղետի ժամանակային սահմանը՝ ըստ ժողովրդական կանխազգացողության: Այսպես՝ *Մեռած մայրս երազիս եկավ ու ըսավ՝ 4 հոգով, 4 հոգով արեք մոտս* (երազը տեսել է երկրաշարժից առաջ, պատմել է հարազատներին, զոհվել է երազատեսը քրոջ երեք երեխաների հետ):

Հետաքրքրական է բիբլիական, խորհրդապաշտական թվերի (3, 7, 40) ենթատեքստային իմաստավորումը: Մարդկությունը վաղուց է անցել հաշվման տասնորդական համակարգին, սակայն նրա երևակայության, պատկերների, մտածողության ու խոսքի մեջ դեռ շարունակում են գերիշխել 3, 7, 40 թվերը, որոնք այնքան գործածական են Աստվածաշնչում, որ կոչվում են բիբլիական թվեր: Թվի մետաֆորիկ կիրարկումը պատումի մեջ ներմուծում է հեքիաթային տարր՝ մտքի բացահայտ ձևերը ծածկելով թվի առասպելաբանությամբ: Այսպես՝ *Աստվածածինը 3 անգամ թևիս խփեց, 3 անգամ առաջ եկավ ու կրկնեց՝ ես դեռ կամ, ես դեռ կամ, ես դեռ կամ:* Բառային կրկնություները թե՛ կրկնության եղանակով, թե՛ ոճական երանգավորումներով ցույց են տալիս հատկանիշի կամ որևէ գործողության սաստկություն, երբեմն նաև ամբողջականություն: *... 40 կանայք սևեր հագած մատաղ կեփեին մեծ կաթսաների մեջ...:*

Յոթ թվին վերագրվում է անբավության, աստվածային հարակայության, անհետազոտելի սահմանի, անհատնում հորդության արժեք և համարվում է դժվար բացատրելի, քանի որ յոթի այբբենական նշանը /է/ հայ միջնադարում նույնացվում էր աստվածության հետ և բնութագրվում էր Աստծու հատկանիշներով:

*Երկրաշարժին երազ տեսա. մարմնիս վրա յոթ տեղ վերք էր բացվել, ամենից շատ սրտիս վերքից արյուն կերթար: Երազիս ծերունին մարդրմ նստած էր 3 ճամփաբաժնի մեջտեղում: Իբր պիտի մարդկանց երկինք թռցներ: Տեսա հարսս էլ էր ընտեղ՝ կապույտ շորերով, բոբիկ ոտներով, մեկ էլ դանդաղ վեր ելավ, մե ոտը վեր, մեկը՝ վար, ձեռս քցի օր բռնեմ, չկրցա, թռավ...* (երկրաշարժին զոհվել է հարսը, մնացել է ծննդատանը):

Թվի անորոշությունը երազային պատումին հաղորդում է դիցաառասպելական մտածողության երանգ. Այսպես՝ *... տեսնում եմ, որ գերեզմանոցից հարյուր հազարավոր մարդիկ դուրս գուքան սև դրոշակներով: ... իբր մեր պատուհանի տակ մեծ փոս էին փորել՝ գերեզմանափոս՝ ոչ թե մեկի, այլ հարյուրի, հազարի համար:*

Երազապատումի համար բովանդակային զենի դեր կատարող անորոշ թիվ-նշանագիրը երբեմն վերածվում է ազգային բախտի ու ճակատագրի սիմվոլիկ գոյության: Հայոց պատմական հիշողության թվերը (ջարդ) երազային մտածողության մեջ երևակվում են իրատեսական ժամանակային սահմաններով. *Երազիս հարևանիս տուն գնացի: Դուռը իմ դեմ բացեց վաղուց մահացած էդ տան կինը և ինձ մի թուղթ տվեց կարդալու: Կարդալուց հետո հարցրի՝ ինչ տարբերվեր են, կինը պատասխանեց, որ հայոց ջարդի թվերն են: Պետք է վերջի թիվը ջնջել, նորը գրել:*

Հատուկ իմաստավորում են պահանջում երեխաների երազային լեզվամտածողության առանձնահատկությունները, որոնք, լինելով աշխարհի հոգեբանական ընթերցման ձև, հատկորոշվում են գունային լուծումներով հարուստ զգայատեսողական պատկերներով: Տարիքային կրտսեր խմբի անձանց երազներում առարկայական աշխարհի անբացատրելին տեսագծվում է նախնական զգայաճանաչողության ձևերով:

Իսկ աղետի խոսքային դրսևորումներն առավելապես արտահայտվում են առանցքային, հենարանային բառերի կամ բառ-նախադասությունների միջոցով: Երբեմն հուզական գերլարումը (ստրեսը) երեխային մղում է գերզգայության և լեզվական գերընկալունակության, որը պայմանավորում է բառերի իսկայական թվով զուգորդություններ: Այսպես՝ *Երազիս ամպերի միջից կարմիր ամպ երևաց: Հետո կարմիր անձրև եկավ, ես արյան համ զգացի* (8 տարեկան, Մկրտչյան Արփինե):

Սեռատարիքային մասնահատկությունները, բնազդային կենսազգացողությունը՝ իբրև աշխարհի ճանաչողության սկզբնական, ներըմբռնողական ձև, պայմանավորում են մանուկների լեզվամտածողության անպաճույճ, բայց բացառիկ սրված ու պատկերավոր լինելը:

Երեխաների երազներում հաճախ են հանդիպում համի, հոտի, մաշկային զգայություններից առաջացող սինեսթեզիայի պատկերները: Սինեսթեզիայի յուրօրինակ տարատեսակներից են զունազգացողությունից առաջացող զգայապատկերները:

*«Ես Տաթևիկ Մարտիրոսյանն եմ, սովորում եմ VI «փ» դասարանում, 9-րդ դպրոցում: Երկրաշարժին կորցրել եմ հայրիկիս, մայրիկիս, քույրիկիս: Ապրում եմ տատիկիս հետ: Երկրաշարժից հետո հարազատներիս տեսա երազում: Ծնողներս ինձ ուղեկցում էին դպրոց: Երեկոյան եկան ինձ դպրոցից տուն տանելու, նրանց հետ էր նաև քույրիկս, որ արդեն մեծ էր: Հայրիկս ինձ հարցրեց՝ բալե՛ս, տատիկը քեզ նեղացնո՞ւմ է, բայց ես պատասխանեցի՝ չէ՛: Հետո նրանք ինձ ասացին «ցը» ու հեռացան»:*

Լեզվառճական առումով հոգեբանական հետաքրքրություն են ներկայացնում կին ասացողների երազները: Որդեկորույս կնոջ բառապաշարը ուշագրավ է երազի և կենսագրական պատումի միահյուսմամբ: Որոշակիորեն դժվար է տարորոշել որտեղ է սկսվում ողբը և որտեղ՝ երազը: Երազային պատում հուզական ապրումի ներթափանցմամբ ամբողջանում են ողբացյալ մոր հոգեկերտվածքը, լեզվամտածողությունը, ապրելակերպի բներանգը: Այսպես՝

*Ինչղ չլամ, ինչղ չողբամ, բալա ջան,*
*Արմատախիլ էղավ բալես,*
*Ծաղկեցի, փնջեցի, աչք մեծըցրի բալիս վրա,*
*Ծառի պես բացվեհր, բալա ջան,*
*Ես ծառս տնկեցի, բարը չտեսա,*
*Լավից լավին արժանի, բալա,*
*Գեթ մեկ անգամ ձենդ լսեմ, բալա ջան,*
*Շունչդ առնեի, բալա ջան...*

Ինչպես տեսնում ենք, ասացող - երազատեսին սպասող փորձության նախիմացությունը տրված է երազով: Ազգային մտածողության լեզվական երանգավորումը հետաքրքրական դրսևորում է ստանում տղամարդ երազատեսների պատումներում: Սովորութային լեզուն՝ իբրև այր մարդու հոգեապրումի արտահայտչամիջոց, դառնում է ընդգրկուն, տարողունակ՝ տարածաժամանակային որոշակի սիմվոլացմամբ՝ հասնելով լեզվական առօրեականության հաղթահարման: Նմանօրինակ երազներին հատուկ են հոգելեզվաբանական կառուցվածքային տարրերը, որոնք արտահայտված են հետևյալ երազում.

*«Երազիս անցնում եմ բարձրահարկ շենքերի միջով: Ամեն կողմից անուն եմ լսում, կարծես հազարավոր մարդիկ միաբերան «Մնացական» են գոռում: «Մնացական, Մնացական, մի գնա, ո՞ւր կերթաս»: Գետինը շատ տաք է ու ոտքերիս տակից փախչում է: Ինձ ասում են, որ մարդկանց մարմիններն են, հողը կրտըրըփա: Ես չգիտեմ ինչու պառկած եմ գետնին: Հանկարծ հայտնվում է մեկը, ձեռքին կաքողիկոսի գավազան, գլխիկի մասում տարբեր ուղղությամբ թեքված օձեր, գայիսոնը մոտեցնում է գլխիս և ասում. «Ելիր, ժամանակը չէ, ելիր, դու շատ գործեր ունես անելու»: Ես չեմ ուզում բարձրանալ: Հողը հեռանում է ինձնից:*

Այսպիսով, հանգում ենք այն հետևության, որ երազները, լինելով ազգահոգեբանական մշակույթի մի մաս, կարևորվում են իբրև մարդու ենթագիտակցական կյանքի դրսևորման ձևեր: Աղետի երազները՝ որպես աղետի բանահյուսության տեսակ, ազգային համահավաք, բևեռացված հոգեբանության արտահայտություններ են, որոնք աչքի են ընկնում ազգային լեզվամտածողությամբ: Երազների լեզվի ժողովրդայնու-

թյունը ծեռք է բերվում ոչ միայն ասացողների ժողովրդախոսակցական և բարբառային երանգավորում ունեցող բառերի հաճախակի գործածությամբ, այլև խոսքի ընդհանուր հյուսվածքով: Երազային պատկերի կառուցման խոսքային հյուսվածքը և լեզվական մասնահատկությունները փոխվում են՝ կախված ասացողների սեռատարիքային պատկանելությունից, անհատական-տիպական հատկորոշումներից: Հատկանշական իմաստավորում է ստանում երազների համատեքստի լեզվի և ենթատեքստի լեզվի փոխհարաբերությունը՝ իբրև մտքի բացահայտ ձևի և ոչ բացահայտ ձևի զուգադրություն: Ի մասնավորումն, երազը տեսալսողական բնույթի պատկեր է, որը կարող է պատմվել, նկարագրվել խոսքի միջոցով: Վերջինս միշտ չէ որ համապատասխանում է այդ պատկերներին:

Բոլոր դեպքերում, նման հաղորդակցումն ունի իր լեզուն, որն իբրև արտահայտչամիջոց՝ դրսևորվում է խոսքային և ոչ խոսքային մակարդակներով: Երազի խոսքային լեզուն երբեք դուրս չի գալիս տվյալ երազատեսի լեզվական իմացությունից, եթե անգամ լեզվական որևէ տարր փոխառվում է, ավելացվում կամ պակասեցվում, այս ամենն արվում է լրացուցիչ երանգավորման համար՝ դիմելով բացառապես սեփական լեզվական արտահայտչամիջոցներին:

## *ЯЗЫК ПСИХОЛОГИЧЕСКИХ ПЕРЕСКАЗОВ ТЕКСТОВ СНОВИДЕНИЙ*
## *(На основе материалов декабрьского землетрясения 1988г.)*

*____ Резюме ____* *____К. Саакян ____*

*Исследование этнопсихологических последствий после бедствия довольно сложно и проблематично. Изучение психологии бедствий создает основу для научно—теоретических и практических решений, истолкований фундаментальных предположений, которые касаются не только национального понятия феномена, но и активности социальной и духовной реабилитации у большинства населения. Принимая во внимание психологические истолкования зарегистрированных снов (около 1000), мы выяснили, что они являются не только выражением психологического состояния предсказаний и чувств внутреннего мира страдающего человека, но и явно отражают национальные воображения, формы менталитета, особенности этнологической культуры, ритуалов, обычаев и привычек.*

*Համիկ ՍՏԵՓԱՆՅԱՆ*

## *ՄՈՒՂԱՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ Ն. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ*

Որպես քաղաքային մշակույթի տիպական հատկանիշների կրող՝ Ալեքսանդրապոլը XIX դարի երկրորդ կեսին ուներ երաժշտական հարուստ բնութագիր՝ իր քաղաքային ժողովրդական երգարվեստով, սազանդարական և այլ նվագարանային անսամբլներով, աշուղական երգարվեստի բուռն զարգացմամբ և եվրոպական, հատկապես նվագարանային երաժշտության յուրահատուկ դրսևորումներով:

Քաղաքային ժողովրդական երգի կարևորագույն բնորոշիչներից մեկն Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքային մշակույթների ալեքսանդրապոլյան համատեղումն է, երգային ժողովրդական երաժշտությունը՝ սերտաճած Ալեքսանդրապոլի սազանդարական արվեստին: Երաժշտական մշակույթի այս կարևոր ոլորտում զարգանում էին ինչպես երգային, այնպես էլ նվագարանային երաժշտության ավանդական ժանրերն ու այլ դրսևորումները: Քաղաքային կյանքում սազանդարների մասնակցությունը եղել է ակտիվ և շատ սպասելի:

Դրանք ելույթներն էին սրահներում, ընտանեկան խնջույքներում, հարսանիքներում և տարբեր բնույթի ժամանցներում: Սազանդարական արվեստը, աշուղական երաժշտության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում: «Հարևան ժողովուրդների երաժշտական արվեստների առանձնահատկությունների փոխներթափանցման հիմնական գործոններից մեկը աշուղների և սազանդարների գործունեությունն էր, որ շրջելով բնակավայրից բնակավայր՝ տարածում էին ազգայինը և, միաժամանակ ընտրում և յուրացնում այլ ազգերի երաժշտական արվեստի մի շարք կողմերը»[1]:

Ահա այս ընդհանուրի մեջ առանձնահատուկ զարգացում է ապրում մեզանում այսօր էլ կենսունակ, ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մեջ տարածված *մուղամի արվեստը*: Ընդհանուր մի շարք օրինաչափությունների առկայությունն այստեղ համադրվել է յուրաքանչյուր ժողովրդի մշակույթում առանձնահատուկ դրսևորումներին:[2]

Ընդհանուր և ազգային մտածողության վրա հիմնված ավանդականությամբ էլ հայ երաժշտագիտության մեջ բնորոշվում է Ալեքսանդրապոլի աշուղական-սազանդարական դպրոցի մուղամի արվեստը: XIX դարի երկրորդ կեսի Ալեքսանդրապոլի մշակութային մթնոլորտում կոմպոզիտոր Ն. Տիգրանյանն առաջինն էր, որ եվրոպական նոտագրությամբ գրի է առել և հմտորեն մշակել քաղաքային երաժշտական կյանքում հնչող բազմապիսի գործերը և մուղամները՝ դաշնամուրի, ջութակի, կամերային անսամբլների, սիմֆոնիկ և ժողովրդական նվագախմբերի համար:[3]

Հայ երաժշտագիտությունը բարձր է գնահատել հատկապես մուղամների հավաքման, ուսումնասիրման և մշակման աշխատանքները, որ կատարել է կոմպոզիտորը, և դրանց լուսաբանումը, Ռ. Աթայանի վկայությամբ, առանձին հետազոտության նյութ կարող է լինել:[4]

Կոմպոզիտորի կյանքն ու գործը լուսաբանվել են հայ երաժշտագիտության մեջ դեռևս նրա կենդանության օրոք և հետագայում կարևոր տեղ են զբաղեցրել երաժըշտագիտական մի շարք հետազոտություններում և աշխատություններում: Դրանցից առավել հիմնարար բնույթի են՝ Գումրեցու աշխատությունը[5], Ռ. Մազմանյանի մենա-

---

[1] *Տե՛ս Ա. Ս ա ր յ ա ն, Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը (XIX - XX դարեր), Հայ ազգագրություն և բանահյուսություն, N 4, Եր., 1973, էջ 106:*

[2] *Տե՛ս Լ.Ե ր ն ջ ա կ յ ա ն, Հայ մուղամաթիստները և նրանց դերը Արևելյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1982, N 2, էջ 44:*

[3] *Նույն տեղում, էջ 50:*

[4] *Р. А т а я н, Об изучении мугамов в Армении, в сб. Макомы, мугамы и современное композиторское творчество (межреспубликанская научно — теоретическая конференция), Ташкент, 1978, стр. 22.*

[5] *Г у м р е ц и, Николай Фаддеевич Тигранов и музыка Востока, с предисловиями Н. Марра и композитора А. Спендиарова, Ленинград, 1927.*

գրությունը[6], Կ. Խուդաբաշյանի[7] և Լ. Երնջակյանի[8] երաժշտատեսական աշխատությունները: Հիշյալ ժամանակաշրջանին վերաբերող բոլոր երաժշտապատմական ուսումնասիրություններում ու ակնարկներում դիտարկվում են կոմպոզիտորի ժառանգությունն ու ստեղծագործական նվաճումները:

Սրանց մեջ նկատելի է արժեքավորման երկու կողմ: Մի կողմից՝ հետազոտվում և գնահատվում են Ն. Տիգրանյանի նորարարական, փորձարարական ձեռքբերումները, մյուս կողմից՝ յուրահատուկ կերպով բացահայտվում են նրա ստեղծագործական մտահղացումների ու մոտեցումների հեռահար ուղենիշներն ու միտումները: Սակայն, կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության ու հատկապես մուղամների ձևակառուցողական, ձայնակարգային, լեզվաոճական ամբողջական ուսումնասիրությունն առայժմ բացակայում է: Ներկա հրապարակման մեջ ուշադրությունը բևեռել ենք Ալեքսանդրապոլի սազանդարական արվեստում տարածված մուղամների տիգրանյանական գրառումների, մշակումների մեթոդաբանական սկզբունքների վրա:

Կոմպոզիտոր, դաշնակահար և երաժշտագետ Ն. Տիգրանյանի ստեղծագործական որոնումները կենտրոնացած էին հատկապես քաղաքային ժողովրդական և մասնագիտացված (հմմ՝ աշուղական) երաժշտական նմուշների գրառման, ուսումնասիրման և բազմաձայն վերակերտման վրա: Եթե նկատի ունենանք այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադրությունը և եվրոպական արժեքների նկատմամբ ազգային չափանիշների ընդհանրական մակարդակը, ապա կոմպոզիտորի վաստակն այդ ուղղությամբ առաջադիմական էր, միտումները՝ համարձակ:

Այս աշխատանքում Ն. Տիգրանյանի համար մեծապես նպաստավոր է եղել նշանավոր թառահար, իրանական դասական մուղամների ու դաստգահների փայլուն գիտակ և անգուգական կատարող Աղամալ Մելիք-Աղամալյանի հետ սերտ համագործակցությունը, որի «նվագն ուժեղ ու խորը, տևականորեն չմոռացվող զմայլանքի տպավորություն էր գործում լսողների վրա: Նվագն Աղամալի համար վեհ, նվիրական գործ էր, որին նա միշտ մոտենում էր լրջությամբ, կարծես սրբազան արարողություն կատարելու պատասխանատվության գիտակցությամբ լցված»[9]:

Կոմպոզիտորը ժամանակին հանդես է եկել արևելյան երաժշտությանն ու հատկապես մուղամի ժանրին նվիրված գիտական հրապարակումներով և վեր է հանել մուղամագիտության անչափ կարևոր հարցեր: Այդ խնդիրներն են արծարծում կոմպոզիտորի հրապարակած «Նամակ խմբագրությանը», «Մտքեր արևելյան երաժշտության մասին», «Արևելյան երաժշտության կուլտուրական զարգացման երկու ուղղությունների մասին» հոդվածները:

Դրանք ինքնօրինակ դիտարկումներ են արևելյան երաժշտության պատշաճ ուսումնասիրության, նրա հանդեպ լուրջ գիտական միտք սևեռելու, անհրաժեշտ նյութեր հավաքելու, ուսումնասիրելու և ապա՝ մշակելու և հրատարակելու վերաբերյալ: Այստեղ շատ համառոտ,բայց և դիպուկ շեշտադրումներով ներկայացված են նաև կոմպոզիտորի կողմից հավաքած բնօրինակ նյութի մշակման մեթոդաբանական սկզբունքները: Կան անչափ կարևոր մտքեր մուղամների հավաքման, գրառման և բազմաձայն մշակման վրա: Ն. Տիգրանյանը, անտարակույս, այս ժանրի հանդեպ մեծ հետաքրքրություն է տածել, նաև՝ ելնելով դրա մասնագիտացված հորինվածքային բնորոշիչներն ուսումնասիրելու և բազմաձայն մշակումներում դրանց նկատմամբ շատ զգույշ վերաբերվելու նկատառումներից:

Մեջբերենք կոմպոզիտորի սկզբունքային դիրքորոշումն արտահայտող այն մտքերը, որոնց գիտական արժեքն անչափ բարձր է այսօրվա դիտակետից ևս: Նա գրում է. «Առհասարակ պետք է ընդունել, որ արևելյան երաժշտության հիմունքները դեռևս չեն որոշված: Այդ հիմունքների մշակման համար նախ և առաջ անհրաժեշտ է գրի առնել ու դասակարգել մեղեդիների հնարավորին չափ մեծ քանակ: Ներկայումս

---

[6] *Р. М а з м а н я н, Никогайос Тигранян, Ер., 1978.*

[7] *К. Х у д а б а ш я н, Армянская музыка на пути от монодии к многоголосию, Ер., 1977.*

[8] *Լ. Ե ր ն ջ ա կ յ ա ն, Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Եր., 1991:*

[9] *Ն. Տ ի գ ր ա ն յ ա ն, Հոդվածներ, հուշեր, նամակներ, Եր., 1981, էջ 26:*

դեռևս շատ քիչ բան է արված նման աշխատանքի նույնիսկ առաջին կեսի համար, այսինքն՝ շատ քիչ գրառումներ կան»:[10]

Այսպիսով, նա կարևորում և ապա ձեռնամուխ է լինում գրառելու բանավոր ավանդույթով կենցաղավարող նյութը: Խոսքը մասնավորելով մուղամի ժանրի շուրջ՝ նկատենք՝ արդյոք ամեն ինչ և ամեն ինչով նյութ էր գրի առնում կոմպոզիտորը: Կա՞ր սկզբունքային մոտեցում այս հարցում: Այդ մասին նա գրառել է անչափ արժեքավոր մի միտք՝ նույն հոդվածում. «Միևնույն պիեսը երգիչը կատարում է մի ձևով, քառի վրա կատարվում է այլ կերպ, չոնգուրի վրա՝ այլ, ըստ գործիքի առանձնահատկությունների: Համենայն դեպս, բազմազանություններով հանդերձ, անշուշտ, կայուն են մնում լադը, մեղեդու հենքը և ռիթմի ընդհանուր բնույթը՝ իր շեշտադրությամբ: Միևնույն պիեսի բազմաթիվ տարբերակներից ես ընտրել եմ ամենից ավելի տիպականները, հարմոնիզացիայի և կարգավորման տեսակետից աշխատել եմ նմանակել իմ լսած կատարումներից՝ հաղորդման տեսակներից ամենից ավելի բնորոշները և լավագույնները»:[11]

Ասվածը վկայում է այն մասին, որ Ն. Տիգրանյանն իր որոնումների ընթացքում ձեռք էր բերել բանավոր նյութի համեմատական չափանիշներ՝ ինչը հետևողական աշխատանքի արդյունք էր: Այս դրույթը կոմպոզիտորի հայացքները մոտեցնում է Կոմիտասի բանահավաքչական աշխատանքի մեջ դրսևորված համանման դիրքորոշմանը:

Փնտրելուց և անհրաժեշտ տարբերակը գտնելուց հետո կոմպոզիտորն այն նոտագրում էր անաչառ ճշգրտությամբ՝ իբրև չափանմուշ օրինակ: Հետևաբար, նրա գրառած նմուշներն այսօր ձեռք են բերում նաև գիտական բարձր արժեք և կարող են դիտվել որպես անգուգական նյութեր տարբեր բաղդատական ուսումնասիրությունների համար: «Որպեսզի պատկերացում տամ գրառման իմ աշխատանքի բնույթի և հնարանքների մասին,- գրում է նա,- անհրաժեշտ եմ համարում նշել, մտապահելով մի կատարողից լսած մեղեդին, դրանից հետո տարբեր տեղերում, տարբեր ժամանակներում լսել եմ նաև ուրիշներին»:[12]

Այս առումով բացառիկ կարևոր արժեք ունի Ա. Մելիք-Աղամալյանից գրառած նրա մուղամները, որոնք, ըստ ականատեսների վկայության, նա կատարել է քառահարի հետ միաժամանակ՝ դաշնամուրով:[13] Ա. Մելիք-Աղամալյանի նվագարանային կատարողական արվեստի արժեքավորման մեջ ակնառու է դառնում կոմպոզիտորի կողմից սազանդարական նվագարանային կատարողական արվեստի խորքային անզուգական իմացությունը: Այսպես՝ նա գրում է. «Ձախ ձեռքի մատների և աջ ձեռքի թաքի մեծապես զարգացած ու անվրեպ տեխնիկայի տեր լինելով՝ Աղամալը նվագելիս առաջ չէր քաշում տեխնիկայի դերը, այլ ենթարկվում էր այդ նվագվող կտորի իմաստին, տեխնիկան համարելով նվագի իմաստն արտահայտելուն ծառայող մի միջոց միայն և ոչ թե ինքնարժեք տարր: Նրա աջ ձեռքի թաքի զարկը ծանր էր, լուրջ, ձայնեղ ու ներշնչող ամեն մի «տոնը» հնչում էր ճշգրիտ ու հղկված: Միզրաբը նա խփում էր թաք-թաք, մերժելով մանդոլինանման նվագելու այն կերպը, որը բավականին տարածված էր Ղարաբաղի և Բաքվի թառ նվագողների և, առհասարակ, սովորական սազանդարների մոտ: Եթե մանդոլինայի համար տրեմոլանդոն անհրաժեշտ է այս գործիքի լարերի ճկունության և ձիգ լարվածքի պատճառով, թառն ազատ է այդ անհրաժեշտությունից. սրա լարերը կրկնակի երկարություն ունեն և ավելի թույլ են ձգված (և այլն)»:[14]

Սրանք նվագարանային երաժշտության հմուտ գիտակի դիտողություններն են: Մենք այս հանգամանքը շատ ենք կարևորում, քանի որ կոմպոզիտորի ստեղծագործական «խառնարանում» սազանդարական նվագարանների կատարողական առանձնահատկությունների փայլուն իմացությունը հետագայում վճռական դեր էր կատարելու հավաքածո նյութի բազմաձայն մշակումների ստեղծման ընթացքում:

Իր գործունեության հաջորդ քայլը կոմպոզիտորը տեսնում էր արդեն գրառած ավանդական ժանրերի ինքնօրինակ «թարգմանությունը» եվրոպացի ունկնդրի համար:Հիշենք, որ նա գերազանց տիրապետում էր դաշնամուրային կատարողական ար-

---

[10] *Ն. Տ ի գ ր ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 17:*
[11] *Նույն տեղում, էջ 22-23:*
[12] *Նույն տեղում, էջ 21:*
[13] *Г у м р е ц и, նշվ. աշխ., էջ 19:*
[14] *Ն. Տ ի գ ր ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 26:*

վետից և հանդես էր եկել բազմաթիվ մենահամերգներով՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

Ծանոթանալով Ն.Տիգրանյանի գիտական հրապարակումներին՝ նկատում ենք նրա նույնքան սկզբունքային մոտեցումների կայուն մեթոդաբանությունը՝ հավաքած նյութի բազմաձայն վերակերպավորման գործում: Նա մեծապես կարևորում է բնօրինակ նմուշի անխաթար պահպանումը յուրաքանչյուր մշակման մեջ, ինչը, ըստ կոմպոզիտորի դիրքորոշման, զերծ կպահի ազգային ավանդական նմուշները կամային աղավաղումներից: Ավելին, նա այդ նույն նպատակին է ուղղում նաև բազմաձայն նմուշի հորինվածքային բոլոր միջոցները: «Քանի որ արևելյան մեղեդիների ճշգրիտ հաղորդումը դաշնամուրի միջոցով,- գրում է նա,- իր տեմպերացված կարգով, մշտապես հանդիպել է բազմաթիվ զուտ տեխնիկական դժվարությունների, ապա ես երաժշտական բովանդակության ավելի կատարյալ հաղորդման համար ստիպված եմ եղել դիմել այնպիսի հարմոնիզացիայի և նվագակցության, որոնք համապատասխանեին մեղեդու յուրօրինակ բնույթին: Ընդ որում ես պետք է հաշվի առնեի այն փաստը, որ տեղացի երաժիշտներին և ժողովրդին միանգամայն խորթ է բազմաձայն երաժշտությունը»:[15]

Այս նպատակին հասնելու համար կոմպոզիտորը դեռևս XIX դարի 80-ական թվականներից ձեռնամուխ է եղել մուղամների դաշնամուրային մշակումների ստեղծմանը: XX դարասկզբին նա արդեն հրատարակել էր *Բայաթի Քուրդը, Բայաթի Շիրազը, Հեյդարին, Շահնազը, Չարգյահը, Նովրուզ Արաբին, Նավան, Չոբան Բայաթին, Շուշտարը* և *Աղրբեջանը*:

Այս ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքների մեջ աչքի է ընկնում արևելյան դասական նվագարանային մուղամի մի նոր հնչողական կերպի՝ դաշնամուրայինի կայացումը, այսինքն՝ մուղամի ժանրային բնորոշիչները մեկնաբանվում են դաշնամուրով: Եվ եթե սազանդարական ցանկացած նվագարան իր հնարավորությունների շրջանակում է կայացնում մուղամի հանկարծաստեղծ հորինվածքը, ապա նույնը կարող է կատարել նաև դաշնամուրը:

Ն. Տիգրանյանի դաշնամուրային մուղամները լուսաբանվել և բարձր են գնահատվել դեռևս նրա ժամանակակիցների շրջանում և հայ երաժշտագիտական աշխատություններում: Մենք ուշադրությունը բևեռել ենք այնպիսի կարևոր մի խնդրի վրա, ինչպիսին մոնոդիկ և հարմոնիկ երաժշտամտածողության փոխներգործությունն է, և որին էլ նպատակաուղղվել է կոմպոզիտորի ստեղծագործական և երաժշտատեսական միտքը: Դարձյալ դիմենք կոմպոզիտորի արժեքավոր դիտարկումներին. «Արևելյան երաժշտության ամենաբնորոշ գծերից պետք է համարել մեղեդու այնպիսի կառուցվածքը, որտեղ լադի որոշակի աստիճանները կարծես իշխում են՝ հաճախակի և ռելյեֆ կերպով երևան գալով: Մեղեդին «սկսվելով» որոշակի աստիճանից՝ «դիմում» է մյուսին, երրորդ աստիճանին կարծես «հանգստանում է» և չորրորդին՝ «ավարտվում»: Առաջին և չորրորդ աստիճանները հաճախ համընկնում են: Մեղեդու այդպիսի կառուցվածքն էլ հենց առաջացրել է զուռնայի յուրօրինակ երկրորդ ձայնը … հերթականորեն ձգող լադի այս գլխավոր աստիճանները»:[16]

Նույն հոդվածում կոմպոզիտորն անդրադարձել է արևելյան մեղեդիների նաև այլ բնորոշ տարրերի նկարագրին, սակայն այստեղ մենք կարևորում ենք վերոնշյալ դիտարկումը, որը վերաբերում է մոնոդիկ մտածողությանը: Դաշնամուրային մուղամների վերլուծությունը ցույց է տալիս, որ կոմպոզիտորը անխաթար պահելով մուղամ - բնօրինակի կառուցվածքն ու կերտվածքը, բազմաձայն մշակման մեջ պահպանել և ընդգծել է նաև դրանց *մոնոդիկ ձայնակարգային* բնորոշիչները, հատկապես օժանդակ հենակետերի ձևակառուցողական դրամատուրգիան: Սրան ավելացնենք նաև մետրառիթմական տիպական գծերի, քառի կամ սազանդարական այլ նվագարանների կատարողական արվեստին բնորոշ արտահայտչամիջոցների նմանակումներն ու, իհարկե, դաշնամուրային հարուստ կատարողական միջոցների ներգրավումը:

Տարիների ընթացքում հիմնավորելով ստեղծագործական այս ոլորտում՝ 1920-ական թվականներից Ն. Տիգրանյանն անդրադարձավ նաև եվրոպական կամերային

---

[15] *Ն. Տ ի գ ր ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 21:*
[16] *Նույն տեղում, էջ 21-22:*

անսամբլների համար մուղամների մշակումներին: Դրանք դաշնամուրային նույն մուղամների յուրովի վերակերպավորումներն էին: Այս ստեղծագործությունների ձևակառուցողական և արտահայտչական համակարգի առանձնահատկությունների բացահայտումը առանձին ուսումնասիրման նյութ է:

## ПРИНЦИПЫ Н. ТИГРАНЯНА ПРИ ОБРАБОТКЕ МУГАМОВ


***Резюме*** — ***А. Степанян***

**В творчестве композитора Н.Тиграняна важное место занимают мугамы, распространенные в Александрополе в конце XIX века. Это обработки для фортепиано, а также – для европейского камерного ансамбля и симфонического оркестра. Эти произведения оцениваются двояко; как уникальные обработки образцов восточной классической музыки и как важный мугамоведческий источник.**

*Համլիկ ԱՓԻՆՅԱՆ*

## *ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԻ ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ ԻԳԻԹԻ ԵՐԳԵՐՈՒՄ*

Աշուղական երգարվեստի կարևոր առանձնահատկություններից մեկը ինքնատիպ տաղաչափությունն է, որը ժամանակի ընթացքում զարգանալով և կատարելագործվելով՝ մեզ է հասել երգային գանձերի բազմատեսակ դրսևորումներով: Գ. Լևոնյանը իր աշխատություններում հատուկ նշել է հայ աշուղական տաղաչափական արվեստի զարգացման բարձր աստիճանը ու ընդգծել դրա ուսումնասիրության անհրաժեշտությունը:[1] Սակայն տևական ընթացքում մշակված երգային տեսակների, բանաստեղծական ձևերի,կանոնների ու տեխնիկական հնարքների տիրապետումը, որը աշուղի արվեստում կատարելության չափանիշ էր համարվում, ժամանակի ընթացքում կորցնում է իր կարևորությունը՝ զգալի չափով տեղի տալով հորինման սկզբունքների առավել ազատ կիրառությանը, ինչի հետևանքով էլ XX դարի աշուղական արվեստում նկատելի են դառնում նոր ժամանակներին բնորոշ բանաստեղծական ձևերի օգտագործումը ու դրա հետ մեկտեղ ժողովրդական երգերին ավելի մոտ, սեփական եղանակների ինքնուրույն հորինումը:[2] Ցավոք, եթե Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շիրինի ստեղծագործական սկզբունքներին ինչ-որ չափով անդրադարձներ եղել են,[3] ապա նոր ժամանակների երգիչ-բանաստեղծների տաղաչափական արվեստի ուսումնասիրման հարցերն առայսօր մնում են բաց, ավելին, չի արվել նաև համեմատական քննություն, ինչն էլ հնարավորություն կընձեռի պարզել դրանց ընդհանրությունները, ինչպես նաև տարբերությունները: Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում աշուղ Իգիթի երգերը:

Նոր ժամանակների՝ խորհրդային տարիների երգիչ-բանաստեղծ Իգիթի երգերն աչքի են ընկնում հորինվածքի անկաշկանդ ազատությամբ, կառուցվածքի հստակությամբ, ու միաժամանակ մեղեդային շարադրանքի արտակարգ պարզությամբ: Զգացմունքների արտահայտման ջերմ քնարականությունը և հուզազգացողական նրբերանգների հարուստ արտահայտչականությունը այդ երգերի բնորոշ կողմերից են: Նկատենք, որ Իգիթի նույնիսկ ավանդական տաղաչափությամբ հորինված տեքստերի մեղեդիները շատ դեպքերում գրեթե առնչություն չունեն աշուղական կանոնիկ եղանակների հետ, և նրա երգերի առանձին օրինակներ ավելի հարազատ են քաղաքային ժողովրդական երգաստեղծության մտածողությանը, իսկ ելևէջի ժառանգման ուղին տանում է դեպի Շերամի արվեստը:[4]

Իգիթի երգերի տաղաչափությունը կատարվել է վանկաչափական մոդելավորման մեթոդով:[5] Նյութը՝ 35 նմուշ, վերցված է «Շիրակն իմ մուսան» ժողովածուից:[6] Նրա հորինվածքներում գործածված են տաղաչափական տարբեր կառուցվածքներ՝ տողի բաժանման տարատեսակներով: 8,11,16 վանկանի տողերով հորինված երգերը, որոնք հայ աշուղներն ավելի հաճախ են գործածել, Իգիթի երգերում նույնպես մեծ թիվ են

---

[1] *Գ. Լ և ո ն յ ա ն, Աշուղների մասին, Երկեր, Եր., 1963, էջ149:*

[2] *Շիրակի հայ աշուղներ,Կազմեց և խմբագրեց Կ. Դուրգարյանը, Եր., 1986, էջ17:*

[3] *Կ. Դ ու ր գ ա ր յ ա ն, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի տաղաչափությունը, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1963, էջ 67: Ն. Թահմիզյան, Սայաթ-Նովան և հայ գուսանաաշուղական երգ-երաժշտությունը, Drazark Press, Pasadena, 1995: Կ. Խուդաբաշյա ն, Աշուղ Ջիվանու տաղաչափական արվեստը, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական IV գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ,Գյումրի, 2000, էջ 54-56: Ա. Քոչարյան, Հայ գուսանական երգեր, Եր., 1976:*

[4] *Հ. Ա փ ի ն յ ա ն, Աշուղ Իգիթի երգերը, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 6, Գյումրի, 2003, էջ 99-104:*

[5] *Կ. Խ ու դ ա բ ա շ յ ա ն, նշվ. աշխ., Կ. Խուդաբաշյան, Հայ ավանդական երգի տաղաչափական համակարգի հարցերի շուրջ,«Հայ ժողովրդական մշակույթ», հանրապետական IX գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Եր.,1997, էջ 23-24:*

[6] *Գ ու ս ա ն Ի գ ի թ, Շիրակն իմ մուսան, Երգերի ժողովածու, ձայնագրությունը Ա. Շիշյանի, Եր., 1968:*

կազմում, իսկ այլևայլ չափերով՝ 15 վանկանի (5+5+5), 10 (5+5), 13 (4+4+4+1), կամ էլ խառը չափերով՝ 15 (Iտող-5, IIտող-5, IIIտող-10, IVտող-5,V տող-5,VI տող-10) վանկերով հորինված տողերը համեմատաբար սակավ են հանդիպում: Իգիթի համար հատկապես բնութագրական համարելով 8 և 11 վանկանի տողերից կազմված տներով երգերը, փորձենք անդրադառնալ դրանց տաղաչափական որոշ մանրամասնություններին: Ստորև ներկայացնում ենք 8 վանկանի տողերով հորինված երգերի բանաստեղծական կառույցների աղյուսակը՝ տողի ներքին վանկային տրոհման պատկերով.

| *N* | *էջ* | *Երգի վերնագիրը* | *չափը* | *տուն՝ն ըստ տողերի* | *վանկերի տրոհումը* |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | 9 | Իմ Երևան | 3/8 | 4տող,տողը՝ 8 վանկ | 4 + 4 |
| 2 | 10 | Սովետական Հայաստան | 4/4 | 4տող,տողը՝ 8 վանկ | 4 + 4 |
| 3 | 29 | Հայաստանի աղջիկները | 5/4 | 4տող,տողը՝ 8 վանկ | 4 + 4 |
| 4 | 42 | Յարաբ ո՞ւր ես | 4/4 | 4տող,տողը՝ 8 վանկ | 4 + 4 |
| 5 | 50 | Ով, գեղուհի | 6/8 | 4տող,տողը՝ 8 վանկ | 4 + 4 |
| 6 | 68 | Նորապսակ հարսն ու փեսեն | 6/4 | 4տող,տողը՝ 8 վանկ | 4 + 4 |
| 7 | 25 | Հայրիկ | 4/4 | 4տող,+ կրկնակ՝ 2 տող, | 8 վանկ (4 + 4)<br>8 վանկ (4 + 4) |
| 8 | 38 | Մայրիկ | 6/8 | 4 տող + կրկնակ՝ 2 տող | 8 վանկ (4 + 4)<br>8 վանկ (4 + 4) |
| 9 | 52 | Դու իմ արև | 6/8 | 3 տող + կրկնակ՝ 2 տող | 8 վանկ (4 + 4)<br>8 վանկ (4 +4) |
| 10 | 61 | Հազար ու մեկ նազով | 4/4 | 3տող + կրկնակ՝ 2 տող<br>+ կրկներգ՝ 4 տող | 8 վանկ (4 + 4)<br>8 վանկ (4 + 4)<br>6 վանկ (3 + 3) |
| 11 | 43 | Նռան զինի | 6/8 | 4 տող+ կրկներգ՝ 6 տող | 8 վանկ (4 + 4)<br>4 վ.+4վ.+8վ.+<br>4 վ.+4վ.+8վ. |
| 12 | 50 | Համիդ մատաղ | 4/4 | 4 տող + կրկներգ՝ 4 տող | 8 վ. (4 + 4)<br>4 վ. (2 + 2) |
| 13 | 86 | Հետ արի թառլանս | 6/8 | 6 տող+ կրկներգ՝ 4 տող | 8 վ. (4 + 4)<br>6 վ. .(3 + 3) |

Աղյուսակում նշված 13 երգերից տասը՝ 8 վանկանի տողերից կազմված քառատող կառույցներ են, ընդ որում, դրանցից 2-ում (թ. 7, 8) քառատող, և թիվ 9-ում եռատող տանը հավելվել է նույն վանկաքանակի երկտող կրկնակը: Սրանք դուբեիթներին բնորոշ կառուցվածքներ են:[7] Թիվ 11,12 քառատող և թիվ 13 վեցտողանի կառույցներում բանաստեղծական տանը հավելված կրկներգերը թեև տարբեր վանկաքանակներ ունեն, բայց առանձնակի փոփոխություն չեն մտցնում երգի վանկաչափության մեջ:

Այժմ դիտարկենք 8 վանկանի տողերով կառույցների համադրությունը երաժշտական ոտքի հետ զուգորդված, որտեղ ամանակը[*] ութերորդական տևողությունն է: Ընդհանրացված պատկերն այսպիսին է.

10 ամանակ (5+5), մեկ այլ դեպքում՝ 14 ամանակ (6+8), 11ամանակ (5 + 6)
8 վանկ (4 + 4) 8 վանկ (4+4) 8 վանկ (4 + 4)

Բերված օրինակները ցույց են տալիս, որ երաժշտական և բանաստեղծական տողերի միջև եղած միավորների տարբերությունը մեծ չէ, որն իբրև կանոն հիմնականում հարթեցվում է ամանակադրության հավասարատևության օրենքների համեմատ:[8] Սա իր հերթին հանգեցնում է մեղեդիական և վանկական որոշակի փոխհարաբերությունների՝ արտահայտված բնութագրական ռիթմական պատկերներով, որոնք էլ

---

[7] *Ա. Ք ո չ ա ր յ ա ն, նշվ աշխ, էջ 24:*

[*] *Ձայնավորի կամ վանկի տևողությունը կամ չափը: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 45:*

[8] *Կ ո մ ի տ ա ս, Մի քռուցիկ ակնարկ հայ ժողովրդական երաժշտության վրա (ձեռագիր) ԳԱԹ, Կոմիտասի դիվան:*

երգերում ապահովում են մեղեդիների շարադրանքը կայուն մետրերում: Իգիթի երգերում վանկի եղանակավորումը մեծ մասամբ զուսպ է, և ծորերգվող ծավալուն վանկեր հազվադեպ են հանդիպում: 3/8, 6/8, 6/4 չափերում շարադրված մեղեդիների համար բնորոշ են վանկաչափական նույն կաղապարները: Չնչին տարբերություններ կարելի է նկատել 4/4 չափում շարադրված երգերում: Վերլուծությունը վկայում է (տե՛ս Ա գծապատկերը), որ վանկաչափական նման կաղապարների կարելի է հանդիպել քաղաքային երգերում ու Շերամի մոտ: Ընդհանրացված վանկաչափական կաղապարները, որոնք կիրառված են 8 վանկանի տողերով երգերում, բաժանելի են մի քանի տիպերի.




Ա տիպի խմբավորման մեջ են՝ թիվ 1, 2, 3, 6, 10,12,13 երգերը: Իսկ Բ. տիպի մեջ՝ թիվ. 4-ը, և 11-ը: Գ տիպ-ում՝ թիվ12-ը,, Դ տիպի մեջ՝ թիվ .9-ը, Ե տիպում թիվ 5-ը:

«Շիրակն իմ մուսան» ժողովածուի մեջ զետեղված երգերից 9-ը՝ 11 վանկանի քառատող կառույցներ են՝ առանց կրկնակների և կրկներգերի: Բացառություն է «Բարև տարեք» երգը, որում բանաստեղծական տանը հավելված քառատող կրկներգը շարադրված է 4-4, 5-5, վանկանի տողերի հաջորդմամբ.

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 1 | 17 | Գուսան | 4/8 | | 4+4+3 |
| 2 | 27 | Բարև տարեք | 6/8 | Կրկներգ | 6+5 |
| 3 | 30 | Տեսա | 6/8 | | 5+6 (6+5) |
| 4 | 34 | Իմ պառավ յարը | 6/8,5/8,7/8, 6/8 | | 4+4+3 |
| 5 | 36 | Ջարթիր անուշ կինս | 6/8 | | 4+4+3 |
| 6 | 40 | Որդյակ | 3/8 | | 4+4+3 |
| 7 | 49 | Սիրելիս | 6/8 | | 4+4+3 |
| 8 | 56 | Ինչի համար խռովելս | 6/8 | | 4+4+3 |
| 9 | 59 | Սարմար կրծքիդ | 6/8 | | 4+4+3 |

Աղյուսակից երևում է, որ տողը հիմնականում տրոհվում է 4 + 4 + 3 և 6 + 5 ոտքերի:

Վանկերը երաժշտական ոտքերին միանում են հետևյալ ձևերով.

12 ամանակ (4 + 4 + 4) / 11վանկ (4 + 4 + 3), 15 ամանակ (5 + 5 + 5) / 11վանկ (4 + 4 + 3), 18 ամանակ (6+6+6) / 11վանկ (4 +4 +3),

17 ամանակ (5 + 6 + 6) / 11վանկ (4 + 4 + 3) 11ամանակ (5 + 5 + 6) / 11վանկ (4 + 4 + 3),

5 + 6 տրոհման դեպքում՝ 18ամանակ(8 + 10) / 11վանկ (6 + 5) 12ամանակ (5 + 7) / 11վանկ (6 + 5):

Բերված կաղապարները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր վանկի և ամանակի տարբերությունը 1 կամ 2 միավոր է: Սա նույնպես Իգիթի երգերում գործող կայուն ռիթմապատկերի արտահայտություններից է, որը պահպանվում է նաև հաջորդ՝ II, III տներում: 11 վանկանի տողերի ընդհանրացված վանկաչափական կաղապարներն են.




Հետաքրքրական է, որ 8 և 11 վանկանի վանկաչափական կաղապարներում գրեթե չեն հանդիպում նմանատիպ պատկերներ: Սա նույնպես աշուղական տաղաչափական

կանոնների նկատմամբ մոտեցման ապացույցն է: Իբրև տիպական օրինակ վերլուծենք «Իմ պառավ յարը քանի է» երգը.[9]



11 վանկանի տողերով շարադրված բանաստեղծական տողը տրոհվում է 4 + 4 + 3 վանկերով, որն այսպես է զուգորդվում երաժշտական ոտքին.

I տող՝ 16 ամանակ (5 + 5 + 6) / 11վանկ (4 + 4 + 3)    III տող՝ 18 ամանակ (6 + 5 + 7) / 11վանկ (4+ 4 + 3)

II տող՝ 17ամանակ (6 + 5 + 6) / 11վանկ (4 + 4 + 3)    I V տող՝ 16 ամանակ (5 + 5 + 6) / 11վանկ (4 + 4 + 3)

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծական բոլոր տողերում վանքաքանակը և նրա տրոհման սկզբունքը նույնն է: Մինչդեռ՝ երաժշտական տողում նկատվում են տարբերություններ, որոնք ռիթմապատկերներում տեղ գտած տարբերակման հետևանք են: Այսպես. I տողի II կիսատողում շեշտի փոփոխության պատճառով ռիթմական միավորի մեջ մեկ ամանակ պակասում է և տակտում չափը 6/8-ից վերածվում է 5/8-ի, իսկ հաջորդ տակտում արդեն վանկի եղանակավորման ընդլայնման շնորհիվ 6/8 չափը նորից վերականգնվում է. (տե՛ս նոտային օրինակի 1,2,3 տակտերը):

Այլ է պատկերը III տողում: Այս անգամ վանկի եղանակավորման ընդլայնումը ամանակների ավելացմամբ է պայմանավորված, ինչի հետևանքով չափը փոխվում է 7/8-ի. (տե՛ս նոտային օրինակի՝ III տողի 3-րդ 4-րդ տակտերը): Նման մեղեդային տարբերակումները երգի վանկաչափական մոդելում էական փոփոխություններ չեն մտցընում և ավելի շատ արտահայտչականությունն ընդգծելու նպատակն ունեն: Վանկաչափական կաղապարը կայուն է և ըստ տողերի ունի հետևյալ պատկերը.



Երգում կիրառված երկմեծավերջ, IV պեոն, ավարտեղ, քողաբորբ ոտքերը քառատողում միմյանց են հաջորդում որոշակի պարբերականությամբ.

I տող՝ երկմեծավերջ + I V պեոն + ավարտեղ
II տող՝ IV պեոն + I V պեոն + ավարտեղ
III տող՝ երկմեծավերջ + I V պեոն + ավարտեղ
IV տող՝ IV պեոն + I V պեոն + քողաբորբ

---

9 *Գ ու ս ա ն Ի գ ի ք, նշվ. աշխ., էջ 34:*

Իգիթի երգերում տաղաչափական այս ոտքերը հաճախ են գործածվում: Դրանք հանդիպում են նաև Շիրակի ժողովրդական բազմաթիվ երգերում: Մնում է նաև ավելացնել, որ Իգիթի և այլ աշուղների երգարվեստի տաղաչափական առանձնահատկությունների համեմատական վերլուծության հիման վրա հետագայում կարելի է հասնել XX դարի Շիրակի աշուղական երգին բնորոշ հատկանիշների ընդհանրացման, այդ թվում նաև տաղաչափական օրինաչափությունների ըստ ամենայնի ճանաչմանը և սահմանմանը:

## ОСОБЕННОСТИ АШУГСКОГО СТИХОСЛОЖЕНИЯ В ПЕСНЯХ ИГИТА


**___ *Резюме* ___** **___ *А. Апинян* ___**

***Одна из примечательных черт ашугского искусства—особая метрика.***

***Виды стихосложения, технические приемы и правила, развивав— шиеся в течении многих веков, устарели, потеряли свою значимость и постепенно вышли из обихода. Ашуг Игит — певец нового времени — более свободно относится к правилам стихосложения и сочинению мелодии. В статье рассматриваются некоторые черты традиционного стихосложения в песнях ашуга.***

*Карине АВДАЛЯН*

## *ЭВОЛЮЦИЯ НАЦИОНАЛЬНОГО СТИЛЯ В АРМЯНСКОЙ МУЗЫКЕ XX в.*

**«Национальный музыкальный стиль, – писал М. Михайлов, – есть форма выражения музыкально-образного содержания, отражающего мировосприятие, мироощущение, идеи, эмоции, специфичные для определенной национальной культуры». Однако это общее определение потребовало ряда существенных оговорок. Это связано с тем, что порождающие это музыкально-образное содержание внемузыкальные предпосылки находятся «в состоянии непрерывного развития и изменения вместе с общественно-историческим развитием самой нации (народности)».[1] Это означает, что само идейно-образное содержание, образующее в конечном счете феномен национального стиля в музыке, находится в состоянии непрерывного развития, а потому в принципе не может быть определено внеисторично, сразу на «все времена».**

**В первой половине (и даже в первых двух третях XX в. для армянской, как и для русской и западноевропейской музыки) вообще были характерны синтез или комбинации нескольких различных стилей в рамках *неостилистики.* Подобно тому, как подобный синтез осуществлялся в это же время в творчестве И. Стравинского, С. Прокофьева, Д. Шостаковича, аналогичные тенденции заявляли о себе и в музыке А. Хачатуряна. Неофольклорные черты ярко проявились в музыке его балета «Гаянэ», причем речь идет не только о тонкой стилизации и авторской обработке армянского народного мелоса (особенно характерны эпизоды «Сбор хлопка», «Танец хлопка», «Танец мужчин», где используются народные мелодии «Пшати цар», «Гна ари ман ари», массовые танцы-гёнды, армянские героические и свадебные танцы). В музыку балета «Гаянэ» органично вплетаются симфонические обработки народных мелодий, почерпнутых из русского, украинского, грузинского, курдского фольклора. Таковы народные танцы «Шалахо», «Узундара», «Русская плясовая», «Гопак», украинская песня «Как пошел, пошел козел» в четвертом акте «Гаянэ». Известно, что и собственная, авторская музыка А. Хачатуряна в балете пронизана неофольклоризмом, сознательно или бессознательно вплетающегося в оригинальную музыкальную ткань.[2] Однако неофольклоризмом не исчерпываются черты хачатуряновского неостиля 40-х годов. Неслучайно исследователи замечают появление «классических и даже “необахианских” приемов в качестве гармонически уравновешивающего начала»[3] (инвенция Гаянэ в одноименном балете, финал II симфонии, отдельные эпизоды в III симфонии; из более поздних произведений это особенно заметно в Фортепианной рапсодии). Еще Б. Асафьев заметил в творчестве А. Хачатуряна (как и у Комитаса, Р. Меликяна) органическое сочетание европейской и национальной ладовости, соединение народной музыки и полифонических приемов, характерных для западноевропейской музыки.**

**Кроме того, для музыки А.Хачатуряна 1930-х гг. было характерно творческое претворение традиций русской классической музыки. Достигаемый таким образом Хачатуряном стилевой синтез, носящий, так сказать, *национально-интернациональный* характер, может быть тоже определен как неостилистика, т.е. система, при которой новый стиль является результатом развития какого-то прежнего большого стиля или обобщения и смешения нескольких авторитетных**

---

[1] *М М и х а й л о в, Этюды о стиле в музыке, Л., 1990, стр. 253.*

[2] *Г. Т и г р а н о в, Арам Хачатурян, М., 1987, стр. 55-57.*

[3] *И.Т и г р а н о в а, Лирические образы в творчестве Арама Хачатуряна,Ер., 1973, стр.126.*

стилей в новом качестве. Иной путь, в общем, и трудно представить для армянской советской музыки, бывшей составной частью музыки советской.

В послевоенное время, особенно с началом «оттепели», интернациональная составляющая армянской музыки существенно изменилась. Характерный пример здесь являет собой балет А. Хачатуряна «Спартак», интонационной основой которого, по определению, не могли быть ни народные интонации армянской музыки, ни классические традиции русской музыки. «К сожалению, каких-либо музыкальных документов той эпохи почти не дошло до нашего времени, – писал А. Хачатурян в либретто к балету "Спартак", – поэтому, естественно, я не мог ими воспользоваться в своей работе. Да и было бы неверно стилизовать музыку под ту эпоху. Некоторые хотят слышать в музыке элементы итальянской музыка. И это неверно, ибо итальянская музыка, известная нам примерно с XIII и XIV веков, ничего общего не имеет с музыкой античной эпохи».[4] А. Хачатурян в балете «Спартак» создает такой универсальный музыкальный язык, который, сохраняя органическую связь с национальными интонациями и ладами армянской музыки, в то же время вызывает ассоциации и с музыкой античного мира, музыкой Древнего Востока, широким спектром различных национальных мотивов как архаики, так и современности. «Какими-то не поддающимися точному определению средствами и приемами Хачатурян создает ощущение и античности, и Рима, и всей многонациональной среды действующих лиц».[5]

Свой стиль А. Хачатурян в балете вывел на качественно новый уровень обобщения. Не прибегая к прямым стилизациям античной музыки или музыки западноевропейского средневековья и Возрождения, А Хачатурян, с одной стороны, вырабатывает единый и цельный стиль. В нем синтезированы, во-первых, обобщенные особенности музыки народов Востока, в котором отдельные национальные интонации могут лишь угадываться, восприниматься как намек, как «знак» Древнего Востока, к которому, в той или иной степени, гипотетически были причастны и древние армяне, и древние греки, и древние римляне. А, во-вторых, в этом интегральном стиле не утрачиваются особенности авторского,индивидуально-творческого стиля Хачатуряна, что делает музыку композитора узнаваемой во всех его произведениях, относящихся к разным периодам его творчества, а в случае «Спартака»–репрезентирует современный авторский взгляд на исторические события Древнего Рима, представляя авторскую точку зрения в современной интерпретации и оценке античной истории и культуры с большой культурно-исторической дистанции. Для такой трактовки восстания Спартака и патрицианской повседневности характерны и огромная, почти символическая обобщенность, и известная модернизация отдаленного прошлого, придающая чувствам и страстям героев музыкально-хореографической симфонии (как нередко называют балет «Спартак») общечеловеческие, внеисторические черты.

С другой стороны, этот стиль в своем симфоническом развитии опирается не только на стилевые особенности русской классической музыки (прежде всего «кучкистов», а также Глинки, Чайковского и Рахманинова, нередко обращавшихся к разработке стилизованных восточных мотивов[6] (как это бывало ранее, например в Первой и Второй симфониях, триаде инструментальных концертов), –но и к западно-европейским традициям – Берлиоза, Листа, Грига, Дебюсси, Альбениса, с их инструментальной красочностью, изысканностью колорита, предвосхищающего сонорные эффекты, и особенно Вагнера, с его системой сквозных лейтмотивов и «бесконечной мелодией».

---

[4] *Г. Т и г р а н о в, указ. соч., стр. 94.*

[5] *Там же, стр. 95.*

[6] *Это было в свое время проницательно отмечено еще Б. Асафьевым. (См.: Б. Асафьев, Очерки об Армении, М., 1958, стр.30.)*

**В то же время ассоциации с западноевропейской и русской музыкой (в том числе XX века –Прокофьева и Шостаковича) выступают не самоценно, но лишь как «фон», как культурный контекст развития самобытных национальных традиций (армянской монодии, импровизационной свободы ашугского пения, национально-характерного ладо-гармонического языка и системы традиционных жанров армянской музыки – песенной и танцевальной). Достигаемый Хачатуряном эффект стилевого синтеза нередко сравнивается исследователями с «переплавкой» разнородных стилевых традиций в органическое целое исключительной напряженности, интенсивности и экспрессивности[7]–как в мелодическом, так и гармоническом и тембральном отношении, что, разумеется, не могло быть достигнуто без столь многомерного состава синтезируемых стилевых составляющих и столь мощного «интегратора» как авторский стиль А. Хачатуряна.**

**Это позволило Хачатуряну в «Спартаке» создать такой обобщенный неостиль, который смог выйти за грани общесоветского большого стиля (национально-интернационального) и предстать как стиль всемирный, в котором восточное начало органически сочетается с западноевропейским, а намек на архаичность уравновешивался современными музыкальными средствами (к примеру, политональностью, нетерцовой аккордикой, сложными ладовыми тяготениями, интенсивным полифоническим развитием и т. п.). Этот же стилевой синтез характерен и для творчества А. Хачатуряна 1960-х гг., особенно явно в триаде Концертов-рапсодий – для скрипки с оркестром (1961), для виолончели с оркестром (1963), для фортепиано с оркестром (1968).**

**Таким образом, общая тенденция развития армянской музыки во второй половине XX века связана с постепенным освобождением от «пут» догматически понятой марксистско-ленинской эстетической догматики, углублением национального своеобразия армянского искусства, наконец,с углублением интернациональных тенденций, а значит, обретением всемирно-исторического, глобального культурного пространства, в координатах которого в дальнейшем реализуется национально-самобытное начало армянской художественной культуры в его единстве с общечеловеческими критериями и мировой культуры в целом.**

**Не составляет исключения из общих культурно-исторических закономерностей и армянская музыка, длительное время развивавшаяся в едином ценностно-смысловом пространстве с русской музыкой советского периода, а теперь переживающей, как и современная русская музыка, свой постсоветский этап развития. Современные трансформации бывшей советской музыки – и в России и в Армении–ознаменованы прежде всего освобождением от унифицированной и политизированной советской идеологии, обремененной также многочисленными запретами на использование тех или иных тем и образов, а также экстраординарных средств музыкальной выразительности, характерных для XX века, длительное время ассоциировавшиеся в советском обиходе с формализмом и модернизмом, с буржуазной идеологией. Другой важной тенденцией постсоветского искусства является его принципиальная открытость в мировое культурное пространство, более тесная связь с идейно-художественными исканиями всего человечества, включая авторитетные общеевропейские и американские тенденции мирового культурно-исторического процесса.**

**Постепенно, по мере развития «оттепельных» и «перестроечных» явлений, начиная с конца 50-х и особенно во второй половине 80-х годов, и в русской, и в армянской музыке начинают все в большей степени актуализироваться стилевые особенности музыки XX века – без оглядки на модернизм и авангард, на степень распространенности этих средств музыкального языка в западной музыке. Последовательно реабилитируются в художественной практике политональность и полиладовость, атонализм и сериальность (идущие от нововенской школы А.**

---

[7] *И. Т и г р а н о в а, указ. соч., стр.134 – 135.*

**Шенберга, А. Берга и А. Веберна), развиваются сонористика и алеаторика, обращение к конкретной музыке и музыке электронной.**

**Важный шаг в развитии диалектики национального и интернационального в музыкальном творчестве сделал А. Бабаджанян, который сумел, обращаясь к средствам нововенской классики (додекафонии и серийной техники), опираясь на принцип хроматических интервальных групп А. Веберна, воссоздать музыкальные образы, близкие интонационно древнеармянским погребальным плачам–вохбам (Третий квартет, Шесть картин, Поэма и т.д.).[8]**

**Не сразу были поняты аналогичные искания и других выдающихся армянских композиторов– Дж. Тер-Татевосяна, Л. Аствацатряна, А. Тертеряна, Т. Мансуряна, Л. Сарьяна, А. Зограбяна, В. Бабаяна, Е. Ерканяна, Э. Айрапетяна – на определенном этапе (в 1960 – 70-е годы) ставших в своем творчестве активно обращаться к традициям нововенцев и ультрасовременной композиторской технике–додекафонии и сериальности, сонорике и алеаторике, конкретике и полистилистике (хотя следует подчеркнуть, что в целом официальное отношение к формальным исканиям композиторов в Армении было уже в это время гораздо более терпимым и лояльным, нежели в славянских республиках–России и Украине, во многом благодаря тогдашнему председателю СК Армении Э. Мирзояну).**

**Одновременно происходит и идеологическое раскрепощение музыкального творчества: все чаще тематику музыкальных произведений определяют не идеи и образы официального советского патриотизма, социалистического интернационализма, мотивы конфронтации с Западом и буржуазной идеологией и солидарность с русской музыкальной культурой, призванной «сплотить» многонациональную культуру народов СССР. На первый план все чаще выступают этнокультурные мотивы, символизирующие истоки национальных традиций, черты национального стиля в музыке и художественной культуре в целом; все более востребованными оказываются средневековые тексты и религиозные мотивы, воплощающие вечность и всечеловечность гуманистических идеалов, великих нравственных и эстетических идей, контрастирующих быстротекущей «злобе дня» и рутинной повседневности.**

**Кстати, вошедший в историю музыкальной культуры как теоретик и практик полистилистики А. Шнитке первым обратился к древнеармянскому наследию, еще в 1984 – 1985 гг. написавший хоровой четырехчастный Концерт на стихи Г. Нарекаци из «Книги скорбных песнопений».Спустя десять лет, в 1995 г., на текст «Книги скорбных песнопений» Нарекаци было создано еще одно величественное произведение для хора (правда, с участием симфонического оркестра и солирующего сопрано) – пятичастная оратория «Григор Нарекаци» Эдгара Оганесяна, представителя одного творческого поколения с А. Шнитке (оба композитора скончались в 1998г.). Многое объединяет эти два сочинения: обращение к мелосу национальной духовной музыки, единая стилевая направленность (удачно названная С. Саркисян «*эпическим неоархаизмом*»),[9] обращение к сходным средствам монументальной выразительности–плотной фактуре хорового письма; для обоих произведений характерно глубокое религиозное чувство, искренне восхищение личностью Нарекаци–монаха, поэта и музыканта,органичное слияние современных переживаний древнего сакрального текста.**

**Для Э. Оганесяна обращение к древним пластам монодического творчества (уже при написании своей Первой симфонии композитор использовал в качестве мелодической основы таг «Авик» Г. Нарекаци; впоследствии с опорой на староклассическое национальное наследие Э. Оганесян создавал балет «Антуни», затем–оперу-балет «Давид Сасунский») оказалось недостаточным. В оратории**

---

[8] *С. А м а т у н и, А. Бабаджанян, Инструментальное творчество, Ер., 1985, стр.130 –131, 186 – 196.*

[9] *С. С а р к и с я н, Армянская музыка в контексте XX века, М., 2002, стр.119.*

«Григор Нарекаци» Э. Оганесян обращается к европейской неоклассике, стилизуя полифонические формы эпохи Барокко, жанровые и мелодические особенности европейских реквиемов XVIII–XIX вв. Подобное обращение к неоклассике было характерно для Э. Оганесяна и ранее: таковы его Концерт-барокко для скрипки, клавесина и струнного оркестра (1981,1983); Третья симфония для струнных, ударных и клавишных инструментов (1983).

Подобное *уравновешивание* полярной стилистики – стилизованного европейского классицизма и национальной армянской музыкальной традиции – характерно и для Александра Арутюняна: Симфониетта для струнного оркестра (1966); концерт «Армения-1988». Похожие тенденции заметны и в творчестве Тиграна Мансуряна (Партита, 1965) и Ерванда Ерканяна («Песнь Песней», 1973 и «Canticle», 1975). Феномен такого «стилистического дуализма» С. Саркисян считает невозможным «объяснить с позиции эстетики полистилистики, склонность к которой в это время проявили композиторы Восточной Европы». Называя четыре национальные причины подобного сценария в развитии современной армянской музыки, исследователь, в частности, указывает на то, что «неомедиевистские тенденции в армянской музыке выполнили роль своеобразного противодействия распространенному "европейскому" неоклассицизму». Другой причиной С. Саркисян считает явление *неостиля* как «примиренческой методологии для композиторов противоположных творческих устремлений».[10] Ссылаясь на такие характерные явления полистилистики, как Concerto grosso №1 А. Шнитке и последние сочинения Д. Шостаковича, С. Саркисян противопоставляет этим примерам рассмотренные музыкальные сочинения армянских композиторов как «тонкое маневрирование между различными стилевыми системами в поисках новой универсальности».[11] Подобную новую стилевую универсальность нередко называют неостилистикой. Так, под неостилистикой М. Арановский понимает «любую форму воспроизведения черт стиля прошлого (неоклассицизм, необарокко, неополифония, неомонодия), которая по своей глубинной сущности представляет собой *стилевую деривацию*, т.е. фактически создание *нового* стиля как генетически *производного* от некоего прежнего».[12]

С нашей точки зрения, все упомянутые выше варианты манипулирования с разными стилями – европейскими или национальными, средневековыми или современными – будь то «стилистический дуализм» или «противодействие европейскому классицизму», будь то «маневрирование между различными стилевыми системами» или «примиренческие» тенденции в отношении «противоположных творческих устремлений» – это различные варианты *полистилистики*. Другое дело, что там, где доминируют тенденции стилевого синтеза, мы имеем дело по преимуществу с *неостилистикой*; там же где налицо стилевой контраст или стилевая мозаика,–перед нами позднейшие модификации собственно *полистилистики*. В этом отношении современная армянская музыка, сохраняя свое интонационно-мелодическое и жанрово-композиционное своеобразие, следует в русле тех европейских и мировых тенденций, которые выражены в переходе от авторской моностилистики к неостилистике, а затем – и к полистилистике (одновременно с последовательным усилением семиотизации музыкального стиля). Кроме того, можно говорить, что для всей современной музыки характерны динамичные взаимоотношения между *моно*-, *нео*- и *поли*-стилистическими тенденциями, сообщающими ей стилевой плюрализм и релятивизм.

Несомненно, творчество А. Хачатуряна заложило мощные традиции стилевого синтеза, получившие дальнейшее развитие в современной армянской музы-

---

[10] *С. С а р к и с я н, указ. соч., стр.117.*

[11] *Там же, стр. 121-122, 123.*

[12] *М. А р а н о в с к и й, Музыкальный текст, Структура и свойства, М., 1998,стр. 307–308.*

**ке.[13] В некоторых случаях уже музыка самого А. Хачатуряна служит источником нео-и полистилистического синтеза. Так, например, ученик А.Хачатуряна Эдгар Оганесян на основании знаменитой музыки А. Хачатуряна к драме Лермонтова «Маскарад» в Театре им. Вахтангова (1941), к пьесе Б. Лавренева «Лермонтов» во МХАТе (1954), других сочинений учителя (II симфонии, Сонаты-монолога для виолончели, музыки из Сюиты для двух ф-но и др. создал в 1982 трехактный балет «Маскарад». Сам Э. Оганесян определил новое произведение как «свободные симфонические композиции на темы А.Хачатуряна».[14] Между тем сочинение А. Хачатуряна-Э. Оганесяна по своей сути является самостоятельным сочинением и находится в одном ряду с такими полистилистическими произведениями, как балет Стравинского «Пульчинелла» на темы Перголези, как опера Л. Берио «Orfeo II» по мотивам оперы Монтеверди, а в армянской традиции–балет Г. Будагяна «Хандут» (1945), составленный на основе произведений А. Спендиарова.[15]**

**В современной армянской музыке полистилистические тенденции, не без влияния А. Хачатуряна и общих тенденций мировой музыки рубежа XX–XXI вв., обретают новую жизнь. Так, например, Левон Аствацатрян в сочинении «Голографии и спирали» для фортепиано и магнитофонной записи использует наложение на оригинальную фортепианную партию, основанную на авторском материале, десяти блоков европейской музыки разных эпох и стилей. В полистилистическое целое «Голографий…» вторгаются фрагменты произведений Вагнера, Бетховена, Моцарта, Баха, Верди, Берлиоза, Дебюсси, Рамо – наряду с произведениями Месропа Маштоца, Григора Нарекаци, Комитаса, а также мелодии гимнов стран антигитлеровской коалиции во Второй мировой войне. В финале над всем комплексом звучаний доминирует «Agnus dei» из Реквиема Моцарта. В другом сочинении композитора последнего времени – «Lacrimosa dies illa» – представлен синтез из фрагментов произведений Нарекаци, Комитаса, Баха, современных опусов, используется смешение различных композиторских техник – сериальной, стохастической, коллажной, обертоновой.[16]**

**Подобный синтез придает музыке армянских композиторов во многом вселенский, метаисторический характер и демонстрирует вписанность современной армянской музыки со всеми ее характерными национальными особенностями во всемирный историко-музыкальный и культурно-исторический процесс.**

## ԱԶԳԱՅԻՆ ՈՃԻ ԲԱՐԵՇՐՋՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ XX դ. ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*___ Ամփոփում ___* *___ Կ. Ավդալյան ___*

Ազգային ոճը՝ որպես կայուն բնորոշիչների միասնականության կրող, ունի զարգացման օրինաչափություններ: XX դարի հայ երաժշտության մեջ նկատելի են ոճական բազմազանության դրսևորումներ: Դրանցից է նաև նեոոճականությունը կամ տարբեր ոճերից գոյացած բազմաոճականությունը: Հոդվածում խոսվում է *մոնո* -, *նեո* - և *պոլի* - ոճականության միտումների դինամիկ փոխհարաբերությունների մասին: Երևույթ, որը հայ կոմպոզիտորներին հնարավորություն է տվել լավագույնս ընդգրկվելու համաշխարհային պատմաերաժշտական գործընթացների մեջ:

---

*[13] См. подробнее в кн.: Арам Хачатурян и музыка XX столетия. Ер., 2003.*

*[14] «Музыкальная жизнь», 1982, № 19.*

*[15] С. С а р к и с я н, «Маскарад» – балет А. Хачатуряна или Э. Оганесяна?, «Музыкальная академия»,2005, № 1, стр.156 – 157.*

*[16] См. подробнее: Н. А в е т и с я н, Хочу написать мелодию непознаваемого, «Музыкальная академия», 2005, № 1, стр.168, 167.*

*Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

## *ԳԱՎԱՌԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ*

Արևմտահայ ականավոր արձակագիր, քննադատ, տեսաբան, գեղագետ, հրապարակախոս Ռուբեն Զարդարյանի դերը XIX դարավերջի և XX դարի սկզբի գրական պատմագործառական ոլորտում առաջնային էր տարբեր կողմերով. նախ՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների սերտացման հայեցակետով, ապա՝ Արևմտյան Հայաստանում XIX դարի վերջին քառորդում սկիզբ առած գրապայքարի՝ պոլսական և գավառական գրականությունների ու վերջիններիս նախահիմք գեղարվեստական լեզվի ոճական արտահայտչամիջոցների, դարձույթների, բառամթերքի ու նրա բազմաշերտ կառուցվածքի հիմնային հարցերի արժևորման տեսանկյունով:

Լինելով ծնունդով բուն Արևմտյան Հայաստանից (Խարբերդի Սևերեկ գյուղաքաղաք), ճանաչելով ժողովրդին հուզող վիշտն ու ցավը՝ իբրև տեսաբան-քննադատ՝ Զարդարյանը հանդես եկավ «գավառական» գրականության պաշտպանությամբ:

Որպես Պոլսի առավել ժողովրդայնություն ունեցող թերթի և ամսագրի՝ «Ազատամարտի» գլխավոր խմբագիր՝ Ռուբեն Զարդարյանը XX դարի սկզբին ծավալեց լայն գործունեություն արևելահայ հեղինակների բացահայտման, նրանց ստեղծագործական խորքի վերհանման ու վերլուծության առումով:

Նրա գեղարվեստական ստեղծագործությունները տպագրվեցին ժամանակի պարբերականներում՝ «Ծաղիկ», «Հայրենիք», «Դրոշակ», «Լույս», «Մեհյան», «Նավասարդ», «Շիրակ», «Ազդակ», «Մասիս», «Բյուրակն», «Արևելք», «Արևելյան մամուլ», «Անահիտ», «Ռազմիկ», «Ազատամարտ» և այլ ամսագրերում ու հանդեսներում: Հետսահմանադրական շրջանում հեղինակը, հավաքելով մամուլի էջերում ցրված երկերը, լավագույնները ներառեց անդրանիկ ժողովածուում՝ «Ցայգալույս»-ում, որն ունի ինքնօրինակ կազմաբանություն:[1] Զարդարյանի մահվանից հետո «Ցայգալույսն» ունեցավ վերահրատարակումներ:[2] Բանասիրական արժևորման դիտակետից արժանահիշատակ է Անթիլիասի տպագրությունը: Ներքոհիշյալ պատկերներն ու պատմվածքները 1910 թվականի «Ցայգալույսի» տպագրությունից են:

«Պուտ մի ջուր» պատմվածքը բնաշխարհի հոգևոր ոլորտի՝ հավատքի և սնոտիապաշտության համածրի գեղարվեստական վերարտադրությունն է: Թերևս մեզանում կգտնվեն սակավաթիվ գրողներ, ովքեր գեղարվեստորեն ներկայացրել են ցեղի այն տիպական հոգեբանական գծերը, որոնց ծագումնաբանությունը ներհյուսված է ազգի ձևավորման նախահիմքերին: Հեղինակը երկում շոշափում է բոլոր ժամանակների իմաստասիրական և գիտական մտքի ուսումնասիրման էական հիմնախնդիրները՝ մարդկային միայնություն, կյանքի և մահվան փիլիսոփայություն, աշխարհների սահմանագծում ոգիների հաղորդակցման հայեցություն և այլն: Զարդարյան գրողի առանձնաշնորհներից են հավատալիքների, ավանդույթների, տոների, ծեսերի, ազգային երազների և դրանցում առկա խորհրդանշանային համակարգերի խորաթափանց իմացությունն ու երկերում գեղարվեստական ճշգրիտ համաձուլվածքով գործառությունը:

Ճերմակ, հրեղեն ձիով զորավար Ս. Սարգսի՝ փոթորկի մեջ ընկածներին փրկելու ավանդության սեղմ ու կատարյալ դիպաշարի գեղարվեստական վերաիմաստավորումը, ազգային երազների սիմվոլանշանային համակարգի վերծանումը մինչ Զարդարյանը նախադեպը չուներ: Կիսաքուն-կիսարթուն վիճակում տեսիլք-երազների կրկնությունը ժողովրդական աշխարհզգացողությամբ, անտարակույս, իրական բովանդակություն կրելու վկայությունն է: Հետաքրքրական է օձի խորհրդանիշը մանկան երազներում, որի խորհուրդը հայտնի է մարդկությանը տակավին անդրջրհեղեղյան ժամանակներից, ինչի առկայությունը ենթադրում է մանկան՝ խաբեության «զոհ գնալը»: Զարդարյանի ստեղծագործության քննադատներից ոմանք նկատում էին աղերս-

---

[1] *Ռ. Զ ա ր դ ա ր ե ա ն, Ցայգալոյս, Կ. Պոլիս, 1910:*

[2] *Ռ. Զ ա ր դ ա ր ե ա ն, Արձակ էջեր եւ հեքիաթներ, Փարիզ, 1930: Ռ. Զարդարյան, Ցայգալույս, Եր., 1959: Ռ. Զարդարեան, Ցայգալոյս,Անթիլիաս, 1994:*

ներ ազգի և մանկան ճակատագրերի միջև. այդ կերպ հայ ժողովրդին էին դարեր շարունակ նենեներ ասել՝ երկար մռայլ գիշերները կարճելու նպատակով:

Ըստ էության, պատմվածքում հայկական գավառն է՝ իրապաշտական ճշգրիտ նկարչականությամբ, ժողովրդական ավանդություններով, հոգեկերտվածքով,սնոտիապաշտությամբ և վերջինիս դրսևորումներով:

Փոքրիկ որբուհին, վաղ հասակում կորցնելով ծնողներին, ապավինում է դժբախտ պառավ տատին: «Աշխարհի ամփոփուեցաւ երկուքին համար ալ երկու սրտերու մէջ,- թոռնիկը փաթթուեցաւ մեծ-մօրը քղանցքներուն իր բոլոր հոգիով, ու պառաւը իր ծերութեան ամբողջ գորովը, քաղցրութեամբ, բարութեամբ շաղուած իր ամբողջ կարօտը կապեց այդ մանկան հաճոյքներուն...»,- բացահայտում է արձակագիրը երկու դժբախտների հոգեհարազատությունը մեկնելիս:[3] Նրանք դիմավորում են Առաջավորաց պահքի՝ Ս. Սարգսի տոնի շաբաթ առավոտը: Հինգօրյա պահքի վերջին՝ ուրբաթ գիշերը, երեխան, անհանգիստ թաթիկները երբեմն-երբեմն անկողնուց դուրս նետելով, անդադար աղերսում է «մի պուտ ջուր». ի պատասխան նրա թախանձանքներին՝ արձագանքում են մամիկի հնօրյա մեղեդու հնչյունները: Նախաբշալույսին որբուհու հոգին լքում է մարմինը:

Ժողովրդական անպաճույճ ոճով և ցեղի ոգու հայեցության ընկալումների հարազատությամբ ողբերգականորեն ավարտվում է պատմվածքը. մեծ մոր հույսին մնացած որբուկի մայրը չդիմանալով՝ գիշերը գաղտնի գալիս տանում է նրան:

«Տան սերը» պատմվածքում պարզրկելով գավառական կյանքի համայնապատկերը՝ տնտեսական և մարդկային հարաբերությունները, կենցաղային պայմանները, ծանր սոցիալական կացութաձևը, հետամնացությունը, հեղինակն արծարծում է կեցության հավերժական ձևերի՝ կյանքի և մահվան հարափոխության, մարդկային հոգու միայնության ողբերգական հարցադրումները, անշունչ առարկաներին մարդկային զգայություններով ու բանականությամբ օժտելու իմաստասիրական իդեալիստական վերացարկումը, ինչպես նաև կյանքի երկրային ձևի անցողիկության՝ «ամեն ինչ ընդունայն է» բանաձևի հաստատումը:

Զարդարյանի գեղագիտության տիպաբանական առանձնահատկություններից է համանման խորը իմաստասիրական մտորումներն արձակ քերթված և պատմվածք ժանրակաղապարներում գործածելը:

Գավառացի Առաքելը կյանքում մնայուն ոչինչ չի արել. կյանքը, կորցնելով իր իմաստավորումը, վերածվել է անասնական բնազդի: Կովի խոշոր աչքերով, դանդաղկոտ ծերը տեղյակ չէ տան ապրուստից, իսկ կնոջ գործերին խառնվելը դառնում է վեճի առիթ: Որպես մարդ՝ նրա սիրտը խլրտում է զգում, երբ, ըստ սովորույթի, «փեսեկ հագուցեք»-ին որդին խոնարհվում, համբուրում է հոր ձեռքը՝ մարմնավորելով սերնդագործման հաջորդականությունը: Սակայն, ի վերջո, իր անփոփոխ ծերության հասակում նա հողին է հանձնում երիտասարդ որդուն, տեսնում հարսի ամուսնությունը, կնոջ մահը, բայց ամենն առ ոչինչ էին հարազատ տնից հեռանալու համեմատ. *այն ցավալի էր մսից կաշին զատելու չափ:* Տունը հայ գյուղացու աշխարհընկալմամբ ավելին է, քան որպես կացարան արժևորումը. այն մարդու հոգու տունն է, որից բաժանվելը հավասարարժեք է դառնում *հոգու տան փուլ գալուն:*

Տան անձնավորման գեղարվեստական հնարանքի գործառությանը հանդիպում ենք Զարդարյանի նաև այլ գործերում: Նկատենք, որ այն իր դրսևորումներն է ունեցել նաև համաշխարհային գրականության մեջ: Վերոհիշյալ արտահայտչամիջոցի գաղափարագեղագիտական նկատառումներով կիրառությունն իր բարձրակետին է հասել լատինաամերիկյան գրականության ներկայացուցիչ Գաբրիել Գարսիա Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» վեպում:

Կյանքի իմաստավորման փիլիսոփայական հարցն արձակագիրը պատկերում է միանգամայն բնական միջավայրում՝ գավառ՝ դարերի խորքից եկած իր սովորույթներով, ճիստուկացով և իրական սոցիալական հարաբերություններով:

«Ո՞րն է կյանքի նպատակը» հարցադրման պատասխանը հետևելու է Զարդարյանի ստեղծագործության ավելի ուշ շրջանի երկերում՝ XX դարի առաջին տաս-

---

[3] *Ռ. Զ ա ր դ ա ր ե ա ն, 1910, էջ 43:*

նամյակի գրական-գեղարվեստական պատմագործառական ոլորտի հեթանոսական գրական շարժմանը հարող գործերում:

«Փողոցը» պատկերը գեղագետ Զարդարյանը կառուցել է վերհուշի և իմաստասիրական խոհի գեղարվեստական ձևերի ներհյուսման միջոցով: «Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ» խահակյանական բանաձևին համախոհությանը Զարդարյանը հարում է երկի երկրորդ հատվածում, իսկ առաջինը՝ վերհուշ պատկերը, հեղինակը հատկորոշել է այնպիսի գույներով, բույրերով, զգայություններով ու երանգներով, որ ընթերցողի մեջ առաջացնում են միայն տպավորապաշտական արվեստին մասնահատուկ շոշափելի զգայություններ: Հեղինակի մանկության փողոցն իրիկունները՝ մութն ընկնելուն պես, քնում էր հինգ տարեկան տղայի խաղաղավետ, հանդարտ քնով, իսկ ճերմակ ու մաքուր բարի լույսի *գետնին տեղավորումը* ավետում էին աքաղաղների շեփորները: Գարնան արշալույսների մանկական վերհուշը նշանավորվում է անուշահամ մրգերով ծանրաբեռն իշուկներ հեծած պարտիզպանների ձորերից վերադարձի ու բուռ- բուռ մրգերի բաշխումով, առույգ ու կորովի *ամազոնի ձագտիք* աստրացի աղջիկների՝ *կուկումն ուսերին աղբյուր գնալով,* նրանց՝ գեղեցիկ տղաների մինչև աչքերի բիբը հայող, սիրտ ուտող նայվածքներով, ամառ երեկոներին հարևաններով հավաքվելու և երիտասարդ աղջիկների՝ տան հետին մասերը նստելու սովորույթով... Հեղինակի մանուկ հիշողության մեջ դաջված են մնացել նաև թախիծով, մտահոգությամբ ստվերագծված հայրական դեմքերը՝ օրվա դժվարին վաստակի հոգսը շալակած: Այդ ծանր, մտասևեռ, տխուր, միշտ դեպի գետին հայացքը գավառի բոլոր տղամարդկանց իրար էր նմանեցնում:

Օրերի համանմանությունը Զարդարյանին հուշում է ամեն ինչի կանխավ *սահմանագծվածության ու եղանակավորման մասին*, իսկ կյանքի գոյությունը հաստատվում է միայն պայմանական առօրեական երթևեկությամբ:

Գեղարվեստական երկի երկրորդ հատվածում ժամանակի հարափոփոխ ընթացքի, մարդկային կյանքի կարճության, սերունդների քարավանի դանդաղընթաց շրջափուլի, փողոցի տևական հիշողության և հոգու՝ թևաբեկ հրեշտակի փիլիսոփայական խոհերն են արտացոլված:

Այժմ արձակագրի խաղընկերները հեռացել են, ու նոր մանուկներ են խաղում փողոցում, հասակավորները մեկիկ-մեկիկ պակասել են՝ բռնելով Աստծո ճանապարհը, անցած սերունդները օճառի սալիկի պես մաշվել-գնացել են: Միայն փողոցն է, որ, հանդիսատեսը լինելով սերունդների տխուր կամ հրճվալից պահերով երազ-կյանքին, պահում է այդ ամենն իր հիշողության մեջ:

Ծնվում է իմաստասիրական խոհը՝ համանման անտիկ փիլիսոփա Հերակլիտի տեսությանը՝ «Միևնույն գետը երկու անգամ չես մտնի»: «Միտքը ո՞ւր պիտի թառէր և Անցեալէն ի՞նչ պիտի գտնէր իր շրջավայրն եղող ջուրի պէս մշտաշարժ, դիւրափոփոխ և այնքան խուսափուկ բաներէն,- նկատում է Զարդարյանը, ապա շարունակում,- գուցէ Սիրտը պիտի մեռնէր և Երեւակայութիւնը՝ անոր գերեզմանաքարին վրայ պառկած գոց ու սգաւոր թեւերով մեռելատիպ հրեշտակի մը ճերմակ պատկերը պիտի ըլլար, անթեւ և ճախրանքի անկարող. գուցէ շատ զգայութիւններ և տպաւորութիւններ իրենց ամէնէն անուշ, ամէնէն խոր ու տեւական յուզումովը՝ գոյութիւն չունենային»[4]:

1910թ. «Ցայգալոյս»-ում զետեղված վերոհիշյալ ստեղծագործությանը անմիջաբար հաջորդում է «Կուլուշկերն ու իր գերեզմաննոցը» պատկերը[5], որտեղ հեղինակը, անդրադարձ կատարելով նախորդ երկի փիլիսոփայական հիմնադրույթներին, ենթադրում է (ռեալականությունից ելնելով) իրական կյանքի մխիթարանք և մահվան պատրանք լինելը: Արձակագրի կարծիքով, մարդը բնության մի մասնիկն է, և մահվանից հետո նա ձուլվում է մայր հողին: Հեղինակը երկրայինից, մարմնականից անջատում է մի այլ միավոր՝ երբեմն կոչելով այն միտք, երբեմն՝ խոհ, երազ, այսինքն՝ իմաստասիրության հիմնական հարցին տալիս է իդեալիստական լուծում:

Տիեզերական մեծ առեղծվածի բանալին ունեն միայն անդրաշխարհը (ստեղծագործության մեջ մարմնավորված գերեզմանոցի տեսքով) և հավերժական, հարա-

---

[4] *Ռ. Զ ա ր դ ա ր ե ա ն, 1910, էջ 63-64:*

[5] *Նույն տեղում, էջ 65-68:*

փոփոխ բնությունը (գետի՝ Արածանիի պատկերով): Մահկանացուն ի զորու չէ քննելու բնության գաղտնիքները. գետի մրմունջը նրա համար մառախլապատ խարշափ է: Մահը, ըստ փիլիսոփա մտածողի, անեծք է, որ բաժանում է հանգուցյալներին ապրողներից ու կյանքից: Կյանքի և մահվան փիլիսոփայության համանման ընկալում Զարդարյանը տեսավ հնագույն ավանդության՝ «Մարդը չէր մեռներ»-ի մեջ[6], որն իր ծագումնաբանությամբ հասնում է մինչև շումերական քաղաքակրթություն՝ «Գիլգամեշ»-ի ավանդազրույց: Սա մեկ անգամ ևս վկայում է Զարդարյանի՝ դարերով կուտակված ժողովրդական խորիմաստ փիլիսոփայությանը միտված դիրքորոշումը:

Կարծես կանխազգալով իր անգերեզման մահը (1915թ. Եղեռնի զոհերից դարձավ)՝նա երանի տվեց մոռացված, խղճուկ գյուղի հանգուցյալներին, որոնց հանգստարանը շրջապատված էր վայրի խոտերով, հազար անանուն ծաղիկներով, հազար անծանոթ բուրումներով, իսկ հարազատ Արածանին մահվան ահավոր անեծքը մոռացնելու համար իր հետ բերում էր մենավոր ուռիների խարշափը, նորածին գառնուկների առաջին աղու աղաղակը, հեռավոր հովվի սրնգի արձագանքը և աշխարհի ամենից քնքուշ, երանավետ ներդաշնակությունները...

Զարդարյանի տիպերը գավառացիներ են, որոնք *դասական իմաստով «հերոսներ»* լինել չեն կարող (արտահայտությունը Ե. Չարենցինն է, «Երկիր Նաիրի»):

Նրա գրական տիպերի վերաբերյալ արևմտահայ քննադատ Հակոբ Օշականը ճշմարտացիորեն նկատում էր. «Զարդարեանի անձերը ընտրուած են ընդհանուր միջինի մը վրայէն, ու կը մնան կապուած իրենց շրջապատին: Անոնց հոգիներուն կազմութիւնը քիչ բան ունի անսովոր»:[7] Զարդարյանը վերհանեց միօրինակ, լճացած միջավայրի մարդուն՝ գորշ առօրյայով, ավանդական մտածելակերպով, հայեցողական աշխարհայացքով: Արձակագրի նպատակը փիլիսոփայական, ընկերային, քաղաքական ավելի խոր ընդհանրացումների հանգելն էր:

Գրողի ապրած ժամանակաշրջանը համընկավ հակասություններով լեցուն դարավերջի գրական գործընթացին, ինչը հատկորոշվում էր գրական ավանդույթների պահպանումով, տարատեսակ մոդեռն եվրոպական գաղափարների ու մեթոդների հայտնությամբ ու արևելյան արվեստի շքեղ գույներով, լույսի ցոլանքով: Այս ամենն արտահայտություն գտավ Զարդարյանի գրական ժառանգությունում, որը բազմաբովանդակ էր թե՛ արծարծած գաղափարների, թե՛ գեղագիտության տեսանկյունից:

## ПСИХОЛОГИЯ ПРОВИНЦИИ В ПРОЗЕ РУБЕНА ЗАРДАРЯНА

***Резюме*** — ***Н. Карапетян***

**Статья охватывает художественную панораму провинций Западной Армении конца XIX и нач. XX века. Рубен Зардарян, являющийся теоретиком „провинциальной" литературы, темой для художественного произведения берет западную провинцию, задыхающуюся под гнетом деспотизма. Иногда художественное воспроизведение жизни западной провинции проявляется сладкими романтическими воспоминаниями, а иногда и горькой реальностью.**

**Изучение вышеуказанных картин и рассказов, обобщенных в статье, примечательно сохранившимися в этих провинциях традициями, суевериями, символической системой разгадывания снов, своеобразием авторского подхода к народной мудрости, методами психоанализа провинциала и другими наблюдениями.**

---

[6] *Ռ. Զ ա ր դ ա ր ե ա ն, 1910, էջ 168-176:*

[7] *Յ. Օ շ ա կ ա ն, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. VII, Անթիլիաս, 1979, էջ 314:*

*Рузанна МАРДОЯН*

## *ЗДОРОВЫЙ ОБРАЗ ЖИЗНИ КАК ВАЖНЫЙ ФАКТОР ПРОЦЕССА ФОРМИРОВАНИЯ ЛИЧНОСТИ*

"Формирование личности – это процесс и результаты социализации, воспитания и саморазвития"[1]. В процессе формирования личность приобретает систему устойчивых свойств и качеств. При формировании человека как личности первостепенное значение имеют социальные факторы. Но человек-природное существо, биологический механизм, проявляющий себя в виде задатков, которые являются основой развития его потребностей, интересов, склонностей, способностей. В результате такого развития складывается характер человека. Вместе с тем в процессе формирования личности не последнюю роль играют и природные параметры человека, его физическое здоровье, работоспособность, долголетие, которые зависят не только от генетической компоненты, но и от условий и образа жизни человека. В последнее время, когда стало понятно, что медицина не может не только предотвратить, но и справиться с обрушившимся на нее обвалом патологии, интерес к здоровому образу жизни стал привлекать все более пристальное внимание специалистов и широких кругов населения. Это не в последнюю очередь обусловлено осознанием истинности древнего изречения: искусство продлить жизнь – это искусство не укорачивать ее.

Сейчас не секрет, что болезни современного человека обусловлены прежде всего его образом жизни: нескомпенсированностью стрессов физической нагрузкой, гиподинамия, гипокинезия и др.

В определении понятия здорового образа жизни (ЗОЖ) учитывают два фактора-генетическую природу конкретного человека и ее соответствие конкретным условиям жизнедеятельности. ЗОЖ можно представить как способ организации бытовой, профессиональной, культурной сторон жизнедеятельности: позволяющий в той или иной мере реализовать свой творческий потенциал. В качестве определения понятия ЗОЖ приведем определение, данное Э. Вайнером: "Здоровый образ жизни есть способ жизнедеятельности, соответсвующий генетическим особенностям данного человека, конкретным условиям жизни и направленный на формирование, сохранение и укрепление здоровья и на полноценное выполнение человеком его социально-биологических функций"[2].

В приведенном нами определении ЗОЖ акцент делается на индивидуализации понятия, т.е. у каждого человека должен быть свой, только ему присущий ЗОЖ. В установлении ЗОЖ каждого отдельно взятого человека необходимо учитывать: 1) его типологические особенности (тип высшей нервной деятельности); 2) морфофункциональный тип; 3)возраст и половую принадлежность; 4) социальные условия жизни (семейное положение, условия быта, профессию и т.д.); 5) личностно-мотивационные особенности данного человека, его жизненные ориентиры, ценности и др. Исходя из сказанного программу и организацию ЗОЖ для данного человека необходимо определять с учетом следующих основных факторов:

- индивидуально-типологические наследственные данные;
- объективные социальные общественно-экономические факторы
- конкретные условия жизнедеятельности (семейные, бытовые, профессиональные); ЗОЖ

---

[1] *В. Сластенин и др., Педагогика: Учебное пособие. М., 2003, стр. 119.*
[2] *Э. Вайнер, Валеология, М., 2002, стр. 60.*

- личностно-мотивационные факторы, определяемые мировоззрением, культурой, уровнем воспитания и образования данного человека.

Достаточно часто для сохранения и укрепления здоровья предлагается одно средство: двигательная активность, пищевые добавки, психотренинг и т.д. Попытки выделить доминирующий фактор предпринимаются давно. Так, Гиппократ в явлении "ЗОЖ" особым средством считал физическое здоровье, Демокрит – духовное начало и т.д. Выделение одного какого-либо средства мы считаем неправильным, так как любое предлагаемое средство не может охватить все многообразие связей функциональных систем, формирующих организм, и связей человека с природой. Поэтому структура ЗОЖ должна представлять собой единство материально-бытового, социокультурного и духовного бытия человека. Сказанное позволяет представить ЗОЖ в таком виде:

- оптимальный двигательный режим;
- тренировка иммунитета и закаливание;
- рациональное питание;
- психофизиологическая регуляция;
- гендерная культура;
- рациональный режим жизни;
- отсутствие вредных привычек;
- валеологическое образование и самообразование.

Формирование ЗОЖ имеет своей конечной целью совершенствование условий жизни и жизнедеятельности на основе валеологического обучения и воспитания, включающих изучение своего организма и своей личности, освоение гигиенических навыков, знание факторов риска, умение реализовать на практике весь комплекс средств и методов обеспечения ЗОЖ.

Следует отметить особую важность ЗОЖ для формирования личности в школьный период его развития, когда ЗОЖ является предпосылкой здорового начала будущих семей, способных родить и воспитать последующие поколения людей с более совершенным генофондом и с устойчивой системой здоровых потребностей. Значение данного положения еще более возрастает, если учесть статистические данные, свидетельствующие об ухудшении здоровья школьников. Одной из важных причин, порождающих болезни детей, является игнорирование педагогами и родителями фактора ЗОЖ школьников, правильной организации, с валеологической точки зрения, их жизни, воспитания и обучения. Валеологический анализ воспитательной среды позволяет выделить целый ряд факторов, имеющих отрицательное влияние на здоровье школьников:

- чрезмерная информационная нагрузка;
- несовершенная организация учебного процесса и учебного режима в школе. (Учебное расписание строится без учета физиологически обоснованной динамики умственной работоспособности учащихся в течении учебного дня, недели, четверти или полугодия);
- отсутствие в образовательном процессе учета индивидуально-типологических особенностей учащихся;
- недостаточная двигательная активность учащихся, низкая культура активного отдыха, гиподинамия;
- авторитарно-репродуктивная система обучения, делающая ученика не активным участником образовательного процесса, а пассивным потребителем навязываемой ему информации, что не может пройти бесследно для его психики и здоровья;

- низкий уровень (если не отсутствие) валеологической компетентности учителя, что можно объяснить отсутствием валеологической подготовки учителей в педагогических вузах.

К перечисленным факторам необходимо добавить, что состояние здоровья детей во многом обусловлено и их собственным отношением к нему. В данном случае мы имеем в виду отсутствие целенаправленного воспитания у детей культуры здоровья, формирования знаний о ЗОЖ, средствах и методах его достижения как в семье, так и в образовательных учреждениях.

Из сказанного следует, что обеспечение здоровья детей в рамках системы школьного образования требует создание, обеспечение условий ЗОЖ в процессе воспитания и обучения. Это должно найти отражение в здоровьесберегающей организации учебно-воспитательного процесса, в разработке и применении новых форм и методов обучения, позволяющих усваивать на ином качественном уровне и устранять неблагоприятное влияние школьных нагрузок на организм учащихся.

К здоровьесберегающим педагогическим технологиям предъявляются определенные педагогические требования:

- учет возрастно-половых, индивидуально-типологических особенностей школьников;
- учет уровня здоровья;
- учет текущего состояния организма и уровня работоспособности;
- предупреждение умственного перенапряжения и переутомления учащихся, активизация механизмов повышения работоспособности;
- создание мотивации к обучению и стремление к самообразованию.

Для того, чтобы образовательные технологии имели благотворное влияние на организм учащихся, они должны соответствовать определенным принципам. К ним относятся:

- предупреждение гиподинамии, гипокинезии и их последствий для здоровья школьников;
- формирование знаний, соответствующих возрасту учащихся, об избежании дистресса;
- соблюдение принципа сознательности и активности при решении проблем усвоения знаний;
- развитие активности и творческих способностей школьников;
- обучение на фоне положительных эмоций.

Из известных нам педагогических технологий наиболее соответствуют выше отмеченным требованиям следующие: развивающее обучение (РО) Д. Эльконина – В. Давыдова, модельное обучение, адаптированное к требованиям современного образования (П. Третьяков), нейролингвистическое программирование (НЛП), соционика, вальдорфская педагогика, суггестопедия, методика активизации мышечного тонуса и моторно-координаторных систем детского организма, музыкотерапия, ароматерапия, арттерапия и др. Перечисленное, очевидно, не исчерпывает весь арсенал здоровьесберегающих технологий.

Применение в школах здоровьесберегающих технологий, построенных на индивидуализации обучения и направленных на удовлетворение образовательных потребностей каждого школьника с учетом его склонностей, интересов, учебно-познавательных и функциональных возможностей, составляет главный педагогический резерв валеологического воздействия на обучающихся, является очень важным средством для формирования ЗОЖ школьников.

Разумеется, что перечисленные технологии мы не считаем универсальными, полностью отвечающими всем требованиям, обеспечивающих

ЗОЖ в школьной системе. Но их сочетание позволит обеспечить комфортные условия обучения и воспитания и высокое качество образования.

Современное общество ставит цель – формировать личность с максимально полной реализацией личностного потенциала, что во многом определяется тем, насколько успешно действуют не только учителя в школе, но и родители дома, помогая учащимся познать и сотворить себя, обучая каждого в соответствии с его природой, приспосабливая к ребенку способы и условия обучения, а не наоборот. При этом одним из принципиальных условий реализации возможностей ребенка является высокий уровень его здоровья, от состояния которого зависит и его интеллектуальный и физический потенциал, и полноценность развертывания генетической программы во времени, и состояние работоспособности, и формирование жизненных и социальных мотиваций, и многое другое. Вот почему так важно включение родителей в процесс формирования ЗОЖ детей. Но, как показывает опыт, валеологическая грамотность родителей очень низкая. В этих условиях стремление школьников к ведению ЗОЖ, воспитанное в школе, часто не находит понимания и поддержки родителей, находящихся в плену стереотипов и традиций поведения, в постоянном родительском стремлении обеспечить ребенку режим удовольствий и ограничений в нагрузках, исключающий повседневную борьбу за здоровье ребенка. Поэтому особенно актуально сегодня, во-первых, проведение валеологического всеобуча с родителями. Во-вторых, организация и совместная деятельность школы и семьи по созданию ЗОЖ у школьников.

Целью валеологического образования родителей является создание в семье валеологически обоснованной среды для обеспечения здоровья ребенка и правильного формирования его личности. Валеологическое образование родителей призвано решать следующие задачи:

- воспитание мотивации к ведению ЗОЖ;
- ознакомление с психофизиологическими особенностями возраста их детей;
- обучение основам ЗОЖ;
- ознакомление с психолого-педагогическими основами взаимоотношений в семье;
- обучение созданию здоровьесберегающей обстановки в семье;
- приобщение родителей к ЗОЖ.
- В соответствии с поставленными задачами валеологическое образование родителей может осуществляться в таких формах, как семинары, индивидуальные беседы, лекции и др.

Одним из самых эффективных способов формирования ЗОЖ у школьников является совместная работа учителей и родителей, школы и семьи, которая проводится в следующих направлениях:

1. формирование общей культуры и, как ее неотъемлемой части – культуры здоровья. Культура и способ жизнедеятельности, жизненный уклад человека как производное культуры являются результатом усвоенных в школе и в семье морально-этических установок. Школе принадлежит определяющая роль, связанная с формированием мировоззрения человека, в котором культура здоровья должна занимать центральное место. Осознавая все многообразие и взаимосвязь природных и социальных явлений, их единство и противоречие, человек лучше узнает и себя, и эволюционные, и социальные предпосылки своего возникновения. В конечном же итоге это должно стать фундаментом формирования отдельных аспектов культуры, среди которых культура здоровья должна стать приоритетной, отражающей интерес человека к самому себе и помогаю-

щий ему через самопознание добиться наиболее полного раскрытия своего потенциала – самореализоваться.

Роль семьи в формировании общей культуры и культуры здоровья является очень важной. Семья вместе с школой способствует вооружению школьника основами знаний по предметам, формирует жизненные приоритеты, воспитывает культуру общения, культуру пола и этикета, этнических и народных традиций и т.д.

2. Формирование и обеспечение здоровья учащихся. Сферы деятельности в формировании здоровья гораздо шире, и организационная работа в этом отношении имеет исключительную роль. Она включает знакомство с результатами медицинского осмотра, помощь в проведении психо-физиологического тестирования индивидуальных особенностей и уровня здоровья детей, координация работы по формированию и обеспечению здоровья детей с другими учителями, построение рациональной и здоровой жизнедеятельности учащихся, или просто режим дня, что в валеологии считается хорошей моделью для формирования ЗОЖ. Применительно к детям школьного возраста режим – это прежде всего возрастная категория, потому что предусматривает не только содержание необходимых для растущего организма физиологических потребностей, но их количественное выражение, меняющееся по мере взросления, поэтому модели режима, разрабатываемые учителями и родителями для школьников разного возраста должны быть разные. Но они объединяются следующими основными условиями:

- в распорядок дня должны быть включены все виды деятельности школьника (от подъема до отхода ко сну, включая и время школьных занятий);
- выполнение этих видов деятельности должно быть распределено по времени;
- каждый из видов деятельности должен регулярно выполняться.

Естественно, что содержание работы учителей и родителей по формированию ЗОЖ ребенка не ограничивается лишь составлением режима дня. Это крайне сложная, многогранная работа. И, чтобы она протекала более организованно, целенаправленно, необходимо составлять программы совместных действий, где должны быть отражены поставленные задачи, аспекты работы по формированию ЗОЖ школьников. В качестве примера мы рекомендуем следующую программу совместной деятельности школы и семьи.

***Программа по обеспечению ЗОЖ школьников***[3]

- Понятие о валеологии, здоровье и ЗОЖ.
- Анатомо-физиологические и психологические особенности детей различного возраста.
- Ознакомление с результатами ежегодного медицинского осмотра и определение путей их улучшения.
- Обучение ведению ЗОЖ в школе и в семье: режим жизнедеятельности, питание, гигиенические условия, взаимоотношения между членами семьи и т.д.
- Поведение родителей и учителей при возникновении заболеваний и острых состояний у ребенка.
- безопасное поведение ребенка в быту, на улице и др.

---

[3] *Н. В а й н е р, Е. В о л ы н с к а я, Валеология: Учебный практикум, М., 2002, стр.295.*

**Данная программа предлагается как исходная, она должна и может быть изменена, дополнена в соответствии с конкретными условиями данной школы, семьи и т.д.**

**Итак, ЗОЖ, несомненно, является важным фактором в процессе формирования личности. ЗОЖ-это категория педагогической валеологии, которая в учебно-воспитательном процессе выполняет и аксиологическую функцию, разрабатывая здоровьесберегающие технологии, формируя ЗОЖ, что в конечном счете сохраняет и укрепляет физическое, психологическое, душевное здоровье школьника. А особенности феномена здоровья позволяют придать понятию "здоровье" статус категории педагогической аксиологии и поставить такую задачу: формировать у школьников ценностное отношение к здоровью, ЗОЖ и ценностное поведение как формы участия в сохранении собственного здоровья и соучастия с другими (учителями, родителями) с этой целью.**

## ԱՌՈՂՋ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

___ *Ամփոփում* ___ ___ *Ռ. Մարդոյան* ___

Հոդվածում ներկայացվում է դպրոցականի առողջ կենսակերպի բովանդակությունը և առանձնացվում են նրա տարրերը: Դպրոցականի առողջ կենսակերպի ապահովման համար առաջարկվում է հատուկ մանկավարժական տեխնոլոգիա, որը կնպաստի երեխայի առողջության պահպանմանը և թույլ կտա գիտելիքները յուրացնել սկզբունքորեն նոր որակական մակարդակում, կչեզոքացնի ծանրաբեռնվածության ոչ դրական ազդեցությունը նրա օրգանիզմի վրա:

*Նունե ԱԴԱՄՅԱՆ*

## *ՈւՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՁԵՎԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ*

Ձևամոլությունը՝ կապված ձևական կրթության տեսության հետ, ուսուցման գործընթացում դարերի պատմություն ունի: Հին դպրոցին հատուկ ձևական կրթությունը, ուսուցման ձևամոլությունը շատ դիպուկ է խարազանել հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը: Դիմելով աշակերտներին՝ նրա վարժապետ հերոսն ասում է.

Պիտի սովրեք, սովրեք էնքան,
Մինչև դառնաք ինձ պես վարպետ:
Դե ընստեցեք հիմի հանդարտ,
Ինչ որ կասեմ՝ կրկնեք ինձ հետ:

Եվ երեխաները մեխանիկորեն կրկնում էին վարժապետի ասածները՝ առանց ըմբռնելու դրանց իմաստը: Դասի վերջում վարժապետը պատվիրում է.

Դե գնացեք վաղը կգաք՝
Անգիր արած ջրի պես:

Իսկ «ջրի պես անգիր արածն» էլ արագությամբ գոլորշիանում էր՝ առանց իմացական հետք թողնելու երեխաների գիտակցության մեջ: Այդ կապակցությամբ Հովհ. Թումանյանն իր «Ինքնակենսագրական» - ում ժամանակի դպրոցից բերում է ձևամոլության հետևյալ բնորոշ օրինակը. «Մի երեխայի վարժապետը ասում է՝ «Ասա՛ այբ», նա էլ կրկնում է՝ «Ասա՛ այբ».

– Տո՛, շա՛ն զավակ, ես քեզ եմ ասում՝ «Ասա՛ այբ».

– Տո՛, շա՛ն զավակ, ես քեզ եմ ասում՝ «Ասա՛ այբ»,- պատասխանում է աշակերտը: «Այս երեխայի բանը հենց սկզբից վատ գնաց,- շարունակում է Թումանյանը,- և այնքան ծեծ կերավ, որ մի քանի ժամանակից «դաչաղ» ընկավ, տանիցը փախավ»:[1]

Անցել են հարյուրամյակներ, սակայն այսօր էլ ժամանակակից դպրոցում նկատելի են ուսուցման ձևամոլական դրսևորումներ, որոնց հաղթահարումը եղել և մնում է և՛ մանկավարժ գիտնականների, և՛ առանձնապես ուսուցիչների առաջնահերթ խնդիրը: Իսկ դրա համար պետք է նախ իմանալ, թե որոնք են ուսուցման գործընթացում ձևամոլության դրսևորումները և նրանց առանձնահատկությունները:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք ուսուցման գործընթացում ձևամոլության դրսևորման հինգ տեսակ: Ուսուցման գործընթացում ձևամոլութան պատճառը բովանդակությունից առաջ ձևին տրված նախապատվությունն է: Հայտնի է, որ բովանդակությունը և ձևը փիլիսոփայական կատեգորիաներ են, որոնց «փոխներգործության մեջ բովանդակությունը ներկայացնում է օբյեկտի առաջատար, որոշիչ կողմը, իսկ ձևը՝ նրա այն կողմը, որը մոդիֆիկացվում, փոփոխվում է՝ կախված բովանդակության փոփոխությունից և նրա գոյության կոնկրետ պայմաններից: Իր հերթին ձևը, օժտված լինելով հարաբերական ինքնուրույնությամբ, հակադարձ ակտիվ ներգործություն է ունենում բովանդակության վրա»:[2] Հայտնի է, որ բովանդակությանը համապատասխանող ձևն արագացնում, իսկ չհամապատասխանողն արգելակում է բովանդակության հետագա զարգացումը: Դպրոցում ուսուցման գործընթացի բովանդակությունն են կազմում աշակերտների ուսումը, դաստիարակությունը և նրանց բազմաբնույթ գործունեությունը: Ուսուցման գործընթացի հիմնական ձևը դասն է: Իհարկե, չի կարելի անտեսել նաև այլ միջոցառումները: Բովանդակությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մտքերն արտահայտելու և արտահայտված յուրաքանչյուր բառի իմաստը բացահայտելու վրա: Հակառակ դեպքում ձևամոլության առկայությունը դառնում է անխուսափելի:

Ձևամոլության դրսևորումների ամենատարածված ձևերից մեկը կապված է դպրոցական դասագրքերում և մեթոդական ձեռնարկներում տվյալ ուսումնական առարկայի տերմիններն ու հասկացություններն անգիր ընկալելու կամ ճիշտ սահմանե-

---

[1] *Մ.Մ ե լ ք ո ն յ ա ն, Հովհ.Թումանյանը կրթության և դաստիարակության մասին, Եր.,1969,էջ 11:*
[2] *Փիլիսոփայական բառարան, Եր., 1975, էջ 67:*

լու հետ: Ասել է թե՝ տեղի է ունենում ձևի և բովանդակության անհամապատասխանություն: Օրինակ, հայոց լեզվի դասին պատասխանելով «Ինչպե՞ս է կազմվում գոյականի հոգնակին» հարցին՝ աշակերտը տալիս է գրքային պատասխան. «Գոյականների հոգնակին կազմվում է եզակիից՝ *եր* և *ներ* վերջավորություններով»: Այստեղ անտեսվում են բացառությունները, ուստի այդ սահմանումը բովանդակությամբ նեղ է: Չէ՞ որ կան գոյականներ, որոնց հոգնակին կազմվում է այլ վերջավորություններով. օրինակ, եզակի՝ մարդ, հոգնակի՝ մարդիկ, եզակի՝ կին, հոգնակի՝ կանայք և այլն: *Բացառություն համարվող* միավանկ որոշ գոյականների հոգնակին կազմելիս վերականգնվում են գրաբարյան ձևերը. օրինակ, ձուկ – ձկներ, մուկ – մկներ, դուռ – դռներ և այլն:

Նման օրինակներ հանդիպում են նաև մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն դասընթացներում: Մեր կարծիքով և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները հասկացությունները սահմանելիս պետք է նկատի ունենան ձևի ու բովանդակության ներդաշնակությունը՝ մատնացույց անելով նաև բացառությունները:

2. Ձևամոլության տեղիք է տալիս *տեսության անջատումը պրակտիկայից:* Տեսությունն ու պրակտիկան նույնպես փիլիսոփայական կատեգորիաներ են, որոնց դիալեկտիկական միասնության մասին պրոֆ. Ա. Սպիրկինը իր «Փիլիսոփայության հիմունքները» աշխատության մեջ գրել է. «Պրակտիկան դիալեկտիկական միասնության մեջ է գտնվում ճանաչողական գործունեության հետ, տեսության հետ. պրակտիկան իմացության արդյունքների ճշմարտացիության չափանիշն է: Միայն այն գիտելիքները, որոնք անցել են պրակտիկայի զտիչ բովով (ընդգծումը մերն է - Ն.Ա.) կարող են հավակնել օբյեկտիվության, ստույգության, ճշմարտացիության»:[3]

Ուսումնասիրությունները վկայում են, որ ուսուցման գործընթացում (կապված տեսության և պրակտիկայի հետ) ձևամոլության դրսևորումները հանդես են գալիս երկակի ձևով. երբեմն պրակտիկան ամբողջովին բացակայում է կամ գոյություն է ունենում տեսությունից կտրված: Միայն գործնականին անհրաժեշտ ուշադրություն դարձնելու և տեսականն անտեսելու դեպքերն առանձին բացառություններ չեն կազմում: Անցանկալի է, երբ թեմայի ուսուցումը տարվում է միայն վարժությունների կատարման միջոցով կամ, ուշադրության կենտրոնում պահելով տեսության հարցերը, անտեսվում են վարժությունները: Չի կարելի համամիտ չլինել Ի. Լերների, որ առանց գիտելիքների չեն լինում և չեն կարող լինել հմտություններ: Այս կամ այն գործունեությունը ծավալելու համար պետք է իմանալ. «Ի՞նչ պետք է կատարել», «ինչպե՞ս» և «ինչի՞ համար պետք է կատարել» հարցերի պատասխանները: Միայն այդ հարցերի պատասխանները իմանալով՝ գործունեությունը կարելի է դարձնել գիտակցական, իսկ գիտելիքների կիրառումն էլ՝ դրանք յուրացնելու նոր մակարդակի աղբյուր»:[4]

Հմուտ ուսուցիչների փորձը ցույց է տալիս, որ պրակտիկան նպաստում է՝ ա) ինքնուրույն աշխատանք կատարելու հմտության ձևավորմանը, բ) անհատական և կոլեկտիվ աշխատանքները զուգակցելուն, գ) ինքն իր ուսուցիչը լինելու պահանջը կենսագործելուն, դ) հիշողությունը զարգացնելուն ու ավելի իմաստալից դարձնելուն, ե) գիտելիքները հասկանալի ու գիտակցական դարձնելուն, զ) տեսականի և գործնականի համաչափությունը պահպանելուն, է) հետազոտական տարրեր յուրացնելուն, ը) ուսումնական աշխատանքի ռացիոնալ եղանակ ընտրելուն, թ) աշակերտներին ճանաչելուն ու անհատական մոտեցում ցուցաբերելուն, ժ) գրքի հետ ինքնուրույն հմտություն ձևավորելուն, ժա) գիտելիքների կիրառման եղանակները բացահայտելուն, ժբ) նոր գիտելիքներ յուրացնելու անհրաժեշտության գիտակցմանը, ժգ) ինքնակառավարման և ինքնաստուգման հմտության ձևավորմանը, ժդ) ցուցումներ ստանալու, հարցեր տալու հմտություններ ձևավորելուն, ժե) հիմնականը, գլխավորը երկրորդականից անջատելու հմտության ձևավորմանը, ժզ) աշխատունակության բարձրացմանը:

3. Հաճախ ձևամոլության տեղիք է տալիս հիշողության գերիշխումը հասկանալու գործընթացի վրա: Անգնահատելի է հիշողության (մտապահման) դերն ու նշանակությունը ուսուցման գործընթացում: Իրավացի էր Ջ. Լոկը, երբ հիշողությունը համարում էր գիտելիքների ու գաղափարների «պահեստ»: Ուսուցչի խնդիրն է՝ անընդհատ

---

[3] *А. Спиркин, Основы философии, М., 1988, стр. 266.*

[4] *Ի. Լերներ, Ուսուցման պրոցեսը և նրա օրինաչափությունները, Եր., 1982, էջ 34:*

հարստացնել աշակերտների հիշողության այդ «պահեստը»: Սակայն չի կարելի չարաշահել գիտելիքների մեխանիկական սերտումն ու մտապահումը՝ առանց ուսումնական նյութի իմաստն հասկանալու: Յուրացման գործընթացի բաղադրամասերից է ոչ միայն ուսումնական նյութի մտապահումը, այլև իմաստավորումը, իսկ իմաստավորումը մտածողական գործունեություն է: Ասել է, թե այդ գործընթացում պետք է զարգացնել աշակերտների ակտիվ, ստեղծագործական մտածողությունը: Առաջավոր ուսուցիչների փորձը ցույց է տալիս, որ ուսուցման գործընթացում գիտակցականության դիդակտիկական սկզբունքով առաջնորդվելիս հաղթահարվում է նաև ձևամոլությունը:

4. Հաճախ ձևամոլության տեղիք է տրվում ուսուցման նկատմամբ ոչ թե ըստ էության, այլ մակերեսային մոտեցումներն ու գնահատումը: Աշակերտներին հասցեագրված հարցաթերթիկների հարցերի պատասխանները վկայում են, որ նրանց շատ գիտելիքներ մակերեսային են: Մակերեսայնությունից խուսափելու միջոցներից մեկը գիտելիքների կայունությունն ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքն է: Հաճախ խոսելով գիտելիքների կայունության ու խորության մասին՝ անտեսվում է դրանք ինքնուրույն օգտագործելու հարցը: Պարզ է, որ եթե գիտելիքների կայունությունն ու խորությունը կապվում է էական կողմերը նկատելու, գլխավորը երկրորդականից զատելու, տեսական հիմնավորումներ կատարելու հետ, ապա, անկասկած, տարվում է մակերեսային դրսևորումները հաղթահարելու արդյունավետ աշխատանք: Նույնը կարելի է ասել նաև աշակերտների գիտելիքները օբյեկտիվ գնահատելու մասին:

Գնահատականը պետք է լինի զարգացման չափանիշ: Եթե գնահատականը այդպիսին չէ, օբյեկտիվ չէ, ապա, անկասկած, իջնում է աշակերտի առաջադիմությունը: Արժանի գնահատական նշանակելն արվեստ է: Ճիշտ հարցումն ակտիվ սովորեցնելու գործընթաց է: Ահա թե ինչու աշակերտին մեծ պահանջներ առաջադրելը պետք է ուղեկցվի նրա նկատմամբ հոգատարությամբ:

5. Ձևամոլության պատճառներից է ուսուցման գործընթացում կաղապարների առկայությունը, որ առավելապես պայմանավորված է միևնույն տիպի, ասենք համակցված դասին ուսուցչի ստանդարտ մեթոդների գործադրմամբ: Ձևամոլության այս եղանակը նոր չէ: Դեռևս գերմանացի մանկավարժ Ի. Հերբարտը սահմանեց ուսուցման մի կաղապարային համակարգ՝ չորս աստիճաններով, գտնելով, որ ուսուցման ամեն մի եղանակ պետք է անցնի այդ պարտադիր աստիճաններով, որոնք են՝ պարզաբանումը, զուգորդումը, համակարգը և մեթոդը: Ուսուցման բազմամեթոդայնության ջատագով, մանկավարժ Ա.Դիստերվեգը իրավացիորեն գտնում էր, որ մեթոդը վերնաշապիկ չէ, որ ուսուցիչը հագնի և դասից հետո հանի ու կախի պահարանում: Դա ստեղծագործական կարողություն է, «որը խտացված է ուսուցչի մեջ. սովորաբար լավ ուսուցիչը նաև լավ մեթոդ է ընտրում»:

Իհարկե, վերոնշյալ դրույթներով չեն սպառվում ուսուցման գործընթացում ձևամոլության դրսևորումները, սակայն կասկածից վեր է, որ դիտարկված նյութերն էլ կարող են գործնական օգնություն ցույց տալ ուսուցիչներին՝ հաղթահարելու ուսուցման գործընթացում դրսևորվող ձևամոլությունը:

## КРАТКАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРОЯВЛЕНИЙ ФОРМАЛИЗМА В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

___ *Резюме* ___ ___ *Н. Адамян* ___

Раскрывается сущность формализма и на основе фактического материала дается характеристика пяти форм проявлений формализма в процессе обучения:

1. Предпочтение, отдаваемое форме перед содержанием. 2. Отрыв теории от практики. 3. Первостепенное значение памяти в процессе понимания. 4. Подход и оценка не посуществу, а поверхностный. 5. Абсолютизация трафарета.

При характеристике проявления формализма в процессе обучения приводятся поучительные примеры, выдвигаются некоторые методические предложения, которые помогут учителям преодолеть формализм, проявляющийся в процессе обучения.

*Рузанна ШТОЯН*

## *О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ПЕДАГОГИЧЕСКОГО ТЕСТИРОВАНИЯ*

**Использование тестирования в качестве эффективного средства исследования широкого спектра проблем в психологии, социологии, медицине, технике и других науках сделало тест междисциплинарным методом измерения различных признаков.**

**Само понятие "измерение" применительно к тесту оказывается наиболее приемлемым, так,как подобно любому физическому измерению,тестирование предполагает наличие объекта измерения и средства его измерения-шкалы с нулевой точкой отсчета и дробными числами. Так как измерение есть единственное средство обоснованного и достаточно строгого отображения исследуемого признака на числовую ось, приложение математического (цифрового) аппарата к тестированию оказывается обоснованным. Т. о., тест есть шкала,используемая для количественного выражения качества. В тестологии наработано то, что составляет научное и методическое содержание проблематики тестирования и позволяет расширить и углубить практическую проблематику тестологии как науки.**

**Широкий спектр проблем образовательной тестологии находит свое отражение в теоретическом обосновании и практических рекомендациях по разработке и применению измерительных материалов и процедур, обеспечивающих наилучшие результаты (точность и надежность) в определенных педагогических условиях (временных, технологических, организационных и т.д.).[1] Проблематика педагогического тестирования есть проблематика содержательной, конструктной, структурной, прогностической и других видов валидности тестовых материалов, используемых в образовательном процессе.**

**Повышение качества содержания языкового компонента общеобразовательной подготовки учащихся в рамках обучения их русскому языку в армянской школе обеспечивается посредством повышения интенсивности обучения через образовательную технологию на базе имплементации парадигмы тестирования.**

**Исходя из того, что проблематика образовательного тестирования проецируется не только на конкретную предметную область (в частности, русский язык как школьный предмет), но и на тестологию как науку и всю систему образования в целом, целесообразно очертить круг проблем, корректное решение которых будет стимулировать дальнейшее развитие всех компонентов единой системы: предметных знаний, тестологии, собственно образования, практики языкового тестирования.**

**Первая группа задач связана с необходимостью осознания очевидной значимости для языкового тестирования образовательного стандарта по русскому языку (содержательная валидность теста).**

**Именно образовательный стандарт, определяющий учебные цели и смысловые дидактические элементы и закрепляющий требования к содержанию и качеству знаний, отражает задачи, которые общество ставит перед образованием (в частности, обучение русскому языку).Постановка образовательных задач непосредственно связана с созданием современной системы педагогического тестирования, так как их варьирование по контингентам обучающихся и по уровням предметных знаний требует мно-**

---

*[1] В. И д и а т у л и н, Тесты уровней обученности как средство диагностики учебных достижений,"Вопросы тестирования в образовании", №4, 2002,стр.18-29.*

жественности в формах и методиках тестирования,в организации проведения тестовых процедур, в анализе получаемых результатов педагогических измерений.При этом облик теста может варьироваться от простейшей формы выбора ответа из перечня предложенных вариантов без проверки ответа до формы стандартизованной контрольной работы с проверкой и оценкой хода решения задачи самими учащимися.

Вторая группа задач непосредственно касается структурирования тестов и процедур тестирования с целью повышения достоверности выводов об учебных достижениях учащихся (структурная валидность).

В связи с этим очевидна необходимость наличия различных форм тестов на фиксированном уровне образовательного процесса на том или ином этапе обучения, тестов различного содержания и степени трудности в рамках конкретной предметной области (русский язык как неродной).

Форма заданий как средство упорядочения и эффективной организации содержания теста считается правильной, если она позволяет точно выразить содержание и исключает возможность появления ошибочных ответов по формальным признакам. Адекватная содержанию тестового задания форма придает ему структурную целостность и определенность, внешнюю организованность.В зависимости от целей тестирования используются тестовые задания разных форм.

Педагогические исследования показали, что вопрос конструирования тестов непосредственно связан с рассмотрением таких основных тестовых форм,как закрытые задания с выбором одного или нескольких правильных ответов,задания открытой формы, задания на установление соответствия и задания на установление правильной последовательности. Для диагностирования уровня обученности учащихся армянской школы русскому языку наиболее целесообразными, на наш взгляд, являются задания закрытой формы с выбором одного или нескольких правильных ответов среди трех-пяти предложенных вариантов, что объясняется удобством и технологичностью этой формы для контроля знаний. Кроме того, основные принципы конструирования тестовых заданий разработаны именно для данной формы.[2]

Ниже предлагаются наиболее употребляемые для контроля знаний по русскому языку лексические тестовые задания закрытой формы, построенные по разным тестологическим принципам (на примере синонимии прилагательных).

Пример - 1 (по принципу однородности ответов).

Подберите синоним к слову *смелый:*

*1) сильный, 2) строгий, 3) храбрый, 4) умный*

Другим вариантом этой же формы является задание с выбором нескольких правильных ответов.

Пример - 2

Подберите синонимы к слову <u>смелый</u>

*1) храбрый, 2) робкий, 3) трусливый, 4) отважный*

Третий вариант заданий закрытой формы используется для проверки сопоставительных знаний-с выбором одного, наиболее правильного ответа из некоторого числа вариантов, правильных в разной степени. Во избежание "автоматического" угадывания целесообразно в тот или иной дистрактор вводить ложный объект.

Пример - 3 (по принципу кумуляции)

Выберите самый полный правильный ответ.

Этот вариант является самым полным синонимическим рядом прилагательных:

---

[2] *В. А в а н е с о в, Композиция тестовых заданий, МОРФ, 1998, стр. 186.*

*1) робкий, боязливый*

*2) робкий, боязливый, несмелый*

*3) робкий, боязливый, несмелый, трусливый*

*4) робкий, боязливый, несмелый, трусливый, нерешительный*

*5)робкий, боязливый, несмелый, трусливый, нерешительный, бесстрашный*

Примеры, сконструированные по принципу сочетания понятий.

Пример - 4 (вариант I)

Выберите синонимическую пару прилагательных:

*1) тонкий и толстый, 2) смелый и трусливый, 3) светлый и темный, 4) легкий и трудный, 5) сложный и трудный.*

Пример - 5 (вариант II)

Выберите синонимическую пару прилагательных:

*1) строгий и жестокий, 2) строгий и требовательный, 3) строгий и жадный, 4) строгий и злой*

Пример - 6 (вариант III)

Выберите синонимическую пару прилагательных:

*1) легкий и трудный, 2) трудный и простой, 3) простой и сложный, 4) сложный и трудный*

Третья группа задач напрямую связана с профессиональной культурой при разработке и проведении тестирования и интерпретации результатов педагогических измерений. Профессиональная культура проявляется прежде всего в следовании определенным тестологическим стандартам, т.е. тестологической аксиоматике.

В соответствии с профессиональной этикой применения контрольно -измерительной процедуры в практике тестирования недопустимо использование тестов, выполнение которых можно заметно улучшить узконаправленным обучением и тренировочным "натаскиванием" на правильные ответы. В рамках тестологической аксиоматики исключение подобных тестов производится путем мониторинга прогностической валидности теста, означающего: *а) при разработке тестов должны контролироваться и соблюдаться определенные параметры тестов (критерии их качеств); б)корректное выполнение тестов учащимися обеспечивается посредством развития их когнитивных умений и навыков; в) при интерпретации результатов педагогических измерений в целях их объективизации должны учитываться некоторые обобщенные характеристики контингента учащихся и набора используемых контрольно-измерительных материалов в рамках той или иной модели тестирования, а также вероятность угадывания правильного ответа.*

Проблематика прогностической валидности тестирования находит свое отражение в необходимости создания банка тестовых нормативно-ориентированных заданий (ТЗ).В условиях обучения учащихся армянской школы русскому языку банки ТЗ должны представлять собой накопленный апробированный предметно-ориентированный (языковой) материал, достаточный для корректного диагностирования уровня обученности учащихся. Т. о., в целях хранения предметной тестовой информации и ее соответствующей калибровки в рамках разных моделей тестирования создается база данных ТЗ. База данных ТЗ будет способствовать решению таких задач, как мониторинг качества и динамики качества языкового образования учащихся и повышение качества тестовых материалов.

Удовлетворяющие требованиям содержательной и структурной валидности соответственно видам контроля и поставленным дидактическим целям тестовые задания в рамках функционирования базы данных ТЗ подвергаются разным способам компоновки: согласно логике предмета и по степени трудности.

**Вопрос последовательности расположения тестовых заданий в структуре теста продолжает оставаться камнем преткновения в спорах ученых-тестологов. Например, в определение теста, предлагаемое В. Аванесовым,[3] А. Майоровым[4] и М. Челышковой,[5] включено требование возрастающей трудности заданий. Несомненно, оно удобно при теоретическом анализе и обработке результатов тестирования, но плохо вписывается в систему последовательного тематического представления учебного материала, разрывает логические связи и вступает в противоречие с многомерной структурой знаний и умений, в которой сложность задания связана не только с числом операций при его выполнении, но и с уровнем знаний и умений тестируемого. Т. о., трудность задания как субъективный параметр не согласуется с иерархией уровней обученности (фактологический, операционный, творческий), так как трудными для обучаемых могут быть и задания первого, фактологического уровня. Расположение по возрастанию трудности невозможно сделать априорно, эмпирические же данные зависят от конкретного контингента обучаемых, поэтому в целом они нестабильны и ненадежны. Кроме того, если задания в тесте расположены в порядке нарастания их трудности, то они статистически зависимы и разность индивидуальных баллов не отражает действительного различия в знаниях обучаемых.**

**Для тематического тестирования, на наш взгляд, возможен и дидактически оправдан только один путь упорядочивания тестовых заданий-их взаимная обусловленность, логическая и причинная последовательность. Упорядочение по степени трудности необходимо лишь в пределах блока заданий, относящихся к какой-либо одной теме раздела, где развитие идет от простого к сложному. Т. о., обеспечение адаптации возможностей тестирования к требованиям государственного образовательного стандарта по русскому языку и к когнитивным способностям и потребностям учащихся возможно лишь на базе рассмотрения научного и методического содержания проблематики педагогического тестирования.**

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

___*Ամփոփում*___ ___ *Ռ. Շտոյան*___

Հոդվածում դիտարկվում են մանկավարժական թեստավորման ձևակառուցողական և գործառնական առանձնահատկությունները՝ թեստավորման հիմնախնդիրների հարաբերակցությամբ: Կարևորվում է մանկավարժական թեստերի հիմնախնդիրների համապատասխանությունը նպատակային թեստավորման տիպերին: Դրանք հիմնականում երեքն են. *բովանդակային, ձևակառուցողական և կանխատեսական* ***(прогностическая)***: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մանկավարժական թեստավորման հարմարեցումը անհրաժեշտ է իրականացնել միայն մանկավարժական թեստավորման գիտական և մեթոդական հիմնախնդիրների բովանդակության հիմքի վրա:

---

[3] ***В. А в а н е с о в**, Указ. соч., стр. 20-44.*

[4] ***А. М а й о р о в**, Теория и практика создания тестов для системы образования, М., 2000, стр. 352.*

[5] ***М. Ч е л ы ш к о в а**, Теория и практика конструирования педагогических тестов, М. 2001, стр. 410.*

*Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ*

## *ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՄԱԶՅԱՆԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ (1930-50թթ.)*

Մարիամ Ասլամազյանի վառ գունային և միևնույն ժամանակ քնարական գեղանկարչությունը հիմնված է մշտնջենական արժեքների վրա: Նրա ոգեշնչման աղբյուրը Հայաստանն է: «Ամենից լավ ես պատկերում եմ Հայաստանը, սակայն ոչ այն, որի խեղճ ժողովուրդը արցունքն աչքերին էր դիմավորում առավոտը, այլ նոր, ծաղկուն երկիրը: Սիրում եմ մեր լեռները, բարդիները, առվակները, մարդկանց: Նրանք էլ թելադրում են իմ նկարների գույնն ու ոճը», - գրել է նկարչուհին:[1]

Նրա արվեստը գալիս է ժողովրդական կյանքի խոր ըմբռնումից, կապված է ազգային մտածողության հետ, որը յուրացնելով՝ նա վերագնահատում է այն ժամանակակից արվեստի տեսանկյունից: Խորհրդահայ նկարիչներից նրան իր մտախառնվածքով առավել մոտ էր Մարտիրոս Սարյանը, որից նա սովորել էր «ապրել», կյանքն ընկալել վառ ու գունագեղ, տեսնել գեղեցկությունը: Պատահական չէ, որ երկուսի ստեղծագործական մեթոդներն էլ աչքի են ընկնում զգացմունքայնությամբ,դինամիզմով,վառ երևակայությամբ: Նկարչուհու համար աշխարհատեսության առաջնային միջոցը գույնն է, որով պայմանավորվում է առարկայական աշխարհի արտահայտչականությունը:

Մարիամ Ասլամազյանը ծնվել է 1907թվականին Ալեքսանդրապոլի մերձակայքում գտնվող Բաշ-Շիրակ գյուղում, ջրաղացպանի ընտանիքում: Նրա մանկական առաջին հուշերը կապված էին հյուսիսային Հայաստանի խստաշունչ բնության հետ:Երբ նա սովորում էր յոթերորդ դասարանում, քաղաքում բացվում է նկարչական խմբակ, որը ղեկավարում էր ոմն Վերժբիցկայա: Նա էլ ձևավորել է Մարիամի և նրա քրոջ՝ Երանուհու նկարչական ունակությունները: 1926թ. քույրերը մեկնում են Երևան՝ սովորելու գեղարվեստա-արտադրական տեխնիկումում: Այստեղ Մարիամը սովորել է 3տարի՝ ծանոթանալով ժամանակի լավագույն նկարիչների հետ (Ս. Առաքելյան, Ս. Աղաջանյան և այլք): 1929թ. նա ուսումը շարունակում է Մոսկվայի բարձրագույն գեղարվեստա-տեխնիկական ինստիտուտում, ուր կարճ ժամանակահատվածում նրան դասավանդում են Ն. Ուդալցովան, Ա. Դրևինը, Կ. Իստոմինը, Ս. Գերասիմովը, Վ. Ֆավորսկին՝ գեղարվեստական տարբեր ուղղությունների դավանող արվեստագետներ:

1930թ. Մարիամը տեղափոխվում է Լենինգրադի Գեղարվեստի ակադեմիա, որտեղ նրան դասավանդում են Կ. Պետրով-Վոդկինը, Ա. Սավինովը: 1933թ. մենք նրան տեսնում ենք վարպետության բարձրագույն դպրոցում (այն տարիների ասպիրանտուրան), դարձյալ Սավինովի դասարանում:

Մեկ ուրիշն այսքան ծանրակշիռ հեղինակությունների մեջ կկորցներ իր «եսը», սակայն ոչ Մարիամ Ասլամազյանը: Նա իր համբավավոր ուսուցչապետերից վերցնում է ամենալավ կողմերը՝ նվիրում արվեստին, կոմպոզիցիայի նպատակահարմար կառուցվածք, տիրապետումը գույնին, յուրաքանչյուր ստեղծագործության համար որոշակի խնդիրների առաջադրում և դրանց իրագործման կարողություն: Նա դեռ որոնումների մեջ էր, սեփական ձայնի ու գույնի որոնման մեջ…

1930-ական թթ. նկարչուհուն առավելապես զբաղեցնում են հայրենի բնությունն ու մարդիկ: Նրա խորաքնին հայացքն ընդգրկում է բնության համայնապատկերներ, քաղաքի հին փողոցներ, քաղաքային պատկերներ՝ դրանցում դրոշմելով աշխարհի հանդեպ որոշակի հայեցակետ: Վաղ շրջանի բնապատկերներում՝ «Խնձորեսկ գյուղը», «Աշնանային թթենիներ», զգացվում է Վան Գոգի ազդեցությունը, որն արտահայտված է լարված, էքսպրեսիվ վրձնահարվածների միջոցով: Մյուս բնանկարները՝ «Հին Երևան», «Մեր բակը», «Արարատ. վաղ առավոտ», կատարված են հակիրճ, ձևերի ընդհանրացմամբ, բանաստեղծական աշխարհընկալմամբ:1938-40թթ. Մարիամ Ասլամազյանը ստեղծում է դիմանկարների մի ամբողջ շարք, որոնցից առանձնանում են «Քրդուհի Ֆարզի» (1939), «Գյուլիզար» (1940), «Քուրդ որբուկ Ռահմատը» (1940), «Ստախա-

---

[1] ***Տե՛ս “Советская культура",*** *հոկտեմբեր,* ***1973:***

նովուհին»(1936), «Հիվանդ բաջին» (1940)դիմանկարները: Այս դիմանկարներում պահպանվում է միևնույն գեղանկարչական լեզուն, գորշ նեյտրալ ֆոնը, որը տարբերակվում է շագանակագույն, կանաչավուն, վարդագույն երանգներով, վառ լոկալ գույներով պատկերված զգեստները (ակնհայտ է Մատիսի ազդեցությունը), ազատ, ամփոփ վրձնահարվածները: Դրանք էլ ծնում են նրբագեղ բանաստեղծական կերպարներ:

«Ես և Երանը հայելու մեջ» (1939) կտավում ընդգծված են մի քանի հատկանշական գծեր: Այս կտավը իր հակիրճությամբ, կոլորիտի մեղմությամբ, կատարման արտիստիզմով կարծես ի մի է բերում նկարչուհու անցած փայլուն ուղին:

Առաջին շրջանը նկարչուհու ստեղծագործության մեջ նշանավորվում է նաև նատյուրմորտի յուրացմամբ: Հատկապես այստեղ է դրսևորվում Ասլամազյանի ստեղծագործության և հայ ժողովրդական արվեստի կապը: Կոմպոզիցիան, գույների բաշխումը, կոլորիտը հիշեցնում են ժողովրդական վարպետների աշխատանքները: Ասլամազյանը նախ և առաջ բացահայտում է այն, ինչը իր համար թվում է առաջնային: Շեշտադրումը կատարվում է գունային հարաբերությունների միջոցով:

30-ական թթ. բնորոշ նատյուրմորտներից է «Դեղձը, խաղողը, սերկևիլը»: Այս ստեղծագործության միջոցով կարելի է պատկերացում կազմել կոմպոզիցիոն դասավորության նրա սկզբունքի մասին: Նա չի տալիս տարածական լուծումներ, այլ գունային հարաբերությունների միջոցով ստեղծում է դրանց պատրանքը: Որպես կանոն` նկարի ներքևի մասն ավելի լուսակիր է` վարդագույն, դեղին, իսկ վերինը` ավելի մուգ: Միևնույն ժամանակ բարձրացված է հորիզոնը, և առարկաները դիտվում են կարծես վերից վար (ինչը բնորոշ է արևելյան արվեստին` Սարյանի, Մատիսի ստեղծագործություններին): Առարկաների ընտրությունը խիստ է ու որոշակի: Դրանք փակ կորագծով մարմիններ են (խնձորներ, դեղձեր,կլոր զամբյուղներ ու ամաններ): Առաջին հայացքից պատահական թվացող առարկայական դասավորությունը նատյուրմորտում իրականում մտածված է: Այս դեպքում ևս թելադրողը գույնն է: Դիտողի հայացքը, առանձնացնելով հանդերձ յուրաքանչյուր առարկան, չի կորցնում ամբողջականի ընկալումը: Նկարչուհին մեծ ուշադրություն է դարձնում առարկաների որակական կողմի վրա` դեղձի թավշության, խաղողի ողկույզի ճկունության, կանաչի թարմության վրա` երբեք չկորցնելով չափի զգացումը:

Ասլամազյանի նատյուրմորտները բացահայտում են նկարչուհու կենսասիրությունը, խոհուն, հավասարակշռված աշխարհընկալումը, գեղեցիկը տեսնելու և այն վերարտադրելու կարողությունը:

Մեծ հայրենականի տարիներին, բնականաբար, շրջադարձ կատարվեց նկարչուհու ստեղծագործության մեջ թե՛ թեմատիկ ընդգրկմամբ, թե՛ կատարման տեխնիկայով: Նրա կտավներում քնարական հնչերանգները փոխարինվում են հասարակական պաթոսով, իսկ պարփակ վիճակը` մոնումենտալ դեկորատիվությամբ:

Պատերազմի տարիներին Ասլամազյանը ակտիվորեն արձագանքում է կատարվող իրադարձություններին: Նրա ռազմական պաստառները («Փոխարինենք ռազմաճակատ մեկնողներին», «Վրեժխնդիր լինենք», «Հանուն հայրենիքի` դեպի վճռական կռիվ») իրենց հայրենասիրական պաթոսով ծառայում էին այն խնդիրներին, որ պատերազմն առաջադրել էր յուրաքանչյուր արվեստագետի: Այս պաստառները նկարչուհին իր ձեռքով է փակցրել Լենինգրադի փողոցներում:

Պատերազմական տարիների դիմանկարները խիստ են ու դրամատիկ: Ասլամազյանին այժմ հետաքրքրում է նախ և առաջ բնորդի ներաշխարհը: Այս իմաստով «Հիվանդ հոր դիմանկարը» (1943) հատկանշական է նրա ստեղծագործության մեջ: Սակայն դեկորատիվ ֆոնը խանգարում է կերպարի հոգեբանական բացահայտմանը:

«Հիվանդ բաջին» կտավում պատկերված է հիվանդ ծեր կին: Նրա աչքերը հիվանդագին փայլում են, սպիտակ գլխաշորն ընդգծում է ալեհեր մազերը և դալուկ դեմքը: Ամեն ինչ վկայում է մոտալուտ վախճանի մասին, սակայն նրա մեջ դեռ տրոփում է կյանքը: Նկարչուհուն հետաքրքրում է իր հերոսուհու հոգեվիճակը: Կնոջ կրծքին հանգչող ձեռքը նկարված է մոտավորապես. դա չէ էականը, այլ այն աhռելի մորմոքը, որ պատճառում է պատերազմը մարդուն:

Ահա և «Տատիկը» կտավի հերոսուհին` վառ, խիստ, կամային: Կերպարի նշանակալիությունն ընդգծված է մեծացրած գլխի, սև ու սպիտակ գունային համադրու-

թյան, ամուր սեղմած շուրթերի, կենտրոնացած հայացքի միջոցով: Այս դիմանկարին հաջորդել է «Լուրեր ռազմաճակատից» կտավը (1943թ): Պատկերված է ծեր կինը, որ փորձում է բոքը թաքցնել զոհվածի մորից: Ոչ մի շինծու ձև: Արցունքները ցամաքել են ծեր կնոջ աչքերին: Անդառնալի կորստի զգացումը դրոշմված է յուրաքանչյուր մանրամասում: Կտավի դրամատիզմը ամբողջանում է կապույտի ու վարդագույնի հարաբերակցությամբ: Համազգային վիշտը ստիպեց Ասլամազյանին փնտրել մարդկային հոգեկան աշխարհի ներթափանցման նոր ուղիներ ու ձևեր, հասկանալ մարդ էակին:

1943թ. Մ. Ասլամազյանը տեղափոխվում է Հայաստան, որտեղ վերջապես վերագտնում է իրեն ծնող ու սնող հարազատ միջավայրը: Երևանում ստեղծված առաջին կտավը՝ «Նվերներ ռազմաճակատին», թեմատիկ կոմպոզիցիա է, որ հիշեցնում է «Հայաստանի գորգագործուհիները» կտավը, սակայն ավելի խիստ ու հավաք ոճով, ավելի մուգ գունաշարով:

1943թ. Մ. Ասլամազյանի ստեղծագործություն է ներթափանցում «հերոսի» կերպարը: Նախքան «Հերոսի վերադարձը» կտավի ստեղծումը նա կատարել էր մի շարք ճեպանկարներ, որոնք պատկերում էին հայկական տան կահավորանքը:

«Հերոսի վերադարձը» կտավը կարծես ստեղծված է մեկ շնչով: Այն խիստ ամբողջական է, ճշմարիտ ու զգացմունքային: Նկարի հայեցի կերպն ամբողջանում է ոչ միայն ազգագրական մանրուքների (վառվռուն վերմակներ, խնցի, կարասներ), այլև անկեղծ ու բուռն զգացմունքայնության շնորհիվ, որը բնորոշ է հատկապես հայ ընտանիքին: Եվ այն, որ վերադարձողն անպայման հերոս պիտի լիներ, նույնպես ազգային ընդհանրական հատկանիշ էր: Կտավում կերպարների բացահայտումը մղված է երկրորդական պլան. էականն ուրախության այն անսահման զգացումն է, որ համակել է բոլորին: Առանձին մանրամասներ անհամոզիչ են ու մակերեսային, սակայն իրականացված է ամենակարևորը. պոռթկացող ցնծությունը զգալի է գրեթե ֆիզիկապես:Նկարի ընդհանուր ռիթմին են ենթարկված քառսային վրձնահարվածները: Սա այն եզակի կտավներից է, որտեղ գույնն ու ռիթմը ենթարկվել են ընդհանուր կոմպոզիցիային:

Իշխող տրամադրությունը մարդու և բնության ներդաշնակությունն է, խաղաղ աշխատանքի հոգեպարար երջանկությունը: Սպիտակ տնակի մոտ, վառ կապույտ երկնքի տակ, ցորեն մաքրող կանայք ունկնդրում են վիրավոր զինվորի երգը: Խաղաղ տրամադրությունն ընդգծվում է փափուկ ձևերի, լոկալ գույների, սահուն ռիթմի շնորհիվ: «Հերոսի հարսանիքը» կտավով ավարտվում է այս շարքը: Այս թեման հանգուցային դարձավ Ասլամազյանի ստեղծագործության մեջ, կանխորոշեց նրա զարգացման հետագա ուղիները, ցույց տվեց, որ դիմանկարի, բնանկարի, նատյուրմորտի հետ Ասլամազյանն ի զորու է ստեղծելու մոնումենտալ կոմպոզիցիաներ:

Այսպիսով, 1943-45թթ. ստեղծագործությունները վերջնականապես հաստատեցին նկարչուհու դեկորատիվ տաղանդը, նրա ընդհանրացումներ կատարելու կարողությունը, ժամանակակից կյանքի հնքը որսալու ընդունակությունը:

Հետպատերազմյան տարիներին Ասլամազյանն ստեղծում է «Կոմիտաս» (1946) և «Հայկական հոսպիտալում», «Մարտական ընկերուհիներ» (1948), «Հերոսուհի մայրը» (1948) կտավները: Այս շրջանի դիմանկարներից առանձնանում է «Լավինիան կանաչ զգեստով» դիմանկարը, որը պատկերում էր երիտասարդ նկարչուհի Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանին: Դիմանկարը թե՛ ռիթմով, թե՛ գույներով տիպիկ արևելյան է: Լավինիան նստած է անբռնազբոսիկ դիրքով՝ Ասլամազյանի սիրած զոլավոր ֆոնին: Բնորդուհու վառ կանաչ զգեստը հակադրվում է երիզների երփներանգ գույներին: Նրանց ուրվագծերը կրկնում են Լավինիայի ծալապատիկ դիրքը՝ ընդգծելով նրա խաղաղ անդորրությունը և անկրկնելի կանացիությունը: Լավինիայի դիմանկարը, խիստ ժամանակակից լինելով, մնում է հայկական մանրանկարչության ավանդույթներին համահունչ:

Սակայն առավել նշանակալից դարձան Ասլամազյանի ձեռքբերումները նատյուրմորտի ժանրում: Այստեղ նա ավելի մոտ է Սարյանին, բայց միևնույն ժամանակ առանձնանում է կանացի նրբառճ համադրություններով: 50-ական թվականների նրա նատյուրմորտներն ավելի ավարտուն են, մոնումենտալ: Այս շրջանին են վերաբերում «Սերկևիլ և նռներ» (1951), «Սև խաղող» (1951) կտավները: Տարածությունն ու խորությունը շարունակում են մնալ նկարչուհու ուշադրության կենտրոնում, սակայն առաջ-

նային են դառնում առարկաները, որոնց հետ կարծես կենդանի զրույցի մեջ է մտնում նկարչուհին:

«Հայկական նատյուրմորտը» (1955) Ասլամազյանի լավագույն գործերից է:Նրա կոմպոզիցիան կազմակերպված է երկու հորիզոնական փոխուղղահայացների միջոցով, որոնց վրա համաչափ դասավորված են արևաբույր մրգերը: Կարմիր ու շագանակագույն շերտավոր պաստառն ամբողջացնում է նատյուրմորտը, նրան հաղորդում հանդիսավորություն ու մոնումենտալություն:

«Արծաթը և սպիտակ քրիզանթեմները» (1958) նատյուրմորտում նկարչուհու ուշադրության կենտրոնում սպիտակի ու վարդագույնի հարաբերակցություննն է, «Հին պղնձով նատյուրմորտ»-ում (1958)՝ առարկաների նյութականությունը, «Կարմիր խընձորներ» (1959) նատյուրմորտում՝ գունային հակադրությունները, «Սիրիական նատյուրմորտ»-ում (1958)՝ անսովոր տարածական կառուցվածքը: Ուշագրավ է «Հայաստանի պտուղները» (1957) աշխատանքը, որը բնութագրվում է ազատ վրձնահարվածներով, լոկալ գունային լուծումներով, տարածության մեջ առարկայի սովորական դասավորությամբ: Օգտագործված է կտավի իրականությունը՝ առանց խորությունը հաշվի առնելու, ինչը համապատասխանում է հայկական հին մանրանկարչության սկզբունքին: Ամեն մի նատյուրմորտ ստեղծվում է կրկնակի՝ առաջին անգամ դասավորելիս և երկրորդ անգամ՝ կտավի վրա: Առաջին հայացքից «Հայաստանի պտուղները» նատյուրմորտի կոմպոզիցիան թվում է տարերային, սակայն փոքր-ինչ ուշադիր դիտելու դեպքում պարզ է դառնում նրա հղացման կանխամտածվածությունը: Նախքան կտավի վրա վրձնահարվածներ դրոշմելը նկարչուհին մեծ խնամքով ու հոգածությամբ դասավորել է առարկաները՝ դրանք տեղադրելով լավագույն տարբերակով:

50-ական թվականների երկրորդ կեսին Ասլամազյանն աշխատում է մոնումենտալ գեղանկարչության վրա: Նա իր քրոջ՝ Երանուհի Ասլամազյանի հետ ձևավորում է Հայաստանի տաղավարը Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում, Մոսկվայի պետական համալսարանի երկրագործական թանգարանը և «Արարատ» սրճարանը: Հիշյալ աշխատանքներն աչքի են ընկնում ոչ միայն կառուցվածքային նրբամտությամբ, այլև թեմատիկ ընդհանրացվածությամբ:

Նույն թվականների բնանկարներում ընդգծվում է հատկապես Ասլամազյանի քնարական կողմը: Վաղ շրջանի բնանկարների համեմատությամբ նա խորացնում է գունային կողմը, որակը, ներմուծում իրական տարածականություն: Բնանկարներից շատերը կապված էին Հայաստանի հետ: «Սևանի սպիտակ լեռները» (1955) վկայում է այն մասին, որ նկարչուհին արդեն հաղթահարել է ստեղծագործական ճգնաժամը, որ նկատելի էր նախորդ աշխատանքներում: Ինչպես իրավացիորեն նկատում է արվեստաբան Ցիրլինը, «այս ամենը հետևանքն էր 40-50-ական թվականների հիմնարար աշխատանքի, սակայն իր արդյունքը տվեց միայն այն ժամանակ, երբ դադարեց ինքնանպատակ լինելուց և վերածվեց նկարչուհու անհատականությունը խորացնող միջոցի»:[2] «Գառնիի կիրճը» (1956), «Գառնիի բնանկարը» (1956), «Գարուն» (1956) կամ «Աշունը Ոսկեվազում» (1956) կատարված են նուրբ գունազգացողությամբ և բանաստեղծականությամբ:

1957թ. Մարիամ Ասլամազյանը մեկնում է ուղևորության Հնդկաստան, որի արդյունքում ծնվում են 30 էտյուդները և 4 ջրաներկային հավաքածուներ: Նրա Հնդկաստանը տոնական է, լուսառատ ու գունեղ: «Թաջ Մահալը», օրինակ, պատկերված է առավոտյան և կարծես անէացած լուծված է օդում: «Հնդկական բնանկարում» Ասլամազյանը ընկալել է հնդկական բնության յուրահատկությունը. այն, որ կեսօրին նա զուրկ է ստվերներից: Հնդկուհիների ազգային խառնվածքին ու նկարագրին են հետամուտ «Զրույց», «Հնդկուհիները» կտավները:

Դիմանկարի ժանրում ևս Ասլամազյանը փորձում է ստեղծել ընդհանրականմտատիպարային կերպարներ: Նրա հերոսները հասարակ մարդիկ են՝ կարծես նկարչուհու պատերազմական ժամանակների կտավներից եկած, միայն թե այժմ նրանց շուրջ այլ իրադրություն է: Ընտրված տիպական կերպարներն էլ ստեղծում են հայ ժողովրդի հավաքական կերպարը: Եթե «Կոմերիտուհին» կտավում նկարչուհու ուշադրու-

[2] *И. Ц ы р л и н, Мариам Асламазян, М., 1962, стр. 34.*

թյան կենտրոնում մարդկային ակնթարթային հոգեվիճակներն են, ապա «Լավինիայի դիմանկարում» վերարտադրված է մանկամարդ կնոջ մարդկային անհատականությունը, իսկ «Քուրդ հարսնացուն» (1954) երկում արդեն զգացվում է նոր մոտեցում. նկարչուհին ձգտում է զուգորդել անհատականն ու տիպականը:

Նման համադրությամբ են կատարված նաև «Ճախարակի մոտ» (1954), «Փոքրիկ կոլտնտեսուհին» կտավները: Վերջինիս հերոսուհին պատկերված է ջրահարսի պատկերով գորգի ֆոնի վրա, ինչը նրան հաղորդում է տիպական ժողովրդական հնչեղություն: Ասլամազյանը չի փորձում կատարել հոգեբանական զննումներ, սակայն զարմանալի կարողությամբ ընկալում է ժողովրդական կյանքի հենց ոգին, նրա էությունը: «Զրույց կյանքի մասին» (1960) կտավի կերպարները պատկերված են անշարժ, գրեթե ծիսային կեցվածքով: Նրանց միջև տեղի է ունենում մի ներքին հաղորդակցություն: Այդ պատճառով էլ կտավը չի ընկալվում իբրև երեք կանանց դիմանկար, այլ դառնում է երեք՝ երիտասարդ, հասուն, ծեր տարիքների խորհրդանիշը: Այս ամենից հետո դժվար չէ պատկերացնել անցումը 50-ական թվականների վերջի թեմատիկ կոմպոզիցիաներին: Նրանցից կարելի է առանձնացնել «Հայաստանի ծխախոտագործուհիները» (1957) և «Հայաստանի աղջիկները» (1959) կտավները: Առաջինը մտահղացումով ու կատարմամբ համահունչ է 30-ականների վերջերին ցուցահանդեսի տաղավարի համար արված պաննոյին, որի մեջ դեռ այն ժամանակ քննադատները տեսնում էին ազգային կյանքի առանձնահատուկ ընկալումներ: «Ծխախոտագործուհիներ»-ի մեջ ազգային հատկանիշներն է՛լ ավելի ցայտուն են ու արտահայտիչ: Ահա թե ինչ է վկայում նկարչուհին. «1956թ. ամռանը ես եկա Հայաստան՝ նոր նկարիս համար նյութեր հավաքելու: Պատահաբար ականատես դարձա ծխախոտագործուհիների աշխատանքին: Այդ գեղեցիկ ու խորիմաստ տեսարանն այնքան ինձ գրավեց, որ որոշեցի պատկերել այն»:[3] Այս կտավում, իհրավի, ի մի է բերվել այն ամենը, ինչի հասել էր Ասլամազյանը բնանկարի ու նատյուրմորտի մեջ:

«Հայաստանի աղջիկները» կտավն արծարծում է մի թեմա, որը հետագայում քանիցս զարգացվելու է նկարչուհու կողմից. դա առատությունն է, որ անմիջականորեն կապվում է պտղաբերությունը խորհրդանշող կանանց կերպարների հետ:

## ТВОРЧЕСТВО РАННЕГО ПЕРИОДА (1930-50гг.) МАРИАМ АСЛАМАЗЯН


***Резюме***                                                                 ***А. Маргарян***

**Статья посвящена становлению и раннему периоду творчества М. Асламазян.Творчество художицы впитало в себя традиции русской и армянской живописи. Ее искусству присущи сочетание декоративности и пластической выразительности.**

**Вообще, декоративность лежит в самой природе творчества М. Асламазян, но в разные периоды ее творчества эта особенность проявлялась в довольно разных формах. Работы 30-50-ых годов отличались скупой гаммой и суровым колоритом. В портретах этого периода, мы видим большую силу воли и характера. Здесь декоративность живописи проявляется не в яркости и богатстве колорита, а в широком обобщении формы и цвета предметов, в контрасте темно-коричневых и черных масс первого плана с более легкими тонами фона.**


[3] *М. А с л а м з я н, Табачницы Армении,"Московский художник", № 15,7, М., 1957.*

*Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

## *ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ XIX դ. 50-60-ԱԿԱՆ ԹԹ. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Վերջին տարիներին, գերազանցապես կապված տարածաշրջանում տիրող նոր, հաճախ ոչ հայանպաստ ռազմաքաղաքական իրադրության հետ, զգալիորեն աճել է հետաքրքրությունը ժողովրդագրական հիմնախնդիրների նկատմամբ: Այդ է պատճառը, որ մենք ձեռնամուխ ենք եղել ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից հրատարակվող «Գիտական աշխատություններ» հանդեսում հետայսու պարբերաբար վեր հանել ու հրապարակել նմանօրինակ փաստաթղթերի շարք: Ժողովրդագրական հիմնախնդիրներին վերաբերող արխիվային այս փաստաթղթերը, իրենց անխուսափելի բացթողումներով ու թերություններով հանդերձ, կարևորագույն տեղեկություններ են հաղորդում XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի Հայաստանի բնակավայրերի քանակի, բնակչության ազգային ու դասակարգային կազմի, նրա կենսաբանական և մեխանիկական շարժերի և այլնի մասին:

Հրապարակվող այս փաստաթղթերը ներկայացնում են Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի XIX դարի 50-60-ական թվականների բնակչության շարժման օրինաչափությունները, քաղաքում և գավառում տեղաբաշխված հայ և օտարազգի բնակչության թիվը, նրանց դավանանքը, մահը, ծնունդը, ամուսնությունը և այլն: Փաստաթղթերի ընտրությունը որոշակի ժամանակահատվածի համար կատարվել է այն սկզբունքով, որպեսզի պարզ պատկերացվի բնակչության շարժման դինամիկան:

Մեր կարծիքով, հրապարակվող փաստաթղթերը հարուստ նյութ կտան Հայաստանի առաջնակարգ քաղաքներից մեկի՝ Ալեքսանդրապոլի, XIX դարի 50-60-ական թվականների ժողովրդագրության վերաբերյալ, պրոբլեմային մի խնդիր, որն արդիական ու կարևոր է այսօր ուսումնասիրողների համար:[1]

Հավաքածուում ընդգրկված 12 փաստաթղթերից առաջին 5-ը ընտրված են «Կամերալ ցուցակագրում» ֆոնդից (տե՛ս ՀԱԱ Ֆ. Պ-93, ցուցակ 1, գործ 97, 109, 110)[2] և վերաբերում են Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի 1852 թ. կամերալ ցուցակագրմանը: Հաջորդ 7 փաստաթղթերն ընտրված են «Երևանի նահանգային վիճակագրական կոմիտե» ֆոնդից (տե՛ս ՀԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14) և վերաբերում են 1865 թ.: Վերը նշվածից ելնելով և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքում փաստաթղթերում տարբեղվեր և ստորագրություններ այլևս չենք նշում:

Դասակարգված լինելով ժամանակագրական կարգով՝ փաստաթղթերը նախատեսված են մասնագետ-պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակության համար:

---

[1] *Մինչև XIX դարի 90-ական թվականներն Անդրկովկասյան երկրամասում ցարական իշխանությունների կողմից անցկացված աշխարհագրերի ժամանակ լուրջ բացթողումներն ու թերացումներն անխուսափելի էին. կա փոքրահասակների ակնբախ թերհաշվառում՝ տասնյակ ընտանիքների շարքում 1-5 տարեկան երեխաների կարելի է հանդիպել հազիվ մեկ-երկուսում, իսկ «0» տարեկաններ գրեթե գոյություն չունեն, աշխարհագրի մեջ չեն մտել արտոնյալ դասակարգերը (ազնվականներ, հոգևորականներ և այլն), ինչպես նաև ոչ պետական հողերի վրա բնակվողները և այլն:*

[2] *Տեխնիկական դժվարություններից ելնելով՝ Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի 1852 թ. կամերալ ցուցակագրման մատյանները հրապարակում ենք սեղմված վիճակում: Մատյաններն ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ Ֆ. Պ-93, ցուցակ 1, գործ 97, 109, 110:*

## ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԿԱՄԵՐԱԼ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄ. 1852 թ. Աղյուսակներ 1-5

### Ալեքսանդրապոլ քաղաքի 1852 թ. կամերալ ցուցակագրում

աղյուսակ 1

| քաղաքային բնակչությունն ըստ դասերի | քրիստոնյա | | մահմեդ. շիա | | ընդամենը | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ար. | իգ. | ար. | իգ. | ար. | իգ. | ընդ. |
| *1. Արտոնյալ՝ ոչ հարկատու դաս* | | | | | | | |
| ծառայող ռուս պաշտոնյաներ | 8 | 3 | | | 8 | 3 | 11 |
| խանական ընտանիքի անդամներ | | | | | | | |
| սափրներ | | | | | | | |
| բեկեր | | | | | | | |
| հունա-ռուսական հոգևորականություն | 2 | 4 | | | 2 | 4 | 6 |
| հռոմեա-կաթոլիկական հոգևորականություն | 6 | 2 | | | 6 | 2 | 8 |
| հայ-առաքելական հոգևորականություն | 25 | 22 | | | 25 | 22 | 47 |
| հայ-կաթոլիկ հոգևորականություն | 2 | 1 | | | 2 | 1 | 3 |
| մահմեդական հոգևորականություն | | | 2 | 1 | 2 | 1 | 3 |
| *Ընդամենը* | *43* | *32* | *2* | *1* | *45* | *33* | *78* |
| *2. Քաղաքային հարկատու դաս* | | | | | | | |
| ռուսներ | 6 | 5 | | | 6 | 5 | 11 |
| հայեր | 5390 | 5306 | | | 5390 | 5306 | 10696 |
| հույներ | 100 | 63 | | | 100 | 63 | 163 |
| մահմեդականներ | | | 210 | 200 | 210 | 200 | 410 |
| հրեաներ | --- | --- | | | --- | --- | --- |
| *Ընդամենը* | *5496* | *5374* | *210* | *200* | *5706* | *5574* | *11280* |
| *ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ* | *5539* | *5406* | *212* | *201* | *5751* | *5607* | *11358* |

ՀԱԱ Ֆ. Պ- 93, ցուցակ 1, գործ 97, թթ. 1-652:

### Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասի 1852 թ. կամերալ ցուցակագրում[3]

աղյուսակ 2

| N | գյուղերը | ընտանիք | ար. | իգ. | ընդամենը | դավանանքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ղալթախչի | 71 | 230 | 173 | 403 | հայ-առաքելական |
| 2 | Գյուլուջա | 25 | 62 | 68 | 130 | --//-- |
| 3 | Նալբանդ | 48 | 165 | 129 | 294 | --//-- |
| 4 | Վարդաբլուր | 32 | 105 | 103 | 208 | --//-- |
| 5 | Կուրթան | 50 | 216 | 189 | 405 | --//-- |
| 6 | Ղշլաղ | 58 | 233 | 151 | 384 | --//-- |
| 7 | Լոռի | 7 | 28 | 17 | 45 | --//-- |

[3] *XIX դարի 40-ական թվականների կեսից բուռն թափով սկսված Անդրկովկասյան երկրամասի ռուսականացման ցարական կառավարության ֆաղեևյան քաղաքականության արդյունքն եղան Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի և Լոռվա տեղամասերում ռուս վերաբնակների կողմից հիմնված Վոսկրեսենովկա, Նիկիտինո, Վորոնցովկա և Պրիվոլնոյե գյուղերը (Այդ մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ Ֆ. Պ-93, ցուցակ 1, գործ 110, ՀԱԱ Ֆ. Պ-133, ցուցակ 1, գործ 329, թթ. 355-361, գործ 359, թթ. 1-6: Հայքյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակները 1830-1920թթ., Եր., 1989: Кавказский календарь на 1899 год, Тифлис, 1898, отд. III, стр. 3-4.)*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | Ազարակ | 23 | 103 | 84 | 187 | --//-- |
| 9 | Լեջան | 4 | 14 | 8 | 22 | --//-- |
| 10 | Ղանդարլի | 9 | 35 | 24 | 59 | --//-- |
| 1 | Մեծ Բեքանդ | 127 | 518 | 428 | 946 | --//-- |
| 12 | Աղբուլաղ | 54 | 197 | 138 | 335 | --//-- |
| 13 | Շահալի | 27 | 156 | 126 | 282 | --//-- |
| 14 | Սարմուսաղլի | 21 | 105 | 80 | 185 | --//-- |
| 15 | Բոզիքենդ | 57 | 233 | 147 | 380 | --//-- |
| 16 | Յաղուբլի | 27 | 94 | 80 | 174 | --//-- |
| 17 | Ջելալօղլի | 49 | 200 | 157 | 357 | --//-- |
| 18 | Ոխռուտ | 11 | 34 | 28 | 62 | --//-- |
| 19 | Հայդարբեկ | 17 | 62 | 55 | 117 | --//-- |
| 20 | Ղարալ | 42 | 158 | 116 | 274 | --//-- |
| 21 | Դարբազ | 14 | 62 | 46 | 108 | --//-- |
| 22 | Ղանջուղազ | 18 | 49 | 45 | 34 | շիա մահմեդական |
| 23 | Ղզլորան | 12 | 42 | 47 | 89 | --//-- |
| 24 | Արջուտ | 20 | 88 | 84 | 172 | սունի մահմեդական |
| 25 | Սարալ | 23 | 61 | 87 | 148 | --//-- |
| 26 | Գալլավար | 35 | 97 | 106 | 203 | շիա մահմեդական |
| 27 | Վարդանլի | 27 | 78 | 87 | 165 | --//-- |
| 28 | Ավդիբեկ | 45 | 149 | 144 | 293 | հայ-առաքելական |
| 29 | Մեծ Ղարաքիլիսա | 161 | 599 | 443 | 1042 | --//-- |
| 30 | Հաջի Ղարա | 42 | 178 | 124 | 302 | --//-- |
| 31 | Ղարամամադ | 4 | 7 | 7 | 14 | սունի մահմեդական |
| 32 | Համամլի | 160 | 502 | 397 | 899 | հայ-առաքելական |
| 33 | Ղարաբոյա | 24 | 83 | 81 | 164 | --//-- |
| 34 | Գոզարան | 38 | 99 | 69 | 168 | --//-- |
| 35 | Թափանլի | 18 | 59 | 55 | 114 | --//-- |
| 36 | Վարդնով | 92 | 245 | 188 | 433 | --//-- |
| 37 | Ղաչաղան | 26 | 55 | 46 | 101 | --//-- |
| 38 | Շահնազար | 53 | 159 | 178 | 337 | --//-- |
| 39 | Ղուրսալի | 15<br>17 | 49<br>72 | 25<br>58 | 74<br>130 | հայ-առաքելական<br>շիա մահմեդական |
| 40 | Հոբարձի | 10 | 36 | 32 | 68 | հայ-առաքելական |
| 41 | Դարաքենդ | 16 | 52 | 57 | 109 | --//-- |
| 42 | Հերհեր | 40 | 198 | 141 | 339 | --//-- |
| 43 | Գյուլազարակ | 28 | 87 | 66 | 153 | --//-- |
| 44 | Շիշքափա | 13 | 56 | 55 | 111 | --//-- |
| 45 | Փոքր Ղարաքիլիսա | 7 | 18 | 14 | 32 | --//-- |
| 46 | Սարչապետ | 16 | 61 | 34 | 95 | --//-- |
| 47 | Ղարաքիլիսա 2-րդ | 22 | 75 | 54 | 129 | --//-- |
| 48 | Վոսկրեսենովկա | 61 | 194 | 181 | 375 | աղանդավոր ռուս |
| 49 | Վորոնցովկա | 170 | 450 | 476 | 926 | --//-- |
| 50 | Նիկիտինո | 56 | 204 | 184 | 388 | --//-- |
| 51 | Պրիվոլնոյե | 96 | 266 | 277 | 543 | ուղղափառ ռուս |
| | *Ընդամենը* | *2138* | *7378* | *6189* | *13567* | |

ՀԱԱ Ֆ. Պ- 93, ցուցակ 1, գործ 110, թթ. 1-835:

Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի տեղամասի
1852 թ. կամերալ ցուցակագրում[4]

աղյուսակ 3

| | գյուղերը | ընտան իք | ար. | իգ. | ընդամենը | դավանանքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ճզխլար | 30 | 83 | 96 | 179 | հայ-առաքելական |
| 2 | Փոքր Քեթի | 26 | 72 | 55 | 127 | --//-- |
| 3 | Մեծ Քեթի | 36 | 83 | 98 | 181 | --//-- |
| 4 | Ղայդուլի Դուզքենդ | 18 | 44 | 56 | 100 | --//-- |
| 5 | Եսաուլ | 64 | 155 | 178 | 333 | --//-- |
| 6 | Թաթար. Գյոզալդարա | 21 | 51 | 65 | 116 | մահմեդական |
| 7 | Փոքր Քյափանակ | 29 | 86 | 52 | 138 | հայ-առաքելական |
| 8 | Հաջինազար-Ղուլի | 74 | 190 | 121 | 311 | --//-- |
| 9 | Փոքր Ղարաքիլիսա | 237 | 548 | 650 | 1198 | --//-- |
| 10 | Թափադըլլակ | 43 | 123 | 106 | 229 | հայ-կաթոլիկ |
| 11 | Ղազանչի | 61 | 123 | 93 | 216 | հայ-առաքելական |
| 12 | Տավշանղշլաղ | 72 | 240 | 170 | 410 | --//-- |
| 13 | Բազարխանա | 32 | 116 | 83 | 199 | --//-- |
| 14 | Քեշիշքենդ | 6 | 15 | 16 | 31 | --//-- |
| 15 | Մանջուխլի | 21 | 81 | 56 | 137 | --//-- |
| 16 | Մասուդլի | 17<br>28 | 61<br>71 | 50<br>68 | 111<br>139 | հայ-առաքելական<br>եզդի |
| 17 | Աբդուլ-Ռահման | 10 | 37 | 20 | 57 | հայ-առաքելական |
| 18 | Ղզըլղուլա | 7 | 35 | 26 | 61 | --//-- |
| 19 | Փոքր Ղըրխ | 22 | 62 | 54 | 116 | --//-- |
| 20 | Սաբունջի | 8 | 27 | 26 | 53 | --//-- |
| 21 | Արըխվալի 3-րդ | 29 | 71 | 104 | 185 | --//-- |
| 22 | Ղազարապատ | 54 | 144 | 168 | 312 | --//-- |
| 23 | Սարիար | 46 | 115 | 99 | 214 | --//-- |
| 24 | Փոքր Բեքանդ | 59 | 187 | 131 | 318 | --//-- |
| 25 | Ղասմալի | 15 | 36 | 33 | 69 | --//-- |
| 26 | Քյաֆթառլի | 43 | 122 | 81 | 203 | հայ-կաթոլիկ |
| 27 | Չրախլի | 42 | 98 | 79 | 177 | հայ-առաքելական |
| 28 | Ղուլիջան | 33 | 69 | 62 | 131 | --//-- |
| 29 | Ղոլղաթ | 31 | 72 | 59 | 131 | --//-- |
| 30 | Փոքր Ղանլիջա | 28 | 71 | 86 | 157 | --//-- |
| 31 | Եգանլար | 40 | 119 | 91 | 210 | --//-- |

[4] *Համաձայն 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների 1842թ. համեմատությամբ Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի տեղամասում գյուղական բնակավայրերի թիվը աճել էր 12-ով՝ (Բազարխանա, Քեշիշքենտ, Մանջուխլի, Մասուդլի, Աբդուլ-Ռահման, Ղզըլղուլա, Փոքր Ղըրխ, Սաբունջի, Ախդուլի, Փամպ, Փոքր Դուզքենդ, Ղզըլղոչ (Ղուկասյան))՝ գյուղերի թիվը 76-ից հասցնելով 88-ի: Նորաստեղծ 12 գյուղերից յոթը հիմնվել էր փամբակցիների կողմից, մեկը՝ Մասուդլին՝ 1849 թ. Սարչապետից Շորագյալ գաղթած հայերի և եզդիների կողմից: Մյուս չորս գյուղերը Շորագյալի տեղամասում 1848-1850 թթ. ընթացքում հիմնել էին բնիկ շորագյալցիները. 1848 թ. Շորագյալի Ճզխլար և Դուզքենտ գյուղերից ելածները հիմնեցին Ղզըլղուլա գյուղը: Փամպը, բնակեցվեց Փոքր Ղարաքիլիսայից ելածներով, իսկ 1849 թ. հիմնվեցին Փոքր Դուզքենդն ու Ղզըլղոչը:*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 32 | Աղին | 55 | 133 | 164 | 297 | --//-- |
| 33 | Մեծ Քյափանակ | 92 | 286 | 176 | 462 | --//-- |
| 34 | Դիրաքլար | 40 | 107 | 91 | 198 | --//-- |
| 35 | Ջաջուռ | 58 | 224 | 272 | 496 | --//-- |
| 36 | Բոզդողան | 33 | 70 | 80 | 150 | --//-- |
| 37 | Արթիկ | 116 | 356 | 332 | 688 | --//-- |
| 38 | Բողազքեսան | 36 | 90 | 89 | 179 | --//-- |
| 39 | Սոգութլի | 82 | 177 | 235 | 412 | --//-- |
| 40 | Ջելաբ-Կեչուտ | 40 | 159 | 143 | 302 | --//-- |
| 41 | Փալութլի | 33 | 68 | 117 | 185 | հայ-կաթոլիկ |
| 42 | Բայանդուր | 97 | 276 | 284 | 560 | հայ-առաքելական |
| 43 | Մոլլա-Գյոկչա | 63 | 170 | 170 | 340 | --//-- |
| 44 | Հոռոմ | 114 | 296 | 284 | 580 | --//-- |
| 45 | Դահարլի | 38 | 91 | 77 | 168 | --//-- |
| 46 | Չիրպլի | 38 | 94 | 105 | 199 | --//-- |
| 47 | Շիշթափա | 15 | 44 | 38 | 82 | հայ-կաթոլիկ |
| 48 | Ղզըլղոչ | 20 | 49 | 64 | 113 | հայ-առաքելական |
| 49 | Թաքնալի | 21 | 71 | 80 | 151 | --//-- |
| 50 | Բանդևան | 32 | 120 | 127 | 247 | --//-- |
| 51 | Թոփառլի | 36 | 116 | 145 | 260 | --//-- |
| 52 | Օրթաքիլիսա | 38 | 82 | 130 | 212 | --//-- |
| 53 | Մեծ Ղանլիջա | 42 | 120 | 125 | 245 | --//-- |
| 54 | Իմիրխանլի | 36 | 96 | 115 | 211 | --//-- |
| 55 | Արմութլի | 25 | 57 | 74 | 131 | --//-- |
| 56 | Սվանվերդի | 61 | 142 | 150 | 292 | --//-- |
| 57 | Ախդուլի | 13 | 49 | 26 | 75 | --//-- |
| 58 | Մեծ Արըխվալի | 58 | 144 | 145 | 289 | --//-- |
| 59 | Փամպ | 13 | 50 | 34 | 84 | --//-- |
| 60 | Չոռլի | 17 | 50 | 46 | 96 | --//-- |
| 61 | Ղեղաչ | 19 | 62 | 49 | 111 | --//-- |
| 62 | Մահմուդջուղ | 61 | 179 | 151 | 330 | --//-- |
| 63 | Շիրվաջուղ | 61 | 165 | 162 | 327 | --//-- |
| 64 | Աղքիլիսա | 33 | 107 | 78 | 185 | --//-- |
| 65 | Իլխիաբի | 78 | 210 | 245 | 455 | --//-- |
| 66 | Նորաշեն | 41 | 98 | 96 | 194 | --//-- |
| 67 | Հայկ. Գյոզալդարա | 22 | 65 | 37 | 102 | --//-- |
| 68 | Դուզքենդ | 80 | 380 | 238 | 618 | --//-- |
| 69 | Սարիբաշ | 13 | 28 | 36 | 64 | --//-- |
| 70 | Թալիբօղլի | 16 | 55 | 45 | 100 | --//-- |
| 71 | Քյալալի | 19 | 49 | 45 | 94 | --//-- |
| 72 | Դարբանդ | 20 | 49 | 72 | 121 | --//-- |
| 73 | Գյուրջի-Յոլ | 26 | 68 | 101 | 169 | --//-- |
| 74 | Սոնգուռլի | 31 | 75 | 86 | 161 | --//-- |
| 75 | Ղուքնի-Ղըշլաղ | 8 | 32 | 27 | 59 | --//-- |
| 76 | Ճլովխանլի | 25 | 51 | 45 | 96 | --//-- |
| 77 | Կապս | 36 | 99 | 101 | 200 | --//-- |
| 78 | Իլլի-Ղարաքիլիսա | 36 | 89 | 119 | 208 | --//-- |
| 79 | Ղափլի | 42 | 97 | 96 | 193 | --//-- |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 80 | Բաշգյուղ | 43 | 127 | 110 | 237 | --//-- |
| 81 | Ղփչաղ | 33 | 94 | 98 | 192 | --//-- |
| 82 | Թոմարտաշ | 44 | 145 | 116 | 261 | --//-- |
| 83 | Մեջիտլի | 54 | 117 | 110 | 227 | --//-- |
| 84 | Ղզըլքիլիսա | 75 | 167 | 175 | 342 | --//-- |
| 85 | Փոքր Դուզքենդ | 15 | 39 | 28 | 67 | --//-- |
| 86 | Ղըրխդագիրման | 38 | 75 | 82 | 157 | --//-- |
| 87 | Ղռնախդռան | 47 | 124 | 154 | 278 | --//-- |
| 88 | Փոքր Արըխվալի | 25 | 85 | 61 | 146 | --//-- |
| | *Ընդամենը* | *3685* | *10134* | *9813* | *19947* | |

ՀԱԱ Ֆ. Պ- 93, ցուցակ 1, գործ 109, թթ. 1-1060:

Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության էթնոժողովրդագրական դրությունը 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով

աղյուսակ 4

| ազգությունը | ընտանիք |ար. | իգ. | ընդամենը | % | գյուղերի թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| հայ | 5226 | 15713 | 14210 | 29953 | 90 | 124 (լրիվ), 2 (մահմեդա-կանների և եզդիների հետ խառը) |
| ռուս | 383 | 1114 | 1118 | 2232 | 6.5 | 4 (լրիվ) |
| մահմեդական | 186 | 580 | 610 | 1190 | 3 | 9 (լրիվ), 1 (հայերի հետ ) |
| եզդի | 28 | 71 | 68 | 139 | 0.5 | 1 (հայերի հետ) |

ՀԱԱ Ֆ. Պ- 93, ցուցակ 1, գործ 109, 110:

Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության կրոնադավանաբանական պատկերը 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալներով

աղյուսակ 5

| դավանանքը | ընտանիք | ար. | իգ. | ընդամենը | % | գյուղերի թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| հայ-առաքելական | 4981 | 15021 | 13529 | 28550 | 85.5 | 113 (լրիվ), 2 (մահ-մեդականների և եզ-դիների հետ) |
| հայ-կաթոլիկ | 245 | 726 | 677 | 1403 | 4.5 | 9 (լրիվ) |
| աղանդավորական ռուս | 287 | 848 | 841 | 1689 | 4.9 | 3 (լրիվ) |
| ուղղափառ ռուս | 96 | 266 | 277 | 543 | 1.6 | 1 (լրիվ) |
| շիա մահմեդական | 118 | 373 | 367 | 740 | 2 | 5 (լրիվ), 1 (հայերի հետ) |
| սուննի մահմեդական | 47 | 156 | 178 | 334 | 0.7 | 3 (լրիվ) |
| աղանդավոր մահմեդա-կան | 21 | 51 | 65 | 116 | 0.3 | 1 (լրիվ) |
| եզդի | 28 | 71 | 68 | 139 | 0.5 | 1 (լրիվ) |

ՀԱԱ Ֆ. Պ- 93, ցուցակ 1, գործ 109, 110:

## ՀԱՏՎԱԾ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ 1865 թ.[5]

**Փաստաթղթեր 1-7**

փաստաթուղթ 1

Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի ժողովրդագրական դրությունը

7 փետրվարի 1866 թ.

[5] *Ալեքսանդրապոլ քաղաքին և համանուն գավառին վերաբերող և 1865 թ. թվագրվող վիճակագրական այս տվյալները (փաստաթուղթ 1-7) Ալեքսանդրապոլի գավառապետի կողմից Երևանի նահանգային վիճակագրական վարչություն են ուղարկվել 1866 թ. փետրվարի 7-ին (տե՛ս Рапорт Александропольского уездного начальника, ՀԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14 թթ. 49-80):*

*1. Արտոնյալ՝ ոչ հարկատու դաս*

ա) ուղղափառներ երկու սեռից. ազնվականներ՝ 140, հոգևորականներ՝ 18, ընդ.՝ 158:
բ) հայ-առաքելականներ. ազնվականներ՝ 173, հոգևորականներ՝ 1182, ընդ՝ 1355:[6]
գ) հայ-կաթոլիկներ. ազնվականներ՝ 19, հոգևորականներ՝ 67, ընդամենը՝ 86:
դ) մահմեդականներ. բեկեր՝ 22, զինվորականներ՝ 4,հոգևորականներ՝20,ընդամենը՝ 46
*Ընդամենը* ......................................................................................... *1645*

2. *Հարկատու՝ ոչ արտոնյալ դաս*

ա) պետական և վանքապատկան հողերի վրա նստակյաց ապրող գյուղացիներ և քաղաքային բնակչություն (երկու սեռից). ուղղափառներ՝ 904, հայ-առաքելականներ՝ 69978, հայ-կաթոլիկներ՝ 3152, մահմեդականներ՝ 2282, ռուս աղանդավորականներ (մոլոկաններ, դուխոբորներ, հնադավաններ և այլն)՝ 1256, հրեաներ՝ 37, արևապաշտ եզդիներ (նստակյաց)՝ 1686:
բ) քոչվորներ՝ 0:
*Ընդամենը* ....................................................................................... *79295*

*ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ*՝ Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում արտոնյալ և ոչ արտոնյալ դասերից ապրում է 80940 մարդ (երկու սեռից):
ՀԱԱ Ֆ. Պ- 125, ցուցակ 1, գործ 14, թթ. 58-60

Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի
ժողովրդագրական դրությունն ըստ դասերի 1865թ.

փաստաթուղթ 2

| № | դասերի անվանումը | քաղաքում | | գավառում | | ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ար. | իգ. | ար. | իգ. | ար. | իգ. |
| 1 | *Ազնվականություն* | | | | | | |
| | ազնվականներ | 163 | 128 | 18 | 23 | 181 | 151 |
| | խանական ընտանիքի անդամներ | --- | --- | --- | --- | --- | --- |
| | բեկեր | --- | --- | 12 | 10 | 12 | 10 |
| | աղալարներ | --- | --- | --- | --- | --- | --- |
| | քուրդ զինվորականներ | --- | --- | 1 | 3 | 1 | 3 |
| | *Ընդամենը* | | | | | *194* | *164* |
| 2 | *Հոգևորականություն* | | | | | | |
| | ուղղափառ | 7 | 7 | 2 | 2 | 9 | 9 |
| | հայ-առաքելական | 119 | 106 | 552 | 405 | 671 | 511 |
| | հայ-կաթոլիկ | 3 | --- | 30 | 34 | 33 | 34 |
| | մահմեդական | 5 | 3 | 6 | 6 | 11 | 9 |
| | *Ընդամենը* | | | | | *724* | *563* |
| 3 | *Քաղաքային հարկատու դաս* | 8621 | 7651 | --- | --- | 8621 | 7651 |
| 4 | *Գյուղական հարկատու դաս* | --- | --- | 32695 | 30328 | 32695 | 30328 |
| 5 | *Զինվորական դաս* | | | | | | |
| | գործող զորքերում ծառայողներ | 1758 | 156 | --- | --- | 1758 | 156 |
| | պաշտոնաթող զինվորականներն իրենց կանանց ու դուստրերի հետ | 14 | 17 | 8 | 11 | 22 | 28 |
| | զինվորների երեխաներ | --- | --- | 4 | 3 | 4 | 3 |
| | *Ընդամենը* | | | | | *1784* | *187* |
| | *ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ* | *10690* | *8068* | *33328* | *30825* | *44018* | *38893* |

ՀԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14, թթ. 68-69:

Ալեքսանդրապոլի գավառի ժողովրդագրական
դրությունն ըստ դավանանքի

փաստաթուղթ 3

[6] *Հայ-առաքելականներ և հայ-կաթոլիկներ բաժիններում «ազնվական» հասկացության տակ նկատի չունենք «ժառանգական ազնվականությունը»: Ազնվականի տիտղոս գավառում գերազանցապես շնորհվել է ցարական իշխանություններին որևէ ծառայություն մատուցելու դիմաց:*

| № | ըստ դավանանքի | քաղաքում | | գավառում | | ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | |ար. | իգ. | ար. | իգ. | ար. | իգ. |
| 1 | ուղղափառներ | 233 | 245 | 286 | 298 | 519 | 543 |
| 2 | ռուս աղանդավորականներ | 67 | 57 | 564 | 568 | 631 | 625 |
| 3 | հայ-առաքելականներ | 8060 | 7238 | 29023 | 26855 | 37224 | 34109 |
| 4 | հայ-կաթոլիկներ | 140 | 119 | 1543 | 1436 | 1683 | 1555 |
| 5 | հրեաներ | 18 | 19 | --- | --- | 18 | 19 |
| 6 | մահմեդականներ (շիա, սունի) | 261 | 200 | 957 | 906 | 1218 | 1106 |
| 7 | եզդիներ (արևապաշտ) | --- | --- | 943 | 747 | 943 | 747 |
| | *Ընդամենը* | *8920* | *7894* | *33316* | *30810* | *42236* | *38704* |

ՀԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14, թ. 72:

Ծնվածների թիվն Ալեքսանդրապոլի գավառում
ըստ դավանանքի 1865թ.

փաստաթուղթ 4

| № | ըստ դավանանքի | քաղաքում | | գավառում | | ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ար. | իգ. | ար. | իգ. | ար. | իգ. |
| *1* | *Ուղղափառներ* | | | | | | |
| | օրինածին | 12 | 13 | 9 | 13 | 21 | 26 |
| | ապօրինածին | --- | --- | --- | --- | --- | --- |
| *2* | *Ռուս աղանդավորականներ* | | | | | | |
| | օրինածին | 5 | 9 | 18 | 17 | 23 | 26 |
| | ապօրինածին | --- | --- | --- | --- | --- | --- |
| *3* | *Հայ-առաքելականներ* | | | | | | |
| | օրինածին | 378 | 325 | 1119 | 1032 | 1497 | 1357 |
| | ապօրինածին | 1 | --- | --- | --- | 1 | --- |
| *4* | *Հայ-կաթոլիկներ* | | | | | | |
| | օրինածին | 6 | 9 | 74 | 56 | 80 | 65 |
| | ապօրինածին | --- | --- | --- | --- | --- | --- |
| *5* | *Հրեաներ* | | | | | | |
| | օրինածին | 2 | 2 | --- | --- | 2 | 2 |
| | ապօրինածին | --- | --- | --- | --- | --- | --- |
| *6* | *Մահմեդականներ (շիա, սունի)* | | | | | | |
| | օրինածին | 18 | 12 | 52 | 48 | 70 | 60 |
| | ապօրինածին | --- | --- | --- | --- | --- | --- |
| *7* | *Եզդիներ (արևապաշտ)* | | | | | | |
| | օրինածին | --- | --- | 28 | 27 | 28 | 27 |
| | ապօրինածին | --- | --- | --- | --- | --- | --- |
| | *Ընդամենը* | *422* | *370* | *1300* | *1193* | *1722* | *1563* |

ՀԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14, թ. 73-75:

Ամուսնությունների թիվն Ալեքսանդրապոլի գավառում
ըստ դավանանքի

փաստաթուղթ 5

| № | ըստ դավանանքի | քաղաքում | գավառում | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | ուղղափառ | 4 | 5 | 9 |
| 2 | ռուս աղանդավորական | 2 | 3 | 5 |
| 3 | հայ-առաքելական | 151 | 491 | 642 |
| 4 | հայ-կաթոլիկ | 3 | 9 | 12 |
| 5 | հրեա | --- | --- | --- |
| 6 | մահմեդական (շիա, սունի) | 4 | 12 | 16 |
| 7 | եզդիներ (արևապաշտ) | --- | 8 | 8 |
| | *Ընդամենը* | *164* | *528* | *692* |

ՀԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14, ք. 76:

Շինությունների թիվն Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում

փաստաթուղթ 6

| № | | քաղաքում | | գավառում | | ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | քարից | փայտից | քարից | փայտից | քարից | փայտից |
| *1* | *Բնակելի տներ* | | | | | | |
| | պետական | --- | --- | 2 | --- | 2 | --- |
| | եկեղեցական | 5 | --- | 7 | --- | 12 | --- |
| | հանրային | 1 | --- | 3 | --- | 4 | --- |
| | սեփական | 2192 | --- | 6695 | 137 | 8887 | 137 |
| *2* | *Ոչ բնակելի՝ պահեստներ և այլն* | | | | | | |
| | պետական | --- | --- | --- | --- | --- | --- |
| | եկեղեցական | 2 | --- | --- | --- | 2 | --- |
| | հանրային | --- | --- | --- | --- | --- | --- |
| | սեփական | 15 | --- | --- | --- | 15 | --- |
| *3* | *Կրպակներ* | | | | | | |
| | պետական | --- | --- | --- | --- | --- | --- |
| | եկեղեցական | 60 | --- | --- | --- | 60 | --- |
| | հանրային | --- | --- | --- | --- | --- | --- |
| | սեփական | 263 | --- | 63 | 19 | 326 | 19 |
| | *Ընդամենը* | *2538* | --- | *6770* | *156* | *9308* | *156* |

ՀԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14, քք. 77-78:

Ալեքսանդրապոլի գավառի անասնապահությունը

փաստաթուղթ 7

1. կով, ցուլ, գոմեշ-----------40590
2. ոչխար------------------------65170
3. այծ----------------------------19332
4. ուղտ-------------------------2

5. էշ--------------------1380
6. խոզ-------------------480
7. ձի---------------------5207

*Ընդամենը---------132159*

ՀՀ ԱԱ Ֆ. Պ-125, ցուցակ 1, գործ 14, ք. 79:

## *АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ О ДЕМОГРАФИИ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО УЕЗДА 50—60гг. XIXв.*

*Резюме* *А. Айрапетян*

**Представленные вниманию читателей первые 5 из 12 документов относятся к камеральной регистрации Александропольского уезда Ереванской губернии 1852г., а следующие 7-докладные начальника Александропольского уезда, представленные статистическому комитету Ереванской губернии. Будучи классифицированы в хронологическом порядке, документы предусмотрены для специалистов-историков и широкого круга читателей.**

*Վարդիթեր ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

## *ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳՐՉՈՒԹՅԱՆ ՕՋԱԽՆԵՐ*

Բագրատունյաց ժամանակաշրջանում սկսում են առաջանալ ու կազմավորվել վանքային համալիրները՝ եկեղեցական ու աշխարհիկ շենքերով, հիանալիորեն ներդաշնակված միմյանց ու բնության հետ: Բացի պաշտամունքային շենքերից կառուցվել են գավիթներ, սեղանատներ, գրատներ, բնակելի շենքեր, դամբարաններ, զանգակատներ, տնտեսական բազմազան կառույցներ: Վանական համալիրները կազմավորվել են սրբավայրերի տեղում (Սևան, Գեղարդ), վաղ միջնադարյան հուշարձանների շուրջ (Հովհանավանք,Հառիճ, Շողագավանք, Դպրեվանք), ինչպես և միանգամայն նոր վայրերում (Սաղմոսավանք): Համալիրները սովորաբար տեղադրվել են դժվարամատչելի տեղերում կամ պաշտպանված են եղել ոչ հեռու տեղավորված հզոր ամրոցներով:

Միջնադարյան վանքերը, ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում, իրենց գործունեությամբ տարաբնույթ են եղել: Որոշ վանքեր զբաղվել են կրոնական ինքնանվիրումով և քարոզով, նաև բարեգործությամբ, հիվանդների բուժումով, ծերերի խնամակալությամբ և այլն: Մի մասն էլ գերազանցապես ծավալել է կրթա-մշակութային գործունեություն: Այս կենտրոններում էլ հանդես են եկել հայ միջնադարի ականավոր մատենագիրներ, պատմիչներ,փիլիսոփաներ, ճարտասաններ, քերականներ, երաժիշտներ, իրավագետներ, մանրանկարիչներ, գրչության և արվեստի շատ մշակներ: Այստեղ զարգանում էր քանդակագործությունը, ճարտարապետական միտքը, մանրանկարչությունը, պատմագրությունը, գրականությունը, փիլիսոփայությունը, աստվածաբանությունը, արվեստի և գիտության այլ ճյուղեր: Հենց այս հանգամանքն էլ անհրաժեշտություն է առաջացրել կառուցելու գրատուն-մատենադարաններ, դպրոցներ, նաև ժամատուն-գավիթներ: IX-XI դդ. Անի-Շիրակի թագավորության տարածքում գործել է Բջնիի ուսումնա-գիտական կենտրոնը, որը միջնադարում հայտնի էր «Մագիստրոսի ճեմարան» անունով: Գրիգոր Մագիստրոսն իր բացած դպրոցում կիրառում է քառյակ գիտությունների դասավանդումը: Այդ նպատակով նա Պետրոս Գետադարձ կաթողիկոսից 1037թ. ստանում է Անանիա Շիրակացու «Քրոնիկոն»-ի մի օրինակ և դասավանդում իր ճեմարանում: Միաժամանակ նա այդ ծրագիրը առաջարկում է կաթողիկոսին՝ Անիի դպրոցում դասավանդելու համար: Թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աշխարհագրություն, աստղաբաշխություն առարկաներից բացի, նա ծրագրում մտցնում է բժշկություն, առասպելավարժություն (առակներ և հանելուկներ), զինավարժություն, խաղեր, մրցույթներ և այլն:[1] Ձեռագիր հիշատակարաններից պարզվում է, որ հետագայում էլ «ի դղեկ քաղաքէ Բջնոյ» գրվել են ձեռագրեր: Դրանցից մեկը, որ կոչվում էր «Մեկնութիւն Ղուկասի Ստեփանոս Կունդի կամ Սարգիս Կունդի» ձեռագիրն է, որ գրվել է 1184թ.:[2] Նշանավոր էին նաև Հոռոմոսի վարդապետարանը, Մարմաշենի դպրատունը, Արգինայի վարդապետարանը, Կեչառիսի վանքի, Այրիվանքի վարդապետարանները և այլն: XI դ. նշանավոր էր Երևանի Անանիա առաքյալի անապատի դպրոցը, որի ղեկավարն էր Հովհաննես Տարոնացի Կոզեռն նշանավոր գիտնականն ու վարդապետը: Այդտեղ Հովհաննես Տարոնացին մեկնում է Անանիա Շիրակացու տոմարը՝ Աշտարակի եպիսկոպոս Անանիայի պատվերով:[3] Արիստակես Լաստիվերտցին Հովհաննես Կոզեռնի անունը հպարտությամբ է հիշատակում մեծ գիտնականների շարքում:[4] Կաթողիկոսները, ինչպես նաև հայ և բյուզանդացի թագավորները, հաճախ Կոզեռնի օգնությանն են դիմել արևի խավարման և երկրաշարժերի պատճառ-

---

[1] *Ա. Մ ա թ և ո ս յ ա ն, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Եր., 1998, էջ 89:*

[2] *Գ ա ր ե գ ի ն  Ա Կ ա թ ո ղ ի կ ո ս, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա (Ե դարից մինչեւ 1250թ.), Անթիլիաս, 1951, էջ 499:*

[3] *Ա. Մ ա թ և ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 89:*

[4] *Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ (այսուհետև՝ Լաստիվերտցի), Եր., 1963, էջ 26:*

ներն իմանալու համար:[5] Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ բյուզանդական Վասիլ կայսրը (976-1025) անձամբ գիտեր Հովսեփ Ընծայեցու և Հովհաննես Կոզեռնի մասին և նույնիսկ դիմել է հայոց թագավոր Հովհաննես Սմբատին, որպեսզի նրանց Կոստանդնուպոլիս ուղարկի զատկի տոնի իսկական օրն իմանալու համար:[6] Հայաստանի համարյա բոլոր խոշոր վանքերն ունեին գրատուն, որը նաև գրապահոց էր ու գրքի պատրաստման արհեստանոց:[7] Այդ մասին տեղեկանում ենք ձեռագիր հիշատակարաններից: «Ի Կոգովիտ գաւառն՝ ի տանն Բագրատունեայց եպիսկոպոսարանի» 999թ. «Սիմեովն կրաւնաւոր»-ի ձեռքով արտագրվել են Պողոսի թղթերի Եփրեմի և Ոսկեբերանի մեկնությունները:[8] Պահպանվել են նաև Սաղմոսավանքում գրված ձեռագրեր:[9]

Շիրակ գավառի մեծահռչակ վանքերից էր Արգինայի վանական համալիրը, որի շինարարության ու վերանորոգման աշխատանքները սկսում է Անանիա Մոկացի կաթողիկոսը (946-968թթ.), ապա այն շարունակում է նրա քրոջ որդի Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը (973-992թթ.): Սրանց գերեզմանները գտնվում են Արգինայի վանքում: Ըստ Ասողիկի՝ Խաչիկ Ա կաթողիկոսի հանձնարարությամբ Արգինայում կառուցվում են կաթողիկե եկեղեցին, գրատունը և դպրոցը:[10] Այս հրաշակերտ կաթողիկեն, ինչպես նաև գրատունն ու վարդապետարանը կառուցել է Տրդատ ճարտարապետը՝ Անիի մայր տաճարից առաջ: Արգինայի վանքն ուներ հարուստ ձեռագրատուն: Խաչիկ Ա կաթողիկոսի ժամանակ այստեղ ընդօրինակել են շատ ձեռագիր մատյաններ, Xդ. գործել և մեծ հռչակ է ձեռք բերել հոգևոր դպրոց-վարդապետարանը, որտեղ ուսուցանվել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն և մեկնողական արվեստ: Ասողիկը հայտնում է, որ իբրև «դասասաց» գիտնականներ իրենց գործունեությունը այստեղ են ծավալել ուսուցչապետ Հովհաննեսը, որը մեծ գիտությամբ բացահայտել է «գիտութիւն Գրոց սրբոց», Կարինի Հնձուց վանքի երբեմնի առաջնորդ Հովսեփ ուսուցչապետը՝ «առատ գիտութեամբ», ուսուցչապետ «Կիրակոս գիտնականն» ու «վայելչաբան Սարգիս յաշխարհէն Աղուանից»:[11]

Մատթեոս Ուռհայեցին հիացմունքով է խոսում Արգինայի վարդապետարանի մասին, իսկ նրա սաներից մեկի՝ Բագրևանդի իշխան Ներսեսի վերաբերյալ ասում է, որ նա եղել է «այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն և իմաստասէր» և այնքան հմուտ ժամանակի աշխարհայացքային խնդիրներում, որ կարողացել է իր «հզօր գիտութեամբ» և «զարմանալի ատենախօսութեամբ» դիմակայել բյուզանդացի բոլոր իմաստուններին՝ չզիջելով նրանց:[12] Երբ Պետրոս Գետադարձը հայրապետական գահն ու դպրոցը փոխադրում է Անի, Արգինայի վանքը կորցնում է իր նախկին դերը: XIX դարավերջին կանգուն էին միայն կաթողիկեի հյուսիսային որմը, արևմտյան պատի կեսը, ինչպես նաև արևելյան պատի մի մասի մնացորդը:[13] Արևմտյան դռան վրա մնում է արձանագրության թվականը (1012) և կառուցողի անունը: Վանքի մասին հիշվում է նաև վրաց աղբյուրներում՝ կապված հայ-վրացական դավանաբանական վեճերի հետ:[14]

Անի մայրաքաղաքից հյուսիս-արևելք, Ախուրյան գետի աջ ափին՝ նրա ձորակողի և սարավանդի վրա գտնվում է Հոռոմոսը կամ Ղոշավանքը: Հիմնադրվել է X դարի առաջին կեսին Աբաս Բագրատունի թագավորի օրոք, Բյուզանդիայից փախած հայ վանականների կողմից, որից էլ ծագել է նրա անունը՝ հոռոմների վանք. «Զայս անուն ընկալավ վանքս՝ ի սակս կրօնաւորացն Հայոց ի Հոռոմոց տանէն զերծելոյ այսր, յառաջին կէս Ժ դարու, որոց առաջնորդ գոլով Հովհաննէս ոմն վարդապետ շինեաց ի դի-

---

[5] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ (այսուհետև՝ Ուռհայեցի), Յերուսաղէմ, 1869, էջ 76-77:*
[6] *Նույն տեղում, էջ 54:*
[7] *Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 33, 72, 79, 102:*
[8] *Գ ա ր ե գ ի ն Ա Կ ա թ ո ղ ի կ ո ս, նշվ. աշխ., էջ 163:*
[9] *Նույն տեղում, էջ 507:*
[10] *Ս տ ե փ ա ն ո ս ի Տ ա ր օ ն ե ց ւ ո յ Ա ս ո ղ կ ա ն, Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 185:*
[11] *Նույն տեղում, էջ 185-186:*
[12] *Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 221:*
[13] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1942, էջ 305:*
[14] *Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, Դր. Լ. Մելիքսեթ-Բեկ, Եր., 1934, էջ 107:*

պան տեղուջս զմենաստանն, յաւուրս Աբասայ թագաւորի իբր ամս 935-940»:[15] Ստեփանոս Ասողիկը գրում է. «Ի գաւառին Շիրակայ՝ Հոռոմսին կոչեցեալ վանք՝ շինեցաւ (Աբասը) ի ձեռն Յովհաննեսի՝ որ էր զարդարեալ յողորմածութեան զարդս... և անցաւորաց և ճանապարհորդաց հանգստարան պատրաստէր զտեղին՝ մինչև հանգչել իբր յիւրեանց տան ամենայն օտարաց»:[16] Վ. Արևելցին նույնպես Հոռոմոս անունը կապում է հոռոմների անվան հետ:[17] Վանքը կոչվել է նաև Ղոշավանք՝ Անիի ճանապարհի վրա եղած զույգ աշտարակների, ըստ այլ վարկածի՝ երկու տաճար ունենալու պատճառով: Հոռոմոսն ուներ ընդարձակ կալվածքներ, գյուղեր: Խմելու և ոռոգելու ջուրը վանք էր բերվում բավական հեռվից: Հոռոմոսը՝ իբրև հայ ճարտարապետության կարևոր կոթողներից մեկը, նաև մշակույթի մեծ կենտրոն էր: Ունեցել է հարուստ մատենադարան, վարդապետարան, աղքատներին հյուրընկալող ասպնջականոց:[18] Ենթադրվում է, որ այս վանքում էին տեղի ունենում Բագրատունի թագավորների գումարած արքայական ժողովները: Ըստ Ասողիկի՝ 982թ. «զՀոռոմոսի վանքն այրեաց» Ապլհաճ ամիրան:[19] Լաստիվերտցին նույնպես հիշատակում է վանքը, գրելով. «Փոխի յաշխարհէ սուրբ և արժանաւոր հայրապետն տէր Սարգիս, և է գերեզման նորա ի Հոռոմոսի վանքն»:[20] Վանքը լիարժեք գործել է մինչև XIIIդ. վերջերը, որից հետո աստիճանաբար անշքացել է: Ձեռագիր հիշատակարաններից պարզվում է, որ այստեղ գրվել են ձեռագրեր: Դրանցից մեկը Ավետարան է /Յովանէս գրիչ,1181թ./: Ամենայն հավանականությամբ նույն գրիչի ձեռքով է 1187թ. արվել նաև մեկ ուրիշ ձեռագիր՝ «Ճառք Յաղագս Վեցաւրէից սրբոյն Բարսղի Կեսարու»:[21] Հոռոմոսի վանքը մեր օրերում կիսաքանդ է:

Շիրակ գավառի Բագնայր գյուղում էր գտնվում համանուն վանական համալիրը, որի մեջ մտել են չորս եկեղեցիներ: Դրանցից գլխավորը Սբ. Աստվածածինն է, որի անունով էլ երբեմն անվանվում է ամբողջ համալիրը: Վանքը կառուցվել է 1012թ. Վահրամ Պահլավունու որդի Սմբատ մագիստրոսի նախաձեռնությամբ, որը 1012թ. «շինեաց զիրեշտակաբնակ և զփափագատենչ վանքն՝ որ Բագնայր յորջորջիր՝ ժողովեալ աստուածայնոց արանց»:[22] Այս մասին տեղեկություն ունի և Ասողիկը:[23] Բագնայրը միջին դարերում եղել է Հայաստանի գրչության խոշոր կենտրոններից մեկը: Մեզ են հասել այստեղ գրված և ընդօրինակված ավելի քան 10 ձեռագրեր (XI-XIII դդ.): Ալիշանը հիշատակում է Բագնայրի Մխիթար վարդապետին, որն. «Յառաջինն կէս ԺԱ դարու փայլեր իմաստութեամբ. ի Բագնայր՝ Մխիթար վարդապետ զոր ընդ այլ գիտնական և հռչակաւոր վարդապետս՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոս ընդ իւր տարաւ ի Կոստանդնուպօլիս»:[24] Վանքն իր փառքը կորցրել է XIV-XV դդ.:

Շիրակ գավառում էր նաև Խծկոնքի վանական համալիրը, որ գտնվում էր Անիից մոտ 22 կմ հարավ-արևմուտք՝ Ախուրյան գետի աջակողմյան վտակ Տեկորի գետի վերին հոսանքի ձախ կողմում, Տեկորի վանքից 2-3կմ արևմուտք, ձորամիջյան երեք տարբեր ժայռեղեն թերակղզիների հարթ մակերևույթների վրա: Ղ. Ալիշանը համալիրի անունը կապում է մենակյացների քարանձավ-խուցերի անվան հետ, այսինքն՝ Խծկոնք նշանակում է «խուցակյացներ»: Վանքի համալիրը կազմված է հինգ քարակերտ եկեղեցիներից (դրա համար թուրքերն այն հետագայում անվանել են Բեշքիլիսա)՝ կառուցված IX-XIդդ., խաչքար կոթողներից, վանքի օժանդակ շինություններից: 1240-ական թթ. վանքը համարյա լքվում է: Արհավիրքների օրերին վանքը նաև ապաստան է եղել

---

[15] *Ղ և ո ն դ Ա լ ի շ ա ն, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 18:*
[16] *Ա ս ո ղ ի կ, էջ 174:*
[17] *Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Բարձրաբերդցի), Մոսկվա, 1861, էջ 120:*
[18] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 298:*
[19] *Ա ս ո ղ ի կ, էջ 188:*
[20] *Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 32:*
[21] *Նույն տեղում, էջ 517:*
[22] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (այսուհետև՝ Անեցի), Էջմիածին, 1893, էջ 105:*
[23] *Ա ս ո ղ ի կ, էջ 270:*
[24] *Ղ և ո ն դ Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 121:*

շրջապատի բնակչության համար: Այս հոյակապ վանական համալիրը այժմ ոչնչացված է: Կանգուն է միայն Սբ. Սարգիս եկեղեցին՝ խիստ խարխլված վիճակում:

Ախուրյան գետի ձախ ափի ընդարձակ հովտում է գտնվում Մարմաշենի վանական համալիրը: Եկեղեցու որմի արձանագրությունը վկայում է, որ վանքի գլխավոր եկեղեցու կառուցումը տևել է քառասուն տարուց ավելի՝ սկսվել է 986թ. և ավարտվել 1029թ. սպարապետ Վահրամ Պահլավունու կողմից, որի անունով եկեղեցին նաև Վահրամաշեն է կոչվում. «Շնորհիւն Աստուծոյ ես Վահրամ՝ իշխանաց իշխան անթիպատ պատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց ի ցեղէն Պահլաւունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ եւ զտիեզերական ուխտս Մարմաշէն սկսեալ ի ՆԼԵ թուականին Հայոց յաւուրս Սմբատայ որդւոյ Աշոտոյ Հայոց թագաւորի մինչև ի ժամանակս Յովանիսի որդւոյ Գագկայ Հայոց Շահնշահի առն իմաստնոյ շինողի և խաղաղարարի, եւ ի թուականի Հայոց ՆՀԸ...»:[25] Համալիրը հիշատակում են Անեցին,[26] Գանձակեցին,[27] Գրիգոր Մագիստրոսը՝ որն իր թղթերում վանական համալիրը անվանում է «Սուրբ ուխտ և մայրաքաղաք Մարմաշինոյ»,[28] Ստեփանոս Ասողիկը,[29] Բարձրաբերդցին:[30] Եղել է միջնադարյան կրոնական և մշակութային նշանավոր կենտրոն, ունեցել է մատենադարան, ճանաչվել է որպես նշանավոր դպրոց: Նրա մասին հիշատակություններ կան նաև վրաց աղբյուրներում՝ կապված դավանաբանական վեճերի հետ (Յեփիմիոս Յերուսաղեմացի, XI):[31]

Անի մայրաքաղաքից հյուսիս, համանուն գյուղում էր գտնվում Շիրակ գավառի նշանավոր վանական համալիրներից Դպրեվանքը: Վանքի աշխարհագրական դիրքը վերջնականապես ճշտված չէ: Ըստ ուսումնասիրողների, նրա մնացորդները պետք է փնտրել Գյումրի քաղաքի մոտ գտնվող Չերքեզի ձորում:[32] Դպրեվանքը հիշատակվում է VII դ.: Այստեղ է գործել Բարսեղ Ճոնը (VIIդ.). «արարին ի ձեռն սրբոյն Բարսղի՝ մականուն Ճոն կոչեցելոյ, որ էր առաջնորդ սուրբ ուխտին, որ Դպրավանք կոչի ի գաւառին Անւոյ»:[33] Վանքը հիմնովին վերակառուցվել է 935 թ.՝ Աբաս Բագրատունու ջանքերով, Բյուզանդիայից հալածված հայ հոգևորականների մասնակցությամբ: Դպրեվանքը հիշատակում է և Ասողիկը:[34] Վանքը այս գավառում է դնում և Գանձակեցին, գրելով, որ Ռոմանոս կայսեր կողմից հալածված վանականները հաստատվեցին. «և զԴպրէվանք ի Շիրակ գաւառին»:[35] Այն նաև մշակութային կենտրոն էր: Ենթադրվում է, որ այստեղ է կրթություն ստացել նաև Անանիա Շիրակացին:

Սևանի կղզու (այժմ թերակղզի) բարձունքին, Սյունիքի Գեղարքունիք գավառում է գտնվում Սևանա վանքը: Համաձայն ավանդության այստեղ եղել է հեթանոսական մեհյան, որը 305թ. կործանել է տվել Գրիգոր Լուսավորիչը, տեղը կանգնեցնելով նոր հավատքը խորհրդանշող փայտակերտ մի խաչ: Հետագայում կառուցվել է մի ամբողջ վանական համալիր: Սևանի վանքի զարգացումն ու բարգավաճումը սկսվում է IXդ.՝ կապված երկրի ռազմաքաղաքական հզորացման և անկախության վերահաստատման հետ: Վանական համալիրի կառուցապատման, նրա ներքին կյանքի ու գրչության արվեստի զարգացման բնագավառում այդ ժամանակներում հատկապես ակտիվ են գործել Բագրատունիները և Սյունիքի իշխանները: Առաքելոց եկեղեցու վրա պահպանվել է շինարարության մասին 874թ. արձանագրություն:

Միջնադարում Սևանի վանքը հանդիսացել է գիտության, ձեռագրերի ընդօրինակության և բարձր տիպի ուսումնական կենտրոն: IX դ. Սյունյաց վարդապետարանը

---

[25] *Դ և ո ն դ  Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 148:*
[26] *Ա ն ե ց ի, էջ 103:*
[27] *Կ ի ր ա կ ո ս  Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմություն Հայոց (այսուհետև՝ Գանձակեցի), Եր., 1961, էջ 82:*
[28] *Ղ ու կ ա ս  Ի ն ճ ի ճ ե ա ն, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, հ. 2, Եր., 1988, էջ 431:*
[29] *Ա ս ո ղ ի կ, էջ 270:*
[30] *Բ ա ր ձ ր ա բ ե ր դ ց ի, էջ 131:*
[31] *Վրաց աղբյուրները, էջ 107:*
[32] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, էջ 142:*
[33] *Բ ա ր ձ ր ա բ ե ր դ ց ի, էջ 96:*
[34] *Ա ս ո ղ ի կ, էջ 176:*
[35] *Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 79:*

Մաքենոցաց վանքից տեղափոխվում է Սևանա կղզի: Դպրոցի ստեղծումը կապված էր կաթողիկոս Մաշտոց Ա Եղվարդեցու հետ (897-898թթ.): Մաշտոցը խմբագրում և թարմացնում է ծիսական մատյանը, որը նրա անունով կոչվում է Մաշտոց: Նա դպրոցում դասավանդում է քերականություն, ճարտասանություն և փիլիսոփայություն՝ եռյակ արվեստներ: Իր դպրոցը դասագրքերով ապահովելու համար հարստացնում է Սևանավանքի մատենադարանը: Այստեղ են սովորել Սյունյաց իշխան Գևորգը, պատմիչ և կաթողիկոս Հ. Դրասխանակերտցին (898-929թթ.), Ստեփանոս Սևանցի կաթողիկոսը, նրա եղբորորդին՝ կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին (992-1019թթ.),[36] գրիչներ, մանրանկարիչներ: XIդ. դպրոցը ղեկավարում է Սարգիս իմաստասեր հմուտ գիտնականը, որը հատուկ նամակագրություն ուներ Գագիկ թագավորի հետ:[37] 893թ. Ստեփանոս Գրիչի ձեռքով այստեղ գրվել է մի Մաշտոց:[38] Համալիրի շինությունները զգալիորեն տուժել են 995 թ. երկրաշարժից: Այժմ կանգուն են Առաքելոց և Սբ. Աստվածամայր եկեղեցիները:

Գեղարքունիք գավառում էր գտնվում նաև Վանեվան վանական համալիրը՝ կառուցված Աշոտ Ա Բագրատունի թագավորի որդու՝ Շապուհ սպարապետի կողմից 903թ.: Շապուհ Բագրատունին այդ մասին վանքի թմբուկի վրա թողել է արձանագրություն: Կառուցումից հետո վանքին են նվիրվել գյուղեր, հանդամասեր: Այստեղ է թաղված Սմբատ Բագրատունին: Հետագայում Աշոտ շահնշահի որդի Գագիկը եկեղեցին նորոգում է, պարսպապատում և նրան է նվիրում Դեղձանագետը:[39] Վանքը գտնվում էր ներկայիս Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղից մոտ 20կմ հեռավորության վրա:

Գեղարքունիք գավառում էր գտնվում նաև Մաքենյաց վանքը՝ (այժմ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքատիպ ավանից 15կմ հարավ-արևմուտք՝ Մաքենիս գյուղի մոտ, համանուն (այժմ Կարճաղբյուր) գետի աջ ափին, մի ոչ բարձր լեռնաճյուղի վրա): Վանական այս համալիրն ունեցել է ընդարձակ կալվածքներ և սեփական գյուղեր, ագարակներ ու այգիներ Գառնիում և Երևանում, Անի մայրաքաղաքում ունեցել է իր վաճառատները: Վանական համալիրը բաղկացած է երկու հուշարձանախմբից, որոնցից հիմնականը պարսպապատ է: XI դարի սկզբներին վանքը որոշ ժամանակ եղել է Գեղամա թեմի եպիսկոպոսանիստը: Եղել է գրչության կենտրոն: Այստեղ են ուսանել պատմիչ Հ. Դրասխանակերտցին, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոսը:[40] Այստեղ է գործել Ստեփանոս Սյունեցին: VIII դ. այստեղ գործել է Սյունյաց վարդապետարանական դպրոցը, որն հետագայում տեղափոխվել է Շաղատ և Տաթև (IXդ.):

Սյունիքի գրչության կենտրոններից էին նաև Գնդեվանքը, Խոտակերաց վանքը, Ցախաց քարը, Հերմոնի վանքը և այլն:

## МОНАСТЫРСКИЕ КОМПЛЕКСЫ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА КАК ЦЕНТРЫ ПИСЬМЕННОСТИ


***Резюме*** — ***В. Абраамян***

**В период правления династии Багратидов в Армении создаются монастырские комплексы, которые различались характером своей деятельности. Некоторые монастыри занимались также благотворительностью, лечением больных, опекой над стариками, другие-преимущественно культурно-просветительской деятельностью. В этих центрах работали выдающиеся армянские средневековые летописцы, историографы, философы, ораторы, грамматики, музыканты и многие деятели искусств.**


---

[36] *Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ28:*
[37] *Ա. Մ ա թ և ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 88:*
[38] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դարեր, Աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 41:*
[39] *Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելէան Արքեպիսկոպոսի Սիւնեաց (այսուհետև՝ Օ ր բ ե լ յ ա ն), Թիֆլիս,1910, էջ 132-133:*
[40] *Նույն տեղում, էջ 126:*

*Աշոտ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

## *ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ» ՊՐԱԿԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ*

2004թ. վաղ աշնանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրագիտական արշավախումբը (պգթ Գագիկ Սարգսյան, պգթ Աշոտ Մանուչարյան) շրջայց կատարեց Գյումրի մարզկենտրոն քաղաքն օղակող Ախուրյանի և սահմանային համանուն գետը եզերող Անիի տարածաշրջաններում:

Գիտայցի նպատակը դաշտային աշխատանքների միջոցով Շիրակի այս հատվածներից արժանագիր նյութերի հավաքումն ու ամփոփումն է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հերթական պրակում:

Ցավոք, հասկանալի պատճառներով, ժողովածուից դուրս է մնում Շարայի սեռունդների վիմական հսկայական ժառանգության հիմնական մասը, որը մնացել է Ռահից այն կողմ և, միայն բարեբախտաբար, ի սպառ չարամիտ ոչնչացումից փրկվել հայ վիմագրության երախտավորների ջանքերի շնորհիվ:

Ներկայիս Շիրակի մարզի կենտրոնական և արևմտյան հատվածների միջնադարյան պատմամշակութային հարստության առհավատչյաները Դպրեվանքի կրթօջախի, Տիրաշեն ամրոցի, Վահրամաբերդի, Մարմաշենի վանական համալիրի, Գուսանագյուղի դղյակի, Բարձրաշենի, Կարմիր վանքի, Երերույքի, Հոգեվանքի, Գրիգոր Լուսավորչի ճգնարան-ակնաբուխ քարայրի, Ջրառատի անձավ-կացարանների, Ախուրյանի անդնդախոր կիրճի ձախակողմում՝ ընդհուպ սահմանաբաժանին, դեմհանդիման Հոռոմոսին, հնագետներ Համազասպ Խաչատրյանի և Լարիսա Եգանյանի վերջերս բացած ժայռափոր կրկնահարկ կացարանների շարքի և այլ վայրերի հուշարձաններն են: Իսկ Կարմրաքար գյուղը, իիրավի, կարելի է համարել թանգարան բաց երկնքի տակ, որտեղ և ոչ այլուր, հաջորդաբար ձգվում է մարդկային քաղաքակրթության անխախտ շղթան՝ վաղ բրոնզի դարից մինչև ուշ միջնադար: Ահա այս հուշարձանների գայթակղիչ ուժն էր, որ հմայում էր անխոնջ նվիրյալներին:

Տարածաշրջանի վիմագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են XIXդ. կեսերից: Դրան մեծապես նպաստել է 1828թ. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Ստեղծված բարենպաստ պայմանները հնարավորություն են ընձեռել դեպի հայրենի հուշարձանները ձգվելու բազմաթիվ ուսումնասիրողների, որոնց մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայ տեղագիրները: Նրանք, հիմնականում լինելով հոգևոր բարձր դասի ուսյալ և բանիմաց ներկայացուցիչներ, կարևորելով վիմագրերի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման համար, իրենց ճամփորդությունների ընթացքում գրի են առել վանքերի, եկեղեցիների, խաչքարերի, տապանաքարերի, աշխարհիկ շինությունների՝ քարավանատների, կամուրջների արձանագրությունները, թեև ոչ գիտական պատշաճությամբ, այնուհանդերձ ըստ կարի և պատվախնդրության:

XIXդ. տեղագիրներից, որոնք մասամբ ընդօրինակել են Ախուրյանի և Անիի տարածաշրջանների վիմագրերը, հարկ է հիշատակել Հովհաննես եպս. Շահխաթունյանցին,[1] Սարգիս արքեպս. Ջալալյանցին,[2] Աբել Մխիթարյանցին[3] և այլոց: Այս երախտավորների ընդօրինակությունները, երբեմն հարգի ուղղումներով, իրենց աշխատանքներում զետեղել են հայր Ղևոնդ Ալիշանը,[4] Կարապետ Կոստանյանցը:[5]

---

[1] *Յ ո վ հ. եպ. Շ ա հ խ ա թ ու ն ե ա ն ց, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842:*

[2] *Ս. արքեպ. Ջ ա լ ա լ ե ա ն ց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Տփխիս, 1842:*

[3] *Ա. վրդ. Մ խ ի թ ա ր ե ա ն ց, Տեղագրութիւն Մարմաշինու վանքին, Վաղարշապատ, 1870:*

[4] *Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, Վենետիկ, 1880:*

[5] *Կ.Կ ո ս տ ա ն յ ա ն ց, Վիմական տարեգիր, Ս.Պետերբուրգ, 1913:*

Մարմաշենի արձանագրությունների ընդօրինակման գործում XX դ. սկզբներին նշանակալի աշխատանք է կատարել Մելիքսեդեկ Գեորգյանցը:[6]

Ախուրյանի տարածաշրջանի հայկական վիմագրերի հավաքչական աշխատանքները մեծ թափ առան XIXդ. վերջերին և XXդ. սկզբներին, երբ ականավոր գիտնական Նիկողայոս Մառը բազմամյա պեղումներ սկսեց Անի մայրաքաղաքում և նրա շրջակայքում: Կովկասագետ-արևելագետի հետևորդ և աշակերտ Հ. Օրբելին, հնագիտական աշխատանքներին զուգընթաց, ձեռնամուխ եղավ պեղումներով հայտնաբերված և կառույցների որմերին պահպանված արձանագրությունների հավաքմանը: Նա հիմք դրեց դրանց ընդօրինակման, վերծանության, հրատարակման գիտական մեթոդներին, որոնցով առ այսօր առաջնորդվում են հայ վիմագրագետները: Օրբելու՝ Մարմաշենի վանքի արձանագրությունների հրատարակությունը համարվում է այդ վանական համալիրի վիմագրերի լավագույն ուսումնասիրությունը:[7] Նրա մշակած սկզբունքներով է առաջնորդվել Կ. Բասմաջյանը:[8]Գիտական պատշաճ մակարդակով է Մարմաշենի արձանագրությունները հրատարակել հնագետ Հ. Եղիազարյանը:[9]

1966թ. ամռանը Շիրակի մարզում հավաքչական աշխատանքներ է կատարել ԳԱԱ ՀԱԻ վիմագրագիտական արշավախումբն անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի ղեկավարությամբ: Հետագա տարիներին այստեղ ուսումնասիրություններ են կատարել Ալեքսանդր Մանուչարյանը,[10] Սուրեն Սաղումյանը,[11] հնագետ Սերգեյ Հարությունյանը: Վերջինիս հայտնաբերած և Շիրակի երկրագիտական թանգարանում պահվող մարմաշենյան արձանագրություններից մեկը հրատարակել է ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի գիտաշխատող Գրիգոր Աղանյանը:[12]

2004թ. գիտարշավի մասնակիցներն իրենց ձեռքի տակ ունեին Ս. Բարխուդարյանի 1966թ. օգոստոսին կազմած օրագիրը: Այն յուրօրինակ ուղեցույց էր՝ շահեկան ուղերթի ճիշտ ընտրության, տեղանքում արագ կողմնորոշման, ժամանակի արդյունավետ օգտագործման, բնագրի դյուրին ընթերցման ու վերծանման համար: Օրագրում կան նաև վիմագրեր, որոնք այսօր տեղում չեն և փրկվել են անխոնջ վիմագրագետի անցյալում կատարած աշխատանքի շնորհիվ: Օրինակ՝ Հոգեվանքի եկեղեցու հյուսիսային պատին արտաքուստ փորագիր արձանագրություններից մեկը, որի քարերն անհետացել են վերականգնման աշխատանքների ժամանակ: Կան նաև այնպիսի վիմագրեր, որոնք վերջին քառասուն տարիների ընթացքում մթնոլորտային ազդեցությունից եղծվել, քայքայվել և այսօր գրեթե անընթեռնելի են դարձել: Բարեբախտաբար, դրանք ընդօրինակված են Ս. Բարխուդարյանի օրագրում: Ախուրյանի և Անիի տարածաշրջաններից այդտեղ զետեղված են արձանագրություններ Ջրառատից, Հոգեվանքից, Բարձրաշենից, Երերույքից և այլ հնավայրերից: Դրանք արված են ամենայն պատասխանատվությամբ և առավելագույն ճշտությամբ:

Օրագրում ամփոփված են նաև մեծ թվով վիմագրեր Արթիկի տարածաշրջանից: 1966թ. արշավախմբի անդամ Ալ. Մանուչարյանը, Երևան վերադառնալուց հետո, անմիջապես ձեռնարկել է Մակարավանքի, Հառիճավանքի, Լմբատավանքի մի շարք նորահայտ վիմագրերի հրատարակման գործը:[13] 1983թ. հնագետ Հ. Մելքոնյանը գիտական շրջանառության մեջ է մտցրել Նոր Կյանքի Գրիգոր Լուսավորիչ կենտրոնագմբեթ եկեղեցու արձանագրությունները:[14]

---

[6] *Մ. քհն. Գ ե ո ր գ յ ա ն ց, Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անւոյ, Աղէքսանդրոպօլ, 1903:*

[7] ***И. О р б е л и, Надписи Мармашена, Петроград, 1914.***

[8] ***Կ. Բ ա ս մ ա ջ յ ա ն, Հայերեն արձանագրութիւնք Անւոյ, Դագնայրի եւ Մարմաշենոյ,1931:***

[9] *Հ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն, Մարմաշենի վանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին»,1957, № 5:*

[10] *Ալ. Մ ա ն ու չ ա ր յ ա ն, Քննություն Հայաստանի IX-XI դդ. շինարարական վկայագրերի, Եր., 1977:*

[11] *Ս. Ս ա ղ ու մ յ ա ն, Մարմաշենի վանք, Էջմիածին, 1998:*

[12] *Գ. Ա ղ ա ն յ ա ն, Զաքարյանների մի նորահայտ արձանագրություն, ՇՊՄԺ երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 32:*

[13] *Ալ. Մ ա ն ու չ ա ր յ ա ն, Շիրակի չհրապարակված շինարարական արձանագրություններ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 2:*

[14] *Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն, XI դարի վիմագրեր Նոր կյանք գյուղից, ԼՀԳ, 1983, № 5:*

Ս. Բարխուդարյանի ձեռագրերում շատ են ի նորո հայտնաբերված հիշատակագրությունները, որոնք «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի Շիրակի պրակում գալու են համալրելու նախկին հրապարակումները: Ի հավաստումն ասվածին՝ նշենք, որ, եթե հնագետ Հ.Եղիազարյանը Հառիճավանքից քաղել է 28 բնագիր,[15] իսկ բանասեր Հ. Քյուրտյանը՝ 25,[16] ապա Ս. Բարխուդարյանի մատյանում դրանք շուրջ 45-ն են: Լմբատավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու 9 վիմագրին[17] հավելվել է ևս 4-ը:

Հարկ է նշել, որ Արթիկի տարածաշրջանի գրեթե բոլոր վիմագրերին տրված են ծանոթագրություններ, որոնք պրակի կազմման աշխատանքների ժամանակ կդյուրացնեն մատենագրական նյութերի համեմումները: Սրանով չի սպառվում հայ վիմագրության երախտավորի օրագրի կարևորությունը:

Բացի նոթատետրից, 2004թ. արշավախումբն իր տրամադրության տակ ուներ Շիրակի մարզի հուշարձանների ցուցակը, որն ուղենշում էր հետազոտության առարկան և տեղում ձերբազատում ավելորդ փնտրտուքից: Երթուղիների ընտրության, հուշարձանների ուսումնասիրության հերթականության, վիմագրական նյութի հավանական առկայության խնդիրներում արշավախմբի աշխատանքներին մեծապես օգնում էին գիտնական մանկավարժ Գ. Աղանյանի խորհուրդները: Իսկ այցելությունները մի շարք հնավայրեր, որտեղ ակնկալվում էին նորահայտ փորագրություններ, անցնում էին դրանց գոյության մասին քաջատեղյակ հնագետներ Հ. Խաչատրյանի և Լ. Եգանյանի ուղեկցությամբ: Արշավախումբը, շրջելով գյուղ առ գյուղ, հուշարձան առ հուշարձան, կատարեց լայնածավալ վիմագրագիտական աշխատանքներ, լուսանկարումներ, համեմատություններ, տարընթերցումների շտկումներ, ճշգրտումներ, նորահայտ վիմագրերի ընդօրինակումներ: Հատկապես՝ արդյունավետ էին աշխատանքները Սառնաղբյուրում, Լանջիկում, Հայկաձորում, Քեթիում, Վահրամաբերդում, Մարմաշենում և այլուր: Ժապավենին ու թղթին հանձնվեցին Խաչի ձորի ժայռաբեկորների գեղաքանդակ խաչքարերի արձանագրությունները, գեղատեսիլ լճակի ավերակ եկեղեցում Վասակ Ասպետիկի թերի հիշատակագրությունը: Արշավախմբի անդամները քանիցս այցելեցին Շիրակի մարզի հնությանց թագն ու պսակը հանդիսացող Մարմաշենի վանական համալիրը: Տեղում բնագրերի մանրազնին, համեմատական ուսումնասիրությամբ շտկվեցին երկու գիտական հրատարակումների՝ Հ. Օրբելու և Հ. Եղիազարյանի աննշան տարընթերցումները, պարզաբանվեցին վանքի անվան ծագման, շինարարության նախաձեռնության, գործունեության տևականության խնդիրները, և որ ամենակարևորն է՝ հրատարակված 23 արձանագրությունների թիվը համալրվեց ևս 7-ով:

Հավաքված ողջ նյութը, որում քիչ չեն որպես միակ սկզբնաղբյուրների հավակնող վիմագրերը, գրեթե ուսումնասիրված է: Այն այժմ գտնվում է պատճենահանման, գրչագրման, վերծանման, ծանոթագրման փուլում:

## О РАБОТАХ ПО СОСТАВЛЕНИЮ ШИРАКСКОГО ПРАКА "КОРПУСА АРМЯНСКОЙ ЭПИГРАФИИ"

***Резюме*** ***А. Манучарян***

**Научное сообщение посвящено работе экспедиции отдела этиграфики института археологии и этнографии НАН РА в Ширакском регионе. Участниками экспедиции собраны новые, ранее не опубликованные надписи. Вместе с тем они сверили некоторые надписи, собранные С.Бархударяном и другими этнографами, выявили разночтения в текстах.Конечной целью и результатом работы является подготовка к печати очередного тома "Корпуса армянской эпиграфики", посвященной историческому Шираку.**

---

[15] *Տե՛ս Հ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն, Հառիճա վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1957, № 1:*
[16] *Տե՛ս Հ. Ք յ ու ր տ յ ա ն, Հառիճո վանքի արձանագրությունները, «Բազմավեպ», 1957, № 11-12:*
[17] *Տե՛ս Հ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն, Լմբատավանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1960, № 2:*

*Էրիկ ՄԻՆԱՍՅԱՆ*

## ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 1990-ԱԿԱՆ ԹԹ.

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի տնտեսական ծանր պայմանների պատճառով շատ մտավորականներ մեկնեցին հայրենիքից, որի հետևանքով թուլացավ հանրապետության գիտական ներուժը: Դրան նպաստեց նաև ՀՀ կառավարության սխալ քաղաքականությունը գիտության բնագավառում: Չկարողանալով կամ չկամենալով գլխավորել հանրապետության գիտական հզոր բանակը՝ այն լուռ խրախուսեց արտահոսքը: Սակայն մեծ թվով հայրենանվեր գիտնականներ՝ հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչները, շարունակեցին իրենց գիտական աշխատանքները:

Սփյուռքի հետ փոխադարձ կապի բազմատեսակ ձևերում ներկա պայմաններում կարևոր են նաև գիտական առնչությունները, որոնց նպատակը նույնպես համազգային համախմբման, համատեղ, միասնական ծրագրերի մշակման միջոցով նորանոր նվաճումների հասնելն է: 1990-ական թվականներին Երևանում և սփյուռքում համախակի գիտական նստաշրջաններ էին հրավիրվում, որտեղ քննարկվում էին համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ընդունում համապատասխան որոշումներ: 1991թ. փետրվարին ՀՀ ԳԱԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի գիտական նստաշրջանում նորովի գնահատվեցին ազգանպաստ գործոնների հանդես գալը՝ ընդգծելով, որ սփյուռքը նույնքան զգում է հայրենիքի կարիքն ու օգնությունը, որքան հայրենիքն է զգում սփյուռքինը: Դա փոխպայմանավորված երևույթ է:

Կարևոր գիտական միջոցառում էր 1992թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի և Կալիֆոռնիայի համալսարանի համատեղ գիտաժողովը, որին մասնակցում էին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից եկած մասնագետները: Ոգևորիչ էր Բուլղարիայի «Երևան» կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպված «Հայկական ոգու կենսունակությունը» գիտական կոնֆերանսը, որտեղ հետաքրքիր զեկուցումներ լսվեցին հայոց պատմության ու մշակույթի, հայ-բուլղարական կապերի, գործարար շրջանների համագործակցության վերաբերյալ: Նման միջոցառումները ոգեշնչում են հայկական համայնքին, բարձրացնում նրա ազգային ինքնագիտակցումը:

Հայրենիք-սփյուռք գիտական համագործակցության կարևոր միջոցառումներից էր 1992թ. հունիսին Երևանում կազմակերպված համահայկական գիտական նստաշրջանը, որը նվիրված էր հայության տարբեր հատվածների համագործակցության, ազգային համախմբման և հայապահպանության կարևոր հիմնահարցերին: Խորհրդային կայսրության փլուզման հետևանքով աշխարհաքաղաքական փոփոխությունները ու պատմական նոր իրողությունները նոր խնդիրներ են դնում համայն հայության առջև: Հայ ժողովուրդը հայրենիքում և արտերկրում կարող է գոյատևել համայն հայության միասնական ջանքերով: Նոր պայմանները հրամայաբար պահանջում են մշակել համագործակցության ծրագրեր և հասնել ազգային կազմակերպվածության, ազգային մտածելակերպի ու գործելակերպի որակապես նոր մակարդակի: Երևանյան համազգային գիտաժողովում նշվեց, որ Հայաստանը պետք է գոյատևի ոչ միայն հանրապետության բնակչության, այլև ամբողջ հայության համաքական ջանքերով: Սփյուռքը գոյատևելու է հայրենիքով, իսկ Հայաստանը՝ գաղթաշխարհի օգնությամբ: Գիտաժողովում ցանկություն հայտնվեց ստեղծել համահայկական մի մարմին և լուրջ աշխատանքներ տանել տարբեր կուսակցությունների և մշակութային կազմակերպությունների միջև հակասությունների վերացման ուղղությամբ, որոնք հիմնականում հրահրվում են օտարների կողմից: Ինչպես արդարացիորեն նշվեց համագումարում, գլխավոր նպատակը աշխարհով մեկ սփռված հայությանը մեկ առանցքի շուրջ համախմբելն է:

1998թ. սեպտեմբերին Երևանում հրավիրվեց Հայաստանի Հանրապետության և մի շարք երկրների ակադեմիաների գիտաժողով՝ նվիրված բնության պահպանման հարցերին: Ընդհանրապես Հայաստանի գիտական հիմնարկները սերտ համագոր-

ծակցության մեջ էին ԱՄՆ-ի համապատասխան համալսարանների հետ: Դրան մեծապես նպաստում է «Հայաստան-ԱՄՆ» ընկերությունը: Հայաստանում գիտության զարգացման և գիտատեխնիկական ներուժի արտագաղթը սահմանափակելու նպատակով ՄՆ-ի «Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամը» Հայաստանին (ԱՊՀ-ից միակ երկրին) տրամադրեց 500 հազար դոլար[1]:

Միջազգային համահայկական գիտաժողովներում լուրջ անհանգստություն է դրսևորվում ներքին սփյուռքի ծանր վիճակի վերաբերյալ: Այստեղ խորհրդային տարիներին վերացվել էին ազգային բոլոր կազմակերպությունները, և բացարձակ ուծացման քաղաքականություն էր տարվում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո տեղական ազգայնականները դիմում էին տարբեր միջոցների ազգային փոքրամասնություններին երկրից արտաքսելու համար: Բացի Վրաստանից, որտեղ հայկական ամուր գաղութ կա իր կրթամշակութային կազմակերպություններով, մնացած նախկին հանրապետություններում հիմնականում խոսում են ռուսերեն, ու ձուլման վտանգը շատ մեծ է: Հայաստանի կառավարությունը, ինչպես նշվում էր գիտաժողովներում, պետք է միջոցներ ձեռնարկի նաև ներքին սփյուռքում եղած հայկական գաղթօջախների ամրապնդման համար: Նա տեր պիտի կանգնի իր ժողովրդի այդ հատվածներին՝ նկատի առնելով, որ XX դարի վերջին ամենուր հանդես են գալիս և հաճախ իշխանությունների կողմից խրախուսվում ազգայնամոլներ, որոնք տարբեր վայրագություններով ձգտում են «մաքրել» իրենց երկիրը:

Սփյուռքի կրթա-մշակութային գործունեությունը, ինչպես նաև հայրենիքի հետ գիտա-կրթական կապերի ամրապնդումը սփյուռքի գաղութների ազգային ինքնության պահպանման համար այլևս բավարար չէին: Հայրենիք-սփյուռք հարաբերություններում շատ կարևոր է տնտեսական դինամիկ համագործակցությունը, որը կարող է նոր լիցք հաղորդել հայության երկու հատվածներին:

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի իշխանությունները, տնտեսական ծանր պայմաններից ելնելով, փաստորեն սփյուռքին հատկացրին տնտեսական օժանդակողի սահմանափակ դերը: Դա չէր կարող նպաստել հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների կայունացման փոխշահավետ ռազմավարության մշակմանը: Հայաստանը պետք է սփյուռքի տարբեր գաղութների հետ համագործակցության համապարփակ ծրագրեր մշակի՝ հաշվի առնելով հայրենիքի և գաղութի շահերը: Հայրենիքի անկախ գոյությունն ու հզորությունը սփյուռքահայության հարատևման երաշխիքն է, իսկ վերջինիս կենսունակությունն ու բարեկեցությունը հայրենիքի ամրապնդման կարևոր գործոնն է: Այդ իմաստով սկզբնական շրջանում՝ մանավանդ երկրաշարժից հետո, շատ մեծ էր սփյուռքից ստացված օգնության դերը, որն ի վերջո ուղղված էր ազգապահպանման գործընթացին: Այդ օգնությունը դրսևորվեց տարբեր ձևերով:

Հայաստան-սփյուռք հարաբերություններում անգնահատելի է առանձին բարեգործների և հասարակական կազմակերպությունների ազգանվեր գործունեությունը: Ազգային բարեգործների առաջին շարքում է Ալեք Մանուկյանը: Տակավին 1964թ. հիմնված Ալեք Մանուկյանի և նրա տիկնոջ՝ Մարի Մանուկյանի հիմնադրամը հսկայական դեր խաղաց սփյուռքում դպրոցաշինության, կրթական հաստատությունների տարածման, նոր մշակութային կենտրոնների ձևավորման, հրատարակությունների կազմակերպման, հայ ուսուցիչների ու մտավորականների պայմանների բարելավման գործում:[2] Հիմնադրամի միջոցներով մեծ թվով դպրոցներ, մշակույթի տներ կառուցվեցին ԱՄՆ-ում,Կանադայում, Արգենտինայում, Ավստրալիայում և այլ երկրներում: Հայրենիքից հրավիրվեցին բարձրորակ մասնագետներ, որոնք նպաստեցին տարբեր երկրներում հայկական մշակույթի տարածմանը: Հիմնադրամը մեծ օժանդակություն ցույց տվեց հայրենիքի վերաշինությանը: «Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով, ու կապրի անոր ապագայի համար,- ասել է Ա. Մանուկյանը,- այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց հայրենիքի չի կա-

---

[1] *«Ազգ» օրաթերթ, 8 դեկտեմբերի, 1998:*

[2] *Վ. Հ ա մ ա զ ա ս պ յ ա ն, Ալեք Մանուկյան, Եր., 1994, էջ 24:*

րող գոյատևել սփյուռքը»:[3] Մեծ բարերար Ալեք Մանուկյանի գործունեությունը, նրա կատարած ազգանվեր աշխատանքը բարձր են գնահատվել հայրենիքի կողմից: Նա արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչման ու պարգևատրվել շքանշաններով: Այդ պատվարժան գործը հետագայում (1996թ.) շարունակեց նրա դուստրը՝ Լուիզ Սիմոն Մանուկյանը, որի գործունեությունը սփյուռքի և հայրենիքի բարգավաճման ու մերձեցման գործում դժվար է գերագնահատել: Հանդես գալով ՀԲԸՄ-ի 90-ամյակի առթիվ՝ Լուիզ Մանուկյանը նշում է, որ եղած գումարները ծախսվում են սփյուռքում և հայրենիքում դպրոցների, հիվանդանոցների, ծերանոցների, ինչպես նաև տնտեսական բնագավառում շինարարական աշխատանքների վրա: Էրեբունի հիվանդանոցում, օրինակ, ստեղծվել է Հայաստանում առաջին գերձայնային սարքավորումներով հետազոտման բաժինը:

Հայրենիք-սփյուռք կապերը սատարող, բարեգործ ու նվիրյալ և մեծ հայրենասեր է Գալուստ Գյուլբենկյանը: Նրա կտակի համաձայն՝ խոշոր միջոցներ են տրամադրվում Հայաստանի գիտության և բժշկության կարիքների համար, որով հիմնականում թանկարժեք սարքավորումներ են գնվում: 1994թ. Հայաստանին նվիրվեց ժամանակակից անալիտիկ սարքավորումների համալիր, որը նախատեսված է դեղերի և սննդամթերքների որակը ստուգելու համար: Գյուլբենկյանի միջոցներով շարունակվում են հայրենասիրական աշխատանքները Հայաստանում և սփյուռքում:

Հայրենիքին բոլոր միջոցներով օգնող, սփյուռքի հետ կապերն ամրապնդող բարերար նվիրյալներից է ֆրանսահայ երգիչ Շառլ Ազնավուրը: 1988 թ. կործանարար երկրաշարժի լուրն ստանալուն պես Շ. Ազնավուրը նվիրվեց հարազատ ժողովրդի ցավերն ու կարիքները մեղմելու գործին: Շուտով ստեղծվեց «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը: 1994 թ. մայիսին նա հատուկ ինքնաթիռով շուրջ 40 տոննա մարդասիրական օգնություն բերեց Հայաստան: Հատկապես երկրաշարժից տուժած փոքր երեխաներին փրկելու և օգնելու համար նա տարբեր տեսակի արտադրություններ կազմակերպեց, իսկ 1995 թ. Ազնավուրը դիմեց Եվրոհամայնքին, որն ավելի քան 3 մլն - դոլարի մազութ ու գազ գնեց երևանցիներին օգնություն ցույց տալու համար: Ազնավուրի հայրենանվեր բարեգործությունը երախտագիտության, հարգանքի ու սիրո խոր զգացմունքներ է առաջացնում ամենուր: «Ազնավուրը հայ խիղճն է, որն արթնանալով, հուզում են ալեկոծվելով՝ կալեկոծեր համակ մարդոց սրտերը»,- ասում էին նրա մասին:

Երկրաշարժի հետևանքների վերացումը համազգային գործ դարձավ, և ամբողջ սփյուռքը ոտքի կանգնեց: Սփյուռքում կազմակերպվող հանգանակության միջոցները կենտրոնացվեցին մեծ վստահություն վայելող Լինսի հաստատությունում, որը գլխավորում է Քըրք Քրքորյանը: Շուտով հիմնադրամի անդամ դարձան ամերիկահայ ամենահայտնի բարեգործական կազմակերպությունները, եկեղեցական թեմերը: Հիմնադրամը և անձամբ Քըրք Քրքորյանը տարեցտարի խոշոր հատկացումներ են կատարում Հայաստանը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու համար: Ամբողջ 1990-ական թվականներին Լինսի հիմնադրամի օժանդակությամբ կառուցվել են կուլտուրտնտեսական հիմնարկներ, ճանապարհներ, բնակարաններ և այլն: Նա հայ ամենամեծ ու նվիրյալ բարեգործն է:

Ջինիշյան հիշատակի հիմնադրամը լայն աշխատանքներ է ծավալել Գյումրիում բնակելի շենքերի կառուցման և վերանորոգման, ջրագծերի վերականգնման ուղղությամբ: Այն հոգատարություն է ցուցաբերում անօթևան երեխաների, սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների նկատմամբ: Իսկ սփյուռքահայ բարեգործ Գալուստ Սողոմոնյանը բազում նվիրատվություններ է կատարել Թալինի և Վայքի շրջաններում դպրոցներ, եկեղեցիներ կառուցելու համար:[4]

Հայաստան-սփյուռք հարաբերություններում կարևոր են նաև փոխադարձ այցելությունները, որոնք հնարավորություն են ընձեռում ճիշտ գնահատելու երկրում կատարվող փոփոխությունները: Սիրիացի մշակութային և կրթական գործիչ Վահե Ժամագործյանը հպարտությամբ նշում է, որ «Զվարթնոց» երգչախումբն ու «Սարդարապատ» պարախմբերը հաջողությամբ ելույթներ են ունենում մայր հայրենիքում՝ փո-

---

3 *«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 19 սեպտեմբերի, 1991:*

4 *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 11 մայիսի, 1998:*

խաղարձ հարստացնելով համազգային արվեստը: Արտերկրում մեծ արձագանք ունեցավ նաև այն, որ Հայաստանում վերականգնվեցին մոռացության մատնված շատ մշակութային ու պետական գործիչների անունները:

Հայրենիք-սփյուռք կապերն ամրապնդելու և բոլոր միջոցներով Հայաստանին օգնության հասնելու գործում բեղուն աշխատանք է կատարում Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) Երևանի մասնաճյուղը, որն իր նպատակն է համարում «գեթ փոքր-ինչ թեթևացնել մեր ժողովրդի հոգսերը»: Այդ ֆոնդը մեծ քանակությամբ սննդամթերք ու դեղամիջոցներ է փոխադրում և ձրի (անվճար) բաժանում կարիքավորներին: ՀՕՖ-ի հովանավորությամբ մեծ թվով բժիշկներ են վերաորակավորվել ԱՄՆ-ում և հիվանդանոցներ ապահովվել բուժսարքավորումներով, դեղորայքով: 1990-97թթ. ՀՕՖ-ը 160 մլն ամերիկյան դոլարի արժողությամբ օգնություն է ցույց տվել Հայաստանին[5]:

Շվեյցարացի բարերար և հասարակական գործիչ Սարգիս Իզմիրլյանը մեկ միլիոն դոլար նվիրեց Երևանի պետական համալսարանի գրադարանի վերակառուցմանն ու հարստացմանը: Ի նշան երախտագիտության 1997թ. համալսարանի գրադարանն անվանակոչվեց Սարգիս Իզմիրլյանի և նրա կնոջ՝ Մարի Իզմիրլյանի անունով: Իսկ ազգային բարերար Վաչե Մանուկյանը 1 մլն դոլար դրամագլխով հիմնել է համալսարանական կրթաթոշակների հիմնադրամ, որից հիմնականում օգտվում են Լիբանանի համալսարաններում սովորող հայ ուսանողները:

Բազում հայ գաղթօջախներ հայրենասիրական օգնություն են ցույց տալիս հատկապես աղետի գոտուն և ազատամարտիկներին: Սակայն հարցը չպետք է հանգեցվի միայն օժանդակություն ցույց տալուն կամ ժամանակ առ ժամանակ փոխայցելություններ կազմակերպելուն: Միանգամայն ճիշտ են նկատում Քուվեյթի հայ գործիչները. «Այսօր ժամանակն է, որ պետությունը գաղութներով զբաղվի և կապը ոչ թե առանձին անձերի միջոցով լինի, այլ՝ պետության և գաղութի ղեկավարի: Այդ դեպքում արդյունքը շոշափելի կլինի»[6]: Ցանկություն է հայտնվում ստեղծել մի կենտրոն, որը կհամակարգի սփյուռք-Հայաստան հարաբերությունները, կձգտի հոգալ ինչպես հայրենիքի, այնպես էլ սփյուռքի կարիքները:

Բացի առանձին բարեգործներից և բարեգործական կազմակերպություններից հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործում անգնահատելի դեր են խաղում սփյուռքում ձևավորված հայկական խոշոր համայնքները: Դրանցից ամենախոշորն է ամերիկահայ գաղութը, որն ավելի քան 1 մլն բնակչություն ունի: Ամերիկահայ գաղութում է տեղադրված Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությունը, որն իր մասնաճյուղերն ունի ԱՄՆ-ի բոլոր հայաբնակ վայրերում: Գործում են քաղաքական կուսակցությունները, բազում միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններ, իսկ մի շարք ամերիկյան համալսարաններում՝ հայագիտական ամբիոններ: Բավականին ակտիվ է գործում Հայ օգնության միությունը (ՀՕՄ), որը երկրաշարժի աղետյալներին առաջին ձեռք մեկնողներից էր: ՀՕՄ-ի Հյուսիսային Ամերիկայի մասնաճյուղերի բարերարների օգնությամբ 1997 թ. մայիսին Ախուրյանում բացվեց «Մոր և մանկան առողջության կենտրոնը», որն այնքան անհրաժեշտ էր աղետի գոտու համար: «Այս կառույցը,- ասաց ՀՕՄ-ի ներկայացուցիչը,- հայության հավաքականության արդյունքն է և խորհրդանշում է սփյուռք, հայրենիք և ժողովուրդ կապը»:[7]

ՀՕՄ-ը որբանոցներին օգնություն ցույց տալու ծրագրով զգալի նյութական օժանդակություն է ցույց տալիս նաև գիշերօթիկ դպրոցներին, անապահով երեխաներին: 1996 թ. մարդասիրական օգնություն ստացան Երևան քաղաքի 100 հազար մտավորականներ, 50 հազար ուսուցիչներ, ինչպես նաև 3500 պատերազմի վետերաններ[8]:

Ամերիկահայ գաղթօջախն իր կազմակերպություններով մեծ օգնություն է ցույց տալիս նաև սփյուռքի մյուս հայկական համայնքներին, օգնում հայապահպանման ընդհանուր գործին: 1991 թ. 150 հազար դոլար հատկացվեց Արգենտինայի, Հայաստա-

---

[5] *«Մոլորակ», 5 դեկտեմբերի, 1997:*
[6] *«Հայաստանի Հանրապետություն», 4 օգոստոսի, 1993:*
[7] *«Ազգ», 18 մայիսի, 1997:*
[8] *«Առավոտ» օրաթերթ, 2 օգոստոսի, 1996:*

նի, Անգլիայի, Իրանի, Սիրիայի, Իտալիայի և այլ երկրների հայ ուսանողներին: ՀԲԸՄ Վիեննայի մասնաճյուղի օգնությամբ մի ամբողջ թաղամաս կառուցվեց: Ի նշան երախտագիտության Վիեննայում տեղադրվեց 3,5 մետրանոց խաչքար:

Մեծ է Շվեդիայի հայկական համայնքի ազգանվեր գործունեությունը: 1974 թ. Շվեդիայում հիմնվեց հայ առաջին կազմակերպությունը, որը շուտով Հայաստանից դասագրքեր, գրականություն, թերթեր ստացավ և ստեղծեց հայկական գրադարան: Շուտով բացվեց Մ. Մաշտոցի անվան վարժարան: 1991 թ. շվեդահայ բոլոր միությունների համագումարը հրավիրվեց, որտեղ ձևավորվեց մի համակարգիչ կենտրոն: Այն զբաղվելու էր տեղերում հայերի ուսուցման կազմակերպման, Հայաստանին օգնություն ցույց տալու և այլ հարցերով:

Տարեցտարի ամրապնդվում և ուժեղանում է Արգենտինայի հայ գաղութը: Այստեղ մեծ աշխատանքներ են տարվում հատկապես աճող սերնդին հայեցի դաստիարակելու ուղղությամբ: Հայրենանվեր աշխատանքներ է կատարում Արգենտինա-Հայաստան ընկերությունը, որը գլխավորում է այդ կենսունակ գաղութի աշխատանքները, նպաստում հայրենիքի հետ համագործակցությանը: Արգենտինահայ համայնքի օգնությամբ վերականգնվեց Արցախի Մարտունու շրջանի Վաղուհաս գյուղը, Ստեփանավանում կառուցվեց ֆիզիկա-մաթեմատիկական թեքումով դպրոց:

Հայրենիք-սփյուռք առնչություններում 1990-ական թվականներից որոշակի դեր էր վերապահված նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ձևավորված հայկական համայնքներին: Ներքին սփյուռքում ծանր ճակատագիր ունեցավ Ադրբեջանի՝ շուրջ կես միլիոն բնակչություն ունեցող հայկական համայնքը: Արցախի ազատագրական պայքարի ընթացքում Ադրբեջանի իշխանությունների վայրագություններից խուսափելու համար հայերը զանգվածաբար բռնագաղթվեցին՝ ապաստանելով Հայաստանում և ԱՊՀ երկրներում: Ադրբեջանի հայկական գաղութը դադարեց գոյություն ունենալուց:

Այլ էր Վրաստանի հայկական գաղութի ճակատագիրը: Այստեղ հայկական բնակավայրերը տարեցտարի ստվարանում էին՝ ամրապնդելով դարավոր բարեկամությունը: 1990-ական թվականներից Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանը շրջափակելու պայմաններում Վրաստանը միակ հարևանն էր, որտեղով Հայաստանը կապվում էր արտաքին աշխարհի հետ: Երևան - Թբիլիսի երկաթուղով և Բաթումի նավահանգստով Հայաստանն արտահանում և ներմուծում էր իր հիմնական ապրանքները: Այդ հարաբերությունների կարգավորման գործում շատ մեծ է հայկական համայնքի դերը: Հայաստանի համար բավական ծանր տարում հիմնվեց Հայաստան-Վրաստան ընկերությունը: Նույն տարում սկսեց գործել նաև Վրաստան-Հայաստան ընկերությունը: Դրանք զգալի դեր խաղացին երկու պետությունների բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման գործում: Հայաստան-Վրաստան ընկերությունը հրատարակում է «Օջախ» թերթը: Վրաստանի կարևոր համայնքներից է Բաթումի հայկական համայնքը, որը, սակայն, խորհրդային տարիներին մեկուսացել էր, կապերը խզել մայր հայրենիքի հետ: 1992թ. Բաթումում տեղի ունեցավ աջարահայության բարեգործական ընկերության հիմնադրումը: Այդ ընկերության նպատակն էր վերաբացել հայկական եկեղեցին, նյութական օգնություն ցույց տալ անապահով ընտանիքներին, համագործակցել մյուս երկրների հայկական համայնքների հետ և այլն: Այդ համայնքն իր քաղաքական չեզոքությամբ և տնտեսական ակտիվ գործունեությամբ կարողանում է համախմբել հայերին, պահպանել նրանց ուծացումից: 1996 թ. Բաթումի «Վերածնունդ» բարեգործական ընկերության ջանքերով բացվեց հայկական դպրոց, որը փակվել էր աշակերտներ չունենալու պատճառով: Այդտեղ սովորում էին մոտ 100 երեխաներ: Սակայն դեռևս զգացվում է համայնքի մեկուսացումը: Դպրոցը Հայաստանից անհրաժեշտ դասագրքեր և գրենական պիտույքներ չի ստանում:

Ծանր եղավ աբխազահայության ճակատագիրը,որը, վրաց-աբխազական պատերազմի ժամանակ երկու կողմերի հարվածների տակ ընկնելով, կողոպտվեց ավազակախմբերի կողմից: Աբխազահայությունը ցրվեց աշխարհով մեկ և փաստորեն այդ համայնքը նույնպես դադարեց գոյություն ունենալուց:

Վրաստանի հայկական համայնքներից ամենակայունը ջավախքահայությունն է, որը, սերտորեն համագործակցելով Հայաստանի հետ, ապահովում է հայեցի ապրելակերպը: Մեծ է «Ջավախք» հայրենակցական միության դերը: Այդ միության

հետևողական աշխատանքների շնորհիվ հարյուրավոր ջավախքցիներ, որոնք արտագնա աշխատանքի էին մեկնում, տեղավորվեցին աշխատանքի աղետի գոտում: Միությունը գնեց մի քանի շարժական էլեկտրակայաններ և նվիրեց Ախալքալակի հիվանդանոցներին ու դպրոցներին: Հայաստանից Ջավախքի դպրոցները ստանում են դասագրքեր, ծրագրեր, գեղարվեստական գրականություն: Փոխադարձ մշակութային համույթների այցելությունները ավելի են ամրապնդում կապը մայր հայրենիքի հետ:

Հայաստանի անկախությունը ազգային զարթոնքի բերեց նաև ներքին սփյուռքի մյուս հայկական համայնքներին: Ամենուր սկսեցին կիրակնօրյա դպրոցներ բացվել, գործել եկեղեցիներ և ամրապնդել կապը հայրենիքի հետ: Ներքին սփյուռքում իր ուրույն տեղն ունի Ռուսաստանը, որը միակ երկիրն է, որ անարգել ապաստան է տալիս ինչպես ազգամիջյան կռիվներից, այնպես էլ երկրաշարժից հետո անօթևան մնացած հարյուր հազարավոր մարդկանց: Կրասնոդարի, Ստավրոպոլի, Հյուսիսային Կովկասի շատ բնակավայրեր հյուրընկալ ընդունեցին գաղթահայերին՝ նրանց ցույց տալով տարբեր տեսակի օգնություն: Բավականին ծավալուն ազգապահպան գործունեություն է ծավալել Աստրախանի հայկական համայնքը, որը սերտորեն համագործակցում է Հայաստանի հետ, կազմակերպում մշակութային օրեր, փոխադարձ այցելություններ և այլն: 1993 թ. հունիսին Աստրախանում կազմակերպվեցին հայկական մշակութային օրեր, որին մասնակցեցին Ռուսաստանի մյուս հայկական համայնքների ներկայացուցիչները, քաղաքական ու տնտեսական ղեկավարները, գիտության և արվեստի գործիչները:

Ազգապահպանմանը նպաստելու գործում իր արժանի ավանդը մտցրեց Սանկտ Պետերբուրգի «Հայկական տուն» ընկերությունը, որի հիմնական նպատակն էր Ս. Պետերբուրգի զանազան կազմակերպությունների, ինչպես նաև անհատ գործիչների միջև հոգևոր, մշակութային և գործարար կապերի ամրապնդումը: 1993 թ. քաղաքի իշխանությունների որոշմամբ հայկական համայնքին վերադարձվեց հայոց եկեղեցին: Նույն թվականին հայերեն և ռուսերեն լույս տեսավ «Հավատամք» ամսաթերթը, որի առթիվ քաղաքագլուխ Ա. Սոբչակը գրել է. «Շատ կարևոր է, որ հայ ժողովրդի կրած տառապանքները դաս կհանդիսանան մեզ բոլորիս համար և նոր լիցք կհաղորդեն նոր հասարակության կառուցման համար»[9]: Այդ գաղութը մեծ աշխատանքներ է կատարում նաև հայրենիքի հետ կապերն ամրապնդելու, գիտության, արվեստի ու մշակույթի օրեր կազմակերպելու գործում: Այդտեղի հայկական դպրոցները Հայաստանից ստանում են անհրաժեշտ դասագրքեր ու դպրոցական պիտույքներ: Դնեպրոպետրովսկի հայկական համայնքի ակտիվ միջնորդությամբ որոշ դպրոցներում դասավանդվում են հայոց լեզու և գրականություն: Մոտ 200 աշակերտներ են սովորում Դնեպրոպետրովսկի հայկական դպրոցներում: 1997 թ. Դնեպրոպետրովսկում մի քանի շենքեր փլվեցին և մոտ 3000 մարդ մնաց անօթևան: Տեղի հայկական համայնքը դիմեց բոլոր հայերին՝ օգնության ֆոնդ ստեղծելու համար. «Մենք գիտենք, որ դնեպրոպետրովցիներն առաջիններից մեկն էին, որ արձագանքեցին Հայաստանի դժբախտությանը (1988թ. երկրաշարժին) և ուղարկեցին իրենց լավագույն շինարարներին, բժիշկներին և օթևան տվեցին տարագիր հայերին: Հիմա եկել է մեր հերթը, որպեսզի մենք մեր եղբայրներին վարձահատույց լինենք, նրանց շրջապատենք հոգատարությամբ»:[10]

Հետպատերազմական շրջանում տարբեր ճակատագրեր ու զարգացման տարբեր հնարավորություններ ունեցան սոցերկրների հայկական գաղթօջախները:

Բուլղարահայ գաղութն իր քանակով Եվրոպայում երկրորդն էր Ֆրանսիայից հետո: Սակայն երկար տարիներ այնտեղ թագավորող կոմունիստական բարոյականության պայմաններում ազգային խնդիրները հետին պլան էին մղված: Հետպատերազմական տասնամյակներում առաջինը ՀՕՄ-ն էր, ապա Հոմենտմենը, որոնք ազգային կերպարանք հաղորդեցին համայնքին: Մինչ այդ գործող «Երևան» միությունը, ըստ էության, այնքան էլ հայկական չէր: 1990-ական թվականներին այստեղ ևս ազգային զարթոնք էր նկատվում: Բազում միջոցառումներ կազմակերպվեցին հայրենիք-սփյուռք կապերն ամրապնդելու և համայնքի հայապահպանման աշխատանքերն ակտիվաց-

---

*[9] «Հայրենիքի ձայն», 17 հուլիսի, 1993:*
*[10] «Հայաստանի Հանրապետություն», 14 հունիսի, 1997:*

նելու համար: Երկրորդ աշխարհամարտից հետո իր գոյությունը դադարեցրել էր նաև Ռումինիայի Հայոց միությունը, որը վերակենդանացավ 1980-ականների վերջերին: Այստեղ ևս, ինչպես Բուլղարիայում, առաջնահերթ նշանակություն էր տրվում դպրոցների աշխատանքների կազմակերպմանը, որոնք մեծ մասամբ փակվել էին: Հայաստանի Հանրապետության օգնությամբ սկսում են կենդանության նշաններ ցույց տալ նախ կիրակնօրյա, ապա և սովորական դպրոցները: Այդտեղ գործում են 4 շաբաթօրյա վարժարաններ: Ինչպես այս, այնպես էլ տեղական հայկական մամուլի լույս ընծայման գործում շատ մեծ է Հայաստանի Հանրապետության օգնությունը: Այստեղ ևս հաճախակի ցուցահանդեսներ են կազմակերպվում, որտեղ այցելող այլազգիները հայկական մշակույթի հետ ծանոթանալու հնարավորություն են ունենում: Ռումինիայի հայկական համայնքը մեծ հարգանք է վայելում երկրում:

Գերմանիայի հայկական գաղութը նույնպես վերածնվեց 1960-70-ական թվականներին: Սակայն նրա իսկական զարթոնքը սկսվեց 90-ական թվականներին՝ կապված Արցախի ազատագրական պայքարի և երկրաշարժի հետ: Հայրենիքին օգնություն ցույց տալուց բացի, գերմանական համայնքը հանդես է գալիս որպես հայ մշակույթի քարոզչության ջատագով: Դրա վկան է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մշտական մասնակցությունը:

Ազգային զարթոնքն ու վերածնունդը հայկական նույնիսկ սակավաթիվ գաղթավայրերում նոր փուլ թևակոխեցին Հայաստանի անկախությունից հետո: «Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը,- գրում է «Հայրենիքի ձայն»-ը,- սկսած սեծովյան գաղթօջախներից, մեծ սպասելիքի ու վստահության դուռ է բացել նաև տասնամյակներով հայրենի եզերից հեռու գտնվող ներքին սփյուռքի հայ զանգվածների համար»:[11]

Այսպիսով, Հայրենիք-սփյուռք հարաբերություններում նոր փուլ նշանավորեց Հայաստանի Հանրապետության ծնունդը, որն ավելի կայուն ու գործնական դարձրեց այդ հարաբերությունները: Ազգային զարթոնքը, մեկ միասնական ազգ լինելու անհրաժեշտությունը համակեց բոլորին: Միայն հզոր Հայաստանի գոյությամբ իրեն ապահով կզգա և կբարգավաճի սփյուռքը, իսկ Հայաստանը ի դեմս սփյուռքի կունենա ամուր հենարան: Դա փոխպայմանավորված երևույթ է: 1990-ական թթ. սփյուռքահայ համայնքը, հայ անհատ բարերարները, բարեգործական կազմակերպությունները ու միությունները բավականին կառուցողական դեր խաղացին հայրենիք-սփյուռք հարաբերությունների բազմակողմանի զարգացման, հայության համախմբման և պահպանման գործում: Դա է հայության գոյատևման և հետագա բարգավաճման մայրուղին:

## *ОТНОШЕНИЯ РОДИНА—ДИАСПОРА В ОБЛАСТИ НАУКИ В 90-ЫХ ГОДАХ XX ВЕКА*

*Резюме* *Э. Минасян*

**На основе широкого круга источников, публикаций и других материалов дается анализ взаимоотношений Армении и Диаспоры.**

**Независимость РА имело двоякое влияние в сфере научного сотрудничества. В начале 90-ых, в результате тяжелейшего экономического кризиса, выехали многие ученые, что сыграло негативную роль в развитии науки в Армении. Со второй половины 90-ых ситуация начала стабилизироваться. Организуются научные конференции, симпозиумы и другие мероприятия, посвященные разным проблемам как развития науки в целом, так и механизмам взаимоотношений армянских ученых разных стран. В республике активно действуют многие организации из разных стран, что способствует восстановлению и развитию научного потенциала страны.**

[11] *«Հայրենիքի ձայն», 11 դեկտեմբերի, 1991:*

*Խաչիկ ԲԱԴԻԿՅԱՆ*

## *ԴԱՌԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱԳՈՐՈՒՅՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ*

1913 թվականի հոկտեմբերի 13-ը անմոռաց կմնա Պոլսի հայ, թուրք և օտարազգի բնակիչների հիշողության մեջ: Պոլիսը վաղուց այդպիսի խանդավառություն չէր տեսել: Թաքսիմի պարտեզում գտնվող Պըտի Շան թատրոնը լեփ-լեցուն էր, ինչպես ասում են՝ ասեղ գցելու տեղ չկար. նշվում էին Մեսրոպյան տառերի ստեղծման 1500 և հայ տպագրության գյուտի 400-ամյակների հոբելյանները: Հայ մտավորականությունը վաղուց էր նախապատրաստվել այդ տոնակատարությանը: Պոլիս էին ժամանել բազմաթիվ մտավորականներ տարբեր տեղերից: Հանդիսության գեղարվեստական մասը բարձր մակարդակով անցկացնելու համար Կոմիտասը հատուկ նախապատրաստել էր իր 300 հոգանոց «Գուսան» երգչախումբը և որպես մենակատար Փարիզից հրավիրել էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանի իր սան, Փարիզի Օպերայի մենակատար, «Տարոնի առյուծ» Արմենակ Շահմուրադյանին:

Պարտերում տեղեր էին զբաղեցրել Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Թեոդիկը, Ռուբեն Զարդարյանը, Տիրան Չրաքյանը, Կոստան Զարյանը, Բյուզանդ Քեչյանը, Հակոբ Սիրունին, Տիգրան Կամսարականը, Զապել Եսայանը, Միպիլը և էլի շատ ու շատ մտավորականներ ու հյուրեր: Օրվա բանախոսն էր Դանիել Վարուժանը, հանդիսության նախագահը՝ Կոմիտաս վարդապետը: Բոլորն էլ սրտի թրթիռով էին հետևում անցուդարձին. «Չլինի թե խանգարողներ լինեն, չլինի թե ձախողեն նախադեպը չունեցող ազգային այդ մեծ միջոցառումը. տեսած բան էր՝ Թուրքիայի մայրաքաղաքում՝ հենց թուրքերի քթի տակ, նշեին իրենց գրերի ստեղծման ու տպագրության արվեստի այդպիսի փառահեղ հոբելյան այն դեպքում, երբ իրենք՝ թուրքերը, չունեն իրենց սեփական այբուբենը, և այն հարմարեցված է օտար լեզուների գրերին»:

…Եվ ահա, ցուցադրաբար, առանց թիկնապահների, դահլիճ են մտնում Թալեաթ ու Ջեմալ փաշաները. նրանք համեստորեն բեմ չեն բարձրանում, նախագահական սեղանին չեն բազմում ու նստում են դահլիճում՝ հայ մտավորականների կողքին՝ ցույց տալով իրենց «սերը» հայերի նկատմամբ. «Ավելի լավ է տեր կանգնել ու մասնակցել այդ տոնակատարությանը՝ հայերի աչքերին թոզ փչելու համար»,- մտածել էին նրանք:

Սկսվում է տոնահանդեսը… ելույթներ, արտասանություններ, երգեր…

Վարուժանն իր ելույթն ավարտեց «Փա՜ռք Մեսրոպյան գրերուն, որոնցով հայը մնաց հայ, երկիրը՝ Հայաստան, փա՜ռք հայ գրքի տպագրությանը, որ աշխարհի չորս ծագերում սփռեց հայ միտքը» կարգախոսներով:

«Փա՜ռք, փա՜ռք» լսվեցին դահլիճից ու օթյակներից, և ամբողջ սրահը թնդաց բուռն ծափահարություններից, - վկայում է Հակոբ Սիրունին և ավելացնում,- դա շքեղ հոբելյան էր, որպիսին Պոլիսը չէր արձանագրած երբեք իր տարեգրության մեջ:

Նույնպիսի ծափողջյուններով ընդունվեցին Սիամանթոյի՝ հատուկ այդ օրվա համար գրած «Մեսրոպ Մաշտոց» երկարաշունչ բանաստեղծությունը և Կոմիտասի՝ «Ո՜վ մեծասքանչ դու լեզու» հրաշալի երգի իմաստալից բառերն ու քաղցրահունչ մեղեդին: 300 հոգանոց երգչախումբն ու Շահմուրադյանի զուլալ ու հզոր ձայնը նորից թնդացրին դահլիճը:

Ահա այս շքեղությունից ոգևորված՝ իրար հետևից բեմ են ելնում ու դիվանագիտական իրենց խոսքն են ասում Թալեաթն ու Ջեմալը: Հայերին ուղղակի զարմացրել էին երկու անգրագետ փաշաների ելույթները, բայց նրանց համար հաճելի էր լսել նույնիսկ թշնամու գովեստը, որը թեև անկեղծ չէր, բայց ազգի գիտության և ուժի վկայությունն էր: Ահա ավելի դիվանագետ ու կեղծավոր Ջեմալի խոսքը.

*«Այն ժողովուրդը, որ իր սեփական տառն ու մշակույթը չունի, չի տարբերվում վայրենի ազգերից, մինչդեռ հայն ահա իր առաջադիմական ոգու անհերքելի ապացույցն է պարզում աշխարհի առաջ: Յուրաքանչյուր օսմանցու խղճի պարտքն է՝ գնահատել քաղաքակրթության ասպարեզում հայի գրաված բարձր դիրքը, մանավանդ գեղարվեստի ու գրականության մեջ, կառավարությունը պարծենում է դրա համար…»:*

Ներկաների վկայությամբ անհամար բազմերանգ ծաղիկներ ծածկեցին բեմն ու համերգի մասնակիցներին, և դահլիճի չորս կողմերից սպիտակ աղավնիների երամը թևածեց ամբողջ սրահում՝ հիացմունք ու հրճվանք պատճառելով ներկաներին:

Այս փառահեղ հանդիսությունից երկու տարի հետո՝ 1915-ի մարտի կեսերին, երիտթուրքերը «Թյուրք-օջախ» փառահեղ սրահում նույնպիսի մեծ հանդես են կազմակերպում՝ այս անգամ նվիրված իրենց ինչ-որ փառատոնի: Հավաքվել էր թուրք մտավորականության ընտրանին, հրավիրված էին կառավարության անդամներ: «Սրահը ծայրեծայր լցված էր ընտիր բազմությամբ՝ գահաժառանգ իշխանը՝ քովը Թալեաթ պեյ, արքայազուն իշխաններ, ոսկեճերմակ համազգեստներով բարձրաստիճան սպաներ, շեյխ ու իսլամության ներկայացուցիչներ, փաքքոցավոր գիտնականներ և գրական դեմքեր», - գրում է հանդեսին հրավիրված բժիշկ Մանուկյանը:

Հանդեսի գեղարվեստական պահին բեմ են բարձրանում «Թյուրք-օջախի» նախագահ Համտուլլահ Սուպեհի բեյը և Կոմիտասը: Համտուլլահ բեյը, որ լավ հռետոր էր, բնիկ ակնեցի, նախ ներկայացնում է Կոմիտասին, խոսում նրա՝ իր ազգին անձնվիրաբար ծառայելու մասին, որը «հայ երգին ու հայ երաժշտությանը նոր թռիչք տված է՝ այն հասցնելով Եվրոպա ու մեծ պատիվ բերելով իր ազգին ու մշակույթին», որ ամենակարևորն է՝ թուրք հռետորը թուրքական կառավարության ընտրանու և հյուրերի առաջ խոստովանում է նաև *ճշմարտությունը՝ որքան էլ այն դառը լինի:* Եվ ներկայացնում է հայ ժողովրդին, թե նա ինչ է արել Օսմանյան կայսրության մեջ գիտության, մշակույթի, ճարտարապետության, տնտեսության, արհեստների, առևտրի զարգացման և ուրիշ բնագավառներում: Ահա նրա ելույթից մի հատված, որը սղագրել է երախտաշատ բժիշկ Հովհաննես Մանուկյանը.

*-Ճշմարտություն է, որքան ալ դառը ըլլա ան. պետք է խոստովանիլ, որ հայ ազգը դարերե ի վեր մեր մշակույթին մեջ իր հառաջատար մասնավոր տեղը ունեցած է: Թուրքեր որ կողմն ալ երթանք, Անատոլուի որ անկյունն ալ ըլլանք, հայ ստեղծագործ ձեռքը «հոս եմ» կսե: Օրինա՞կ կուզեք՝ Պոլսո սուլթանական պալատները մեյ-մեկ գլուխգործոցն են՝ հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներ են, դեպի երկինք բարձրացող մինարեթները, ուր ամեն օր մուեզզինը «Ալլահ էքպեր» կպոռա, շատերը հայ ստեղծագործ ձեռքերու մեյ-մեկ կոթողներ են, ձեր սիրելիներու տապանաքարերը, որոնք այնքան նրբություն ունեն, նորեն հայ վարպետներու գործեր են: Վանի նշանավոր, գեղանաշակ արծաթյա տուփերը, որ օտարականներու անգամ հիացում կազդեն՝ հայ ոսկերչության արտադրություններ են:*

*Բժշկական համալսարանի հիմնադիրները և գիտական գիրքերու առաջին հեղինակները նորեն հայեր եղած են: Թուրք թատրոնը իր գոյությունը հայերուն կպարտի»*:

Թուրքերի՝ հենց իրենց բերանով ասված՝ իրենց համար դառն ճշմարտությունների և բազմաթիվ փաստական տվյալների վկայությունների փաստարկումներով Հրաչյա Աճառյանը գրում է մի շատ արժեքավոր հոդված՝ «Հայոց դերը օսմանյան կայսրության մեջ», որտեղ կոնկրետ փաստերով, անուններով ու վկայություններով ցույց է տալիս, թե ինչ դեր են կատարել և ինչ ներդրումներ ունեն հայերը օսմանյան կայսրության քաղաքական, տնտեսական, մշակութային, ճարտարապետության, գիտական, արհեստավորական, առևտրական և կյանքի այլ բնագավառներում:

Հր. Աճառյանը գրում է, որ XIX դարում Պոլսում ապրող մեկ միլիոն ազգաբնակչության 400 հազարը հայեր էին: Հայերը կառուցել էին 42 եկեղեցիներ, 53 դպրոցներ, գրում է նաև, որ *Արքունի ճարտարապետությունը* պարտական է հայ ճարտարապետներին, որ Ա*րքունի բժշկական համալսարանը* հայերի ձեռքի գործն է, որ *փաստաբանության* մեջ էլ հայերը գերազանցեցին տաճիկներին, և ձայնագրությունն էլ տաճիկները հայերից սովորեցին, ու առաջին տաճկերեն լրագիրը նույնպես հայերը հիմնեցին: Հայ ձեռներեցները հիմնեցին թղթի, կաշվի, չուխայի, մետաքսի, չթի, վառոդի գործարանները… Թուրք ազգայնական տառերը շինողն ու ձևողը նաև տաճկական թղթադրամների հրատարակիչը եղավ Հովհաննես Այուհեճյանը: Արհեստների, երկրագործության և հատկապես առևտրական գործերում հայերը նույնպես անգերազանցելի էին: Տպավորիչ է Հր. Աճառյանի հետևյալ վկայությունը. «Հայերեն տառերը լրագրության միջոցով տաճիկ գիտական խավի մեջ տարածելով, փորձնականապես տեսան նրա սքանչելի պարզությունը և առավելությունը արաբական գրերի վրա, Ալի և Ֆուադ

փաշաները մտածել էին տաճկական հանելուկային գրերը թողնել և պաշտոնական գրեր ընդունել հայերենը (նույնիսկ երեսփոխական ժողովն էր հավանություն տվել այդ մտքին)… բայց ազգային փառասիրությունը չթողեց կատարել այն»:

Եվ ամենակարևորը, Աճառյանը շատ հանգամանորեն է խոսում այն մասին, թե ինչ դեր են կատարել հայերը օսմանյան կառավարության կազմում. «Որովհետև տաճկական փառասիրությունը չէր թողնում նախարարությունները ամբողջովին հայոց հանձնել, ուստի տաճկական կառավարությունը մտածեց ամեն նախարարի մոտ մի հայ դնել՝ իբրև խորհրդատու կամ օգնական (և նա բերում է թուրք բոլոր նախարարների ու նրանց հայ առաջին տեղակալների անունները՝ մեկ-մեկ):[1]

… Իսկ այս ամենը՝ հայ ստեղծագործ ժողովրդի քանքար, ինչպե՞ս գնահատեց դիվանագետ ու կեղծավոր, ստախոս ու արգահատելի, գազանից էլ ավելի գազան ու բարբարոս տաճիկը… Նրա պատասխանը եղավ 1915թ. ապրիլի 24-ի գիշերը, որը չունեցավ լուսաբաց մեկ և կես միլիոն արևմտահայության ու նրա սերուցքի՝ շուրջ 800 մտավորականների համար…

… Այդ մղձավանջային գիշերը եղկելի ենիչերիները զինված ներխուժեցին հայ մտավորականների բնակարանները, խլեցին Սիամանթոյի գրիչն ու պատառոտեցին նրա կիսատ մնացած բանաստեղծությունները, ծաղրուծանակով տներից գիշերազգեստով դուրս քշեցին Ռուբեն Սևակին ու Ռուբեն Զարդարյանին, հարվածներով ընդհատեցին Դանիել Վարուժանի մտորումները, կիսատ թողեցին բժիշկներ Ալլահվերդյանի ու Նազաշյանի վիրահատությունները ու հիվանդներին բուժելը … ներխուժեցին մոմի տակ աշխատող Կոմիտաս վարդապետի բնակարանը…, և նրա սրբազան թղթերը, ծվենների վերածված վիրավոր հավքի փետուրների նման թռթռալով օդի մեջ, շաղ եկան հատակին…

Տեսնելով տարիների իր տքնաջան աշխատանքը հոշոտող գիշատիչների արարքները՝ վարդապետը ձագուկներին թշնամուց պաշտպանող թխսկանի նման կրծքով փարվեց իր թղթերին, բայց օդի մեջ շարունակում էին թևածել հոգևոր ու ժողովրդական երգերի, «Անուշի», «Կարմիր Վարդանի» ու «Սասնա ծռերի» պարտիտուրների բզկտված էջերը: Պատառոտվող թղթերի ձայները մանկիկի տնքոցի պես խոցում էին վարդապետի վիրավոր սիրտը, բայց անկարող էր … «Իսկ ու՞ր է Աստված, ինչո՞ւ չի բռնում սրբությունները ոտնահարող դահճի ձեռքը… Իսկ ու՞ր մնացին մեկ ամիս առաջ «Թյուրք-օջախի» նախագահողի խոսքերն ու դառը խոստովանությունները,ահա թե ո՞րն է թուրքի ու նրա հռետորի խոսքի «ճշմարտությունը» և հայերին «գնահատելու» նրանց խոստումները»,- մտածում էր Կոմիտասը, երբ մյուս ոստիկանը հրացանի խզակոթով դուրս քշեց նրան՝ բարբաջելով.

- Գնա՛, գյավո՛ւր, գնա՛, ընկերներդ այնտեղ քեզ են սպասում, այնտեղ կմրմնջաս.

> Օ՜, անլուսաբաց գիշեր, զարհուրելի ու ահավոր գիշեր,
> Եղեռնի ու մղձավանջի գիշեր…
> Ահեղ գիշեր,
> Որ բորբ ներկվեց՝ ու արևով,
> Այլ մեր արյամբ,
> Ու կողոպտվեց խորանները հայ կաճառի,
> Խորանները հայ դպրության սուրբ տաճարի…

… Ու քայլում էին անապատի լռության միջով շղթայված նկարիչներ, իրավաբաններ, բանաստեղծներ, դերասաններ, բժիշկներ, ճարտարապետներ…մի ողջ ժողովուրդ՝ «գառնուկի պես անզեն ցեղ մը, որ օր կը հոշոտվի, մանուկի պես «տգետ» ցեղ մը, որ ոսման կարիքին է կարոտ, որբուկի պես անտեր ցեղ մը հուժկու, որ լուսեղ ու սրտաբուխ բարբառի մըն է ծարավ, թռչունի պես վիրավոր ցեղ մը, որ փոքրիկ վիրակապի մըն է կարոտ՝ իր թևերը նորեն բանալով՝ միջոցին պես արծվի պես սավառնելու համար» (Ռուբեն Սևակ):

Կամ, եթե Տերն անգամ անզոր էր, մի՞թէ աշխարհի մեծ տերությունները չէին կարող Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հետևյալ որոշումը կասեցնել. «Բնաջնջել այն բոլոր հայերին, որոնք բնակվում են Տաճկաստանում՝ առանց

---

[1] *Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Եր., 1999, էջ 13*:

ուշադրություն դարձնելու կանանց, երեխաների և հիվանդների. պետք է՝ որքան էլ բնաջնջման միջոցները ողբերգական լինեն, վերջ տալ նրանց գոյությանը՝ առանց ականջ կախելու խղճի զգացման»: Եվ մոլեգնած ու կատաղի արյունարբուն այս հրամանը կայացնում է ապրիլի 24-ից հետո՝ 1915թ. սեպտեմբերի 17- ին, այսինքն՝ շարունակել կոտորածն ու տեղահանությունը: Բավարարվելով դրանով, երիցս դահիճը մեկ նոր հրաման էլ արձակում է երկու ամիս հետո՝ նոյեմբերի 23-ին՝ «Գաղտնի միջոցներով բնաջինջ արեք Արևելյան նահանգների ամեն մեկ հայի, որ կգտնեք ձեր շրջաններում»: Նման կոչերով նա դեկտեմբերին դիմում է նաև Սիրիայի և Երուսաղեմի կառավարիչներին, որտեղ հանգրվանել էին տարագրված հայերը:

Բայց չէ՞ որ պատմությունն անողոք է բոլոր տեսակի իրադարձությունների նկատմամբ, և նրա հիշողությունից ոչինչ չի ջնջվում և այսօր՝ 90 տարի անց, աշխարհի բազմաթիվ երկրներ պետականորեն ճանաչել ու դատապարտում են հայոց ցեղասպանությունը՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ՝ որպես քուրք ոճրագործ պետության անջնջելի ու խայտառակ խարան:

Անազորույն եղեռնագործության կազմակերպիչները արժանիորեն պատուհասվեցին. Թալեաթը սպանվեց Բեռլինում 1921թ. մարտի 15-ին Սողոմոն Թեյլերյանի կողմից, իսկ Ջեմալին սպանեցին Ստեփան Ծաղիկյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը՝ նույն թվի հուլիսին: Էնվեր փաշան սպանվեց հայ զինվորական Հակոբ Մելքումյանի կողմից: Բայց...

Հայոց ցեղասպանության դատը շարունակվում է…

Մինչդեռ ոճրագործ ազգի ներկա սերունդը, որն իր բարբարոս նախնու իրավահաջորդն է, եղկելի կեցվածքով Եվրոմիության դռներն է թակում…

*Լաուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ*

## *ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ*

«Ես օխտը պորտով Գյումրեցի եմ, ու մեջս ինչ հունար կա, Գյումրվա հող ու ջրեն է: Ախր մեր էդ օրհնված քաղաքը խուդոժնիկ քաղաք է, ինտեղ առանց հունարի մարդ չես գտնի»:[1]

Ս. Դ. Մերկուրով

Ուշագրավ ու ինքնատիպ է մեծ քանդակագործ Ս. Դ. Մերկուրովի կյանքը: Այն հարուստ նյութ է տալիս ոչ միայն հայ ազգային մշակույթի մեջ նրա անձնական անգնահատելի ներդրման մասին, այլ նաև այն միջավայրի, որի ազդեցությունն իր ամբողջ ստեղծագործական կյանքում կրել է այդ տաղանդավոր գյումրեցին: Գյումրին միշտ է եղել արհեստների ու արվեստների քաղաք: Պոեզիան, երգն ու նվագը, թատրոնը, նկարչությունը քաղաքի կյանքի անբաժան մասն էին: Իսահակյանի բանաստեղծությունները, Շերամի երգերը, Արմեն և Նիկողայոս Տիգրանյանների երաժշտությունը հնչում էին ամենուր, և, անշուշտ, արհեստավորական քաղաքն ինքնատիպ կոլորիտով ու լեգենդներով չէր կարող իր դրոշմը չթողնել քանդակագործի անհատականության ձևավորման վրա: Դեռ մանուկ հասակից ազգային հարուստ աղբյուրներն էլ պետք է սնեին նկարչի ստեղծագործական ընկալումը: «Այստեղ երեխայի երևակայությունը թևավորվել է դարերի խորքից եկող բանահյուսությամբ, աշուղների ու գեղջուկների երգով, արվեստի ազնիվ հուշարձաններով»,-[2] իրավացիորեն նկատել է մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանը:

Այս անկրկնելի նկարագրի տեր քաղաքում է ծնվել և մեծացել ազգությամբ հույն, բայց «օխտը պորտով գյումրեցի» Ս. Մերկուրովը: Թեև կարճ ժամանակահատված է ապրել քանդակագործը Գյումրիում (1881-1902թթ.), սակայն կարողացել է իր հիշողության մեջ ամուր դաջել այդ «խուդոժնիկ» քաղաքի պատկերը, որը հետո սիրով ու խնամքով պիտի վերարտադրեր իր հուշագրության մեջ:

Ապրելով հայրենիքից հեռու՝ քանդակագործն իր սրտում միշտ պահել է հարազատ քաղաքի պատկերը: Նրա ու քաղաքի սերը փոխադարձ էր: Դրա վկայությունը 1947 թվականին իր մեծ վաստակի դիմաց նրան Լենինականի պատվավոր քաղաքացու կոչման շնորհումն էր և քաղաքի միակ նկարչական դպրոցը նրա անունով կոչելը: Այդ առիթով նկարչական դպրոցի տնօրեն Շանթ Սարգսյանը մեկնում է Մոսկվա: Անվանի քանդակագործը նրան ընդունում է Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանում, որի տնօրենն էր 1943 թվականից: Նրանց հանդիպումն անցնում է շատ ջերմ ու անկեղծ մթնոլորտում: Մերկուրովին հատկապես հուզում է դպրոցն իր անունով կոչելու որոշումը: Հատկանշական է, որ ամբողջ հանդիպման ընթացքում նա խոսել է հայերեն, այն էլ գյումրեցու բարբառով, չնայած այն բանին, որ Շանթն անթերի տիրապետում էր ռուսերենին:

Մենք համոզված ենք, որ քանդակագործի հիշողություններն իր սրտին այնքան մոտ ու հարազատ քաղաքի մասին հետաքրքրության կարժանանան ընթերցողների շրջանում: Դրանք հարուստ նյութ են XIX դարավերջի Գյումրու քաղաքային նիստուկացի, կենցաղավարության, ծիսակատարությունների, սովորույթների ու պատմական հուշարձանների մասին: Արվեստագետի ամենատես ու դիպուկ աչքից ոչինչ չի վրիպել, և շատ տարիներ անց նա ճշմարտացի ու անսխալ վերարտադրել է պատանեկության տարիներին իր պաշտելի Գյումրիում տեսածն ու ապրածը:

Հետաղետյան շրջանում, երբ ցավալիորեն անդեմ ու անորոշ է դարձել սեփական նկարագիր ունեցող քաղաքի երբեմնի ճարտարապետական պատկերը, ավելի են կարևորվում քանդակագործի հիշողությունները:

---

[1] *Ա ղ ա վ ն ի, Միշտ կանչող ձայներ, Սովետական գրող, Եր., 1983, էջ 183:*
[2] ***С. М е р к у р о в, Записки скульптора, М., 1953, стр. 6.***

Ստորև բերում ենք հատվածներ քանդակագործի հուշագրությունից, որտեղ առավել տեսանելի ու պատկերավոր են ներկայացված քաղաքի կոլորիտն ու ավանդույթները:

### Քարե հրեշտակները

Երաշտ է.

Փակ են խանութները, կրպակները, արհեստանոցները: Արհեստավորները՝ երկաթագործները, քարտաշները, հյուսները, ներկարարները, արծաթագործները, բոլորը մասնակցում են խաչով երթին: Տերտերներն ու վանականները, ոտքից գլուխ հանդերձավորված, տանում են տիրամոր հրաշագործ սրբապատկերը: Ամբոխի առջևից գնում են ձայնարկու կանայք:

Ամբողջ քաղաքը ոտքի վրա է:

Երկու ամիս է, ինչ անձրև չկա: Արևն այրում է: Փոշի է: Անտանելի տոթ…

Թափորը կանգնեց եկեղեցու մոտ: Խնկահոտը տարածվել է չորս կողմը: Ամբոխը տնքում է: Կատարվածին անտարբեր՝ եկեղեցու սև հսկայական զանգվածը ճնշում է հավաքվածներին:

Եկեղեցու պատերի տակ վարդի և խաղողի զարդանախշերով տապանաքարերն են: Նույնատիպ նախշեր են պատերի վրա: Վերևում իրար հոշոտող, պոչավոր, թևավոր առյուծներ են ու մողեսներ, իսկ ամենավերևում՝ մեծ պատուհանի երկու կողմերում, քարե մռայլ հրեշտակներն են: Նրանցից մեկը, ահազդու սուրը ձեռքին, ոտքը դրել է հանգուցյալի վրա, իսկ մյուս ձեռքով բռնել ճեղքված կրծքից նոր հոգին հանած մեղսագործ հանգուցյալի մազերից: Հոգեառ հրեշտակն է: Մեղավորին փրկություն չկա: Երկրորդ հրեշտակը թևածում է հանգուցյալի վերևում: Նրա ափի մեջ տրոփում է հանգուցյալի հոգին:

Պատերի վրա երկինքն ու գետինը միախառնվել են. ներքևում գերեզմաններ՝ քարե զարդաքանդակներով, վերևում՝ միմյանց հոշոտող գազաններ, իսկ ամենավերևում հրեշտակներն են և մի հուսալքող արձանագրություն. «Բոլորիս վերջը նույնն է. ամեն ինչ առաջացել է փոշուց, փոշու էլ կվերածվի: Օրհնված է քո պատժիչ աջը»:

Մայրս լաց է լինում: Ամբոխը տնքում է. անձրև է խնդրում: Բերում են մատաղացու ոչխար և մորթում եկեղեցու դռների մոտ և զոհաբերված կենդանու արյամբ ներկում եկեղեցու շեմը: Բացվում են մեծ դարպասները: Դուրս են բերում սրբապատկերը: Թանձր ծուխ է, զանգերի ղողանջ:

Աղոթողներից անջատվում է մի փոքրիկ տղա և սկսում պարել հոպակա: Զվարճալի է պարել զանգերի ղողանջի տակ: Վզակոթիս հասցված ապտակն ու զայրացած մորս կշտամբանքն ինձ սթափեցնում են: Ես չեմ հասկանում՝ ինչո՞ւ: Ախր զվարճալի է պարել զանգերի ղողանջի տակ: Եվ ինչո՞ւ է մայրս ինձ վախեցնում հրեշտակի դատաստանով: Երկար ժամանակ սև, մռայլ քարե հրեշտակը գիշերը երազում ահաբեկում էր ինձ, և ես քնից վեր էի թռչում սառը քրտինքի մեջ: Չէ՞ որ նա միայն պատժում էր մեծերին չհարգելու, պաս չպահելու կամ չարախոսելու համար: Այն ժամանակ ինձ համար դեռևս խորհրդավոր էին հնչում հորս խոսքերը, երբ եկեղեցու կողքով անցնելիս նրան հարց էի տալիս. «Մի՞շտ են հրեշտակներն առնում մարդու հոգին: Իսկ ինչո՞ւ բարեպաշտ լինել, եթե, այնուամենայնիվ, նրանք առնելու են մարդու հոգին»: Հայրս պատասխանում էր. «Ավելի լավ է լինել շուն, բայց կենդանի, քան թե սատկած առյուծ»:

Երբ մայրս պայուսակիս մեջ դրեց հաց ու պանրի մի մեծ կտոր, գրելու տախտակ, «**Русская речь**» գիրքը և «հրեշտակները քեզ պահապան» արցունքախառն խոսքերով ինձ ճանապարհեց դպրոց, ես անմիջապես պատկերացրի մռայլ քարե հրեշտակներին՝ սրով ու բուրվառով: Ինչպե՞ս կարողացավ մայրս ինձ դպրոց ճանապարհել նրանց հովանավորությամբ:

Ախր ես ոչնչով մեղավոր չէի:

Այդպես էլ իմ հիշողության մեջ մնացին երաշտը, տնքացող ամբոխը, մռայլ հրեշտակները, զանգերի ղողանջը:

Տարիներ անց նորից նույն զանգերի ծանր հարվածները, վանականների և հանդերձանքը, սրտակեղեք ողբը: Եկեղեցուց դուրս էին բերում մորս դագաղը: Թաղում էինք մորս:

Իմ գլխավերևում նորից նույն երկու մռայլ հրեշտակներն էին: Նրանց հովանավորությամբ էր, որ տարիներ առաջ գրքերով պայուսակը շալակիս՝ մայրս ինձ մտցրեց կյանք:[3]

1886թ. Ալեքսանդրապոլ

Վարդն ու բլբուլը

Հեղձուցիչ տոթ էր: Քաղաքի քառակուսի հրապարակում, ուռքերի տակ ձմերուկի կճեպներ էին: Օդը լցված էր դեղձի, սեխի, խնձորի բուրմունքով: Կրպակների դիմաց դարսված էին մրգերով լի զամբյուղները: Քաղցր խաղողի ողկույզների վրա պտտվող մեղուների բզզոցին միացել էին գնորդներ կանչող վաճառողների ձայները: Փողոցում տղեկները կավե կուլաներով սառը ջուր էին վաճառում:

Ամբոխի մեջ ձեռնափայտով ճանապարհ հարթելով՝ շարժվում էր մունետիկը. «Լսեցե՛ք, հարգելի՛ քաղաքացիք, հիմարնե՛ր, գյուղացի՛ք, լսեցե՛ք նաև դո՛ւք, ում ճարպոտ փորը քարշ է գալիս գետնին, և դո՛ւք, ում փորը քաղցից կպել է ողնաշարին...»:

Դանդաղ, ամբոխը ճեղքելով, գնում եմ նեղ, երկար փողոցով: Փողոցի երկայնքով միհարկանի տներ են՝ հողե երդիկներով: Անցնում եմ հյուսների շարքերի միջով: Նրանք աշխատում են բաց արհեստանոցներում: Առջևի պատը չկա. հենց այդտեղ էլ ցուցադրված են բազմագույն վարդերով, սոխակներով, նռներով ու խնձորներով նկարազարդ սնդուկները: Ծանոթ նախշազարդեր են: Ես դրանց արդեն հանդիպել եմ եկեղեցու տապանաքարերի ու պատերի վրա: Միայն թե սնդուկների վրա այդ նախշերը փայլփլում ու ճառագում են՝ արևի ճառագայթներից դառնալով ավելի խայտաբղետ:

Վարպետը դրսում՝ հենց մայթերի վրա, «կենդանացնում է» կոված նախշերը: Շարունակում եմ ճանապարհս: Անտանելի աղմուկ է: Երկաթագործները կարմիր պղնձից դաջում են տարբեր ձևերի ամանեղեն՝ սկահակներ ու ջրամաններ նամազի համար, սրճեփներ, հսկայական սիներ՝ փլավի ու տապակած ոչխարի համար: Մուրճի անընդմեջ հարվածները թափվում են պղնձի վրա: Օդը տնքում է աղմուկից:

Ներկարարները հսկայական պղնձե կաթսաների մեջ կտորեղեն են ներկում: Հետո ներկված կտորների վրա նկարում զարմանահրաշ գեղեցիկ ու բազմերանգ պատկերներ: Աշկերտները, նստած հողե հատակին, փուքս են փչում, իսկ վարպետ ոսկերիչները փոքրիկ վառարաններում՝ տիգելների մեջ, ոսկի ու արծաթ են հալում: Ոսկյա վզնոցները, զմրուխտյա մատանիները, փիրուզյա լանջազարդերը մարդու աչք են շոյում: Ռուսական ոսկին հարգի չէ: Լավ է գնում թուրքականը՝ մեջիդեն: Սրան հակառակ՝ դրամափոխների մոտ ընդունված են ռուսական ոսկեդրամները: Բոլորին հայտնի է, որ Պողոսը ոսկեդրամը իջեցնում է արքայաջրի մեջ, որ մի քիչ «նիհարի»: Դա նրա օգուտն է:

Ահա դասաբների շարքերը: Վաճառասեղանների վրա ոչխարի յուղոտ մսեղիքն է՝ դմակ, երիկամ, սիրտ ու թոք… հենց տեղում՝ փռերում, այս ամենը թավայի մեջ տապակվում է: Այրված յուղից օդը դառնում է խեղդող ու հեղձուցիչ:

Նեղ ճանապարհը շարունակվում է և հասնում մինչև քաղաքի ծայրը, որտեղ քաղաքային աղմուկից հեռու, գերեզմանոցի ծայրին աշխատում էին քարտաշները՝ իմ բարեկամները: Տուֆից գերեզմանաքարերի վրա նրանք հարթաքանդակներ և նախշեր էին անում: Անհիշելի ժամանակներից նույնն են արել նրանց պապերը, նախապապերը: Տոն օրերին, երբ նրանք հավաքվում էին դայֆախանայում ավագ վարպետները կապում էին սպիտակ, կարճ գոգնոցներ, իսկ գոտու տակ մտցնում փոքրիկ մուրճ ու բահ՝ «ցեխի վարպետի» խորհրդանիշները:

Այսօր էլ ես միանում եմ նրանց: Քար տաշելն իմ սիրած զբաղմունքն է: Արդեն մի քանի ամիս է՝ ես աշխատում եմ նրանց հետ: Քանդակում եմ բլբուլ: Վարպետը ինձ թույլատրել է. «Տես, որ քո բլբուլը չնմանվի պոչխաղուկի (թռչունի տեսակ): Պոչը կարճ արա: Այնպես աշխատի՛ր, որ վարդերը քո կտրիչի տակ բուրեն ավելի լավ, քան

---

[3] *С. М е р к у р о в, նշվ. աշխ., էջ 67-69:*

խսկականը, և բլբուլն իր երգով խսկականից հազար տարով ավել դիմավորի արևածագը և ուրախացնի հանգուցյալի հոգին: Լավ վարպետի ձեռքում քարը կենդանանում է, երգում, իսկ վատի ձեռքում՝ դառնում փոշի»:

Մայրամուտ է: Հեռվում Ալագյազի մանուշակագույն ձյունապատ գագաթն է ու Արարատի հազիվ նշմարվող գլխարկը: Մյուս կողմում՝ գիշերային մշուշում, Արփաչայ գետն է: Մուրճերի զարկերի ձայները դառնում են հազվադեպ: Շուտով նրանց կմիանան նաև աղով բեռնված ուղտերի քարավանների զանգակների ձայները:

Արդեն մութ է: Ծերունիների հետ վերադառնում եմ քաղաք: «Երբ մեծանաս, չքողնես մեր արհեստը. այդ ժամանակ էլ կստեղծես քո հոգեառ հրեշտակին: Նրանք մեր արհեստի գագաթներն են: Սպասի՛ր համբերությամբ և աշխատի՛ր: Եվ նրանք կհայտնվեն քեզ»:

Դրանք իմ առաջին գործնական դասերն էին:

1901-1902թթ. Ալեքսանդրապոլ:[4]

(բնագրի թարգմանությունը մերն է -Լ. Ա.)

## АЛЕКСАНДРОПОЛЬ В ВОСПОМИНАНИЯХ СКУЛЬПТОРА

**_____ *Резюме* _____** **_____ *Л. Атанесян* _____**

***Представляются ценные воспоминания выдающегося скульптора С. Меркурова о том,как на все последующее его творчество повлияли работы безымянных мастеров народного творчества, в первую очередь каменатесов,у которых он многому научился в родном городе Александрополе.***

[4] *С. Меркуров, նշվ. աշխ., էջ 72-74:*

*Լուսինե ԳԵՎՈՐԳՅԱՆ*

## *ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հայոց լեզվի բարբառների նկատմամբ գիտական հետաքրքրությունը հարյուրամյակների պատմություն ունի: Չնայած այն հսկայածավալ աշխատանքին, որ կատարվել է այդ ընթացքում նրանց ուսումնասիրության ուղղությամբ, դեռևս մեծ քանակությամբ բարբառագիտական նյութ կա քննության կարոտ:

Ստորև կփորձենք ներկայացնել Երազգավորս գյուղի խոսվածքի առանձնահատկությունները, որի հետ ընդհանուր շատ բան ունեն շրջակա գյուղերի խոսվածքները, և որը, գտնվելով Գյումրուն այնքան մոտ, զգալիորեն տարբերվում է մարզկենտրոնի խոսվածքից:

Գյուղը գտնվում է Գյումրուց 10կմ հեռավորության վրա և ի թիվս մարզի բազմաթիվ այլ գյուղերի խոսվածքի՝ նրա խոսվածքը ևս մեխանիկորեն ներգրավվել է *կը* ճյուղի Կարնո բարբառի շրջանակներում, որով խոսում է Գյումրին: Այսպես, Ա. Գրիգորյանը գրում է. «Կարինի բարբառը հայոց լեզվի խոշոր բարբառներից մեկն է: Այդ բարբառը կրողները տարածված են թե՛ մեր Միության տարբեր շրջաններում և թե՛ նրա սահմաններից դուրս: Բարբառի հիմնական կենտրոնը, սակայն, Լենինականն է՝ իր մոտիկ շրջաններով (Աղին, Արթիկ, Ախուրյան, Ղուկասյան)»:[1] Այնինչ, իրականում Շիրակի մարզի միայն սակավաթիվ գյուղական բնակավայրերում են խոսում *կը* ճյուղի բարբառով (Ոսկեհասկ, Հայկավան): Եվ, անշուշտ, իրավացի է Մ. Աբեղյանը, երբ նկատում է. «Շատ անգամ նույնիսկ հարևան տեղերի ու գյուղերի խոսվածքները տարբերվում են իրարուց թե՛ բառերի հնչյուններով ու նշանակությամբ և թե՛ ձևերով: Դրսից թեթև դիտողի համար այդպիսի խոսվածքները նույն բարբառն են կազմում, բայց իրենք տեղացիները շատ լավ են զանազանում իրենց լեզուները, և մասնագիտական ուսումնասիրությունը պարզում է դրանց տարբերությունները»:[2]

Պատմական Երազգավորսը (Շիրակավան) VII դարից հիշատակվում է որպես գյուղ, իսկ արդեն IX դարի կեսերից՝ գյուղաքաղաք: IX դարի վերջերին դարձել է Բագրատունիների թագավորանիստ և արքունի կալվածք: Այստեղ է Սմբատ Ա Բագրատունին (890-914թթ.) կառուցել Սբ. Փրկիչ եկեղեցին և օծվել նրանում: Ավելի ուշ կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Սելջուկ-թուրքերի 1064թ. արշավանքի ժամանակ Անիի հետ ավերվել է նաև Շիրակավան-Երազգավորսը: Թուրքական տիրապետության շրջանում այն վերածվել է գյուղի և կոչվել Բաշ-Շորագյալ, որը XIX դարի վերջերին ունեցել է 208 տուն (1601 հայ բնակիչ): Գյուղում գործել է Սահակյան վարժարանը, որը բացվել է 1877թ.: 1920թ. հայ – թուրքական պատերազմի ժամանակ բնակչությունը տեղահանվել է և հաստատվել Արևելյան Հայաստանում, հենց Բաշ – Շորագյալից մի քանի կիլոմետր հեռու գտնվող թուրքական Արալըխ գյուղում, որի թուրք բնակչությունն էլ տեղափոխվել և մինչև օրս էլ ապրում է Բաշ - Շորագյալում: Այժմ այս երկու բնակավայրերը գտնվում են Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի տարբեր կողմերում, Ախուրյան գետի հակադիր ափերին, Ախուրյանի ջրամբարի մոտ: Արալըխը 1945թ. անվանվել է Երազգավորս: Բացի Բաշ – Շորագյալի բնակիչներից, որոնց կոչել են եռլական (տեղացի) կամ շորագյըլցի (106 տուն), գյուղում բնակություն են հաստատել նաև Արտոնք գյուղից 110 տուն մշեցի գաղթականներ: Գյուղի տարեցները վկայում են, որ տեղացիների բարբառի վրա դա ոչ մի ազդեցություն չի թողել: Այնինչ ժամանակի ընթացքում կատարվել է հակառակը. մշեցիների անմիջական ժառանգներն իրենք են սկսել խոսել տեղական բարբառով, իսկ Մշո բարբառը մնացել է սոսկ որպես հիշողություն անցած - գնացածի ու նախնիների մասին: Օրինակ՝ տարեց մի կին՝ Մ. Սահակյանը, Մշո Արտոնք գյուղից գաղթած իր ծնողների մասին պատմելիս օգտագործում էր տեղացիների խոսվածքը և Մշո բարբառին էր անցնում միայն մոր խոսքերը հիշելիս, ինչպես՝ «*Մերըս պաղմըմ էր, թե ինչըխ էին հ՛իրանք արախչի գործ ըմ: Ըսըմ էր, թե ...*

---

[1] *Ա. Գ ր ի գ ո ր յ ա ն, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 333:*

[2] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, հ. Զ, Եր., 1974, էջ 47:*

Լառ, մըր էրգիր ջաէլնէր գըլխարկ չըն դըրէ, արախչի կը դընեին ուրանց գըլուխ. *Ես էլ հարցընըմ էի, թե արախչին ի՞նչ է, մա:*[3] Կդավից կը գործէին, հազար տեսակ նախշ կէնէին ուր վըրեն նըխշուն թելերով: Ըդ արախչին կը դընէին ուրանց գըլուխ, ֆաս լը կը փաթթէին ուրանց ճակտին»:

Այսօր գյուղի տարեցների հիշողություններում դեռևս պահպանվում է ծնողների բարբառը, բայց երիտասարդներն արդեն չգիտեն և չեն խոսում Մշո բարբառով:

Տեղական խոսվածքի հնչյունական համակարգը լրիվ համապատասխանում է Կարնո բարբառի (հատկապես Գյումրու խոսվածքի) հնչյունական համակարգին, ո-րում կա քառաստիճան բաղաձայնական համակարգ: Բացի պարզ և շնչեղ խուլերից ու ձայնեղներից՝ կան նաև շնչեղ ձայնեղներ (*բ,՛ գ՛, դ՛, ձ,՛ ջ՛*) և ձայնեղ *հ* (*հ՛*):

Գրական լեզվից տարբերությունները դրսևորվում են առաջին հերթին հնչյու-նափոխության մեջ: Օրինակ՝ *ա* - ն փոխվում է *ը* – ի (ըսել, հիվընդնալ, հասկընալ), *է* - ի (էնել), *ո* -ի (թոռմել): *Ե* - ն փոխվում է *ա* - ի (ախպեր), *է*-ի (էրնեկ), *հ՛*-ի/հ՛իրգուն, հ՛իրեք), *ը*-ի (ըդունգ), *է*-ն փոխվում է *ը*-ի (մըխ), *ի*-ի (լիզու): Ի-ն կարող է փոխվել ը-ի (ընձի): *Ո*-ն բառասկզբում արտասանվում է և *վո* (բառասկզբում՝ վող, վորփ), և *օ* (ոլըրել, ոխչար), և *ա* (արոճ), երբեմն էլ բառամիջում դառնում է *ու* /ծում ու պաս):

Երկհնչյունները որպես կանոն չեն պահպանվում, պարզվում են, ինչպես՝*այ-է* (հէր, մէր), *ույ-ու* (լուս), *յու-ու* (ձուն, ալուր): Ձայնավորասկիզբ բառերից առաջ արտա-սանվում է *հ՛*, ինչպես՝ *հ՛անձրև, հ՛արև, հ՛անգաջ, հ՛անգըջօղ* և այլն: Խուլ բաղաձայն-ների արտասանությունը բառամիջում ձայնեղացած է, ինչպես՝ *մղնել, կերագուր, վօդ, փէդ, պաբա, պադ, ուղել, հ՛ընգնել* և այլն:

Շնչեղ խուլերը սովորաբար բառասկզբում են շնչեղ արտասանվում, իսկ բառա-միջում և բառավերջում վերածվում են պարզ խուլերի: Օրինակ՝ *աթոռ - ատոռ, չափել – չապել, թաթ - թատ, մութ - մուտ*: Ձայնեղների խլացումը ավելի թույլ է դրսևորվում սովո-րաբար ձայնորդներից հետո: Օրինակ՝ *կարգին-կարկին, կարգադրել - կարկադրել, ջարդել-ջ՛արտել:* Բառերում նկատելի են և՛ առնմանության, և՛ տարնմանության, և՛ դրափոխության բազմազան երևույթներ. *շարժել - ժաժ տալ, թոնիր - թնդիր, դհոլ - դ՛ա-վուլ-դաբուլ, դատարկ - դ՛արդակ, շարֆ - ֆարշ, նախշած - նշխած, ականջ - հ՛անգանջ, կճեպ - կբեճ* և այլն:

Գյուղացիների բառապաշարում շատ են փոխառությունները, գերազանցապես թուրքերենից և ռուսերենից: Օրինակ՝ *յորղան (վերմակ), դոշակ (ներքնակ), փեշքիր (սրբիչ), ջիգյար (լյարդ, նաև՝ հոգի), յալանչի (ծաղրածու), քյանդր (պարան), քյանդր-բազ (լարախաղաց), չոտկ (խոզանակ), ստոլ (աթոռ), ուլից (փողոց), ցենտր (կենտրոն), դիվանի (բազմոց), զանավեսկա (վարագույր), գուպկա (սպունգ), տելեվիզոր (հեռուս-տացույց), բոչկա (տակառ)* և շատ այլ բառեր:

Գոյականների հոգնակին կազմվում է *եր, ներ, էք, ան, դիք, իք, անք, էնք, օնք* մասնիկներով, ընդ որում, շեշտազուրկ ձայնավորների ավելի հաճախական հնչյունա-փոխությամբ, օրինակ՝ *տընէր, աշխըրներ, ախպըրդիք, ամնիք, քեռանք, Պեդրոսէնք, պաբօնք* և այլն:

Կը ճյուղի բարբառի խոսվածքների նման, Երազգավորսի խոսվածքը ևս ներգո-յական հոլով չունի, և ներգոյության իմաստն արտահայտում է սեռականով և *մեջ* կա-պով, որը միշտ օգտագործվում է ը հոդի հետ՝ *գեղի մեջը, անտառի մեջը* և այլն: Հոլով-ման համակարգում կան նաև *կը* ճյուղի բարբառներին ոչ բնորոշ իրողություններ (հատկապես դերանունների հոլովման ժամանակ): Օրինակ՝ բացառական հոլովը կազմվում է ոչ թե *են* (ինչպես *կը* ճյուղի բարբառներում), այլ *ից* հոլովակերտով (ձուկ, ձ՛ըգից): Գրականի նման այստեղ ևս գոյականները ենթարկվում են *ի, ու, ան, ոջ, վա, ց, ա, ո* հոլովումների: Ընդ որում, հնչյունափոխության լայն հնարավորություն ունի նաև շեշտազրկված *ա*-ն, որը համարյա միշտ փոխվում է *ը*-ի, բացառությամբ հատուկ ա-նունների և միավանկ բառերի: Օրինակ՝ *սեղան-սեղնի, դ'անագ - դ'անգի, բայց՝ բարձ-բարձի, Արամ - Արամի, Աշտարակ - Աշտարակի* և այլն:

[3] *Հետաքրքիր է, որ մշեցու դուստրը մորը կանչում է ոչ թե նանե, այլ՝ մա:*

Ածականի բաղդատական աստիճանը թեև սովորաբար *h՛ավելի* բառով է կազմվում, սակայն երբեմն օգտագործվում է թուրքերեն *ջիլիզ* բառը (ջիլիզ մեծ, ջիլիզ բարձր), գերադրական աստիճանի կազմիչը *h՛ամենա* նախածանցն է:

Քանակական թվականներն են՝ *մեգ, էրգու, h'իրեք, չօրս, hինգ, վեց, յօթը, ութը, ինը, տասը, քսան, եռսուն, քառսուն, h'իցուն, վացուն, յոթանասուն, ութանասուն, իննսուն, հարուր* և այլն: Փոխանուն թվականները հոլովվում են հիմնականում այնպես, ինչպես գրական լեզվում, միայն թե շեշտազրկված ձայնավորը հաճախ փոխվում է *ը* – ի (*եռսուն - եռսընի*): Դասական թվականներից մի քանիսը ձևափոխված են (*h՛առաջի, եկրորդ*): Բաշխական թվականները *ական* ածանցով չեն կազմվում, այլ օգտագործվում են *էրգու - էրգու, h'իրեք – h'իրեք* կրկնավոր ձևերը:

Խոսվածքում օգտագործվող անձնական դերանուններն են *ես, դու, էնի, h'ինքը, մենք, դուք, ընդոնք, h'իրանք*: Ամենագործածական ցուցականներն են՝ *էսի, էդի, էնի, ըսպես, ըմբես, ըդպես, էս, էդ, էն, ըսքան, ըդքան, էնքան*: Հարցա-հարաբերական դերանուններն են *h՛ով, վորը, ինչ, ինչըղ, h՛ուր, h՛ուրդեղ, ինչքան, քանի*, որոշյալ դերանուններն են *h՛ամեն, h՛ամենքը, սաղը /բոլորը/, h՛ամեն մեգը, h՛ամեն մէ* և այլն, ժխտական դերանուններն են՝ *hէչ մեգը, hէչ մէ, hէչ բան, hէչ մարթ*:

Անձնական դերանունները հոլովվում են այսպես՝

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուղղ. | ես | դու | մենք | դուք | էնի | ընդոնք | h'ինքը | h'իրանք |
| Սեռ. | իմ | քու | մեր | ձեր | ընդոր | ընդոնց | h'իրան | h'իրանց |
| Տր. | ընձի | քեզի | մեզի | ձեզի | ընդոր | ընդոնց | h'իրան | h'իրանց |
| Հայց. | ընձի | քեզի | մեզի | ձեզի | ընդոր | ընդոնց | h'իրան | h'իրանց |
| Բաց. | ընձնից | քեզնից | մեզնից | ձեզնից | ընդորից | ընդոնցից | h'իրանից | h'իրանցից |
| Գործ. | ընձնով | քեզնով | մեզնով | ձեզնով | ընդորով | ընդոնցով | h'իրանով | h'իրանցով |

Ցուցական դերանունները հոլովվում են այսպես.

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուղղ. | էսի | ըսոնք | էդի | ըդոնք | էնի | ընդոնք | էս | էդ |
| Սեռ. | ըսոր | ըսոնց | ըդոր | ըդոնց | ընոր | ընդոնց | ըսուր | ըդուր |
| Տր. | ըսոր | ըսոնց | ըդոր | ըդոնց | ընոր | ընդոնց | ըսուր | ըդուր |
| Հայց. | ըսոր | ըսոնց | ըդոր | ըդոնց | ընոր | ընդոնց | ըսուր | ըդուր |
| Բաց. | ըսորից | ըսոնցից | ըդորից | ըդոնցից | ընորից | ընդոնցից | ըսուրից | ըդուրից |
| Գործ. | ըսորով | ըսոնցով | ըդորով | ըդոնցով | ընորով | ընդոնցով | ըսուրով | ըդուրով |

Հ՛ով հարաբերական դերանվան հոլովման հարացույցն այսպիսին է՝ ուղղ.- h’ով, սեռ.-h’ում, տր.-h’ում, hայց.-h’ում, բաց.-h’ումից, գործ.- h’ումով:

Մնացած հոլովվող դերանունները գայականական *ի* հոլովման են պատկանում *h՛ամեն մեգը, h՛ամեն մեգի* և այլն:

Անորոշ դերբայը խոսվածքում ունի *ել* և *ալ* վերջավորությունները: *Խոսել* բայն հանդես է գալիս լծորդության փոփոխությամբ՝ *խոսալ*, իբրև *գնալ* բայի անորոշ դերբայաձև օգտագործվում է *էրտալ*-ը, թեև անցյալ կատարյալն ունի *գնացի, գնացիր* և այլ, հրամայականը՝ *գնա*, վաղակատար դերբայը՝ *գնացել* ձևերը: Ենթակայական դերբայը կազմվում է *ող* մասնիկով, հարակատարը՝ *ած*-ով՝ *կայնած, խաղցած*: Համակատար դերբայը համարյա չի գործածվում: Այդ դերբայական իմաստն արտահայտվում է անորոշ դերբայի սեռական հոլովի և *վախտը* բառի օգնությամբ (*խոսալու վախտը, վազելու վախտը*) և ոչ թե՝ *խոսելիս կամ վազելիս:* Անկատար դերբայի կազմիչը *ըմ* մասնիկն է՝ *ըսըմ, էրտըմ, խաղըմ, վազըմ* և այլն: *Գալ, լալ, տալ* բայերի անկատարը խոսվածքում անկանոնություն չունի՝ *գալըմ, լալըմ տալըմ*: Վաղակատար դերբայը կազմվում է *ել, ացել* վերջավորություններով, և երբեմն շեշտազրկված *ա* -ն հնչյունափոխվում է *ը*-ի կամ սղվում է (խաղցել): Ապակատար դերբայի կազմությունը գրականից չի տարբերվում: Ժխտական դերբայը կազմվում է ա, ե վերջավորություններով՝ *գ՛նա, գ՛րե, ըսա, խաղա*:

Սահմանական եղանակի վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևերի դրական խոնարհման ժամանակ դերբայական *լ* վերջավորությունը սղվում է՝ *խոսացել եմ-չեմ խոսացե, գ՛րել էր-չէր գ՛րե* և այլն: Անցյալ կատարյալը, ինչպես գրական լեզվում, կազմվում է *եծի, եծիր, եծ, եծինք, եծիք, եծին, ածի, ածիր, ած, ածինք, ածիք, ածին, ա, ար, ավ, անկ, ակ, ան* վերջավորություններով (*ց* և *ք* շնչեղ խուլերը պարզ խուլ են արտասանվում): Միաժամանակ, ի տարբերություն գրական լեզվի, խոսվածքում միայն սոսկածանցավոր բայերը չէ, որ անցյալ կատարյալը կազմում են *ա, ար, ավ, անք, աք, ան* վերջավորություններով (ոչ թե *խաղացի*, այլ *խաղցա*): Քանի որ *խոսել* բայը հան-

դես է գալիս *խոսալ* ձևով, հետևաբար ունի *ա* լծորդության բայերի անցյալ կատարյալ (*խոսացի, խոսացիր* և այլն): *Ըսել (ասել)* բայն ունի ոչ թե անկանոն, այլ *ե* լծորդության բայերի կանոնավոր խոնարհում (*ըսեցի, ըսեցիր, ըսեց*), երբեմն նաև՝ *ըսի, ըսիր, ըսեց, ըսինք, ըսիք, ըսին:* Սահմանական ապառնին և անցյալի ապառնին խոսվածքում չեն գործածվում և փոխարինվում են հարկադրական եղանակի ձևերով:

Ըղձական եղանակը կազմվում է գրականի նման, երբեմն եզակի երրորդ դեմքում *ի*-ի փոխարեն *ե* վերջավորությամբ (*ըսեմ, ըսես, ըսե*): Ենթադրական եղանակը կազմվում է գրականի նման՝ *կը* եղանակիչով և ըղձական եղանակի բայաձևերով՝ *կըսեմ, կըսես, կըսե* և այլն: Հարկադրական եղանակը՝ *բ՛ըղի* եղանակիչով և ըղձականի բայաձևերով՝ *բ'ըղի ըսեմ* և այլն: Հրամայական եղանակը կազմվում է *ե, եք, ա, ացեք* վերջավորություններով՝ *գ՛րե, գ՛րեք, խաղա՛, խաղացե՛ք* և այլն:

Մակբայների, կապերի, շաղկապների և ձայնարկությունների տարբերությունները գրական լեզվից միայն արտասանական են, երբեմն էլ բարբառային ձևեր են օգտագործվում՝ *թեզ* (շուտ)*, քով* (մոտը) և այլն: Կապերի հետ երբեմն *ը* հոդն է օգտագործվում՝ *մեջը, հեղը* և այլն:

Ինչպես առհասարակ ժողովրդի լեզուն, Երազգավորսի խոսվածքն էլ հյութեղ է, պատկերավոր, լի սրամիտ առածներով, ասացվածքներով, համեմված յուրահատուկ բառերով ու արտահայտություններով, միմյանց տրվող ամենատարբեր դիպուկ ու պատկերավոր մականուններով՝ *Գ՛իդունին գ՛երի, անգեդին ոչ սիրելի: Դ՛ուզ խոսողի թասեն ծագ է: Ծուռը նըստինք, դ՛ուզը խոսանք: Սաղանի յեղի կըրունգն է: Չուղողի մալը ուղողին հալալ է: Գել Վաղո, Կոշ Վալոդ, Գորտ Մանուկ, Քեֆո Մուկուչ, Կոտոշ Աշիկ, Օձ խուզող Մանուկ* և այլն:

Ներկայացնենք մի նմուշ («Հ՛իրեք խրատ» հեքիաթը) Երազգավորսի խոսվածքից:

Մէ մարտըմ էրտըմ է աշխադէլու մէ մարտում մոդը: Գ՛ործը էն է էղնըմ, օր մէ ամնիմ տազը կըրազ է վառըմ, բայց տերը ըսըմ է, օր ամնի բերանը չըբանա: Ըդպես մէ տարիմ բ՛ըղի աշխատի: Մէ տարին համայրա անցնըմ է, էս մարտը էլ չի համպերըմ, ըսըմ է՝ հըլլը տեսնիմ, թե էդ ինչ է ըդօր մեջը: Ամնի բերանը բացըմ է, օր մէ քարըմ քըցած է ջրի մեջը, ջուրն էլ էպըմ է: Տարին օր լըրանըմ է, տերը գ՛ալըմ հարցընըմ է, թե՝ այ քար ջան, քու բերանդ հ՛օվ բացեց: Քարը թե՝ էս մարտը: Տերը ըսըմ է, օր ուրեմն մէ տարիմ էլ բ՛ըղի ծառայե, բայց էլի ամնի բերանը չըբ՛ըղի բանա: Էլի հըլը տարին չի լըրածե, էս մարտը էլի չի համպերըմ, ամնի բ՛երանը բ՛անըմ է, էլի տեսնըմ է, օր մէ քարըմ է էպըմ ջ՛ըրի մեջը: Տերը էլի գ՛ալըմ հարցընըմ է, հ՛իմանըմ է, օր բ՛երանը բացել է, էդ մարտը տարիմ էլ է մընըմ ծառայության մեջը: Բայց էս անկամ համպերըմ է, ամնի բ՛երանը չի բ՛անըմ: Տերն էլ օր հարցընըմ ու հ՛իմանըմ է, օր ամանի բերանը չի բացե, թողնըմ է, օր տուն էրտա: Հ՛իրեք օսկի է տալըմ էդ մարտուն ու էրգու բ՛ուխանկա հաց, ըսըմ է, օր էդ հ՛իրեք օսկով տուն կըհասնիս, բ՛ուխանկի մեզը ճամպին կուդես, մեզելն էլ տուն կըտանիս, կըկըղըրեք, կընգադ ու էրեխուդ հեդ կուդեք:

Էս մարտը յէլնըմ է, օր էրտա, տերը յէդ է կանճըմ, ըսըմ է՝ մէ օսկին յէդ տուր, ինչ օր կըտեսնիս, հէչ բան չըհարցընես: Էս մարտը յէլնըմ է, օր էրտա, տերը էլի յէդ է կանճըմ, ըսըմ է՝ մէ օսկին էլ տուր ու հ՛ուրդեղ օր կռիվ տեսնիս, հանգարծ մեջ չընգնիս: Էս մարտը էլի է յէլնըմ, օր էրտա, տերը էլի է յէդ կանճըմ: Մէ օսկին էլ է ձեռից առնըմ, ըսըմ է, թե ինչ օր տեսար, համպերություն կունենաս, չըվըռազնաս, դե հըմի գընա:

Էս մարտը էրտըմ է, էրտըմ, հ՛իրգունն օր հ՛ընգնըմ է, մե տանըմ է հասնըմ, խընտրըմ է, օր հ՛իրան թողան ըդեղ մնա էդ գիշերը: Տանտերը թողնըմ է: Էս մարտը տեսնըմ է, օր տան կնիգը շան տեղն է կաբած, շունն էլ տեղի վրա է քնած: Հ՛ուզըմ է, օր հարցնե, հիշըմ է էն մէ օսկին, օր տերը ձեռից առավ ու ըսավ, օր ինչ օր կըտեսնիս, չհարցընես: Ու չի հարցընըմ: Օր լուսանըմ է, էս տանտերը ըսըմ է, թե՝ այ ախպեր, էս հ՛ընչի չես հարցընըմ, թե հ՛ընչի է շունս կընգաս տեղը պառգած, իսկ կնիգս՝ շան տեղը կաբած: Էս մարտն էլ ըսըմ է, թե՝ այ ախպեր իմ ինչ գործըս է, դու, քու ընդանիքդ: Էս տանտերը ըսըմ է, թե՝ բ՛ախտըըտ բ՛երավ, օր չըհարցըրիր, հ՛օվ օր հարցըրել էր, սաղի գըլխըները կըդըրել էի: Կնիգս ընձի դավաջանել էր, հ՛ուզըմ էր, օր ճամպա ղըրգեր, օր ընձի սըբանեին, բայց շունըս չըթողավ: Էդօր համար էլ ըսպես եմ էրէ:

Էս մարտը հ՛իրա ճամպեն շարունազըմ է: Էրտըմ է, էրտըմ, տեսնըմ է, օր էրգու թայֆա կըռվըմ են: Հ՛ուզըմ է, օր բ՛արիշցնե, հիշըմ է, օր էն մէ օսկին էլ տերը ձեռից

առավ ու ըսավ, օր կռվի չխառնըրվիս: Ըղեղ մեգըմ հ՛ուզըմ է, օր բ՛արիշցնե, զարգըմ սըբանըմ են: Էրտըմ հասնըմ է տուն: Դ՛ուռը փագ է էղնըմ: Ելնըմ է երդիկը, նայըմ, տեսնըմ է, օր կնիգը ու մե ջաել տղամարտըմ հ՛իրար հեղ հանաք են էնըմ: Հ՛ուզըմ է, օր զարգե սըբանե ըդօր: Հանգարծ հիշըմ է, օր էն վերջի օսկին էլ տերը ձեռից առավ ու ըսավ, օր ինչ օր տեսար, համպերություն կունենաս, չըվըռազնաս: Էս էլ նես է մըղնըմ ու հ՛իմանըմ է, օր էդի հ՛իրա տղեն է: Ուրխընըմ են, նըստըմ են, օր հաց ուդեն: Էդ մարտը ըսըմ է, թե աշխադաձս հ՛իրեք խրադ էր ու էրգու բուխանկա հաց: Մեգը ճամպին եմ կերե, մեգն էլ բ՛երել եմ, օր հ՛իրար հեղ ուդենք: Հացը կըդըրըմ են, օր մեջը լիկը օսկի է: Ուրխընըմ են, աշխըրով մեգ են էղնըմ:[4]

## ОСОБЕННОСТИ ГОВОРА СЕЛА ЕРАЗГАВОРС


***___ Резюме ___*** ***___ Л. Геворгян ___***

**В общих чертах представлены диалектные особенности звуковой системы, словарного состава, склонения существительных и местоимений, форм прилагательных, числительных и причастий, также спряжения глаголов в говоре села Еразгаворс.**


---

[4] *Պատմեց Ս. Մխիթարյանը՝ 80 տարեկան, Երազգավորսի բնակիչ, պատմության ուսուցիչ: Գրի առավ Լ. Գևորգյանը 2002 թ.:*

*Լիլյա ՎԱՐԴԱՆՅԱՆ*

# *ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹՐԵՆԻՆԳԻ ՆՊԱՏԱԿ*

Վերջին շրջանում արտերկրում լայն տարածում գտած արդյունավետ մեթոդներ և ուղղություններ են կիրառվում նաև մեզանում, որոնցից է սոցիալական հոգեբանության գործնական մեթոդներից մեկը՝ սոցիալ - հոգեբանական թրենինգը (վարժեցում):

*Սոցիալ - հոգեբանական թրենինգն ամփոփում է մասնակիցների որոշակի ունակությունների ու վարքի համակարգված ձևերի վարժեցումն ու կատարելագործումը:*

Տարբերակում ենք գործարար հաղորդակցման, վաճառքի (իրացման), պերցեպտիվ, վարքային, զգայունակության, դերային թրենինգներ, վիդեոթրենինգ և այլն: Սոցիալ-հոգեբանական թրենինգի ժամանակ ամեն ինչ կատարվում է հատուկ տարածաժամանակային կտրվածքով. ձևավորվում է որոշակի ստեղծագործական մթնոլորտ, ինչպես նաև դրսևորվում է պատրաստակամություն, որպեսզի մասնակիցը դուրս գա սովորականի շրջանակներից և գործի ոչ կաղապարային ձևով: Սոցիալ-հոգեբանական թրենինգն այսօր լուծում է մի շարք խնդիրներ՝ կիրառվելով տարբեր ոլորտներում:

Հանգամանալից անդրադառնանք *արդյունավետ հաղորդակցմանը:* Թեև բոլոր մարդիկ իրենց կյանքի ընթացքում շփման և գործուն հաղորդակցման դժվարություններ ունեն, սակայն գրեթե ոչ որ ուշադրություն չի դարձնում միջանձնային շփման, հաղորդակցման, հարաբերությունների ներդաշնակ կառուցման օրինաչափություններին: Ըստ էության, անձը շարունակական կարիք ունի իր միկրոմիջավայրում (ընտանիք, աշխատանք և այլն) բարելավելու փոխհարաբերությունները:

Ըստ Օ. Մասլյաևի՝ հաղորդակցումը սուբյեկտի համար վարքի յուրօրինակ դրսևորում է: Անհատի վարքի յուրաքանչյուր դրսևորում ընդունված է պայմանականորեն բաժանել չորս փուլի՝ փոխուղղվածության, փոխարտացոլման, փոխտեղեկացվածության, փոխանջատման:[1]

Հաղորդակցումը՝ ինչպես մարդկային ակտիվության յուրաքանչյուր ոլորտ, ունի մի քանի օրինաչափություններ: Տարբերում ենք մարդկանց՝ միմյանց ընկալելու երեք էֆեկտներ.

1. *Արծվի էֆեկտ,* ըստ որի՝ ընդհանուր բարենպաստ տպավորությունները հանգեցնում են դրական գնահատականի, նույնիսկ եթե անհայտ են ընկալվողի հատկանիշները, և հակառակը՝ ընդհանուր անբարենպաստ տպավորությունները՝ բացասականի:
2. *Նորույթի և առաջնայնության էֆեկտի* համաձայն, երբ ծանոթանում ենք անծանոթի հետ, գերակշռում է նախնական տեղեկությունը: Օրինակ՝ եթե հայտնենք, թե այս մարդը նախկինում խախտել է աշխատանքային կարգուկանոնը, և հետո ավելացնենք, թե նա լավագույն աշխատող է, ապա գերիշխողը կլինի առաջինը: Իսկ ծանոթ մարդուն ընկալելիս գործում է նորույթի էֆեկտը, այսինքն՝ գերիշխող է վերջին տեղեկությունը:
3. *Կաղապարայնության էֆեկտի* համաձայն՝ հաճախ մարդիկ հաշվի են առնում մարդու խմբային պատկանելությունը (հաշվապահ,մանկավարժ,զինվորական և այլն):
4. *Իլյուստրացիոն էֆեկտ:* Պաուլ Ուիլսոնը փորձերով ապացուցել է, որ արտաքին ցուցանիշները (օրինակ՝ հասակը) կողմնակի մարդկանց աչքում ոչ միշտ է համապատասխանում իրականությանը:[2]

Արդյունավետ հաղորդակցման հասնելու համար առաջարկում ենք դիմել սոցիալ - հոգեբանական թրենինգի մեթոդին, որի առավելությունն այն է, որ խմբի յուրաքանչյուր անդամ հայտնում է իր դժվարությունները և միաժամանակ առաջարկում լուծումներ այլ անդամների ունեցած խնդիրների վերաբերյալ: Հիմնական գաղափարը հետևյալն է՝ եթե մեկը կարող է ինչ-որ բան անել արդյունավետորեն, արագ և որակով, կա նաև այնպիսի միջոց, որով մյուսը կարող է դրանք սովորել: Այդպիսի միջոց է հաջողակ հաղորդակցման մոդելը, որն առաջարկում ենք կիրառել սոցիալ - հոգեբանական

---

*[1] О. М а с л я е в, Психология человека, Д.: "Сталкер", 1998, стр. 369.*

*[2] Նույն տեղում, էջ 378:*

թրենինգի մեջ: Նշված մոդելը կառուցելիս Ռիչարդ Բենդլերը և Ջոն Գրինդերը ուսումնասիրել են բազմաթիվ հաջողակ վաճառականների, քաղաքագետների և այլ մասնագիտության մարդկանց, որոնք, հաջող հաղորդակցման շնորհիվ, հասել են իրենց նպատակներին: Նրանց բոլորին հատուկ են որոշակի ընդհանուր հոգեբանական հատկորոշումներ, որոնք էլ նպաստել են հաղորդակցմանը:

Ստորև ներկայացնում ենք սոցիալ - հոգեբանական թրենինգ, որի նպատակն է հասնել *արդյունավետ հաղորդակցման*:

Թրենինգի սկզբում բոլոր մասնակիցներին առաջարկում ենք «Ինչպե՞ս եք հաղորդակցվում» թեստը:

Առաջարկված 16 հարցին մասնակիցները պետք է պատասխանեն «Այո» (2 միավոր), «Ոչ» (0 միավոր), «Երբեմն» (1 միավոր):

1. Դուք սպասում եք սովորական գործարար հանդիպման. այդ սպասումը Ձեզ հավասարակշռությունից հանու՞մ է: 2. Դուք հետաձգո՞ւմ եք բժշկին այցելել մինչև այն պահը, երբ այլևս չեք դիմանում ցավին: 3. Որևէ միջոցառման ժամանակ զեկույցով հանդես գալը Ձեզ խուճապ ու դժգոհություն պատճառու՞մ է: 4. Ձեզ առաջարկում են գործուղման մեկնել մի վայր, ուր Դուք երբևէ չեք եղել: Արդյոք կհրաժարվե՞ք այդ գործուղումից: 5. Սիրու՞մ եք Ձեր ապրումները հաղորդակից դարձնել առաջին պատահածին: 6. Դուք բարկանու՞մ եք, երբ անծանոթ մարդը Ձեզ խնդրում է ցույց տալ ճանապարհը, ասել ժամը և էլի ինչ-որ հարցերի պատասխանել: 7. Դուք հավատու՞մ եք, որ գոյություն ունի «հայրեր և որդիներ» հիմնախնդիրը, և տարբեր սերնդի մարդկանց դժվար է միմյանց հասկանալը: 8. Դուք ամաչու՞մ եք Ձեր ծանոթին հիշեցնել, որ նա մոռացել է վերադարձնել մի քանի ամիս առաջ պարտք վերցրած գումարը: 9. Ռեստորանում մատուցել են ակնհայտ վատորակ ուտեստ: Դուք կլռե՞ք՝ միայն պնակը բարկությամբ մի կողմ հրելով: 10. Մենակ մնալով անծանոթ մարդու հետ՝ Դուք առաջինը կզրուցե՞ք նրա հետ, թե՞ կնեղվեք եթե նա առաջինը խոսի:11. Ձեզ սարսափեցնու՞մ են երկար հերթերը: Դուք կգերադասե՞ք հրաժարվել Ձեր մտադրությունից, թե՞ կանգնել վերջում և սպասել: 12. Դուք վախենու՞մ եք առճակատման իրավիճակներ քննարկող որևէ հանձնաժողովում ընդգրկվելուց: 13.Դուք ունե՞ք գրականության, արվեստի ստեղծագործության գնահատման խիստ անհատական չափանիշներ և ուրիշ կարծիք ընդունո՞ւմ եք: 14. Լսելով ակներև սխալ տեսակետ Ձեզ հայտնի հարցի մասին՝ գերադասու՞մ եք լռել և չբանավիճել:15. Սրտնեղու՞մ եք, երբ որևէ մեկը Ձեզ խնդրում է խորհուրդ տալ այս կամ այն հարցի շուրջ: 16. Ձեր տեսակետը նախընտրում եք գրավո՞ր շարադրել, թե՞ բանավոր:

Այնուհետև հաշվում ենք միավորները.

30-32 միավոր: Դուք ակնհայտորեն հաղորդակցվող չեք, և դրանից ամենաշատը Դուք եք տառապում, թեև դա Ձեր մտերիմների համար էլ հեշտ չէ: Ձեզ վրա դժվար է հույս դնել այն գործի առումով, որը խմբային ջանքեր է պահանջում: Աշխատե՛ք լինել շփվող, վերահսկե՛ք Ձեզ:

25-29 միավոր: Դուք ինքնամփոփ եք, սակավախոս, գերադասում եք մենակությունը, դրա համար էլ հավանաբար քիչ ընկերներ ունեք: Նոր շփումներն ու ծանոթությունները Ձեզ հանում են հավասարակշռությունից: Դուք գիտեք Ձեր բնավորության այդ յուրահատկությունը և դժգոհում եք Ձեզնից: Միայն դժգոհությամբ մի՛ սահմանափակվեք. Դուք կարող եք հաղթահարել այն: Պետք է միայն փորձել:

19-24 միավոր: Դուք բավական մարդամոտ եք և անծանոթ միջավայրում Ձեզ ինքնավստահ եք զգում: Նոր հիմնախնդիրները Ձեզ չեն վախեցնում: Բայց և այնպես նոր մարդկանց հետ դժվարությամբ եք մտերմանում, և դժկամությամբ եք մասնակցում բանավեճերին: Ձեր արտահայտություններում երբեմն շատ է անհիմն ծաղրը: Այդ թերությունները կարելի է շտկել:

14-18 միավոր: Դուք կանոնավոր հաղորդակցվելու ունակություն ունեք, հետաքրքրասեր եք, սիրով լսում եք զրուցակցին, հաղորդակցվելիս համբերատար եք, պաշտպանում եք Ձեր տեսակետը: Միաժամանակ չեք սիրում աղմկոտ շրջապատ, անսովոր արարքներ, շատախոսություն:

9-13 միավոր: Դուք հաղորդակցվող եք, հետաքրքրասեր, զրուցասեր, սիրում եք խոսել տարբեր հարցերի մասին: Հաճույքով ծանոթանում եք նոր մարդկանց հետ, սի-

րում եք լինել ուշադրության կենտրոնում: Ոչ մեկի խնդրանքը չեք մերժում, թեպետ ոչ միշտ եք դրանք կատարում: Դուք բավարար տոկունություն, համբերություն և խիզախություն չունեք լուրջ հիմնահարցեր լուծելիս: Սակայն ցանկության դեպքում Ձեզ ստիպում եք չնահանջել:

4-8 միավոր: Դուք շատ մարդամոտ եք, միշտ տեղյակ եք ամեն ինչից, սիրում եք վիճաբանել, չնայած լուրջ թեմաները գլխացավանք և մելամաղձություն են առաջացնում: Ցանկացած խնդիր Ձեզ վրա եք վերցնում, ձեռք եք զգում ամեն մի գործի, թեպետ ոչ միշտ եք կարողանում այն հաջող ավարտել: Այդ պատճառով էլ ղեկավարները և գործընկերները Ձեզ վերաբերվում են որոշակի երկյուղով ու կասկածանքով: Խորհրդածեք այդ փաստերի շուրջ:

0-3 միավոր: Ձեր հաղորդակցվելու ունակությունը հիվանդագին բնույթ է կրում: Դուք շատախոս եք, ասող-խոսող, խառնվում եք Ձեզ չվերաբերող գործերին:

Այս թեստի արդյունքների հաշվառմամբ կպարզենք, թե յուրաքանչյուր մասնակից իր հավաքած միավորներով ինչպես է բնութագրվում իբրև անձ, որոնք են նրա հաղորդակցման դժվարությունները: Սա յուրատեսակ «առաջին ծանոթություն» է թրենինգի ամեն մի մասնակցի հետ: Այս թեստը կարելի է օգտագործել նաև կողմնորոշվելու համար, թե տվյալ խմբի որ անդամին նախընտրելի կլինի ընդգրկել թրենինգի մեջ: Կարելի է նաև որոշել, թե որ մասնակցի համար ով ավելի լավ խոսակից կլինի:

Թրենինգի հետագա ընթացքը բաժանում ենք 5 փուլի: Յուրաքանչյուր փուլին հատկացնում ենք մեկ օր:

I փուլ – Խմբի 8 անդամներին առաջարկում ենք ընտրել իրենց խոսակցին՝ առաջարկելով զրույցի թեման: Առաջին խոսողին լսելով՝ խոսակիցը պետք է փորձի մանրամասնորեն կրկնօրինակել նրան, ուշադրություն դարձնել նրա գլխի դիրքին (բարձրացրած կամ խոնարհած), ոտքերին (մեկը մյուսի վրա ձգված կամ հանգիստ դրված): Ընդ որում՝ դիրքը այնպես պետք է կրկնօրինակել, որ խոսակցին չթվա, թե իրեն ծաղրում են: Եթե ամեն ինչ ճիշտ է արվում, ապա մասնակիցները կզգան համակրանք զրուցակցի հանդեպ՝ հասնելով փոխըմբռնման: Փոփոխվել զրուցակցին համընթաց: Հարմարվել զրուցակցի խոսքի տեմպին, այսինքն՝ եթե զրուցակիցը սկսում է խոսել դանդաղ, պետք է նրան պատասխանել դանդաղ: Օգտագործել այն բառերը, որոնք առավել շատ է գործածում զրուցակիցը (տեսնում եմ, լսում եմ, զգում եմ և այլն): Ստուգել՝ ձեռք բերվե՞լ են արդյոք փոխադարձ ըմբռնում և վստահություն: Եթե փոխըմբռնումը ձեռք բերված չէ, ուրեմն ինչ-որ բան բաց է թողնվել: Պետք է վերադառնալ ելման կետին և ամեն ինչ ուշադիր կրկնել: Եթե հասել եք լիակատար փոխըմբռնման, ստիճանաբար պետք է անցնել հաղորդակցվելիս Ձեր ունեցած սովորական վիճակին: Եթե ամեն ինչ ճիշտ է, կզգաք, որ հիմա էլ զրուցակիցը կձգտի կրկնել Ձեր շարժումները:

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, դեմքի և մարմնի շարժումներով կարելի է արտահայտել մոտ 700.000 տարբեր ժեստեր: Սա հսկայական թիվ է՝ համեմատած մեր խոսակցական լեզվի առօրյա 8 -10 հազարանոց բառարանի հետ:[3]

II փուլ - Այս փուլում ուշադրություն ենք դարձնում ձայնին: Առավել վստահելի հարաբերությունների համար կարևոր է զրուցակցի ձայնին հարմարվելը: Այդ կարելի է կատարել պարաֆրազի (հարասություն) օգնությամբ՝ այսինքն՝ զրուցակցի ասածից հետո Դուք նրան պետք է ասեք. «Որքան հասկացա՝ Դուք ուզում եք ասել, որ…» և հետո կրկնեք նրա ասածը: Դա զգալի առավելություն է. նախ՝ զրուցակիցը կզգա, որ Դուք իրեն ուշադիր եք լսում, երկրորդ՝ եթե նա ասել է ոչ այն, ինչ կուզենար, կճշտի իր խոսքը: Սակայն չի կարելի այս մեթոդը շատ կիրառել:

III փուլ - Պետք է կարողանալ հարմարվել զրուցակցի ձայնի տեմբրին և ռիթմին: Եթե կարողանաք փոփոխել Ձեր ձայնը՝ նմանեցնելով զրուցակցի ձայնին, արդյունքը երկար սպասել չի տա:

Ժեստերը նույնպես չափազանց կարևոր են հաղորդակցման ընթացքում: Ինչպես նշել է Ջուլիուս Ֆաստը. «Եթե մենք հասկանանք խոսողի միայն բառերը, ապա կունենանք այնքան խեղաթյուրված ըմբռնում, որքան միայն մարմնի լեզուն հասկա-

[3] *R a c h e l G. R e g l a n d, Invitation to Psychology, Burt Saxon, USA, Illinois, 1981, Scott Foresman and Company, p. 382-383.*

նալու դեպքում»:[4] Այսինքն՝ ժեստերը պետք է փորձել հասկանալ միայն խոսքի ենթատեքստում, իրար հետ փոխկապակցված: Պետք է նշել, սակայն, որ շատ հաճախ այս երկուսը հակասում են միմյանց, երբ խոսողն ուզում է կշտամբել կամ ծաղրել: Այս դեպքերում ավելի անկեղծ ու արժանահավատ են ժեստերը, որոնք, հիմնված լինելով ենթագիտակցության վրա, դժվարությամբ են կեղծվում: Ուրեմն, պետք է փորձել առաջին հերթին անկեղծ բարյացակամություն ցուցաբերել խոսակցի հանդեպ,որն էլ շփման ընթացքում փոխհատուցվում է՝ ի սկզբանե կառուցելով վստահելի փոխհարաբերություն:

IV փուլ – Խմբին առաջարկում ենք հարց. «Ի՞նչն է Ձեզ դուր գալիս որոշ մարդկանց ձայնի մեջ»: Ընդունելով պատասխանները՝ նրանց առաջարկում ենք. ա) փորձել իրենց ձայնը՝ սկսած կտրուկ, կտրատվող բառերից մինչև երգեցիկ խոսք, բ) ուշադրություն դարձնել ժեստերին: Ինչպե՞ս են դրանք արտացոլում բառերը: Որքա՞ն համաչափ են ժեստերը խոսքի հետ: Ինչպե՞ս են դրանք ազդում խոսակցի վրա: Նշում ենք, որ հաճախ ափերը վեր պարզած կամ խոսակցին ուղղված ժեստերը ենթագիտակցորեն հանգստություն են առաջացնում:

Մասնակիցները թրենինգի ընթացքում պետք է կարողանան շատ ուշադիր հետևել միմյանց խոսքին, ժեստերին, ձայնին, միմիկային, շարժումներին թրենինգի բոլոր օրերի ընթացքում: Խորհուրդ ենք տալիս հեռուստացույցով հետևել այն մարդկանց վարքին, որոնք համակրանք են առաջացնում:

V փուլ – Թրենինգի վերջին օրը տրամադրում ենք գործնական աշխատանքներին, որոնք անցկացվում են խաղերի և վարժությունների միջոցով: Օրինակ՝ յուրաքանչյուրին առաջարկում ենք պատմել մի համառոտ մտացածին պատմություն (օգտագործելով նոր հմտությունները)՝ հնարավորինս հետաքրքիր: Խումբը կփորձի գնահատել արդյունքը:

Վերջում խմբին կարելի է տալ հարցաթերթիկ, որով կպարզենք, թե յուրաքանչյուր մասնակցի համար տվյալ թրենինգը ինչ չափով օգտակար, ուսանելի և գնահատելի եղավ:

## ЭФФЕКТИВНАЯ КОММУНИКАЦИЯ КАК ЦЕЛЬ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ТРЕНИНГА

__ *Резюме* __ __*Л. Варданян*__

**В последнее время в социальной психологии широко распространились некоторые новые методы. В статье представлен один из них-*социально-психологический тренинг (СПТ),* который сегодня используется в различных сферах с целью решения многих социально-психологических вопросов. Показываются те пути, с помощью которых метод может помочь людям в их каждодневном и официальном общении, сделав последние более эффективными. Представлена эффективная модель человеческих взаимоотношений - тренинг с 5 этапов и на каждом этапе - новая ступень в искусстве успешной коммуникации.**

[4] *R a c h e l G. R e g l a n d, նշվ. աշխ., էջ 385:*

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. Գրաբարի շարադասությունը (Վդ.). *«Գիտություն» հրատ., Երևան, 2005, 254 էջ:*

Ժամանակակից հայոց լեզվաբանական ու քերականագիտական ուսումնասիրություններում հայոց լեզվի պատմության կարևոր հարցերին հետևողականորեն անդրադառնալու և գիտական արժեքավոր հետազոտություններ կատարելու իրողությունն անշուշտ արժանի է դրվատանքի:

Բացարձակ ճշմարտություն է նաև գրաբարի քերականական կառուցվածքի բազմաթիվ հարցերի հանգամանորեն հետազոտված լինելու և գիտական շրջանառության մեջ դրվելու իրողությունը, և հասկանալի է, որ այն չի կարելի համարել սպառիչ կամ ավարտուն, ընդհակառակն, համոզված ենք, որ դրանով միայն խոր հիմքեր են նետվել հետագա ուսումնասիրությունները շարունակելու համար:

Արդի հայերենագիտության չափազանց կարևոր խնդիրներից մեկն էլ հենց հին հայերենի պակաս ուսումնասիրված կամ չուսումնասիրված հարցերի հետազոտությունն է: Այս առումով խիստ անհրաժեշտ  ու այժմեական է Սերգո Հայրապետյանի *«Գրաբարի շարադասությունը (Վդար)»* ուսումնասիրությունը: Հեղինակը հայ քերականագիտության վերջին տասնամյակների ուսումնասիրություններում հայտնի դարձավ արդի հայերենի, հայոց լեզվի պատմությանը, հատկապես գրաբարին վերաբերող ուսումնասիրություններով ու գիտական հոդվածներով: Այս անգամ նա ուսումնասիրության նյութ է դարձրել գրաբարի շարահյուսության մի մասնավոր իրողություն՝ *շարադասությունը:* Իսկ այն առավել մասնավորելով ու որոշակի դարձնելով՝ քննում է պարզ նախադասության շարադասությունը, ինչպես ընդգծում է հեղինակը. *«... պարզ նախադասությունը՝ իր երկկազմ (լրիվ, թերի, համառոտ, ընդարձակ) և միակազմ կառուցվածքային տարբերակներով»* (էջ 5):

Ընտրյալ թեման հեղինակի համար «խամ ու անմշակ անդաստան» չէ. գրքի ներածության բաժնում նա իրավացիորեն նշում է, որ գրաբարի շարադասության տարբեր հարցեր մի շարք հեղինակների կողմից (Գ. Ջահուկյան, Հ. Ավետիսյան, Ռ. Հովհաննիսյան, Վ. Քոսյան, Վ. Համբարձումյան, Էդ. Մկրտչյան, Մ. Մինասյան, Թ. Շահվերդյան, Գ. Խաչատրյան) քննության նյութ են դարձել: Ուստի հեղինակի առջև կարևոր խնդիր է ծառանում. արժևորելով և օգտագործելով գրաբարի շարադասությանը վերաբերող ուսումնասիրությունները՝ *նորովի քննել* այն, քանի որ գրաբարի շարահյուսության համակարգում «*շարադասության հիմնահարցը հստակեցման և համակարգված ուսումնասիրության կարիք ունի*» (էջ 6):

Հեղինակի մեթոդաբանությունը ձևավորված է ներածության բաժնում և առաջին գլխում, որն էլ հնարավորություն է ընձեռում հաջորդաբար քննել թեմային վերաբերող գլխավոր հարցերը: Այդ հիմնահարցերն ուսումնասիրության ելակետեր են, հետևապես մեկնաբանվում և հաստատվում են փաստերով: Դրանք են՝ ա. *Նախադասության շարադասական բաղադրիչներ,* որպիսիք են «ոչ միայն միակազմ կառույցի գերադաս անդամն ու երկկազմ նախադասության գլխավոր անդամները, այլև կրավորական կառույցի ներգործման խնդիրը, անցողական կառույցի տարատեսակներում նաև բուն և հետևանքի ուղիղ խնդիրները» (էջ 27): բ. *Շարադասության գործառույթ.* «շարադասությունը ոչ միայն ծառայում է նախադասության քերականական անդամատմանը, այլև երբեմն դառնում է դրա միակ շարահյուսական միջոցը» (էջ 34): գ. *Շարադասություն և հնչերանգ.*  տրամաբանական կամ մտքի շեշտը հնչերանգի բաղադրամասերից է, ուստի կարևոր է նրանց փոխհարաբերությունների հաշվառումը: 4. *Ուղիղ և շրջուն շարադասություն.* ուղիղ շարադասությունը շարադասական միավորի «քերականորեն ամենանպատակահարմար դիրքն է», իսկ շրջումը սոսկ ինվերսիա չէ. այն կապվում է նաև նախադասության միավորի «քերականական դիրքի» (ոչ թե բառի շարահյուսական գործառույթով որոշվող դիրքի) հետ, դրսևորելով «միայն այն փոփոխությունները, որոնք նախադասությամբ հաղորդվող մտքին տալիս են լրացուցիչ իմաստային կամ արտահայտչական նրբերանգներ» (էջ 41): ե. *Շարադասական կաղապարներ.* հիմքում Գ. Ջահուկյանի բնորոշումն է. «Կաղապարը ոչ այլ ինչ է, եթե ոչ խոսքի մեջ հնարավոր շարակարգային հարաբերությունների սխեման», ըստ որի՝ հեղինակը նախադասության շարադասության կաղապարումը կատարում է նրա միավորների՝ մասնագիտա-

կան գրականության մեջ ընդունված տառային անվանումներով՝ P – ստորոգյալ, S - ենթակա, O – խնդիր, A - պարագա, նաև որոշ միավորների լեզվաբանական եզրույթների կրճատ ձևերով, ինչպես՝ «Կոչ.»՝ կոչական, «Ձայն.»՝ ձայնարկություն և այլն (էջ 42): Առանձնակի քննութագրման է արժանանում գոյականական բառակապակցությունը, որը նախադասության շարադասական կաղապարման ժամանակ դիտվում է իբրև շարադասական մեկ բաղադրիչ և առավելապես կարևորվում է գոյականական բառակապակցության ձևավորման տեսակետից, մինչդեռ ենթական, ստորոգյալը, ստորոգյալի խումբը և այլն (կոչ., ձայն.) գծային հաջորդականության փոփոխություններով հաճախ կարևորվում են նախադասության կառուցվածքի ձևավորման առումով և իրենց տեղաշարժերով զորու են առաջացնելու շարադասական այլ բաղադրիչների վերադասավորումներ:

Սրան հաջորդում են հետևյալ հարցադրումները. ինչի՞ց սկսել և ի՞նչ հերթականությամբ իրացնել գրաբարի պարզ նախադասության շարադասության վերլուծությունը: Պատասխանն արդարացի է. «նպատակահարմար է նման ուսումնասիրության ելակետ ընտրել երկկազմ լրիվ նախադասությունը» (էջ 44)՝ ենթակայի և ստորոգյալի դիրքափոխական լայն հնարավորություններով, այն դեպքում, երբ ենթակայի կամ նրա խմբի զեղչումը վիճակագրության համաձայն կրկնակի մեծացնում է նախադասության սկզբում ստորոգյալի հայտնվելու հավանականությունը կամ ստորոգյալի լրիվ զեղչմամբ թերի նախադասություններում ենթակա-խնդիր կամ ենթակա -պարագա հաջորդականությունը վեր է ածվում բացարձակ գերակշռող շարադասական տարբերակի:

Գրաբարի պարզ նախադասության շարադասության առանձնահատկությունների քննության ամենաարդյունավետ եղանակը կաղապարային քննություն է, որն էլ իրավացիորեն գործադրվում է աշխատանքում:

Երկրորդ գլխում ներկայացված են պատմողական նախադասությունների շարադասական կաղապարները՝ ըստ ներգործական, կրավորական, և չեզոք կառուցվածքի նախադասությունների:

Ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասություններում շարադասական հիմնաբաղադրիչների՝ ենթակայի, ներգործական կամ կրավորական սեռի բայ-ստորոգյալի և սեռի խնդրի պարտադիր առկայության դեպքում գործում են վեցական շարադասական կաղապարներ՝ S→P→O, S→P→O, P→S→O, P→O→S, O→P→S, O→S→P: Սրանք քննութագրվում են ամենայն մանրամասնությամբ, նաև որոշվում է յուրաքանչյուր կաղապարի գործառական հաճախականությունը գրաբար բնագրերում, պարզվում են հիմնաբաղադրիչների շարադասական բազմաթիվ առանձնահատկություններ: Օրինակ, նկատվում է, որ դիտարկված 820 դերանուն ենթակաների 85%-ը նախադասության մեջ սկզբնային կամ ստորոգյալին նախորդող դիրք ունի, մինչդեռ առաջադաս է գոյական ենթակաների 42-44 %-ը միայն: Անդրադառնալով թեք հոլովներով ենթականեր ունեցող կառույցներին՝ Ս. Հայրապետյանը ճիշտ է նկատում, որ դրանք սեռային երկփեղկվածությունից խուսափելու արդյունք են և շարադասական - կաղապարային բազմապիսի դրսևորումներ ունեն: Հարուստ և համոզիչ վկայություններով հաստատվում են նաև գրաբարի չեզոք կառույցների շարադասական-կաղապարային երկու տարբերակներում (S→P և P→S): հիմնաբաղադրիչների փոխդասավորության մանրամասները, որոնցում դրսևորվում են այդ միավորների զեղչման, ընդգծման, ընդմիջարկման և քերականական ու իմաստային հարաբերություններին առնչվող շարադասական առանձնահատկությունները:

Երրորդ գլուխը վերաբերում է քնության խնդրով կամ պարագայով գրաբարյան կառույցների շարադասությանը: Այստեղ նույնպես ուսումնասիրության հիմքում ընկած են պատմողական նախադասությունները: Մանրամասն քննութագրվում են հանգման, անջատման, միջոցի, վերաբերության, միասնության և այլ անուղղակի խնդիրներով, տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, պատճառի, նպատակի, հիմունքի, պայմանի պարագաներով շարադասական կաղապարները: Սրանց քննությանը վերաբերող եզրակացություններում հեղինակն իրավացիորեն ընդգծում է շարահյուսական նվազագույն կառույցի՝ բայական բառակապակցության շրջանակներից դուրս գալու և հարցը նախադասության շրջանակներում քննելու անհրաժեշտությունը՝ քնության

խնդիրներն ու պարագաները դիտելով իբրև նախադասության շարադասական բաղադրիչներ (էջ 135):

Մենագրության մեջ առաջին անգամ քննության առարկա են դարձել գրաբարի հատուկ (հրամայական, հարցական և բացականչական) հնչերանգով նախադասությունների շարադասական կաղապարները, որոնք աչքի են ընկնում ոչ միայն հնչերանգային, բաղադրիչների խոսքիմասային առանձնահատկություններով, մասնավորաբար սպասարկու բառերի յուրահատուկ գործածությամբ, այլև իրենց բավականին ինքնատիպ շարադասական կաղապարավորմամբ:

Հինգերորդ գլուխը հակիրճ է, վերաբերում է միակազմ նախադասությունների շարադասական կաղապարների քննությանը: Ունենալով միակազմ նախադասությունների ուսումնասիրության հենքը (գրաբարի միակազմ նախադասությունները հետազոտել է Գ. Խաչատրյանը) ՝ Ս. Հայրապետյանը հանգամանորեն կանգ է առնում անվանական, բայական անդեմ և եղանակիչ միադիմի բայով կառույցների շարադասական դրսևորումների վրա:

Գրքի ամփոփման բաժինը բաղկացած է 14 կետերից, որոնցում գիտական պատշաճությամբ տրվում է քննարկված հարցերի բովանդակությունը. դրանք ստույգ եզրակացություններ են, որոնք բխում են տեսական հարցերի ինքնուրույն և թարգմանական գրականության բնագրային հարուստ փաստերով ու վիճակագրական հաշվառումներով կատարված հիմնավորումներից, որոնց ծանոթանալն իսկ կարող է անմիջական տպավորություն առաջացնել բարձր մակարդակով իրագործված սույն հետազոտության և նրա հեղինակի վերաբերյալ:

Գրքում նաև տեղ գտած մասնակի թերություններն ու տեխնիկական բնույթի մի քանի վրիպակները բոլորովին չեն ստվերում գրախոսվող աշխատանքի գիտական արժանիքները, որի պարագայում գիտական խոր համոզվածությամբ հավելում ենք:

Գրաբարի պարզ նախադասության շարադասության քննությունը կատարված է մասնագիտական խոր իմացությամբ ու ճշմարիտ մեկնաբանություններով, և արդյունքում արձանագրվել են նյութին վերաբերող գիտական համոզիչ բնութագրումներ ու եզրակացություններ:

Գիրքն ունի գործնական որոշակի արժեք. բնագրային հարուստ օրինակները, վիճակագրական հաշվարկները, շարադասական միավորների կաղապարման տվյալները և այլն գիտական շրջանառության մեջ են դրվում և չափազանց օգտակար են հայոց լեզվի պատմությամբ զբաղվողների, բանասեր ուսանողների համար:

Աշխատանքը՝ որպես գրաբարի պարզ նախադասության շարադասության մանրակրկիտ և ամբողջական հետազոտություն, հույժ անհրաժեշտ և օգտագործելի է նաև գրաբարի շարահյուսության ամբողջական ուսումնասիրության առումով: Ավարտենք մեր խոսքը. «Գրաբարի շարադասությունը (Vդար)» մենագրությունը հաջողված ուսումնասիրություն է, որը՝ որպես դոկտորական ատենախոսություն, միաժամանակ արժանացել է Հր. Աճառյանի անվ. լեզվաբանության ինստիտուտի գիտական ատիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի ամենաբարձր գնահատականին:

ԷԴ. ՄԿՐՏՉՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հայոց լեզվի ամբիոն

# SUMMARY

*L. Eganyan.* METS SEPASAR EARLY BRONZE AGE SETTLEMENT. In 1998 in North of Ashotsk plateau at the top of mountain Mets Sepasar there was found a multi-layer settlement. Later on in 2004-2005 it was excavated. Under the floor of the Middle Age settlement there lay saved remainders of walls and floor belonging to a settlement dating back to early bronze age period. Many pieces of pottery, tools made of stone and bone and osteological material. The typicalness of potter's manufacture of Mets Sepasar is ceramics: pots, vases, jugs, ovens and oven supports. The characteristic features of ceramics found in Mets Sepasar are: linear geometric ornament's presence; prevalence of ceramics with black and red color; vessels with black and red lining.

The investigation of the finds and its pecularities showed that the material found is synchronous with material found in the Early Bronze Age settlements of Shengavit, Jrahovit, Elar, Karnut, Arich, Kosichoter and others dating back to 26-24/22 centuries BC. The unexpected and valuable finds of Mets Sepasar open a new page in the investigation of Kur-Araks culture.

*A. Khachatrian, L. Eganian.* VII - VI C. BC. NECROPOLIS EXCAVATIONS IN THE VILLAGE OF KARMRAKAR. In 2005 while the investigating the territory of the village of Karmrakar, Shirak Marz, the archeologists of the Shirak Regional Museum A. Khachatrian and L. Eganian found a half-destroyed necropolis. The land works made the necropolis become ruined. In 1989 for the construction purposes there were digged large holes (20 x 20 meter). Little by little the edges of the holes got destroyed and it was possible to see the large stone chambers of the necropolis. From one of the chambers one could see remains of a skeleton, a bronze bracelet and pieces of ceramics. To save the rest of the material there were organized excavations. During the excavations we found a chamber having the following dimensions: 2.4x1.6x1.5 meters. In the chamber there was a female skeleton and a few teeth of a child. Accompanied material includes pottery, tools and jewelry. The investigation of the finds showed that the necropolis of Karmrakar according to certain characteristics can be synchronized with the material belonging to Iron Ages - VIII - VII C. B.C.

*S. Petrosyan.* THE CHIEF GOD-TRIAD OF THE EARLY URARTU PANTHEON. Before the religious reform, carried by King Ishpuini (825-810BC), the state pantheon in Urartu was headed by another god-triad. It consisted of the God of the Sun ($^{D}$UTU//$^{D}$Šiuni), the God of Thunder ($^{D}$U//$^{D}$IM$^{D}$ Teišeba) and the goddess Mother the Great. On a bronze plate from the collection of Boudin (Geneva) the God of the Sun is shown sitting on a throne and before him the God of Thunder, the goddess Mother the Great and 2 human figures are representrd in a praying.

*L. Petrosyan.* ARTAVAN (ARDOATES)-THE KING OF ARMENIA. Arshak, the legendary king of Armenia, mentioned by Anonym in "The Primary History of Armenia" is identical to Valarshak, mentioned by Movses Khorenatsy. They are collective images, whose prototypes were different historical rulers of Armenia, including the historical name of Yervand (Oront), the founder of the II Yervandite dynasty, who ruled over the last decades of the $4^{th}$ c.BC and Ardoates who became the king After Yervand, (the I half of the $3^{rd}$ c. BC) and who is identical to Artavan in Anonym's "The Primary History of Armenia".

*A. Gasparyan.* REFLECTION OF SOCIO-POLITICAL LIFE IN THE WORKS OF THE ARMENIAN HISTORIOGRAPHS OF $17^{TH}$–$18^{TH}$ CENTURIES. The Armenian Historiographs of the $17^{th}$ – $18^{th}$ fully realized the importance of recent events taking place in the social and political life which in their turn determined the development of Armenian Historiography. Most of the authors were participants and eye-witnesses of the above mentioned events and presented reliable information. All this determine the peculiarities of Armenian Historiography which has its well-deserved place in the World Historiography.

*K. Aleksanyan.* THE TURKISH POLICY CONCERNING THE USE OF THE LOCAL AUTHORITATIVE BODIES IN THE PROVINCE OF ALEXANDRAPOL FROM 1918 TO 1921. The policy of the Turks in the province of Alexandrapol in the years 1918-1921, being the direct continuation of the policy of extermination of the Western Armenians had its own peculiarities. Taking into account the international political situation, the Turks maintained a more careful and sly policy here, to legalize their actions, they used the local structures of power. Conquering the province of Alexandrapol in 1918 the Turks preserved the local bodies through which they robbed the population by different "lawful" methods. They collected taxes regularly and the property of the Armenians, who left the province, was considered to be the property of the State Treasury. This policy manifested itself on a large scale in the period of the occupation of the province of Alexandrapol in 1920. In order to prove in practice that their advance was brought about by the interests of Soviet

Russia, the Turks declared Soviet Authority there. The created Power Bodies were recognized to degree they were necessary for the Turks to realize their intentions.

*R. Nahapetyan. DESVRIPTION OF ARMENIAN FAMILY-MATRIMONIAL TRADITIONS IN THE WORKS OF KH. ABOVYAN* Khachatur Abovyan is known as the founder of New Armenian Literature, as a graet Enlightenment thinker and an expert in pedagogical science. However his ethnological heritage hasn't been studied properly and has definitely been underestimated. It should be stated that his ethnological studies played a great role in establishing Armenian ethnological science. The present article gives a full coverage of the descriptions pertaining to customs and rituals. The writer's observant comments on the Armenian traditions and customs give the complete view of sound relationships, Armenian families as well as traditions of if his time.

*K. Bazeyan.* THE URBAN DAYLIFE IN THE NOVEL OF M. ARMEN, HEGHANAR FOUNTAIN. In this article the novel "Heghnar Fountain " is discussed as a national source.
All the sides of daily life and art of Alexandrapole are represented in the novel, but in the article we examine all the ethnic relations between all the classes and different grades of the town.

*A. Boyajyan.* SOME QUESTIONS OF SOCIAL AND ECONOMIC DEVELOPMENT OF SHIRAK REGION. Social and economic development of Shirak Region and its role in the common economic complex of the region depend on a series of complex measures. The article deals with some settlement facts concerning one of the Armenian regions: the population number, the aging tendency of the population, migratory movement, the problem of small settlement and others.

*T. Shakhverdyan.* TRANSPOSITION OF NEGATIVE AND AFFIRMATIVE SENTENCES IN CLASSICAL GRABAR. In the present article the peculiarities of transpositions of the affirmative and negative sentences in classical ancient Armenian are discussed. As it's known, in the process of transposition the language unit is used in the function of opposite member in the paradigmatic structure, as a result of which it acquires additional emotional- expressive overtones. In comparison to affirmative sentences their negative syntactic synonyms have greater linguostylistic impact. That's why for the expression of negative syntactic meanings affirmative linguostylistic units are often used. In the article the main types of transpositions of negative and affirmative sentences and the problems of correlation of their contextual and nominative meanings in ancient Armenian language are also discussed.

*A. Harutyunyan.* MORPHOLOGICAL POLISEMY OF ROOT WORDS IN GRABAR WITH THE MEANING OF ADJECTIVE AND ADVERB. Synchronous analysis of grabar vocabulary structure (content) shows that at that period of the language there is a certain layer of root words which reveal morphological polisemy. Separate part of that layer contains morphological meanings of adjective and adverb. Such words in this article are analyzed with internal groupings. The following semantic groups are distinguished, which reveal: a) attribute of quality, b) attribute of degree, c) attribute of sense, d) attribute of measure (time, area, weight), e) characterizing attribute. As the statistics shows, in the split meanings of such words the meaning of attribute of the subject and speech part meaning of the adjective predominate.

*A. Hairapetyan,* THE BORROWINGS IN FRIK'S POETRY. An attempt is made to present the borrowings in the language of Frik's fables (poetry). Frik is a famous Armenian medieval writer /fable-writer. We have studied the subject-matter from the grammatical point of view and the point of view of word formation taking into consideration the fact that Frik's vocabulary is full of colloquial words and expressions (especially Persian and European borrowings) of definite regions. The language research has given a more precise definition of the place where Frik lived and wrote. We hold for certain that it is not Cilicia/Kilikia, but Armenia.

*S. Melkonyan.* ON THE LANGUAGE OF GH.AGHAYAN. The influence of the literary of the "Hyusisapail" is quite perceptible in the first published work by G.Agayan (1862). In the novel "Haroutune and Manvel"(1867) the influence of the "Hyusisapail" is not only overcome, moreover the dialectal language of Kh. Abovyan is traced. In the article the author states the idea, that the fact that already in 1865 G.Agayan was aware of M. Nalbandyan's new view concerning the treatment of modern literary language, i.e. long before it was published in 1890, played a considerable role in the formation of the language creating orientation of G.Aghayan.

*K. Sahakyan.* THE LANGUAGE OF DREAM-TEXT RETELLING. The examination of the ethno-psychological consequences of disasters is a complex and deep problem. The study of disaster psychology calls for scientific-theoretical and practical solutions, interpretations and fundamental presumptions that concern not only the national understanding of the phenomenon, but also the activities of social and spiritual rehabilitation in great masses of the population of post-earthquake region. Considering the psychological interpretation of the egistered dreams (around 1000 dreams) we

have found out that, the latter are not merely the expressions of the psychological condition, prediction and feelings of the inner stances of a suffered person, but they clearly reflect the folk imaginations, the forms of folk mentality, the peculiarities of ethnological culture, ritual, customs and habits. The aim of the study allowed us to discuss dream processes from the point of view of folk imagination. Our starting point is the folk conception of the dream, the interpretations given by the vast majority of the population.

*H. Stepanyan,* N.TIGRANIAN'S PRINCIPLES OF ADAPTING MOUGHAM. The moughams popular in the ashug and sazandar musical art of Alexandrapol have taken an important place in the creative work of the Armenian composer N.Tigranian at the end of the XIX century. These were piano arrangements followed by arrangements for European chamber orchestras. The latter are significant in the modern musical art not only for the unique musical thought but also are an important source of scholarly research into the art of moughams.

*H. Apinyan,* PECULIARITIES OF ASHUGS POETRY IN IGIT'S SONGS. One of this remarkable traits of ashugh' art is a special metrics. The kinds of metrics, technical methods and the rules, which are developing during the centuries, have become old, lest their meaning and gradually got out of use. Ashugh Igit, the singer of the new time, treats the rules of metrics and compositons more fluently. Some traits of traditional metrics in ashugh' s songs are considered in the article.

*K. Avdalyan.* THE POSITIVE EVOLUTION OF NATIONAL STYLE IN THE 20$^{TH}$ CENTURY ARMENIAN MUSIC. National style develops with certain objective laws. In Armenian music of the 20$^{th}$ century we notice such display of stylistic variety as neostylization or multistylization which appears from different styles. We can speak about dynamic relations between mono- neo- and poly-stylization.This phenomenon gives the Armenian composers a good chance to take part in the world-wide historico-musical processes.

*N. Karapetyan.* THE PSYCHOLOGY OF THE PROVINCE IN THE NOVEL RUBEN ZARDARYAN. The article contains the provincial panorama of western Armenia at the end of the 19$^{th}$ and the beginning of the 20$^{th}$ centuries. One of the representatives of the "Provincial" literary movements., Ruben Zardaryan taking the Western Armenian province, which was suppressed under despotism (tyranny), as source for an artistic work, explains the artistic reproduction of the life of the province sometimes through sweet memories and sometimes through bitter realistic accentuation. The above-mentioned study of the images and the stories that are included in the article are interesting because of the author's distinctive approach to the national habits, beliefs, symbolic system of dreams, and experimental folk wisdom that are preserved in provinces. These are also interesting because of the ways of examination of provincial psychology, as well as from other observation points.

*R. Mardoyan.* HEALTHY WAY OF LIVING AS AN IMPORTANT FACTOR IN THE PROCESS OF CHARACTER FORMATION. In the given article the definition of the healthy way of living is given, alongside with it its components are distinguished. In order to ensure the healthy way of living for schoolchildren, some health-saving pedagogical technology is suggested, which allows the learners to acquire knowledge at a principally new quality level and eliminate the unfavourable influence of schoolwork load on the child's health. With the purpose of forming the learners' healthy way of living, a kind of team-work by both teachers and parents is suggested according to a specially developed curriculum.

*N. Adamyan.* BRIEF CHATECTERISTICS OF FORMALISM DISPLAYED IN THE PROCESS OF TEACHING. In the essence of formalism is revealed and five forms of formalism displayed in the process of teaching are characterized on basis of the facts. The five forms are as follows: 1.Giving the form the preference over the contents. 2. Isolation of theory from practice. 3.Paramount importance of memory in the process of understanding. 4. Superficial but not essential approach and evaluation. 5. Seeing of patterns as a cure-all. While characterizing formalism in the process of teaching, the author brings some instructive examples, makes some methodic propositions, which are sure to help teachers to overcome the formalism displayed in the process of teaching.

*R. Shtoyan.* THE PROBLEMS OF PEDAGOGICAL TESTING. The article deals with the relevance of the construction and practical application of pedagogical tests to consideration of certain testing problems. It shows the necessity to establish the correspondence of the problems of pedagogical testing to different types of validity. Three main types of the validity of pedagogical tests are outlined: the validity of the cognitive content type, the structural (constructive) validity and the validity of the predictive type.

*A. Markaryan.* THE EARLY WORKS (1930-50) OF MARIAM ASLAMASIAN LITERARY CRITICISM. This article deals with the formation and early period of Mariam Aslamazian's art. Aslamazian's art combines the Armenian and Russian cultural traditions. The combination of

decorativeness and plastic expressiveness are the distinctive features of her works. On the whole decorativeness lies in the nature of Aslamazian's art, but this peculiarity displayed itself in rather different forms during the different periods of her art practice. The works of 1930-40s were distinguished by scanty gamut and stern colour. The characters painted in those years posses a great strength of mind. The decorativeness in the works of this period is not in bright and rich colours but in the wide generalization of the objects, in the contrast between the dark-brown and black masses in the foreground and lighter colours in the background.

*A. Hayrapetyan.* ARCHIVAL DOCUMENTS ABOUT ETHNOGRAPHY OF ALEXANDRAPOL PROVINCE IN 50-60s OF THE XIX c. During the last years interest to ethnographical problems has grown up much therefore we mean to raise the point periodically, fill it if possible and publish such documents. We think that these published documents will give rich information about ethnography of Alexandrapol, one of the leading towns of Armenia in 50-60s of the XIX century. The 5 documents of the presented 12 ones concern registration of of Alexandrapol province Yerevan region in 1852. The other 7 documents include articles and reports of Alexandrapol province governor to Yerevan regional statistical committee. Being classified in chronological order the documents are for the specialists of history and the reader interested in this field.

*V. Abrahamyan.* MONASTRY COMPLEXES OF THE BAGRATID'S KINGDOM THE CENTRES OF WRITING. While the Bagradunies were in power the cloistral complexes with churches and buildings for people excellently harmonizing with each other and with nature were founded. Besides buildings for worship, many eating-houses, libraries, dwelling houses mausoleums, bell towers and many other economic constructions were built there. Medieval cloisters both in other countries and in Armenia differ from each other by their activity. The activity of some of them involved benefaction, preaching, charity and treatment of the sick. Others mainly developed cultural and educational activity. Many distinguished annalists, artists, public speakers worked there (Hovannes Sarkavag, Vanakan Vardapet, scientist Kozern, Grigor Magistros).

*A. Manucharyan,* ABOUT THE WORK PROCESS CONSERNING THE "BODIES OF ARMENIAN EPIGRAPHY" DEVOTED TO SHIRAK. The given scientific report is devoted to the work carried out in Shirak region by the expedition from Epigraphy Department of the Institute of Archaeology and Ethnography at National Academy of Sciences, RA. The members of the expedition collected some new inscriptions which hadn't been published before. At the same time they checked some of the inscriptions collected by Barkhudaryan and other epigraphists and discovered some varieties in reading the texts. The result and the final purpose of the work is to prepare for printing the next volume of "Bodies of Armenian Epigraphy", devoted to the history of Shirak.

*E. Minasyan.* MOTHERLAND-DIASPORA RELATIONSHIP IN THE SPHERE OF SCIENCE IN 1990-S. A detailed analyses of RA and Diaspora relationship are represented in the article on the basis of aide range of sources. Independence of RA has its two side effect on the scientific cooperation. In the 1990-s many scientists migrated out of the country because of the most severe economic crisis, which have had its negative effects on the development of science in Armenia. The situation has begun to stabilize since the second part of the 1990-s. The were held scientific conferences, symposiums, other debates about both various problems of the development of Science and mechanism of relationships between Armenian Scientists from many countries. Many organizations from different countries now work actively in Armenia, which supports reconstruction and future development of the Armenian's scientific potential.

*L. Atanesyan.* ALEXANDRAPOL IN MEMORIES OF THE SCULPTOR. Great sculptor Mercurov had a remarkable and original life. He spent his childhood in Alexandrapol the town of craftsmen, with its rich local colour and legends. All this influenced the formation of sculptor's personality and is observed in his works. There is no doubt that rich national sources have played a great role in making for Mercurov's creative perception since his childhood.

*L. Gevorgyan.* PECULIARITIES OF SPEECH OF YERAZGAVORS IN SHIRAK MARZ Dialect, of course, is one of the developing and enriching conditions in every language, and dialectology includes enormous materials. This work shows living picture of speech in village Yerazgavors Shirak Mars. Phonetics of speech in which consonant system has four degrees is shown. Peculiarities of speech phonetic changes, vocabulary, cases of noun, formation of plural, numeral and pronouns, adverbs and conjugation forms of the verb are shown here. Shortly representing facts we try to pay attention to those that speeches belong to neither of seven branches of dialect [ ում ], in spite of [ ըմ ] which forms Simple Present, nor Karin's dialect [կը] which has been noticed since today. In the end the tale " Free Advice" is represented as a Speech Model.

*L. Vardanian.* THE EFFECTIVE CONTACT AS THE AIM OF SOCIAL-PSYCHOLOGICAL TRAINING. Some new effective methods has widely spread in social psychology lately. In the article there represented one of this methods – *the Social-Psychological Training (SPT),* which is used in various spheres, having an aim to solve many social-psychological problems. With the help of SPT we can choose our life, achieve great success or undergo such personal changes, which can be deeper, than we can imagine. In this article we tried to show the ways - how this method can help people in their every-day life and in official contacts, making the latter more effective. Here we've presented an effective model of human relations - a training, which has 5 steps and every step has the new stage of the art of successful communication.

# Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

## *Հ ո դ վ ա ծ ն ե ր*


***Լարիսա ԵԳԱՆՅԱՆ***
Մեծ Սեպասարի մ.թ.ա. III հազարամյակի բնակավայրը
(պեղումների նախնական արդյունքներ) ………………………………...…………… .5
***Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լարիսա ԵԳԱՆՅԱՆ***
Մ.թ.ա. VIII-VIIդդ. դամբարան Կարմրաքարում……………………………………22
***Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ***
**Վաղուրարտական դիցարանի գլխավոր եռյակը (Ովքե՞ր են Բուղինի**
հավաքածուի ընծայական թիթեղին պատկերված աստվածները) ……………………30
***Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ***
Հայոց Արտավան (Արդուատես) թագավորը …………………………………………… 38
***Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ***
Հասարակական–քաղաքական կյանքի արտացոլումը XVII-XVIII դարերի
հայ պատմագրության մեջ……………………………………………………………………44
***Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
Տեղական կառույցների օգտագործման թուրքական քաղաքականությունը
Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921թթ. ……………………………………………... 49
***Ռաֆիկ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ***
Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը
Խ. Աբովյանի երկերում……………………………………………………………………….53
***Կարինե ԲԱՂՅԵՅԱՆ***
Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղը Մ. Արմենի
«Հեղնար աղբյուր» վիպակում……………………………………………………………..60
***Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ***
Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր…………………65
***Թերեզա ՇԱՀՎԵՐԴՅԱՆ***
Հաստատական և ժխտական նախադասությունների
վերիմաստավորումը դասական գրաբարում……………………………………………..71
***Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
Արմատական բառերի ածական//մակբայ տարարժեքությունը գրաբարում…………. 76
***Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ***
Փոխառությունները Ֆրիկի տաղերում…………………………………………………. 82
***Սեներերիմ ՍԵԼՔՈՆՅԱՆ***
Ղ. Աղայանի լեզվի և հարակից մի հարցի մասին ……………………………………… 88
***Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ***
Երազային տեքստի հոգեբանական վերապատմումների լեզուն
(1988-ի դեկտեմբերյան աղետի նյութերի հիման վրա) ……………………………….. 92
***Հասմիկ ՍՏԵՓԱՆՅԱՆ***
Մուղամների մշակման Ն. Տիգրանյանի սկզբունքները ……………………………….100
***Հասմիկ ԱՓԻՆՅԱՆ***
Աշուղական երգի տաղաչափական արվեստի մի քանի հարցեր
Իգիթի երգերում……………………………………………………………………………...105
***Կարինե ԱՎԴԱԼՅԱՆ***
Ազգային ոճի բարեշրջունությունը XXդ. հայ երաժշտության մեջ……………………110
***Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
Գավառի հոգեբանությունը Ռուբեն Զարդարյանի գեղարվեստական արձակում…..116
***Ռուզաննա ՍԱՐԴՈՅԱՆ***
Առողջ կենսակերպը որպես անձի ձևավորման գործընթացի կարևոր գործոն………120
***Նունե ԱԴԱՄՅԱՆ***

Ուսուցման գործընթացում ձևամոլության դրսևորումների համառոտ բնութագիրը ...126
***Ռուզաննա ՇՏՈՅԱՆ***
Մանկավարժական թեստավորման հիմնախնդիրները ....................................129
***Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ***
Մարիամ Ասլամազյանի վաղ շրջանի ստեղծագործությունը (1930-50թթ.) .............133

## *Հրապարակումներ, հաղորդումներ, գրախոսություններ*

***Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ***
Արխիվային փաստաթղթերն Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. 50-60-ական թվականների ժողովրդագրության մասին ....................................................138
***Վարդիթեր ԱԲՐԱՀԱՄՅԱՆ***
Բագրատունյաց թագավորությանվանական համալիրները որպես գրչության օջախներ ..............................................................................................147
***Աշոտ ՍԱՆՈՒԽՉԱՐՅԱՆ***
Շիրակի մարզի «Դիվան հայ վիմագրության» պրակի կազմման աշխատանքները ...............................................................152
***Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ***
Հայրենիք-Սփյուռք առնչությունները գիտության բնագավառում 1990-ական թթ. ..............................................................................155
***Խաչիկ ԲԱԴԻԿՅԱՆ***
Դառը խոստովանություն և անազորույն ոճրագործություն ..............................162
***Լաուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ***
Ալեքսանդրապոլը քանդակագործի հուշերում ............................................166
***Լուսինե ԳԵՎՈՐԳՅԱՆ***
Շիրակի մարզի Երազգավորս գյուղի խոսվածքի առանձնահատկությունները .......170
***Լիլյա ՎԱՐԴԱՆՅԱՆ***
Արդյունավետ հաղորդակցումը որպես սոցիալ-հոգեբանական թրենինգի (վարժեցում) նպատակ.....................................................................175
***Էդուարդ ՄԿՐՏՉՅԱՆ***
Ս. Հայրապետյան. Գրաբարի շարադասությունը (Vդ.). «Գիտություն» հրատ., Երևան, 2005,254 էջ .......................................................................179
***Ամփոփում*** *(անգլերեն)*..............................................................181

# С о д е р ж а н и е

## *С т а т ь и*

***Лариса ЕГАНЯН***
Раннебронзовое поселение Мец Сепасар.......................................................... 5
***Амазасп ХАЧАТРЯН, Лариса ЕГАНЯН***
Раскопки погребения VIII-VIIвв. до н.э. в селе Кармракар.............................22
***Саргис ПЕТРОСЯН***
Главная триада раннеурартского пантеона .......................................................30
***Лусине ПЕТРОСЯН***
Царь Армении Артаван (Ардоатес)......................................................................38
***Аршавир ГАСПАРЯН***
Отражение общественно-политической жизни XVII-XVIIIвв.
в работах армянских историографов ............................................................... 44
***Карине АЛЕКСАНЯН***
Политика Турции в использовании местных органов власти
Александропольского уезда в 1918-1921 гг..........................................................49
***Рафик НАГАПЕТЯН***
Характеристика семейно-брачных обычаев и обрядов армян
в трудах Х. Абовяна..................................................................................................53
***Карине БАЗЕЯН***
Городской быт Александрополя в повести М. Армена “Родник Эгнар"........60
***Арташес БОЯДЖЯН***
Некоторые вопросы социально-экономического развития
Ширакского региона ...............................................................................................65
***Тереза ШАХВЕРДЯН***
Транспозиция утвердительных и отрицательных
предложений в древнеармянском языке............................................................71
***Анаит АРУТЮНЯН***
Морфологическая полисемия корневых слов в грабаре
со значением прилагательного и наречия .........................................................76
***Астхик АЙРАПЕТЯН***
Заимствования в поэзии Фрика ………………………………………………………..82
***Сенекерим МЕЛКОНЯН***
О языке Г. Агаяна .......................................................................................................88
***Карине СААКЯН***
Язык психологических пересказов текстов сновидений
(На основе материалов декабрьского землетрясения 1988г.) ....................... 92
***Асмик СТЕПАНЯН***
Принципы Н. Тиграняна при обработке мугамов ..........................................100
***Асмик АПИНЯН***
Особенности ашугского стихосложения в песнях Игита.............................105
***Карине АВДАЛЯН***
Эволюция национального стиля в армянской музыке XXв..........................110
***Нелли КАРАПЕТЯН***
Психология провинции в прозе Рубена Зардаряна........................................116
***Рузанна МАРДОЯН***
Здоровый образ жизни как важный фактор процесса
формирования личности........................................................................................120
***Нуне АДАМЯН***
Краткая характеристика проявлений формализма в процессе обучения...126

***Рузанна ШТОЯН***
О некоторых проблемах педагогического тестирования................................129
***Аракс МАРГАРЯН***
Творчество раннего периода (1930-50гг.) Мариам Асламазян.......................133

## *Публикации, сообщения, рецензии*

***Армен АЙРАПЕТЯН***
Архивные документы о демографии Александропольского
уезда 50-60 гг. XIXв. ..................................................................................138
***Вардидер АБРААМЯН***
Монастырские комплексы Багратидского царства как центры
письменности ..........................................................................................147
***Ашот МАНУЧАРЯН***
О работах по составлению Ширакского прака "Корпуса армянской
эпиграфии" ..............................................................................................152
***Эдик МИНАСЯН***
Отношения родина-диаспора в области науки в 1990-ых годах...................155
***Хачик БАДИКЯН***
Горькое признание и жесточайшее преступление........................................ 162
***Лаура АТАНЕСЯН***
Александрополь в воспоминаниях скульптора .............................................. 166
***Лусине ГЕВОРГЯН***
Особенности говора села Еразгаворс Ширакской области ..........................170
***Лилия ВАРДАНЯН***
Эффективная коммуникация как цель
социально-психологического тренинга..............................................................175
***Эдуард МКРТЧЯН***
С. Айрапетян. "Порядок слов грабара"(Vв.).................................................... 179
***Резюме*** *(на английском)* ........................................................................182

# Contents

## *Articles*

*Larisa EGANYAN*
Mets Sepasar early bronze age settlement……………………………………………………5
*Hamazasp KHACHATRYAN, Larisa EGANYAN*
VII-VI c. B.C. necropolis excavations in the village of Karmrakar ………………………...22
*Sargis PETROSYAN*
The Chief God-triad of the Early Urartu Pantheon ...………………………………………..30
*Lusine PETROSYAN*
Artavan (Ardoates)-the king of Armenia ……………………………………………………38
*Arshavir GASPARYAN*
Reflection of socio-political life in the works of Armenian
historiographs of the XVIIth-XVIIIth centuries……………………………………………..44
*Karine ALEKSANYAN*
The Turkish policy concerning the use of the local authoritative
bodies in the province of Alexandrapol from 1918 to 1921…………………………………49
*Rafik NAHAPETYAN*
Description of Armenian family-matrimonial traditions in the works of Kh. Abovyan…….53
*Karine BAZEYAN*
The urban daylife in the novel of M. Armen, Heghnar Tountain……………………………60
*Artashes BOYAJYAN*
Some questions of social and economic development of Shirak region…………………… 65
*Tereza SHAKHVERDYAN*
Transposition of negative and affirmative sentences in classical Grabar ...…………………71
*Anahit HARUTYUNYAN*
Morphological polisemy of root words in grabar with the meaning
of adjective and adverb ……………………………………………………………………...76
*Astghik HAYRAPETYAN*
Borrowings in Frik's Poetry…………………………………………………………………82
*Senekerim MELKONYAN*
On the language of Gh. Aghayan……………………………………………………………88
*Karine SAHAKYAN*
The language of Dream-text retelling………………………………………………………..92
*Hasmik STEPANYAN*
Tigranian's principles of adapting mougham……………………………………………... 100
*Hasmik APINYAN*
Peculiarities of ashugs poetry in Igit's songs…...………………………………………..... 105
*Karine AVDALYAN*
The positive evolution of national style in the 20 th Armenian music ……………………..110
*Nellie KARAPETYAN*
The psychology of the province in the novel Ruben Zardaryan. …………………………..116
*Ruzanna MARDOYAN*
Healthy way of livving as an important factor in the process of character formation …… 120
*Nune ADAMYAN*
Brief characteristics of formalism displayed in the process of teaching ………………...126
*Ruzanna SHTOYAN*
The problems of pedagogical testing……………………………………………………….129
*Araks MARKARYAN*
The early works (1930-50) of Mariam Aslamasian ………………………………………..133

## *Publication, reports, literary criticism*

*Armen HAYRAPETYAN.*
Archival documents about ethnography of Alexandrapol province
in 50-60 s of the XIX c……………………………………………………………….138
*Vardider ABRAHAMYAN*
Monastry complexes of the Bagradite kingdom as the centres of writing ……………..147
*Ashot MANUCHARYAN*
About the work process concerning the "Bodies of Armenian epigraphy"
devoted to Shirak ……………………………………………………………………..152
*Edik MINASYAN*
Motherland-Diaspora relationship in the sphere of science in 1990-s ……………………155
*Khachik BADIKYAN*
Bitter confession and cruel crime……………………………………………………..162
*Laura ATANESYAN*
Alexandrapol in memories of the sculptor…………………………………………………166
*Lusine GEVORGYAN*
Peculiarities of speech of Erazgavors in Shirak Marz ……………………………………170
*Lilia VARDANYAN*
The effective contact as the aim of social-psychological training…………………………175
*Edward MKRTCHYAN*
S.Hayrapetyan "The Word-Order" in grabar (Vc.) ……………………………………..179
*Summary (in English)* …………………………..……………………………………182

*Հայաստանի Հանրապետություն*
*Գիտությունների ազգային ակադեմիա*
*Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն*

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. VIII. 2005

***Республика Армения***
***Национальная академия наук***
***Ширакский центр арменоведческих исследований***

**НАУЧНЫЕ ТРУДЫ. ВЫПУСК VIII. 2005**

*Shirak Gentre of Armenian Studies*
*National Academy of Sciences*
*Republic of Armenia*

RESEARCH PAPERS. EDITION VIII. 2005

Շապիկի առաջին էջին՝ Գյումրու «Ալեքսանդրապոլ» բերդի հարավային աշտարակը («Սև ղուլ», 1838 թ.):
*Լուսանկարը՝* Ս. Տեր-Մարգարյանի

*Համակարգչային և գեղ. ձևավորումը՝* Լ. Կոստանյանի
*Սրբագրիչ՝* Ռ. Հովհաննիսյան

---

Պատվեր՝ , տպաքանակ՝ 200,
Հանձնված է շարվածքի 12.11. 2005, ստորագրված է տպագրության 18. 02. 2006
Շարվածքը՝ համակարգչային, 12.5 հրատ. մամուլ:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության համակարգչային- հրատարակչական ծառայություն:
Հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. - 24գ.:
**Заказ , тираж 200,**
**Сдано в набор 12.11.2005, подписано к печати 18.2.2006, 12.5 печ. л. .**
**Издательство “Гитутюн" НАН РА, Компьютерная редакционно- издательская служба.**
**Адрес: 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.**